

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՍՓԻՒՌՔԸ

ԵՒ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ը

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴԱՏՈՒՄՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԶԱՐԹՕՆՔ» ՕՐԱԹԵՐԹԻ

ՊԵՂՐՈՒՔ, 1962

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

9/47 925)

4 - 58

ՍՓԻՒՌԻԷ

ԵՒ ՀԱՅՐԵՆԻԷ

645


~~223~~

2547

ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴԱՏՈՒՄՆԵՐ



Հրատարակուիւմ «ԶԱՐԹՕՆԻ» օրաթերթի, 1962, Պէյրուք



ՍՓԻՒՈՔԸ ԵՒ ՊԱՅՐԵՆՆԻՔԸ

ԱՄՏԱՍՈՂՄԱՆ

Ա.

Հայ ժողովուրդին պետական կամ համայնքային կեանքը, անցեալ երեք հազար տարիներու ընթացքին, եղեր է դատան ու դիպացնական գոյամարտ մը, ծուռալուսալու ստաններէ կամ վայրի տափաստաններէ արշաւող դիշատիչ լեզէոններու եւ սքիւնարբու վռճակներու դէմ: Երբեմն, գերակշիռ ուժերով անոնց արձակած գրոհներու տակ քայքայուեր ու կործանուեր է հայրենի իշխանութիւնը: Եւ բազմաթիւ սերունդներ, թշուառ ու հալածական՝ տուայտեր են օտար բռնակալներու վայրագ լուծին ներքեւ, յաճախ, իբրեւ յուսահատ փախուստի ապաւէն՝ նետուելով պանդխտութեան կլանող յորձանուտին մէջ:

Սակայն ամէն հուաքական փլուզումէ ետք՝ աւերի ու կորստի նախնիքն եւ բռնադատութի մանկաղէն վերապրած հայ բեկորները, ազատութեան անմար տենչով եւ ազգային գոյատեման անընկճելի կամքով՝ կրկին համախմբուեր են եւ խռչալի, աշխատանքի ու պայքարի ստեղծագործ զօրաշարժով, վերականգնեք են հայրենիք ու պետութիւն: Այդպէսով էր, որ անկումի ու ստրկութեան միջանկեալ տարիներու անջրպետով՝ Արտաշէսեան եւ Արշակունեաց հարստութեանց յաջորդեցին Բագրատունիներու եւ Խուրինեան իշխանութիւնները եւ Ղարաբաղի կործանուած անկախութիւնը, Դաւիթ Բէկի յաղթական սուրով կերտուած: Եւ յետոյ՝ ներկայ Հայաստանը, աւելի քան քառասուն տարիներու հոյակապ վերածնունդով եւ հսկայաքայլ ու յարածուն գորգաչումով:

Բայց հայոց պատմութեան բոլոր խուժուժ արհաւիրքնե-

Գրագէտ եւ հրատարակագիր ընկ. Անդրանիկ Անդրէասեանի այս գործը իբրեւ յօդուածաշարք լոյս տեսաւ «Ջարթօնֆ» եւ «Պայքար» օրաթերթերուն մէջ՝ 1962ի Ապրիլ — Մայիսին:

րուն, կամ բոլոր հերոսական մաքառումներուն հանդէպ՝ մեր ժամանակը կը յայտնուի իր արձանագրած ամէնէն ահուելի ողբերգութեամբ եւ փրկութեան ամէնէն բախտորոշ անկիւնադարձով: Որովհետեւ անցեալի ամէնէն զժխեմ դարերուն մէջ անգամ, երբեք չէր պատահած, որ հայ ժողովուրդին մեծագոյն հատուածը անճիտուէր ա՛յնքան վարհուրելի, հրէշային սպանդով մը, ինչպէս 1915ի բնաջնջումի եղեռնին եւ վերապրած զոհերը, — որք ու ալքի, ծեր ու փախտական, հողմացրիւ չէին շարտուած դէպի հեռաւոր ու մոռայլ գաղթականներ, եւ չէր եղած բնաւ, որ ամբողջ արեւմտեան Հայաստանը, յափշտակուած իր հարագատ տէրերէն՝ բզբուէր ցեղասպան ոստիին կրունկներուն ու եսթազանին տակ՝ ա՛յնքան եղեռնականորէն աւերուած ու ամայացած: Սակայն նաեւ չէր պատահած երբեք, որ մահաշուք գերութեան շղթաներէն եւ ամբողջական շքայման գերեզմանէն՝ հայ ժողովուրդը ա՛յնպիսի հրաշալի յարութեամբ մը խոյանար դէպի կեանք, վերակերտելով ինք դար տալ իր կալանուած հայրենիքն ու կործանած պետութիւնը՝ ինչպէս եղաւ անցեալ 42 տարիներուն:

Ճակատագրական հանգրուան մը ուրեմն, հայոց ազգային գոյութեան հազարամեայ մարտնչումի գառիթափին վրայ: Անկէ դահապէժ անկում մը կրնայ վերջնական կորուստի անդունդին մէջ թաղել, անդառնալի փճացումով, հայ ազգութիւնն ու Հայաստանը: Իսկ մինչեւ փրկութեան կատար մագլցումը հայ ժողովուրդին պիտի ապահովէ ոչ միայն գոյատեւելու եւ զօրանալու պայծառ ներկան եւ շքեղ ապագայ մը, այլ նաեւ պիտի երաշխատորէ մարմնացումը մեր դարաւոր ձգտումներուն ու երազներուն:

Այդ իրողութեան հանդէպ՝ կենսական պայման կը դառնայ լիտպէս ճանչնալ հայկական ընդհանուր զոյափճակը, իր հոգերով ու յոյսերով, իր բնոյթով ու խոստումներով, աւելի յստակօրէն կարենալ ըմբռնելու համար հետապնդուող համազգային նշանակէտները եւ սահմանելու անոնց իրապարձման տանող ուղիները: Որովհետեւ, տարաբախ սերունդներու եղերական փորձառութենէն ետք եւ զրժուած անթիւ յանձնառութեանց ու կոխկրտաւած դաշինքներու արիւնոտ աւերակոյտին վրայ՝ բրէկան մե-

զանչում է հիմա ուրանալ կամ մերժել կենդանի, փրկարար իրականութիւնը եւ յանցապարտ ինքնալքումով յանձնուել հին, եղկելի պատրանքներու խարուսիկ ցնորքին, կամ շահաւէտ սակարկութեամբ վաճառուիլ հայրենագաւ արկածներու տղմոտ խայծերուն:

Որովհետեւ, ինչպէս արտակարգ եղաւ հայ ժողովուրդին անցեալ կեանքը, իր ողբերգական պարտութիւններով եւ անվեհեր մաքառումներով, իր սիրալի յաղթանակներով ու ստեղծարար խոյանքներով՝ նոյնպէս բացառիկ կը մնայ անոր ներկայ կացութիւնը: Անոր պատմական հայրենիքին մեծագոյն հատուածը, — ամբողջ արեւմտեան Հայաստանը, զեռ կիսաւեր ու ամայի, կը հեծէ թրքական մահահոտ գարշապարին տակ: Մեր մարդկային համբանքը արդէն կը գերազանցէ նախա-եղեռնեան զուճարը հաննելով չորս միլիոնի: Բայց այդ աճող քանակին նուազ քան կէսը միայն համախումբ կը բնակի հայկական պետութեան հովանիին ներքեւ, Խորհրդային Հայաստանի սահմաններէն ներս: Ուրիշ մէկ միլիոն հայեր տարողնուած կ'ապրին Սովետ. Միութեան տարբեր մարզերուն մէջ, զլիսաւորաբար կեդրոնացած Թիֆլիս, Պաքու եւ Մոսկուա: Իսկ աւելի քան մէկ միլիոն արեւմտահայեր, մեծ կամ փոքր համայնքներով, ցրուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ եւ մօտ երեսուն երկիրներու մէջ, իրենց հաւաքական գոյութեան տաժանելի պայքարը կը մղեն: Սակայն այս թիւերը նաեւ նշանակելի իրողութիւն մը կը հաստատեն:

Ահաւոր ազդեղն հազարաւոր արտասահմանի հայերը, զինագաղարէն յետոյ, 1,200,000 հոգի կը նկատուէին: Բազմածին հայ ժողովուրդին աճման բնական սակով (1000ի վրայ 45 անձ տարեկան), անոնց համբանքը անցեալ 45 տարիներու շրջանին՝ պէտք էր հասած ըլլար երեք ու կէս միլիոնի: Այդ գումարէն 150,000 ներգաղթեցին Հայաստան, տարբեր առիթներով: Հիմա՝ գաղութահայեր կը հաշուուին շուրջ 1,100,000 հոգի: Եւ քանի մը հազար երիտասարդներ նահատակ ինկան պատերազմի ու քաղաքացիական կռիւներու ընթացքին, հիւրընկալ երկիրներու մէջ: Բայց տակաւին կը մնայ կորուստը առ նուազն երկու միլիոն տարազիր հայերու, սրնք հնձուեցան ուժացման սպիտակ կտորածէն եւ

դեռ անհետ կը շքանան ամէն հորիզոնի ետեւ, Հնգկասառնէն մինչեւ Ֆրանսա եւ Յունաստանէն մինչեւ Միացեալ Նահանգներ ու Լատին Ամերիկա:

Իսկ նոյն միջոցին, Հայաստանի բնակչութիւնը սկզբնապէս 700,000 հոգիէն այսօր բարձրացած է 1,900,000 անձի, — կրկուք ու կէս անգամի անուսով մը, նոյնիսկ երբ զեղչուի 150.000 հայ-բնադարձներու գումարը: Եւ տակաւին, այդ հսկայ յաւելումին զուգընթաց պէտք է արձանագրել ծանր կորուստը Հայրենական պատերազմի ճակատներուն վրայ հերոսաբար ինկած աւելի քան 50,000 հայ զինուորներուն եւ անոնց շնամ գաւակներուն, — նաեւ Ստալին-Բերիայի սարսափի շրջանին աքսորուած գոհներուն:

Մարդկային Թանկագին տարրերու իրենց յարաբերական տարողութեամբ եւ մշակութային ու քաղաքական մարզերու մէջ իրենց ուրոյն արժէքներով ու կոչումներով՝ Հայրենիքն ու սփիւռքը կը կազմեն հայ ժողովուրդի ազգային ամբողջութիւնը, — տարբեր հոգերով, կարիքներով եւ իրազործումներով, բայց հիմնական ձգտումներու եւ նպատակներու անխզելի միութեամբ: Եւ անոնց յարափոփոխ վիճակներուն ու լրացուցիչ դերերուն խորունկ ճանաչումը անհրաժեշտ պայման է, համազգային ծառայով հարցերը յստակօրէն ըմբռնել եւ անոնցմէ թելադրուած յուսումները իրագործել կարենալու համար:

Այս յօդուածներու շարքը փորձ մըն է այդ ուղիով: Անցեալ տարուան ընթացքին, աւելի քան ութը ամիս տեւող շրջապատյա տով մը պատահութիւն ունեցայ այցելելու Միացեալ Նահանգներու, Արժանթինի, Ուրուկուէյի, Պրագիլի, Ֆրանսայի, Յունաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի, Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի հայկական հոծ գաղութները: Եւ յետոյ, Մոսկուայի մէջ քանի մը օրուան միջանկեալ դադարով անցայ Հայաստան, ուր մնացի հինգ շաբաթ, խճողուած՝ այցերով, պաշտօնական հանդիպումներով, մակերժիկ զրոյցներով եւ մշտական պտոյտներով, յաճախ բոլորովին առանձին, եւ միշտ ամբողջապէս ազատ: Հայրենիքի եւ քաղաքի առաջնորդող դէմքերու, գրողներու, ուսանողներու եւ խոնարհ խաւերու հետ ուղղակի, մտերմական շփումներ եւ համայնքային կեանքի անձնական ծանօթութիւնը, կրթման տրուած

ու յուսալքի՝ բայց յաճախ սրտայոյզ ու խանդավառող երեւոյթներ հաստատեցին: Այդ տպրումներուն եւ եղբուրթեանց եզրահայցուած արդիւնքն են այս տպաւորութիւններն ու դատումները:

Բ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՅՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Միացեալ Նահանգներու մեր գաղութը տակաւին կը մնայ մեծապոյն հայկական կեդրոնացումը ամբողջ սփիւռքի մէջ, իր շուրջ 250,000ի մարդկային համրանքով, — բայց տարազնուած Ատլանտեանի եզերքէն մինչեւ Խաղաղականի ափերը սիրուող անձիւր տարածութեան վրայ եւ զլիսաւոր քաղաքներու մէջ, — Պոսթանէն, Նիւ Եորքէն ու Ֆիլադելֆիայէն մինչեւ Տիթթոյթ եւ Շիքագո եւ մինչեւ Լոս Անճելըս: Ան կազմուած է պանդուխտ գաւառացի հայերէ, — անոնց տոճմային հարազատ դիմագիծով, ծնրնդավայրի անեղծ աւանդութիւններով եւ հայրենիքի ազատութեան կոտորացող տենչանքով, անցեալ գարու 80ական թուականներուն: Եւ հետզհետէ հիմնուել են կուսակցական հոսանքներ, գաղափարախօս թերթեր, կեկզեցիներ, իրիկնային դպրոցներ եւ հայրենակցական միութիւններ, — որոնք իրենց ծրագրած ազգային ազատագրական շարժումներուն կամ հանրային ծառայութեան մարդերուն մէջ ներգրուել են տեւական արտագաղթով ժամանող նոր տարադիրները, — զայն դարձնելով արտասահմանի ամէնէն յաշն ծառայի եւ հզօր հիմունքներու վրայ կազմակերպուած գաղութի:

1920էն ետք, կերբ օտարներու Ամերիկա զանգուածային ներգաղթին դէմ կանգնուեցաւ արդեւիքի (քոթա)պատուարը՝ Միացեալ Նահանգներու հայոց թիւը արդէն քառօրը միլիոն կը համարուէր: Անկէ յետոյ անցած քառասուն տարիներու ընթացքին՝ այդ գումարը բնական աճուսով աւելի քան կրկնապատկուած պէտք էր ըլլար, — որուն վրայ դեռ կ'աւելնային ամերիկեան քաղաքացիներ

բու իբրև ազգական կամ քոթայի մուտքի իրաւունքով եկող հաս-
խերը :

Իսկ ի՞նչ պատահեցաւ երկու-երեք հարիւր հազարի այդ
յաւելումին : Անկէ կարևոր հատուած մը, կազմակերպուած ան-
վհատ ջանքերով եւ յարատեւ հետապնդումներով, փրկուեցաւ ա-
պասերումի կլափէն եւ սկսաւ լեցնել այն անարկու գատարկու-
թիւնը, որ տակաւ կը բացուէր ամերիկահայ գաղութի ազգային
ու հասարակական կեանքին մէջ, հայրենածին տարեցներու նու-
րացումովը : Մինչ ամերիկածին երկու սերունդներէն խոշոր մա-
սեր Փիդիբապէս կամ Հոպկէս հետզհետէ խզուեցան հայկական
իրականութենէն : Եւ հնարաւոր չէ գիտնալ, կարելի չէ ենթադրել
անգամ, թէ քանի՜ տասնեակ հազարաւոր հայեր կամաւոր կղզիա-
ցումով կ'ուժանան նոյնիսկ հայկական հոծ, կենսունակ համայնք-
ներու շրջապատին մէջ կամ արուարձաններուն վրայ : Իսկ ուրիշ
քանի՜ բիւրաւորներ դիպուածին կամ գործի հարկադրանքով
ցրուած են Ամերիկայի հարիւրաւոր մեկուսի աւաններուն ու ու-
տաններուն մէջ, դատապարտուած աղամայ ձուլման :

Բազմացեղ ժողովուրդներու անծայրածիր ու ալեծուփ ուժ-
կէան մը, Միացեալ Նահանգները, որուն մէջ ահաւոր նաւարեկու-
մով մը ինկան նաեւ թրքական սարսափներէն փախստական բե-
կորներ : Անոնք շունչէն յոյսը ազատարար անյայտ բազուկի մը,
որ կործանած մայրենի օճախներուն եւ աւերուած հայրենի երկ-
րին փրկութեան լաստը շփոհէր իրենց : Եւ անոնք դարձան հաւա-
տարիմ քաղաքացիներ այս որդեգրուած նոր հայրենիքին, որ ա-
նոնց կ'ընծայէր ազատ ապրելու եւ խաղաղ գոյատեւելու պատե-
հութիւնը : Եւ միայն իրենք, իբրև ընտանիք, համայնք ու գա-
ղութ, անսպառ կորոզով ու յամառ ճիգերով կրնային պահպանել
իրենց տոհմային նկարագիրը եւ ազգային մշակոյթն ու ձգտում-
ները : Իսկ ինքնապաշտպանած պայքարը անոնք կը ժղեն յարաճուն
թափով :

Հակուտենայ ազգակներու եւ ճնշումներու այդ հակազդք հո-
տանքներէն կը բխին երկու իբրեւամերժ մտայնութիւններ՝ Ամերի-
կահայոց հաւաքական գոյատեւման մտախն : Կան ծայրայեղ լուա-
տեսները, որոնք կը հաւատան ու կը հաւատան, թէ Միացեալ Նա-

հանգներու հայ գաղութը կրնայ իր գոյութիւնը պահել մինչեւ եր-
կու հարիւր, նոյնիսկ հինգ հարիւր տարի : Ամէն իրողութիւն ան-
տեսող, ամէն վաւերական փաստ ոտնահարող քմածին վարկած մը,
որ բաղձանքը անկարելի ցնորքներու պղպջակին կը հիւսէ : Բայց
կան նաեւ անյոյս յուստեսները, որոնք ամերիկահայ գաղութը ար-
դէն այլասերած ու կորսուած կը հռչակեն եւ իրենց վերջին շունչը
վեհանձնօրէն կը նուիրեն՝ որպէս եղբրամայր անոր դամբանականը
սղբերգելու : Մեծաքանակ թաղումի այս անապարանքը թէեւ սրբ-
տայոյց՝ բայց չափազանց կանխահաս է անուուզն : Եւ կը պատա-
հի յաճախ, որ արտասահմանէն այցելու հայեր հիւրընկալուին այս
երկու համոզումներէն մէկը դաւանող ընտանիքի մը մէջ, եւ զայն
իւրացուցած մեկնին, ամերիկահայ գաղութին յաւերժութեան ա-
ւետիւր կամ կործանումին զոյժը տարփոզելով իրենց շրջանակնե-
լուն մէջ :

Սակայն բացայայտ ճշմարտութիւն է, որ հայկական սփիւռ-
քի ոչ միայն ամէնէն բաղձամարդ ու բարեկեցիկ, այլ նաեւ ամէնէն
ուժեղ կազմակերպուած եւ դրապէս ներգործող գաղութը կը հան-
դիսանայ Ամերիկահայութիւնը : Եւ իր այդ ազդեցիկ, առաջնոր-
դող դիրքը ան յաջողեք է պահել շուրջ վաթսուն տարիներէ ի
վեր, հակառակ որ գաղութահայ ազգապահպանման դաժան կոխ-
ւին մէջ, ամէնէն ուժգնօրէն գրոհուած, ամէնէն տեսականօրէն
պատնդուած ճակատը կը ներկայացնէ ան :

Որովհետեւ Միացեալ Նահանգներու պետական պարտադիր
գաստիարակութեան ծրագիրով՝ ամենազգի երկսես մանուկներ ու
պատանիներ կը կրթուին հանրային նախնական ու բարձրագոյն
վարժարաններու մէջ, ամբողջապէս ամերիկեան դասացուցակով,
որեւէ ցեղային փոքրամասնութիւն չունի եւ չի կրնար բանալ սև-
փական ազգային դպրոցներ, իր դեռատի սերունդին տոհմային
կրթութիւն ջամբելու համար : Կարտօծուին միայն կրօնական կամ
յարանուանական վարժարաններ, — պայմանաւ որ անոնք լիովին
որդեգրեն ամերիկեան պետական դպրոցներու կրթական ծրագիր-
ներն ու դասադիրքերը : առաւել՝ դաւանուած հաւատքին ու ծէսե-
լուն աւանդումը :

Ամերիկահայ գաղութը զրկուած մնաց ուրեմն, իր նորահազ

Երիտասարդութիւնը հայ ազգային մշակոյթով, պատմութեամբ ու սփռով դաստիարակել կարենալու մեծական ազդակէն: Բայց անկառնեցաւ յաջորդ տրամադրելի գործօններուն: Եւ բացաւ հայկական մասնակի դպրոցներ, ուր շարաքեր երկու կամ երեք երեկոյ կը յաճախեն ամերիկեան վարժարաններու իրենց դասերէն յոգնած եւ գրօտանքի պահերնին զոհող փոքրիկներ, հայերէն կարդալ, խօսիլ եւ երգել սորվելու: Եւ հետզհետէ, առաջնութեան կարգով՝ երիտասարդական ակումբներ ու միութիւններ հիմնեցին Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութիւնը, հայ առաքելական եւ աւետարանական եկեղեցիները եւ ուրիշ մարմիններ: Անոնք սկսան հրատարակել, միշտ նոր սերունդին համար, անդլերէն թերթեր, պրակներ ու գիրքեր եւ սարքել դասախօսութիւն ու դասընթացքներ, ամերիկածին հայ երիտասարդութեան մէջ ազգային գիտակցութիւնը ներարկելու հայրենի մշակոյթի հանդէպ ակնածանք ու սէր արծարծելու եւ զայն հայ ժողովուրդի կարիքներուն ընդառաջող հանրային ծառայութեան լծելու նպատակով: Իսկ Հ. Յ. Դանակցութիւնը կը մնայ 1933ի Ս. Մնունդին օրը, եկեղեցիին մէջ եւ պատարազի պահուն՝ Առաջնորդ Նեոնդ Արք. Դուրեանը վայրագօրէն սպաննելու իր հրէշային ոճիւրէն ի վեր՝ ամերիկահայ հասարակական եւ ընկերային կեանքէն ու շարժումներէն ամբողջապէս խզուած ու մեկուսացուած տարր մը, ապաստարած ազանդի մը նման, ինքնակեդրոն եւ ինքնանպատակ:

Դարձեալ, ամերիկահայ գաղութը հիմնապէս կը հերքէ այն անհեթեթ վերազրումը, թէ բաւական լուրջ ջանքեր չի թափեր եւ անհրաժեշտ գումարներ չի ծախսեր իր սեփական զոյստեւումը ամրապնդելու համար: Որովհետեւ անծխտելի իրողութիւն է, որ ան տարեկան թանի մը միլիոն տոլարի ահադին գումարը կը նուիրէ՝ նոր ու շքեղ եկեղեցիներ, մշակութային տուններ, ընկերային սրահներ եւ ակումբներ կառուցանելու կամ շինուածները պահելու համար: Եւ այդ անհաշիւ զոհողութիւնները կը կատարուին՝ գլխաւոր նշանակէտ ունենալով ամերիկածին նոր սերունդները, — որպէս զի անոնք գրաւուին ու պահուին հայ համայնքային շրջապատէն ներս, իրրեւ ժառանգորդները մեր ազգային արժէքներուն ու ի-

ախաններուն, եւ որպէս շարունակողները դաղութի գոյութեան ու ճիգերուն:

Բարեբախտաբար ապարդիւն չի մնար անոնց նիւթի, Խանդի ու աշխատանքի բոլորանուէր, անտրտունջ մատուցումը: Երիտասարդ տղոց ու ազջիկներու խոշոր հատուած մը, անտարբերութեամբ ու ձուլումի մեղկացնող հոսանքէն կարելի կ'ըլլայ տակաւ ձերբազատել ու կապել մեր հանրային կեանքին ու ձեռնարկներուն: Եւ այսօր, ամերիկահայ գաղութի ազգային, հասարակական, մշակութային, եկեղեցական ու բարեսիրական կազմակերպութեանց եւ ստանոց զոյսպայքարին ու գործունէութեան մէջ նշանակելի քանակով ու որակով կը մասնակցին ամերիկածին հայ երիտասարդները, կրթման նոյնիսկ մեծամասնութիւն կազմելով:

Սակայն այդ իրողութիւնը, որքան ալ ոգեպնդիչ, պէտք չէ ցանկատես խաբկանքի առաջնորդէ առաքելական միտքը՝ ամերիկահայ գաղութի ապագային մասին: Որովհետեւ, տակաւին բոլոր ամերիկեան հոսանքներուն եւ հին մարմիններուն եւ անոնց վարած շարժումներուն նպատակները, ներշնչումն ու զեկավարութիւնը կը հայթայթուին ազգի ու հայրենիքի դաղափարներով տաքորուած, չեղիւրջը ծնած, խմորուած կամ դաստիարակուած ծրագիրներէ, մաւուրականներէ, եւ հանրային առաջնորդներէ: Ըզնաժամային հանգրուանը պիտի գայ՝ երբ այդ մարդկային տարբը անհետանայ առօրեայի թատերաբեմէն եւ համայնքային կեանքի զեկը ամբողջապէս փոխանցուի անոնց ամերիկածին դասակներուն ու թոռներուն:

Միացեալ Նահանգներու տնտեսական, ընկերային եւ մշակութային հրապոյրներուն մակընթաց յորձանքին դէմ՝ իր բոյստեւումն գածան պայքարին մէջ իրապէս հրաշալի յայթանակ մէջ շահած պիտի ըլլայ ամերիկահայ գաղութը, եթէ տակաւին միջեւ երկու սերունդ ալ յաջողի պահպանել իր ազգային նկարագրին, ձգտումներուն, հոգերուն ու հետապնդումներուն ներկայ կազմակերպուած տարողութիւնն ու հաւաքական թափը: Եւ այդ նշանակակէտին համնելու, զայն պերպանցելու համար ան լծուեր է անդուլ, յամառ աշխատանքի, իր մարդկային, իմացական ու նիւթական բոլոր ուժերով:

Մեծագոյն կազմակերպութիւնները ունին ակումբներ, մասնաճիւղեր եւ եկեղեցիներ բոլոր հայկական համայնքներուն մէջ, — ուր անոնք սնուցիչ աղբիւրներ եւ մշտարժարժ օճախներ են հայրենի աւանդութեանց, կարօտներու եւ իտէալներու: Անոնք կը հրատարակեն օրաթերթեր, երկօրեայ, եռօրեայ եւ շաբաթօրեայ թերթեր, ամսագիրներ, եւ եռամսեայ հանդէս ու տարեգիրք, մօտ քսան տեսակ, որոնց Ծ-Ն հատը անգլիերէն, մնացեալը հայերէն լիզուով, — ծանօթութիւն, ուղեգիրժ ու տեսիլք հայթայթելու համար այդ ծրագիրներուն եւ արարքներուն: Տակաւին, ժողովրդային լայնագոյն խաւերէն ներս թափանցելու համար, անոնք ըստեղծեր են տարեցներու, կանանց, երիտասարդներու, նոյնիսկ անգլիախօսներու բաժանմունքներ, կարելի տուելագոյն թիւով տարրեր գրաւելով գործօն մարմիններու, ուրիմն համայնքային կեանքին մէջ, աւելի զօրացնելով ինքնապահպանման պատենէշները: Իսկ մօտ յիսուն հայրենակցական, մշակութային եւ ընկերային միութիւններ կը ծառայեն այլազան մարզերու մէջ, նոյն համապարփակ նպատակներու ծիրէն ներս, իրրեւ օժանդակ մօտրմիներ:

Անցեալ աւելի մոայլ տարիներուն, ամերիկահայ գաղութը համազգային տարողութեամբ յանդուլն ծրագիրներ յղացեր է, հետահաս նշանակէտներ որդեգրեր եւ հսկայ իրագործումներ մարմնաւորեր է: — Անոնք ընդգրկեր են հայկական դատի հետապնդման ձեռնարկներ, առաջին ընդհանուր պատերազմի գինազագարէն միջիւ ներկայ չըջանը: — Կամաւոր մարտիկներու խումբերու կազմութիւն եւ առաքում, նախ կովկասեան ճակատ եւ յետոյ Կիլիկիա, հայկական լեզէոնին, ազատ Հայաստանի երազը նուանելու համար: — Ապա փրկութեան հանգանակութիւն եւ Շիրակի երկրաշարժէն աղէտեալներուն օգնութիւն: — Եւ հետզհետէ՝ վերականգնած հայրենիքին մէջ նոր աւաններու կառուցումը, ներգաղթի կրկնակ միլիոն տուլարի հանդանակութիւնները, Սասունցի Դաւիթի անուան հրատալներու շարասիւնին կազմութիւնը, արտասահմանի մէջ նոր հայ դպրոցներ շինելու կամ հիներու նորոգման օժանդակելու արշաւները: — Նաեւ էջմածնի տպարանին հաստատումը եւ յարակից ուրիշ օգնութեանց յատկացումներ: Եւ

սփիւռքի հայկական վարժարաններուն նպաստելու, անոնց ցանցը ընդլայնելու բարերար շարժումը կը շարունակէ վարել Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութիւնը, իրրեւ ընթացիկ ու ծաւալուն գործունէութիւն:

Ամերիկահայ գաղութը կը բովանդակէ ազգութեան գաղափարով եւ հայրենիքի իտէալով խորապէս տոգորուած համայնքներ, իրենց հիմնական նպատակներուն իրագործման համար աշխատանքի անսպառ եռանդով եւ զոհողութեան գերագոյն շափանիչով: Եւ ան տակաւին ընդունակ կը մնայ, ոչիով ու նիւթական միջոցներով, համահայկական նշանակութեամբ խոշոր ձեռնարկներու, որքան ատեն որ յաջողի երկարաձգել իր կազմակերպում գոյութիւնը: Եւ անոր ինքնապահպանման դառն կոխիւն մէջ նոր ու բարերար օժանդակներ կը հանդիսանան Հայաստանի հետ սերտացող մշակութային կապերը, եւ հայրենի ականաւոր դէմքերու, — ինչպէս Վեհափառ Հայրապետին, Վիքթոր Համբարձումեանի, Արամ Խաչատուրեանի, Չարուհի Դոլուխանեանի, Պօզոս Լիօնցեանի եւ ուրիշ յայտնի գրողներու, գիտնականներու եւ արուեստագէտներու այցելութիւնները մեր հայրենաբաղձ համայնքներուն:

9.

**ՀԱՅՈՒԹԻՒՆԸ
ՀԱՐԱՒ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ**

Արտասահմանի նորագոյն գաղութներէն են լատինամերիկական երկիրներու եւ Քանատայի մէջ կազմուած հայկական համախմբումները: Անոնք գոյութեան եկան իրրեւ հետեւանք Միացեալ Նահանգներու հաստատած օրինական պատուարին, զանգուտձային ազատ ներգաղթի դէմ, 1922էն յետոյ: Եւ նոր աշխարհ ուղուղ տարազիր հայոց կարաւանները, հիւսիսի դարպասները

կգալուամ գտնելով իրենց առջեւ՝ չըջեցան դէպի դրացի կամ հե-
ռուսոր հարաւի հիւրընկալ նաւահանգիստները:

Դրուժան գաղնակիցներէ լքուած եւ թուրքին մասնուած
հայկական Կրկիկոյ փուլզումով պարպուելէն ետք՝ անկէ փախած
մարտչի, հաճընի, անթէպցի եւ զէյթունցի դաղթականներ էին,
որ Լիբանանի եւ Սուրիոյ իրենց կայաններէն մեկնելով, ապա-
տան փնտռեցին Լատին Ամերիկայի քանի մը երկիրներուն մէջ եւ
գարձան կորիզը այդ շրջանի մեր գաղութներուն: Եւ հետզհետէ,
ժինչեւ վերջին ընդհանուր պատերազմի նախօրեակին եւ մանա-
ւանդ անոր վազորգայնին ու մինչեւ ներկան՝ հազարաւոր նորեկ-
ներով կ'անին այդ համայնքները, — այլեւս ոչ միայն Մերձասոր
Արեւելքէն՝ այլ նաեւ Թրանսայէն, Յունաստանէն, Թուրքիայէն եւ
Իրանէն:

Հիմա, Հարաւային Ամերիկայի հայութիւնը սփիւռքի ամէ-
նէն ստուար, կենսունակ ու յարածուն գաղութներէն մէկը կը
հանդիսանայ՝ բայց հեռուոր ու մեկուսի աշխարհագրական շըր-
ջապատի մը վտանգներուն հանդէպ: Անոր գլխաւոր համայնքները
հաստատուեր են Արժանթին (շուրջ 50,000 հոգի), Ուրուկուէյ
(12,000) եւ Պրագիլ (14,000), — կեդրոնացած Պուէնոս Այրէսի,
Մոնթեւիտոյի եւ Սան Փաւլոյի մէջ: Հաւանաբար յաւելեալ 5000
հայեր եւս տարադնուած կան Չիլիի, Վենեսուելայի, Մեքսիկայի
եւ ուրիշ վայրերու մէջ:

Գիտութեամբ ու ճարտարարուեստով շատ խոնարհ աստի-
ճանի վրայ գտնուող ժողովուրդներու մօտ, հայոց շարքաշ աշ-
խատանքը, առեւտրական փորձառութիւնը եւ խնայելու գաղտնի-
քը բազմապատիկ արդիւնքով կը նպաստեն, որ շատեր արագօրէն
մազլցին տնտեսական յաջողութեան զառիվերէն եւ դառնան գրա-
մազլուիխ կամ գործարաններու տէրեր: Մինչ մեծագոյն մասը
ապահովեր է կենցաղային բարեկեցիկ վիճակ, սրպէս խանութ-
պան, մասնագէտ, ճարտար արհեստաւոր կամ ազատ արուեստ-
եան: Կան նաեւ արուարձանային թաղամասերուն մէջ, շքաւոր
ապրուստով ու անակներով հայ ընտանիքներ, իրբեւ մանրանկար
քնիկ զանգուածներու ծայրայեղ թշուառութեան:

Ամէնէն զարմանալի ու ցաւազին երեւոյթը լատին-ամերիկ-


նան հայ գաղութներուն մէջ՝ ուժացումի թափն է: Միայեալ նա-
հանգներ գաղթած առաջին եւ երկրորդ սերունդներու հայոց ըն-
տանեկան յարկերէն ներս բացարձակօրէն արբապետող լեզուն հա-
յերէնը եղաւ: Անոնք չկրցան նոյնիսկ հասկնալի անգլերէն մը սոր-
վիլ, — ա՛յնքան յիպոկս կլանուած էին հայկական շրջապատի,
չարժումներու եւ գործունէութեան մէջ: Եւ տակաւին այսօր՝ ա-
նոնց իստակցական բարբառը հայերէնն է, իրենց անգլիախօս գա-
ւակներուն ու թոռներուն հետ:

Բայց մտահոգիչ ըլլալու շափ բազմաթիւ. են երիտասարդ
հայ ծնողներ Պուէնոս Այրէսի եւ Մոնթեւիտոյի մէջ, որոնք հա-
զիւ տասնամեակ մը առաջ ժամանած են Արժանթին եւ Ուրուկու-
ուէյ եւ որոնք կատարեալ հայերէն գիտեն, սակայն անմիտ, յան-
ցապարտ անփութութեամբ մը՝ սպաներէն կը խօսին իրենց փոք-
րիկներուն հետ, սեփական օճախի շուրջ: Հայ երկուս մանուկ-
ներ, մինչեւ կէսօր, պարտաւոր են յաճախել բնիկ հանրային վար-
ժարաններ, ուր բնականօրէն սպանական է ամբողջ դաստիարա-
կութիւնը, իրբեւ տարազ ու բովանդակութիւն: Իսկ ամէն կէսօրէ
ետք անոնք կ'երթան հայկական դպրոցներ, ուր աղատօրէն անոնց
կ'ուսուցուին հայերէն լեզու, պատմութիւն, գրականութիւն եւ
խորհրդի նիւթեր: Ուրեմն համայնքային աւելի ծրագրուած, խան-
դավառ աշխատանք, եւ ծնողական աւելի գիտակից, խղճամիտ
վերաբերում իրենց զաւակներուն հանդէպ՝ ազգային ինքնապահ-
պանման ջանքերը կրնայ պսակել արդիւնքի բազմապատիկ հա-
տուցումով, — քանի մը սերունդի առաւել հաւաքական գոյատե-
ւում ու վտասակ ապահովելով Լատին Ամերիկայի հայ գաղութ-
ներու:

Սակայն ուժացումի այդ հոսանքը կասեցնելու անհրաժեշտ
պայմանն է, հայ տուներէն ներս թափանցող սպաներէն բարբա-
ռին, ուրեմն մշակոյթին դէմ կանգնել պատուարը հայերէն լեզ-
ուին եւ անով բիրեղացող օգիի ու արժէքներուն: Իսկ այդ նշա-
նակէտի իրագործման համար քանի մը կենսական պահանջներ
պէտք է լրացուին: Անոնց առաջինը, բնականօրէն, ընդլայնել է
դպրոցներուն ցանցը եւ բարձրացնել անոնց կրթական մակարդա-
կը: Մանաւանդ զանոնք վերածել «ամբողջօրեայի», — սպանական

645

2547



եւ հայկական բաժիններուն միացումով: Այդ մարզին մէջ բացառիկ յաջողութիւն արձանագրած է Պուէնոս Այրէսի ազգային-եկեղացական իշխանութիւնը: Ան շահած է հաւանութիւնը, նիւթական կարեւոր յատկացումի մը հետ, Արժանթինի Կրթական նախարարութեան, եւ Հայ Կեդրոնի վարժարանը իր քանի մը հարիւր երկսեռ աշակերտներուն կուտայ ընդհանուր սպանական ծրագրով դաստիարակութիւն մինչեւ կէսօր, իսկ ճաշէն յետոյ մինչեւ երեկոյ նոյն դասարաններուն մէջ կ'աւանդուի լիապէս հայեցի կրթութիւն: Այս դպրոցը նոր բաժանմունքի մը կառուցումով ընդարձակուցաւ, մինչեւ 500 ուսանողներ ընդգրկելու տարողութեամբ:

Կրթական այս զուգընթաց ծրագիրներուն ընդլուզումը կ'ընծայէ կրկնակի բարիք: Ան կը նպաստէ Արժանթինի պետութեան, հայ սեփական վարժարանի մը մէջ, մանուկներուն սորվեցնելով երկրին սպաներէն դասացուցակը, ուրեմն զայն ազատելով այդ պարտքէն եւ անոր կատարման ծախքէն: Ան կ'օգնէ մանաւանդ մեր երկսեռ աշակերտներուն, — անոնց խնայելով կէսօրէն ետք, հանրային կրթարաններէ հայ դպրոց փոխադրուելու տաժանքը, երթելեկի ծախսերը եւ թանկագին ժամանակի կորուստը: Տարակոյս չկայ, որ եթէ քանդուին հատուածական եւ յարանուանական պատուարները Պուէնոս Այրէսի եւ Մոնթեւիտէոյի հայ թաղային եւ «գրացի» փոքրիկ դպրոցներուն միջեւ, եւ անոնց ուսանողները եւ ուսուցչական կազմերը միաձուլուելով վերածուին ամբողջօրեայ վարժարաններու (առաւօտ՝ սպանական եւ կէսօրէ ետք՝ հայկական ծրագրով), Արժանթինի եւ Ուրուկուէյի հայ դպրութիւններուն ազգային ինքնապահպանման ճիգերը աւելի երկուր գոյատեւման մը հեռանկարը կրնան ապահովել:

Պրագիլի իշխանութիւնը աւելի խստասիրտ վարքագծի մը կը հետեւի կրթական եւ յարակից ծարգերու մէջ: Այսպէս, Սան Փաւլոյի հայ եկեղեցիի կողքին կայ «ազգային» ամբողջօրեայ դպրոցը: Բայց անոր դասարաններուն մէջ, պարտադրաբար, բնիկ հանրային վարժարաններու փորթուկալերէն ծրագիրը կը գործադրուի: Եւ հայերէն լեզուն ու շարագրութիւնը կ'աւանդուին որպէս օտար, ուրեմն հանդուժուած նիւթեր: Այդպիսի կաշկանդիկ պայմաններու հանգէպ՝ ուսուցիչներ ու հանրային առաջնորդներ

աւելի ծանր պարտաւորութիւն կը դիմագրաւեն, առաւել շարուած ջանքերով ու կողմնակի ձեռնարկներով լրացնելու համար մանուկ սերունդին հայեցի կրթութիւնը, որ ազգային աւանդութեանց, մշակութային արժէքներու, վերածնած ներկային եւ ապագայի ձգտումներուն ճանաչումը եւ մտերմութիւնը կ'ընդգրկէ:

Բայց Լատին Ամերիկայի հայ դպրութիւններուն մէջ, ապաստան վտանգը կը սպառնայ առաւելապէս՝ դպրոցական տարիքը անցած, կամ արդէն ընտանիք կազմած երիտասարդ սերունդին: Ան արդարօրէն կրնայ պարծիլ իր կատարած նուաճումներով կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ: Որովհետեւ իր շարքերէն տուած է յայտնի արուեստագէտներ, բժիշկներ, իրաւաբաններ, մասնագէտներ եւ առեւտրականներ, որոնք բնիկ շրջանակներու գնահատանքը շահած են: Անոնք արագօրէն տիրացեր են սպաներէն կամ փորթուկալերէն լեզուին, զոր կը խօսին մայրենի բարբառի նման. դժբախտաբար՝ յաճախ անոր փոխարէն: Այս տիուր ընկերութիւն պատճառը՝ ազգային համապարփակ դազափարի, նըպատակներու եւ շարժումներու տկարութիւնն է յայտնապէս:

Արժանթինի, Ուրուկուէյի եւ Պրագիլի հայկական հոծ համայնքներուն մէջ կ'ու յարատեւ կը դործեն սփիւռքահայ ծանօթ ազգային, եկեղեցական, մշակութային ու կրթական մարմինները: Հայկ. Բարեկործական Ընդհ. Միութեան մասնաճիւղերը կը պահեն իրենց կեդրոնները, — դպրոցով, սրահով, ընթերցարանով, որոնց շուրջ երէց եւ երիտասարդ անդամներ կը բոլորուին բազմերանգ եւ աշխոյժ գործունէութեամբ: Իր մատուցած ունակին ծառայութեանց եւ հսկայ վաստակին վարկով՝ ան ջերմ համակրանք կը վայելէ ժողովրդային լայն խաւերուն մէջ: Բայց կազմակերպիչ պաշտօնեայի մը յաւելեալ ջանքերով ան պիտի կրնայ շատ աւելի զօրանալ ու տարածուիլ: Եւ այդ շրջանի հայութեան տընտեսական բարեկեցիկ վիճակին նպաստովը՝ ոչ միայն նիւթական բուարար հասոյթներ պիտի ապահովէ, լաւագոյն հայ վարժարաններ բանալու եւ ուրիշ տեղական կարիքներու ընդառաջելու համար, այլ նաեւ պիտի կարենայ օժանդակել հեռաւոր ու չքաւոր դպրութիւններու դպրոցներու բարելուման կենսական ձեռնարկներուն:

Միմեանց կողքին բայց իրարմէ անջատ կ'ապրին ու կ'աշխատին Հայրենակցական, մշակութային եւ ընկերային միութիւններ, յաճախ ինքնարաւ մեկուսացման մը մէջ: Անոնք Համահուած են վառ Հայրենասիրութեամբ, որդեգրեր են ազնիւ նպատակներ, ստեղծեր են ընտանի միջավայր եւ ընդունակ են յօժարակամ գոհոգութեանց: Բայց անոնք նաեւ կը մնան մասնատուած, — խմբակային, ծննդավայրի եւ յարանուանական պատուարներով կը բաժանուած իրարմէ: Եւ Հատուածական իտէալներն ու ճիգերը, ինչպիսի բանաւոր շարժառիթներէ ալ բխին՝ իրենց սահմանափակ, վաղանցիկ ընոյթով չեն կրնար խանդավառել ու ներշնչել նոր սերունդը: Զարգացած Հայ երիտասարդութիւնը, յառին մը շակոյթներու Հրապոյրներէն եւ սուօրեայ կենցաղի շողշողուն խայծերէն՝ մեր Հաւարական կեանքին ու Համայնքային շարժումներուն մէջ զրաւելու Համար, անհրաժեշտ է, կորսուած ծննդավայրի եւ բնազանցական Հաւատքի անոնց անծանօթ ու անհաղորդ կապերէն վեր՝ ազգութեան յաւերժական զաղափարով եւ Հայրենիքի նուիրական տեսիլքով տողորել զայն: Ատիկա Համազօր պիտի ըլլայ Հասարակական դիրքի մը խոնարհ ու մոռլլ ստորոտէն զայն Հանելու վեհաշուք ու յուսաւօր բարձունքի մը գեղեցկութեան ու փառքին:

Սակայն գաղութային մասնիկները Հայութեան բովանդակին մէջ Համաձուլումի եւ Հասարակաց դերագոյն նշանակէտներու ազաջնորդողի դերը կառարեր են Ռամկավար Ազատական, Հնչակեան եւ ուրիշ Հայրենասէր Հոսանքներ, իրենց գաւաններին Համազգային ընոյթով ու ձգտումներով, իրենց ամբօրէն կազմակերպուած ուժերուն ծաւալուն ցանցով, եւ իրենց մամուլին ու գրականութեան սփռած Համագումներուն լոյսով ու ջերմութեամբ: Բայց Հարաւամերիկեան Հայ գաղութներուն մէջ անոնք արգիլուեցան իրենց այդ կոչումն ու պաշտօնը լիապէս արդիւնաւորելէ, իրրւ հետեւանք յարափոփոխ իշխանութեանց յաճախ բռնափրական կապանքներուն կամ Հալածանքին: Հիւրընկալ երկիրներու պետերուն Հակասովեա թշնամանքը՝ Հայկական չրջապատէն ներս վերածուեր է ճշիշ կամ խափանաբար վերաբերմունքի, Հանդէպ իրենց ու խտերուն Հաւատարիմ կազմակերպութեանց ու թերթե-

րուն, — որովհետեւ անոնք Թորհրդային Հայաստանը ընդունել են իրրւ Մայր Հայրենիքը ամբողջ Հայ ժողովուրդին, ուր ան հրաշալի վերածնունդ մը կը կերտէ: Մանաւանդ, երբ իր ամօթալի վատասերումին մէջ՝ զրպարտիչ նոյն ցուցամատը, կասկածէ ու վախէ զարնուած յետաշրջական օտար կառավարութեանց մօտ մշտապէս զանոնք կ'անուանարկէ որպէս «Համայնավար» կամ «ուղեկից» գործակալներ, ուրեմն նշուակ Հետապնդումի, հոկազութեան եւ լուծարքի:

Հուանաբար այս սեղմումներն ու միջնորոտը պատճառ եւ զած են, որ Լատին Ամերիկայի Հայ Համայնքները, Հակառակ իրենց խոշոր Համբանքին եւ նիւթական բարեկեցիկ վիճակին՝ չբարեկեան զուրսէն ստանալ կամ ներսէն արտադրել բաւական գործողներ եւ մտաւորական առաջնորդներ, զազութը պաշպանելու, պայքարը աւելի ազգու թափով վարելու Համար: Մանաւանդ որ՝ ան կը բազկանայ տակաւ, ներքին աճումով եւ արտասահմանէն նոր գաղթականներով: Բարեբախտաբար, Հիմա առաւել թոյլատու եւ յուսալից պայմաններ սկսած են ստեղծուիլ: Եւ աւելի խոստմալի հեռանկարներ կը բացուին, ծրագրելու եւ աշխատելու առաւել ծանր պարտքերով, Հայրենասէր կազմակերպութեանց եւ թերթերուն Համար, որոնք ուժերու եւ ճիգերու ներգաշնակ Համադրումով, կրնան առաւելագոյն արդիւնքով պսակել իրենց ընծայուող նոր պատեհութիւնը: Եւ կարելի պիտի դառնայ աւելի բազմաթիւ Հայ դպրոցներ կազմակերպել ամբողջօրեայ, — կէս ընիկ եւ կէս Հայկական դասացուցակով, որպէսզի նուազի՝ նոր սերունդը ծուատող ուժացման գերանդիին հունձքը: Բայց մանաւանդ, երբ անոնք յաջողին այդ վարժարաններէն չրջանաւարտ Հայ աղջիկներն ու տղաքը զրաւել իրենց գաղափարական ծիրերէն ներս եւ զանոնք դաստիարակել ազգային ձգտումներով, Հայրենիքի ընդհանրական իտէալով, եւ մեր հինաւուրց ու փարթամ մշակութիւն Հմայքով, որպէս հիմնական առաջձը դէպի գայիքը ձգուած մեր գոյութեան կամուրջին:

Քանաաայի Հայկական Համայնքները վարչականօրէն ենթակայ են Մ. Նահանգներու Հայոց Առաջնորդարանին եւ կազմակերպական միւս կեդրոններուն: Անոնց շուրջ երեք Հագարի գու-

Վարը արագօրէն կ'աճի, Թուրքիայէն, Աղիպոսէն, Յունաստանէն եւ Մերձաւոր Արեւելքէն զազիթոլ նորեկներով:

Եւ անոնք տակաւ կը զօրանան եկեղեցական, հանրային ու մշակութային մարզերու մէջ ծառայող մարմիններու ստեղծած հարապատ մթնոլորտով եւ վարակիչ գործունէութեամբ: Անոնց զոյրութեան կոխը թերեւս աւելի կը բարդանայ այն իրողութեան հանդէպ, որ փոխանակ մէկի՝ երկու օտար լեզուներուն եւ ազգեցութեանց, —անգլիական ու ֆրանսականին, —գրուհները պիտի դիմադրուին: Բայց Քանաւայի հայոց ինչպէս ներկայ զոյրութեան կը՝ նոյնպէս ուղղային ինքնապաշտպանման իրենց ապագայ ջանքերը եւ անոնց արդիւնքները սերտօրէն միաձուլուած են Միացեալ Նահանգներու հայութեան գիմադրելու, տակալու կամքին եւ տեսչու յաջողութեան հետ:

Գ.

ՖՐԱՆՍԱԶՍՅՈՒԹԻՒՆԸ

Ափիւլքի ամէնէն նշանակելի եւ ազդեցիկ հայկական գաղութը սահմանուած էր ըլլալու Ֆրանսահայ համայնքը, իր շահակի ու որակի տիրական կեդրոնացումով եւ ազատ ու լուսաւոր միջավայրի մը գերազանց պայմաններով օժտուած: Արեւմտահայ ազգային զաբթօնքի եւ գրական վերածնունդի ո՛չ միայն գաղտփարները, ձգտումներն ու նպատակները ներշնչուեալ էին Ծրանսական Յեղափոխութեան սկզբունքներէն եւ անոր շքեղ գրականութեան յորդ աղբիւրներէն: Այլ մեր լուսագոյն գրողները, հանրային առաջնորդներն ու կրթական մշակները կա՛մ սպրեք ու զարգացեր էին Փարիզի մէջ, եւ կամ դաստիարակուեալ էին այլուր, Ֆրանսերէն լեզուին ու մշակոյթին ճօրութեամբ եւ զեղապաշտ, ճշմարտախոյզ ոգիով:

Անցեալ դարու վերջին տասնամեակներուն եւ մինչեւ 1915ի

ահուելի եղեանը՝ հայ մտաւորականներ եւ հանրային գործիչներ յարատեւ աշխատանք տարեր ու ծաւալուն պայքար մղեր էին Ծրանսայի մէջ, հայ ժողովուրդի ու Հայաստանի ազատագրման դատին ջատագով համակրանք ստեղծելու եւ պետական աջակցութիւն ապահովելու հետանկարով: Իրբեւ արդիւնք այդ ծրագրուած ճիգերուն՝ հայոց գրականութեան, մշակոյթին ու պատմութեան ծանօթացան Ֆրանսացի բազմաբնակ յայտնի ղեկավարներ (նախագահ, վարչապետ եւ նախարար) եւ ականաւոր գրագէտներ, որոնք յաճախ արտօյնեան հանդիսացան արեւմտահայոց ազգային իրաւունքներուն եւ ազատութեան:

Եւ երբ, ստաջին ընդհանուր պատերազմէն ետք, մանաւանդ քեմալական յաղթանակին որպէս հետեւանք, հարիւր հազարաւոր հայ տարագիրներ ապաստանեցան Ծրանսա՝ չոն երկրորդ հայրենիքի մը գրեթէ հարազատ մթնոլորտը սղոյնեցին, կառավարական պետերու բարեացակամ վերաբերմունքին հետ: Հետզհետէ, Յունաստանի հայկական որբանոցներու փակումէն յետոյ, բիւրաւոր հայ զաղթականներ, մեծ մասով երէց որբեր, եւ Պոլսէն փախտական գրողներ ու մտաւորականներ անցան Ծրանսա եւ Հատատուեցան Փարիզի, Մարսէյի ու Լիոնի եւ անոնց միքմտակալ աւաններուն մէջ:

Ծրանսահայ գաղութը դարձաւ ամէնէն հոռ ընդհանրական համախմբումը արտասահմանի մէջ, Միացեալ Նահանգներէն ետք: Բայց օժտուած բացառիկ առաւելութիւններով: — Անոր մեծագոյն զանգուածը կը կազմէին երիտասարդ տարբեր, որոնք վարչապետի սպանդէն ու աքսորէն վերապրած երկսեռ որբերու եւ ստանդոյներու լեզէոններն էին: Ան նաեւ փիւլքի ամէնէն գրագէտ գաղութն էր, — ընդհանրապէս բազկացած Պոլսէն, Իզմիրէն եւ սուրիշ կեդրոններէ ճողապրած երէց, միջին կամ պատանի օբրուեցաներու Հատուածներէ, որոնք նախակրթարանի կամ բարձրագոյն վարժարանի վկայականներու այն տեսնուած համար՝ արտապարզ շնորհքն ու փառքը կը կրէին: Եւ մանաւանդ, ահաւոր նախճիրէն փրկուած արեւմտահայ տարեց եւ ինքնապաշտ գրագէտներու եւ մտաւորականներու ամէնէն յայտնի ու տաղանդաւոր գէմքերը համախմբուեալ էին Փարիզի մէջ, կամ յաճախ բնակելու կ'երթային:

հուն և յգ պայմաններուն համախառն նպատին շնորհի էր, որ Ֆրանսայի մէջ ծաղկեցաւ եւ աճեցաւ գաղութահայ գրականութիւնը, իր առաջին ու հզօրագոյն պտղաւորումով եւ խորքի ու տարագի ինքնատիպ յայտնութեամբ:

Բայց սփռուքի հայկական իրականութեան ամէնէն ցուազին մէկ երեւոյթն է, որ արտասահմանի ամէնէն հոծ ու կեդրոնական՝ տակաջն նաեւ ամէնէն անկազմակերպ ու ամուլ հատուածը դարձեր է Ֆրանսահայ գաղութը, — աւելի անմիջականօրէն վտանգուած ազգային ուժացման մակընթաց յորձանքէն՝ քան նոյնիսկ Միացեալ Նահանգներու հայութիւնը: Հիմա շուրջ 135 հազար հայեր կ'ապրին Ֆրանսայի եւ արեւմտեան Աւրոպայի մէջ (Մոզլիա, Գերմանիա, Պելճիքա, Իտալիա, Հոլանտա), որոնց աւելի քան 130,000ը համախմբուած են Ֆրանսա: Ընդհանրապէս՝ Հայրենասէր ու գիտակից բանուորներ, խանութպաններ, մասնագէտներ եւ առեւտրականներ՝ անտեսապէս խոնարհ, ինքնարաւ կամ հարուստ:

Սակայն հակառակ իր խոշոր համրանքին, մտաւորական բարձրագոյն գիբքին եւ երկրին պարզեւած ազատ ու բարեացակամ միջավայրին՝ Ֆրանսահայ գաղութը զժրհոտաբար չկրցաւ օրեւէ մարդկային, կազմակերպական կամ նիւթական նպատ ընձայել ուրիշ նուազ բախաւոր գաղութներու յարաճուն կարիքներու բարձումին, կամ համայնքային ու գալրոցական վիճակներու բարեխուման ձեռնարկներուն: Ան նոյնիսկ չյաջողեցաւ ինքնազանջորձնել իր զոյառեւման ամէնէն կենսական գործօնները եւ հաստատութիւնները, — մամուլ, գալրոց, երիտասարդական կեդրոններ:

Միացեալ Նահանգներու մէջ՝ հայոց կուսակցական տկուժքները, եկեղեցիները, Բարեգործական Միութեան մասնաճիւղերը, իրենց գազափարներով, նպատակներով ու գործունէութեամբ՝ ազգային աշխոյժ կեանքի, մշակութային շարժումներու եւ հեռուոր գաղութներու օժանդակութեան յարատեւօրէն աշխատող, խանդավառող, նախարարող առանցքները կը հանգիստանան: Անոնք ոչ միայն կը սնուցանեն ու կ'ապրեցնեն տեղական ու գաղութային հայ համայնքները իբրեւ հաւաքական մարմին, ոգի ու նը-

կարագիր, այլ անոնք նաեւ բարոյազան ու նիւթական ուժապիտակութիւն կը մատուցանեն սփռուքի բոլոր մեծ կամ փոքր հաստատանքներուն:

Իսկ Ֆրանսայի մէջ այդ նոյն մարմինները գրասենեակային մեկուսի գործօններ դարձեր են, խզուած կամ կզգիացած ժողովուրդին ափսոսանքի կենցաղի, հոգերու եւ ձգտումներու հոսանքէն, — հակառակ Բարեգործականի Նուպարեան ճոխ մատենադարանին եւ Առաջնորդարանին ընդարձակ հնարաւորութեանց: Պէյրուսի շուրջ 85,000 հայերը, շաբաթօրեայ եւ ամսօրեայ մամուլի առատ հունձքի մը հետ, կը հրատարակեն նաեւ չորս օրաթերթեր, — երեքը՝ կուսակցական, մէկը անհատի: Նոյնիսկ եգիպտահայեր, մօտ 30,000 հոգի, անխափան կը պահեն երկու օրաթերթեր: Մինչ Ֆրանսայի 130,000 հայերը, «Այսօր» զրպարտուելով դադրելէն ի վեր՝ ունին միայն փոքրածաւալ լրագիր մը, իբրեւ անձնական առեւտուրի ձեռնարկ: Պարբերաբար կը հրատարակուին գրական նոր ամսագիրներ, բայց կը խամրին անսուազ, հազիւ կարճատեւ կեանք մը բոլորած:

Եւ տակաւին մինչ Մերձուոր Արեւելքի հայկական վարձարաններէն բազմաթիւ նորահաս գրողներ եւ ուսուցիչներ կը շրջանաւարտեն եւ կը նուիրուին հանրային ծառայութեան միջնեւ հեռուոր երկիրներ՝ Փարիզ հաստատուած Դպրոցասէր Տիկնանց եւ Միթիթարեան դպրոցները չկրցան, քանի մը տասնամեակներու ընթացքին, պատրաստել գէթ նուազագոյն թիւով երիտասարդ ազգայ կամ աղջիկ մտաւորականներ, որոնք լծուէին Ֆրանսահայ նոր սերունդը ազգային ոգիով տոգորելու, հայրենի խեղճներով ներշնչելու եւ գրական ծրագիրներով կազմակերպելու փրկարար ճիգերուն:

Անհրաժեշտ չէ այս մտայլ կացութեան պատճառները որոնել եւ պատասխանատուներ մատնանշել: Բայց հիմնական պահանջներ են, ապաստան մահացու յորձանքին դէմ այդ խոշոր, կեդրոնական գաղութին գոյատեւումը պաշտպանելու համար՝ աւելի ծրագրուած աշխատանք, ինքնարուիս զոհողութիւն եւ զօրափարական նուիրում: Որովհետեւ հնարաւոր է, աւելի կեդրոնաձիգ կազմակերպութեամբ, Ֆիզիքապէս զօրացնել եւ սղեպէս զրահել

ժողովրդային խաւերը, որոնք ջերմօրէն հայրենասէր են եւ ընդունակ ու յօծար ինքնապահպանման հօգօր քանքերու, յամառ մաքսութի:

Բայց էական պայմաններ են, որ հարուստ ու բարեկեցիկ դասերը նիւթական զոհարեքութեան աւելի առաւանձնուն շափանիչ մը որդեգրեն: Եւ հանրային կարիքներու իրենց ընծայած նպաստները ոչ միտ յն բազմապատկեն, այլ գանձնք սցորմութեան վեհանձն արարքներ նկատելու փոխարէն՝ մարդկային եւ ազգային փայտանդուած պարտամուրհակի մը ուշացած հատուցումը համարեն:

Աւելի վճռական ազդակ մը պիտի հանդիսանայ սակայն, կառավարական խափանումով փակուած «Այտօր» օրաթերթը փոխարինող եւ ռամկավար ազատական ծրագիրով մամուլի մը վերաբացումը Փարիզի մէջ: Որովհետեւ ան պիտի դառնայ, ինչպէս անցեալին, առաջաւոր գաղափարներու բիրեղացումին եւ ազգային գերազոյն, ընդհանրական նպատակներու հետապնդման անխաբար խարխիսի մը, որուն վրան ու շուրջը, իրենց ձգտումները, ճիգերն ու իրագործումները պիտի կրնան համադրել եւ առաւելագոյն արգիւնքի վերածել՝ Փրանսահայ մտաւորականներն ու հայրենասէր բոլոր խաւերը:

Սակայն տակաւին, որպէսզի դարմանուի Փրանսայի հայ գաղութին անկազմակերպ ու բարոյալքող վիճակը՝ կենտական նախապայցման է, որ անոր գրողներն ու հանրային գործիչները աւելի անանձնական, սեւեռուն նշանակէտով փարին իրենց վսեմ կոչումին. եւ աւելի հետեւողական, խանդավառ նուիրումով լրծուին մտաւորականի իրենց բախտորոշ դերին, համայնքի ազգային զոյստեւման պայքարին մէջ: Որովհետեւ, ամբողջ հաւաքակականութեան մը սպիտակ ոչնչացումի աղէտին հանդէպ՝ աններելի մեղանշում եւ ծանր յանցանք է ուժերու որեւէ բաժանում, ճիգերու եւ եռանդի ամէն վատնում:

Փրանսահայ գաղութը տաղանդաւոր գրողներու եւ հանրային ձեռնհաս գործիչներու մեծապոյն կեդրոնացումով օժտուած է: Բայց ողբերգական իրողութիւն է նաեւ, որ անոնք սրտատուչ փորձերու եւ արժէքաւոր երկերու անհատական վաստակէն դուրս՝

եղան ամէնէն ապարդիւն ու ձախողած դասը սփիւռքի մէջ, որպէս հաւաքական զօրութիւն: Անձնակեդրուն ինքնասիրութիւնը, ուրիշներու իրական կամ վերադրուած ձիրքերուն հանդէպ շափազանց խոտապահանջ դատաստանը, սեփական տողանդին ճանաչումը պարտադրելու դիւրագլած յաւակնութիւնը յաճախ անդամահատեր, հաշմեր են գրողներու միութիւններ եւ խմբակցութիւններ: Եւ կոտորակուած քանքերով, թէկուզ նախանձայոյց պոսթիկումով հիմնուած գրական բազմաթիւ թերթեր վաղաժամ շիջումով փակուեր են, նիւթի եւ գրիչի քաղցէն սպառած:

Մինչդեռ՝ Փրանսահայ գրողներն ու մտաւորականները, եթէ հաւատարիմ իրենց կարողութեան, ներդաշնակ զօրաշարժի հաննն ոգիի, միտքի, գիրի եւ արուեստի վաւերական կամ թաքուն իրենց ձիրքերը, տակաւին կրնան ամբողջ սփիւռքի հօգօրագոյն գրական—ղեղարուեստական շարժումը ստեղծել կեանքով, գեղեցկութեամբ ու սլացքով բաբախող ամսագիրի մը կէլերէն: Եւ պիտի կրնան, այդպիսի արտակարգ ձեռնարկի մը արասագրած խանդավառութեան ու թափին տարրերով՝ տիրական զեկափարութիւն մը ընծայել Փրանսահայ գաղութին, — ազգային գաղափարին խոյանքով, հայրենիքի անմար փառքին կախարդանքով եւ տեւելու կռիւին անընկճելի կամքով: Ատիկա պիտի ըլլայ իրենց մեծութեան ու տաղանդներուն ամէնէն վաւերական, ամէնէն անժխտելի վկայութիւնը:

Որովհետեւ փողոսիկէ աշտանակներու անարատ բայց մահաշուք մեկուսացումին մէջէն ո՛չ ապրող ու խորունկ գրականութիւն կարելի է կերտել, ոչ ալ տարագիր բեկորներ առաջնորդել: Փրանսայի հայութիւնը, ամբողջ սփիւռքի նման, կը պահէ իր եկեղեցիները, թաղային դպրոցները, ընկերային միութիւնները, որոնք յաճախ անշուք ու տկար յենակները մնացեր են անոր հասարակական գոյութեան: Մինչ մտաւորականներ, մասնակցելով այդ «համեստ» մարմիններուն ու ձեռնարկներուն՝ իրենց փորձառութեան մղումով եւ հմայքին շուքով գանձնք պիտի դարձնէին համադրուած քանքերու եւ կենսական արգիւնքներու գործօն առանցքներ:

Եթէ միայն՝ Փրանսահայ գրողներ, մայթային սրճարաննե-

բու աշխատէն հանելի գրոյցներէն յետոյ յօժարէին նաև ժերճուիչ իրենց գողութի հաւաքական կեանքին եւ գործունէութեան խոնարհ մարզերէն ներս, եւ Հաղորդուիլ ժողովրդային խոնարհ խոնարհութեան արտաբերում, Հայրենաբարձ կարօտներուն եւ վերապրումի կոտորացող ցաւերուն, եւ սիրով, ոգնպնդել, առաջնորդել զանոնք: Արովհետեւ իբրեւ մտաւորական, իրենց հաստիքներուն տղային, բարեգործական, եկեղեցական եւ կրթական կազմակերպութեանց ու մարմիններուն խառնուելով, զօրացնելով եւ ներշնչելով է որ պիտի կարենան զանոնք վերածել բեղմնաւոր ծրագիրներ մշակելու եւ իրագործելու բարեբեր դաշտերու եւ գոյատեւման իրենց պայքարին մէջ կենդանի պատմելիներու:

և.

ՅՈՒՆԱԼԱՍ ԳԱՂՈՒԹԸ

Առաջին ընդհանուր պատերազմի զինադադարին յաջորդող տարիներուն, եւ մանաւանդ Իզմիրի կործանումէն յետոյ, Յունաստանը դարձաւ լայն բացուած դարպասներով Հիւրընկալ ապաստանք ահաւոր ուրականէն ճողոպրած ու փախստական բիւրուեր հայերու: Այդ շրջանին՝ յարափոփոխ, ծիւռն քանակ մը կը կազմէր անոնց թիւը: Տասնեակ հազարաւոր խուճապահար տարագիրներ Փիլիպպին կը տարածուէին դէպի Աթէնք եւ շրջակայքի զաղթականները եւ մինչեւ Փաթրաս ու Սելանիկ: Բեժմալական արշաւանքին մակընթաց յորձանքէն փախուցեցան ուրիշ տասնեակ հազարաւոր երկսեռ որբեր, որոնք տեղաւորուեցան Քորֆուի, Սիրայի, Կորնթոսի, Քիֆալոնիոյ եւ ուրիշ վայրերու մէջ: Անոնց մտայն կարաւաններուն խառնուելով փրկութեան ճամբան նեւուեցան նաև զօրհուրբի կղզոնէն վերապրած արեւմտահայ տարից կամ երթասարց գրողներ եւ հանրային գործիչներ: Եւ քանի մը տարի՝ Աթէնք աւ Քորֆու եղան գաղութահայ մտաւորական

գլխաւոր կեդրոններ: Բայց ցածօք Հացի ու ցնցատի կարօտ թըլուաութիւնը, աղէտին սիրած հոգեկան փլուզումը եւ գեղարկուան օարսափներուն արհաւիրքն ու վաղուան անստգութեան մղձաւանջը անտուն պանդուխտի, անտէր բեկորի վերածեր էին հօտերն ու հովիւները:

Յունաստան խուժող հայ զաղթականներու համբանքը յաբանուի էր այն տարիներուն: Արովհետեւ մինչ նոր խուճեր կ'ապաստանէին անոր յօժար բայց աղքատ օտերուն վրայ՝ ուրիշ հազարաւոր հայեր կը ձեկնէին անկէ դէպի Ամերիկա, Ճրանա, Եգիպտոս եւ այլուր, վերագտնուած ազգականներու մօտ, կամ դիմելով աւելի յուսալից ապագայի մը: Եւ երբ, 1930էն յետոյ, կայուն գոյափճակի մը հասաւ յունահայ գաղութը՝ անոր թիւք իջեր էր շուրջ 30,000 հոգիի: Յետամնաց ճարտարարուեստով ու անտեսութեամբ չքաւոր երկիրի մը մէջ, անոնք շարքաշ աշխատանքով հազիւ կրնային զրկանքներով դառնացած ապրուստ մը ապահովել: Տակաւ անեցաւ խանութպան եւ առեւտրական դաս մը, Բայց նացի Գերմանիոյ վանտալական ներխուժումը եւ պատերազմին շրջապագերծած ուերի ու նախճիրի սորկումները եւ յետոյ՝ քաղաքացիական կռիւներուն յաւելեալ շարիքները յունահայոց կեանքը դարձուցին գեհնային քաշկրտուք մը:

Բարեբախտ զիպուածով, այդ եղբրական շրջանին զուգադիպեցաւ հայրենադարձի շարժումը: Եւ Յունաստանէն անուեցաւ Հայաստան ներգաղթողներու խոշորագոյն հատուածը, — շուրջ 22 հազար անձ: Հայրենի երկրին մէջ, առաջին քանի մը տարիներուն, անոնք դիմագրաւեցին դժուարութիւններ ու տաղանապներ, բնակարանի եւ կենցաղային: Սակայն հետզհետէ բնականոն պայմաններ ստեղծուեցան եւ անոնք, մանաւանդ իրենց դաւակները, ընդմիջաւ աղատուեցան նոր պանդխտութեանց, նոր դալթերու ահաւոր անստգութենէն եւ սեփական հայրենիքին մէջ ապահով ու տակաւ բարեկեցիկ կեանքի մը խոստումը կ'իրագործեն:

Հիմա, Յունաստանի հայ գաղութը կը բաղկանայ մօտ 8500 հոգիներէ, — մեծագոյն զանգուածով կեդրոնացած Աթէնքի եւ տրուարձաններուն մէջ մինչեւ Փիլիպ, ինչպէս նաև Սելանիկ: Տակաւին, հակառակ Ամերիկայի քնծայած նիւթական տնտեսին օ-

ժանդակութեան՝ տնտեսական պատենութեանց սահմանափակ բը-
նայքը և քաղաքական պայմաններու ճնշիչ մթնոլորտը կը հարկա-
գրեն բազմաթիւ յունահայեր, որ գաղթեն գէպի Միացեալ Նա-
հանգներ, Քանադա եւ Հեռաւոր Արեւմտեան: Քաղաքին կեդրոնա-
կան պոպուլաներու վրայ կառուցուած են բազմաթիւ շէնքեր ար-
դիական ճարտարապետութեամբ, յայտնօրէն ամերիկեան դրամա-
գլուխով: Բայց շքանք, հին թագաձախութիւն մէջ, — նոյնիսկ գե-
ղակերտ Ակրոքոլի շուքին տակ, — դեռ կը մնան նեղ ու խորտ ու
բարձր փողոցները եւ հողաշէն ցած ու մթին հիւղերը, ինչպէս կա-
յին սերունդներ առաջ ևս որոնց մէջ յոյն ու հայ բնասնիքներ կը
բնակին:

Յունահայ գաղութին արդէն դժխեմ կեանքը քանի մը տա-
րիներէ ի վեր առաւել կը փոթորկի Անթիլիասի Հերձուածին սեր-
մանած խառնութեան եւ վարած զրպարտչական պայքարին հետե-
ւանքով շրջագլխով հայրենասէր և էջմիածնական մեծամասնութեան:
Քաջակցական պետերու պատճառած պառակտումին խրամա-
տը ոչ միայն ներքնապէս ձեղքեր է հայ համայնքը: Այլ օտար պե-
տական նպաստներ ու միջամտութիւններ իրենց հայրենադաւ ա-
րարքներուն գորավիզ շահելու համար՝ անոնք անհրաժեշտ նկա-
տեր են իրենցմէ դուրս՝ Հայկական միութիւնները, մարմինները
և անոնց ղեկավար գէմքերը անուանարկել ու մատնանշել հիւրըն-
կալ կառավարութեան մօտ՝ որպէս «համայնագար գործակալ»
կամ «ծպտուած ուղեկիր»: Եւ սանդուներ է սարսափի ու կասկա-
ծի միճակ մը, ուր մարդիկ կը վախճան նոյնիսկ նամակ գրել Հա-
յաստանի իրենց ազգականներուն կամ պատասխան ստանալ ա-
նոնցմէ, կամ իրենց տունները տանիլ Պետհրատին կողմէ տպուած
որեւէ գրական հատոր:

Սակայն հակառակ իր փոքրաթիւ համրանքին եւ արտաքին
ճնշիչ պայմաններուն՝ յունահայ հայրենասէր գաղութը անձնը-
ուէր, կորովի վարիչներու առաջնորդութեամբ՝ կը շարունակէ
տաժանադին մաքառումը ապաստան սպառնալիքին դէմ, նոյն
ատեն դիմակալելով ներքին շարիքին պառակտիչ դաւերը: Իրենց
յամառ ճիգերուն եւ խոշոր գոհողութեանց շնորհիւ, անոնք վեր-
ջապէս յաջողած են կառավարական արտօնութիւն տպահովել էջ-

միածնական եկեղեցիներ բանալու, հովիւներ պահելու եւ պալ-
տամունք ու խորհուրդներ կառարելու: Եւ վեհափառ կաթողիկո-
սը կը ճանչցուի Հայ Եկեղեցիի հոգեւոր ղերադոյն պետը: Հոն
կան Բարեգործականի մասնաճիւղ ու դպրոց, լծուած եռանդուն
աշխատանքի: Իսկ նորահաս սերունդին մէջ, ազգային ու մշակու-
թային ուղիով բարերար գործունէութիւն մը կը վարէ «Արարատ»
երիտասարդական միութիւնը, իր ակումբ-սրահին մէջ: Մինչ
հայրենասէր կազմակերպութեանց ու ձեռնարկներուն ուղի, ներ-
շնչում եւ պաղափարական խանդ ու վասնան կ'ընծայէ «Երկիր» շա-
րաթաթերթը:

Բայց յունահայ համայնքները պարտաւոր են իրենց գոյա-
տեւման դառն կռիւր մղել երեք մարզերու մէջ, երեք վտանգներու
դէմ: — Յոյն եւ հայ դրացիներու խառնուածքի, մտայնութեան եւ
կենցաղի հանդիսութիւնը, որ դիւրաբաց կը դարձնէ եկուոր
մարդկային առուն բնիկ գետի ողողումէն պաշտպանող դիմադրու-
թեան ամբարտակը: — Յետոյ՝ տնտեսական ընդհանուր անհրա-
պոյր պրութիւնը, որ թոյլ չի տար գաղութին ինքնապահպանման
անհրաժեշտ պատնէշները պորացնել եւ ընդլայնել սեփական մի-
ջոցներով ընդհակառակը, անոր անգամ բնասնիքներ կը մղէ ար-
տագաղթել Հեռաւոր, անձանթ երկիրներ, աւելի խոստմնալի ա-
պագայ մը փնտռելու անստոյգ յոյսով: — Նաեւ՝ երկրին քաղա-
քական կասկածի եւ երկիւղի միջովայրը, որ իրապէս եւ հոգե-
բանօրէն կը կաշկանդէ գաղութի ազգային դոյառեւման պայքա-
րին լծուած կազմակերպութիւններն ու անոնց ղեկավարները՝ ան-
հրաժեշտ շարժումներն ու գործօնները ծաւալելու, — որովհետեւ
անոնք հայրենասիրական ողիով, դիմապիծով ու էութեամբ, բնա-
կանօրէն յարած պիտի ըլլան վերածնած հայրենիքին, Խորհրդա-
յին Հայաստանին:

Ուժացումի այդ վտանգներուն դէմ աւելի արդիւնաւոր թա-
փով կարելի է մաքառիլ, արտաքին նիւթական նպաստով ու բա-
րոյական օժանդակութեամբ՝ առաւել ամրացնելով համայնքներու
պահպանման սահմանուած պատուարները: — Աւելի պայծառա-
ցնել հայ դպրոցներն ու էջմիածնական եկեղեցիները, բաւարար
ուսուցիչ ու հոգեւորական տրամադրելով անոնց: — «Արարատ»

երիտասարդական միութեան հաշիւայթիւ աւելի ընդարձակ ու յարմար շէնք մը, որ սրահով, ակումբով ու գրադարանով օժտուելու հնարաւորութիւն ունենայ եւ կարենայ ազգային, մշակութային ու մարզական ձեռնարկներուն մէջէն՝ հայրենասիրական ուղիով ու պետակցութեամբ տարբեր յունահայ նորահաս սերունդը: — Եւ զօրացնել այդ բոլոր ծրագիրներուն ու ճիգերուն թղուծ, պաշտօնատրական խորք ու հեռահաս նպատակ ներշնչող մամուլը: Այն ասան կարելի կ'ըլլայ համախումբ պահել Յունաստանի հայկական համայնքները, աւելի հետաքրքրական ու դրաւիչ դարձնել անոնց հասարակական կեանքը, ուրիժն դանդաղեցնել օտարացման ախտին ճարակումը:

Կիպրոսը աշխարհագրական եւ պետական սահմանումով տակաւին մաս չի կազմեր Յունաստանի, բայց իր բնակչութեան հսկայ հատուածով եւ մշակոյթով ու միջավայրով՝ կարծես անոր հետակայ շարունակութիւնն է: Կղզին մօտ կէս միլիոն բնակչութեան շուրջ 400,000ը յոյներ են, որոնք խորապէս դժգոհ ներկայ հանրապետական բռնազրօսիկ, խարխուլ կառուցուածքէն՝ դեռ կը ձգտին եւ յարածուն ուժգնութեամբ կը շարունակեն պայքարել, զայն կցելու համար իրենց «մայր հայրենիք»ին, — Յունաստանի: Իսկ 80,000 թուրքերը նոյնքան յամառօրէն կը փորձեն խափանել այդ ծրագրին իրազօրծումը, պահելով Կիպրոսի նորակերտ վարչաձևը, — յոյն-թուրք երկդիւսանի զուգահեռ իշխանութիւնը, որ ինքնավար դրութեամբ եւ իրաւունքներով օժտեց զիրենք:

Այս հակամարտութեան ստեղծած տագնապալի, պայթուցիկ կացութեան մէջ կ'ապրին կիպրոսայ գաղութին հազիւ 4,500ի հասնող անդամները, Նիկոսիայէն մինչեւ Լաոնաքա եւ Լիմասոլ: Քանի մը յաջող աւետարականներէ բացի՝ մնացեալները խննութպաններ, պաշտօնեաներ, արհեստաւորներ եւ հողագործեր են ընդհանրապէս, միջին կամ համեստ կենցաղով: Բարդաւած կամ բարեկենցիկ անասնական վիճակ չունի Կիպրոսը, հում նիւթերու եւ սոսքման ջուրի պակասին պատճառով: Եւ քաղաքական միջնորդը հանգուրթող չէ հայ հայրենասէր մտայնութեան ու ձեռ-

նարկներուն հանդէպ: Բայց այդ պատճառներէն աւելի, յոյն եւ թուրք թշնամանքին, նոյնիսկ արիւնալի կոխներու վերսկսումին վախն է, որ մղեր է աւելի քան հազար կիպրոսահայեր մեկնելու Անգլիա, անցեալ մէկ տարուան շրջանին: Եւ կղզին լքելու շարժումը կը շարունակուի:

Բարեբախտաբար ներկայ տարեշրջանին կատարուելիք հայրենադարձի ծրագիրին մէջ Կիպրոսի արուած առաջնութեամբ մը՝ արտագաղթի այդ հոսանքը շրջուելով դէպի Հայաստան, կը վերածուի ներգաղթի:

Դժբախտ, ափսոսալի երեւոյթ մը եղաւ անոնց այդ կամար տարագրումը: Որովհետեւ Կիպրոսը այն վայրն է, ուր ազգային ձուլումի վտանգը իր նուազագոյն աստիճանով կը յայտնուի: Հոն հայ համայնքները կ'ապրին աւելի ինքնամփոփ, զօրացած՝ շրջապատի օտար ճնշումներուն տոկալու հօր աւանդութեամբ, մանաւանդ լաւ կազմակերպուած ազգային վարժարանի նպաստով եւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան բարերար ներկայութեամբ, — որ մեծագոյն հիմնարկներէն մէկն է Հայկ. Բարեկործական Ընդհ. Միութեան:

Զարմանալի չէ, որ ամբողջ սփիւռքի մէջ՝ կիպրոսայ դադուիթը կրնայ պարծիլ իր երիտասարդ սերունդին հայեցի բարձրագոյն կրթութեան գերազանց սակովը: Բազմաթիւ են շրջանաւարտ մելգոնեանցիներ բոլոր ասպարէզներուն մէջ, կազմելով մտաւորական դաս մը, որ ներշնչում ու ղեկավարութիւն կուտայ գաղութի հասարակական ու մշակութային կեանքին: Մելգոնեանը, իր անցեալ բերքերով եւ ապագայ խոստումներով՝ համագաղութային արժէք ու տարողութիւն կ'ընծայէ Կիպրոսի այլապէս փոքրաթիւ հայկական համայնքին: Եւ ան լիապէս կ'արդարացնէ իր դերքը ու պարտաւորութիւնը:

Ան կրցաւ, իր մարդկային ընտիր տարրերով՝ արագօրէն կազմակերպել կիպրոսահայ համայնքային միութիւնը եւ վարեց ծրագրուած, յանդուզն ընտրապայքար մը, փառաւոր յաղթանակով Կիպրոսի Հանրապետութեան երեսփոխանական Ժողովին անդամ բնարելով իր ներկայացուցիչը, անթիլիստեան հատուածի թեկնածուին դէմ: Եւ շահեցաւ իրաւունքը հայ զպրոցներու բացարձակ

Հոգատարութեան, պետական պիւտճէէն բաշխուած նիւթական բուարար յատկացումով:

Գաղութին կը ծառայէ Բարեշրջականի մեծադոշն մասնաճիւղերէն մէկը, իր կեդրոնի տեղումքին ու սրահներուն մէջ բազմակողմանի աշխոյժ գործունէութեամբ: Կայ նաև մշակութային միութիւնը, իր ընդարձակ սրահով եւ ընթերցարանով: Եւ շարաթաթերթիկ մը, որ իբրև գաղափարական ու ողբկան անխարզախ «Յեռնալաւն», նուիրուած է Հայրենասիրական բոլոր այլ մարմիններուն ու շարժումներուն ծառայութեան: Եւ իր սեփական ուժերով ու հնարաւորութիւններով՝ կիսգրահայ Համայնքը պարտաւոր կը մնայ եւ ընդունակ է դեռ աւելին կատարել իրեն եւ ուրիշ գաղութներու գոյտանման համար:

2

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Տակաւին մինչև քանի մը տարի առաջ՝ եգիպտահայեր ըստփռութի ամէնէն ապահով, անտեսապէս բարգաւաճ ու կենսունակ մէկ գաղութը կը կազմէին: Աղգային, քաղաքական, մշակութային ու բարեսիրական յարատեւ, ծառայուն գործունէութեան մը հրահայ վաստակով, հարուստ աւանդութեամբ եւ նախանձելի համբաւով արշարորէն կը պարծէր ան: Գահիրէի մէջ էր հիմնուած, 1908ին, Հայ Սահմանադիր Ռամկ-վար Կուսակցութիւնը, եւ հոն ծնած էր նաև, 1906ին, Հայկ. Բարեշրջական Ընդ.՝ Միութիւնը, — համաղգային ծրագիրներով նրկու հզօր կապակերպութիւններ, որոնք նշանակելի ծառայութիւն կը շարունակեն մատուցանել հայ ժողովուրդին, անոր գերազուս շահերուն, հայրենասիրական ձգտումներուն եւ կրթական պահանջներուն հետապնդման ու բուարարման իրենց նուիրումին մէջ:

Եգիպտահայեր հիւրընկալ երկրին եւ անոր պետութեան տուեր էին քաղաքական եւ հասարակական ակամաւոր, ազդեցիկ առաջնորդներ, որոնք իրենց վարկով ու նիւթական յատկացումներով կը սատարէին Գահիրէի եւ Կղեքոսնոգրի մէք համայնքներուն Հանրային կեանքին ու ձեւարկներուն զարգացման, ընտիր Հայկական վարժարաններ եւ գեղակերտ եկեղեցիներ կառուցանելով: Եգիպտահայ գաղութը մանաւանդ զբաղան ու մտաւորական թանկապին արժէքներ ու շարժումներ ստեղծած ու սնուցած է իր բեղմնաւոր միջավայրով: Ան նաև, ամերիկահայ գաղութէն ետք՝ ամէնէն առատաձոնը, յարատեւ նպաստներով օժանդակեր է արտասահմանի Հայութեան ազիտահար հատուածներու թշուառութիւնը ամօքելու եւ կրթական կարիքները հոգայու ձեւարկներու:

Սակայն հիմա յեղաշրջուեր է անոր դոյալիճակը, արտաքին պայմաններու անողոք ճնշումին հետեւանքով: Եգիպտահայոց թիւը, հիւսիսային Ափրիկէի տարողնուած փոքր համայնքներով, հաւանարար կը հասնի շուրջ 35,000 հոգիի: Անոնք նիւթապէս բարեկեցիկ են դարձեալ, եւ հայ աղգային ոգին, հայրենասիրական խանդն ու մշակոյթին սէրը անոնց մէջ կը մնան նոյնքան հարազատ ու կենդանի: Բայց տակաւին, գաղութը ցաւագինօրէն հաշմուեր է, ուրիշ որեւէ երկիրի մէջ տաղնապի մատնուած աղգակիցներու եղբայրական օգնութիւն մը բնծայելու իր յօժարութեան հանդէպ: Եւ աւելի տխուր իրողութիւն է դարձեր, որ ան ենթարկուած է անտեսական անստգութեան ու հոգեկան ճգնաժամի դժիւմ կացութեան մը:

Սորհրդաւոր կամ բարդ չեն եգիպտահայ գաղութին ընկրկումին պատճառները: Անոր նիւթական բարգաւաճման սահմանները եւ համայնքային գործունէութեան ու շարժումներուն ծիրերը տակաւ կը սեղմուին: Ճիշդ է, թէ օտար, քրիստոնեայ փոքրամասնութեանց արագ անհետացումով Գահիրէէն եւ Աղեքոսնոգրիայէն՝ հայերու ձուլման սպառնալիքը կը վերանայ, կամ կիջնէ նուազագոյն չափին, անգամ միւս արարական երկիրներու հայ գաղութներուն բողգատամբ: Բայց այդ բարիքը կը յեղօրանայ՝ նոյնիսկ բարենպաստակ հիմնարկներու եւ եկեղեցա-

կան որոշ կաշուածներ ու հողեր պետականացնելու հասանական վտանգէն: Որովհետեւ անոնց եկամուտներուն չբացումը ներթա- կան անուսուզութեամբ պիտի անգամալուծէ Եղիպտոսի հայ ազ- գային վարժարաններն ու մշակութային աղումները, որոնք ամէ- նէն վճռական գործօններն են մանուկ եւ երիտասարդ սերունդնե- րու հայեցի դաստիարակութեան մէջ:

Եղիպտական իշխանութիւնը անցեալ տարուան ընթացքին սրգեղրեց ու գործազրեց խոշոր դրամադրութիւններու եւ գործարան- ներու դրաման արմատական, հեռահաս ծրագիր մը: Երկրին ար- տադրական կեդրոնները, ընդարձակ ապարակներն ու կուտակուած սակիները սակաւաթիւ տէրերէ տանելով՝ չբաւար, թշուառ զան- գուածներուն բաշխելու յեղափոխական նպատակն էր հետապնդ- գուածը: Եւ տարակոյս չկայ, թէ ձեռնարկին շարժառիթը ազնիւ էր եւ հայրենասիրական, — ան կ'առաջադրէր բարեկաւել ազբա- խաւերու կենցաղային ողբալի մակարդակը եւ սրազ թափով զար- գացնել Եղիպտոսի յետամնաց ճարտարարուեստն ու նախնական հողագործութիւնը: Բայց անոր կիրարկումին արմատական եղա- նակը եւ անհրաժեշտ մասնագէտներու պակասը պատճառ տուին, որ պետականացման արշաւը յաճախ ժխտական արդիւնքներով յաշտուի, — տնտեսական կազմալուծում ստեղծելով եւ նոյնիսկ ժողովուրդի միջին ու խոնարհ դասակարգերուն մէջ վախի ու խու- ճապի մտայնութիւն սիրեցնելով:

Ճիշդ է, թէ քանի մը եղիպտահայերու գործարաններն ու որոշ ստացուածքները դրաւուեցան պետութեան կողմէ: Սակայն դադուիք վստահ է, թէ շարժումը ուղղուած չէ որեւէ ազգային փոքրամասնութեան դէմ, այլ կ'ընդգրկէ երկրին ամբողջ բնակ- յութիւնը, առանց ցեղային կամ կրօնական խտրի: Մանաւանդ ան երախտապարտ կը զգայ նախագահ Նասրըի կառավարութեան լայնախոհ, բարեացակամ վերաբերմունքին համար, որով ան ար- տօնեց Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայոց երեսփոխանական կրթի- նակ բնութիւնները եւ հաստատեց անոնց արդիւնքները, — որ- րոնք վճռական յաղթանակներ ապահովեցին հայրենասէր եւ էջմի- ւածնական համայնքներուն, եւ սմօթայի պարտութեան մատնեցին զաշնակցական Անթիպաս Հերձուածին ազանդը, որ լրտեսութեան

մեղադրանքի շուքին տակ ծուարեր է «Յուսաբեր» անյուսութեան եւ ուրացումի մացառուտին մէջ:

Բայց տակաւին, յարափոփոխ ներկայի ճնշող մթնոլորտէն եւ ապագայի խռովիչ անստորութենէն երկիւղի ու յուսալքումի տրամադրութիւն մը ծանրացեր է եղիպտահայ գաղութին վրայ: Արաբ սոցալիստական զարթօնքը եւ օտար քաղաքական ու տնտե- սական կապանքները ձերբազատման տենչը տարերային զօրու- թեան աղբիւրներ են քնիկ ժողովուրդի ազատութեան ու բարօրու- թեան պայքարին մէջ: Սակայն այդ մակընթացող ուժերու բուռն պոռթկումը նաեւ կը հարուածէ, թէկուց ախճայ, իր հոսանքը ե- զերող անմեղ տարրեր: Եւ անորոշ գալիքի վախը համակեր է բազ- մաթիւ հայ ընտանիքներ, — շատերը՝ իրենց առեւտուրին կամ խը- նայողութեանց վաղուան վիճակով, կասկածին հանդէպ, թէ կալ- ուածներու եւ ստացուածքի պետականացման ծրագիրը տնտեսա- կան սանդուխտի միջեւ ո'ր աստիճանը պիտի երկարէ իր մաղէլ- ները: Եւ ուրիշներ՝ բարձրագոյն կրթութեամբ վկայուած իրենց զուակներու ապագայ ասպարէզներուն անհետացման համար:

Իսկանը այն չէ, թէ երբեմն խուճապահար հողերանութեան ձօնեցող այդ մտավիճակը բանաւոր է, արդարացի կամ ոչ, այլ այն, որ ան գոյութիւն ունի եւ ենթակաները կը մղէ սպաւեռնիլ արտագաղթի, դէպի որեւէ հեռաւոր, անձանօթ երկիր, մինչեւ Քանաւա եւ Արժանթին, նոր կեանք կերտելու, նոր օճախ առկայ- ծելու տաժանքներուն մատնուելու յօժարութեամբ: Նոյն շրջանին էր, որ բարեբախտ զուգադիպութեամբ Երեւանէն ծանուցուեցաւ հայրենագաղթի մօտաւոր ձեռնարկի որոշումը, — որ ամէնէն ա- պահով դաճապար կը բանար անյայտ ելքեր որոնողներու առջեւ, դէպի ազգահաւաքման գերագոյն նպատակը:

Գահիրէի, Հելիոպոլսոյ եւ Աղեքսանդրիոյ հայկական լրիւ դպրոցները, իրենց ընդարձակ ու յուսաւոր շէնքերով եւ կրթական խոշոր կարելիութիւններով՝ Մերձաւոր Արեւելքի հարիւրաւոր հայ վարժարաններու բարձրագոյն մակարդակին կը պատկանին: Ա- նոնց դասարաններուն մէջ, հազարաւոր երկօտեւ աշակերտներ, ի- րենց մանկական մատղաշ տարիքէն մինչեւ պատմութիւն, կը գտատիարակուին, կը թրծուին հայերէն լեզուին, պատմութեան ու

ձշակոյթին շնորհներով ու լոյսով: Անոնք կը սորվին նոյնպէս շա-
արարերէն, յաճախ նաեւ Փրանսերէն եւ անգլերէն, որպէս ուսում-
նատենչ, գիտակից քաղաքացիներ նշխարոսի: Բայց դպրոցներուն
մէջ տիրող հայեցի հարադատ մթնոլորտը անվրէպ գրաւականի մը
պէտք է վերածուի, սգիի, նպատակի ու տեսիլքի առաւել կենսայի
ու վարակիչ ջերմութեամբ մը տաքցնելով դայն, որ անոնցմէ շըր-
ջանաւարտ սերունդները յօժարակամ ու հպարտ ժառանգորդները
դառնան զիրենք ծնող, սնուցանող ու զարգացնող հայկական հա-
մայնքներու, — անոնց ազգային աւանդութեանց, ձղումներուն
եւ իմացական ժառանգութեան գոյատեւման քաղցր լուծը կրելով
արար ժողովուրդի եղբայրական հիւրընկալութեան հովանիին
տակ:

Եզիպտահայ գրողներու, սուուցիչներու եւ համայնքային վա-
րիչներու հետ խմբական կամ մասնակի մտերիմ հանդիպումներ
կը հաստատեն, թէ անոնց մէջ խորունկ ու կենսունակ կը մնան
կոշումի գիտակցութիւնը, աշխատելու կորովն ու զոհարելելու
յօժարութիւնը: Բայց այդ թանկագին առաքինութեանց անջատ,
պատահական գործարկումը դաղութիւն ներկայ մտատանջ գոյապի-
ճակին մէջ՝ տիրօրէն անբաւական կը դառնայ: Եզիպտահայեր,
գեռ մօտաւոր անցեալին, նիւթական խոշոր արհակցութիւն կ'ընծա-
յէին սփիւռքահայ որեւէ ազիտաւոր հատուածի: Հիմա, պետական
օրէնքը կ'արգիլէ երկրէն դուրս առաքուիլը նպատի նուազագոյն
գումարին: Սակայն եթէ անոր համար հնարաւոր չէ օգնել հեռա-
ւոր համայնքներու կարիքներուն բարձումին, ան առաւել պար-
տաւոր կը մնայ իր նիւթական միջոցները կեդրոնացնել, սեփական
հաստատութեանց պահպանումը ապահովելու ճիգերուն մէջ: Ո-
րովհետեւ անոնց հասոյթները զգալապէս նուազեր են կալուածա-
կան գրաւումներուն ստեղծած տնտեսական մտահոգութեանց եւ
երկիւղին հետեւանքով:

Այդ արտակարգ պայմաններուն հարկադրանքին ներքեւ,
անհրաժեշտ է, որ եզիպտահայ մտաւորականներն ու հասարակա-
կան վարիչները իրենց իմացական, ոգեկան ու Փիղիքական բոլոր
ուժերը համադրեն եւ փարին ծրագրուած յաշտագիրի մը հետա-
պնդումին: Անոնց համերաշխ ու սերտ գործակցութիւնը պէտք չէ

դռնանայ հինգ տարին անգամ մը՝ թեմական ընտրապայքարը վա-
րելու հեռանկարով: Անոր զուգընթաց, լրացուցիչ պահանջն է շա-
րունակել համախօսն ջանքերը՝ աւելի բարելաւելու նպատակով
հայ դպրոցներու նիւթական վիճակն ու կըթական մակարդակը,
սքսապնդելու համար շուարած, նոյնիսկ հոգեբանական ճգնաժա-
մի մատնուած ընտանիքները, որ խուճապային աճապարանքով չը-
նեատին անձանթ ցամաքամասերու, օտար երկիրներու գթու-
թեան: Եւ ինքնարաւ դարձնեն ու աւելի զօրացնեն Գեղարուեստա-
սիրացի, Կոկանեանի, Տիգրան Երկաթի միութիւնները եւ անոնց
ակումբներուն շուրջ ծաւալող հանրային, գրական, թատերական,
երաժշտական ու նկարչական ձեռնարկները, որոնք նկարագիր ու
դիմագիծ կուտան զաղութիւն, եւ ապահովեն գոյատեւումն ու
տարածումը «Արն» օրաթերթին, որ դաղափարական ուղղութեան
եւ ներշնչումի հայրենաշունչ, անխարդախ աղբիւրն է բոլոր այդ
շարժումներուն ու նշանակէտներուն: Որովհետեւ անոնց, — գրող-
ներուն եւ մտաւորականներուն միաձոյլ կամքերը եւ համախօս
ճիգերը էական պայմաններ են եզիպտահայ հնամեայ, վաստա-
կաւոր դաղութիւն աղգային ինքնապահպանման համար՝ կորուստի
դահալէժի դէմ: Եւ ատկէ աւելի վսեմ, աւելի պարտագիր առա-
քելութիւն շունին որեւէ սերունդի հանրային վարիչներն ու հա-
օարակական դործիչները:

Է.

ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Յորդանանի հայ համայնքները, կեդրոնացած Երուսաղէմի
եւ մայրաքաղաք Ամմանի մէջ, յաճախ արտաքին աղէտներու ուր-
տափները եւ ներքին խռովութեանց մղձաւանջը ապրեցան: Բարե-
բախտ գիպուածով՝ անոնք ինայուրեցան վերջին ահաւոր պատե-

բազմին արհաւիրքներէն, որովհետեւ Պապեասինի շրջանը, ուր համախորհուած կը բնակէր հոծ հայութիւն մը՝ զերծ մնաց թշնամի ներխուժման աւերի եւ արիւնի նախճիրներէն: Բայց երբ ժիւժոռագմադաշտերը խաղաղած էին զինադադարով, արտը-հրէական բուռն կռիւններ բռնկեցան եւ դարձեալ բնաւեր թշուառութեան ժառանգին Պաղեստինի հայ գաղութը, նոր տարագրութեամբ մը գայն վերածելով անհայրենիք բեկորներու:

Անոնցմէ 4-5 հազար հոգի ապաստան գտան Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի շրջափակէն ներս, իբրեւ ապաւէն շուրի ու սուրի նախճիրին եւ քաղցի սոսկումին դէմ: Ուրիշ պանդխտական կարաւաններ ուղղուեցան դէպի Ամման, հետզհետէ հոն կազմելով 6-7000 անձերով հայկական նոր համայնք մը: Եւ տակաւին, հարիւրաւոր ընտանիքներ արտագաղթեցին դէպի հեռուոր աշխարհներ, մինչեւ հիւսիսային եւ հարաւային Ամերիկա: Եղբրական ճակատագրով մը, անոնց խոշորագոյն մասը ամբողջապէս կորսնցուցեր էր տուն, կալուած ու ստացուածք եւ քանի՛րորդ անգամ ըլլալով՝ կը հարկադրուէր վերսկսիլ ոչինչէն, — ընտանեկան նոր յարկ մը շինելու, նոր անտեսութիւն մը ստեղծելու, նոր օճախ մը արժարձելու տաժանելի աշխատանքով, հերոսական կորոզով:

Երբ Միացեալ Ազգերու միջամտութեամբ Արար-Իսրայէլ պատերազմը յանդեցաւ սպառազէն զինադուլի մը եւ ռազմադիժերը վերածուեցան սահմանադուլի՝ հայութիւնը հաւաքուած էր հին Երուսաղէմի եւ Ամմանի մէջն ու շուրջը, կազմելով Յորդանանի գաղութը, մօտ 12,000 թիւով: Բարեկործական Միութեան եւ Եւրոպ. մարմիններու բնծայած կարեւոր նպաստներուն շնորհիւ՝ համայնքները յաջողեցան վերականգնել իրենց հաւաքական կեանքը, դպրոցներով եւ երիտասարդներու համար մշակութային ու մարզական ակումբներով: Սակայն կարծես բաւական չէին արտաքին պատուհասները, այդ շրջանին պայթեցաւ նաեւ Երուսաղէմի Հայոց պատրիարքական ներքին պայքարն ու պառակտումը, որ երկու հակամարտ, անհաշտ ճակատներու ճեղքեց ամբողջ գաղութը, — դառնութեան ու քէնի խոր խրամատ մը բանալով Միաբանութեան, համայնքներուն եւ կազմակերպութեանց, նոյն-

թակ ընտանեկան հարազատներու միջեւ:

Այդ շարաշուք վէճին շղթայագերծած թշնամանքը Երուսաղէմէն եւ Ամմանէն սփռուեցաւ արտասահմանի մինչեւ հեռուոր մարզերը եւ վերածուեցաւ ամբաստանող դատաստանի տաղնապի բռնկումին պատասխանատուներուն դէմ, նաեւ սառն, հիտթափ վերապահութեան վանքի հաստատութեան հանդէպ: Եւ անոր պատուածքին վէրքը տակաւին կը շարունակէ կոտորալ Յորդանանի հայ գաղութի հասարակական, մշակութային, եկեղեցական եւ բնկերային կեանքին մէջ: Յաւադին, անդամալուծող գոլովիճակ մը, որ կը վրդովէ անհատներու առօրեան ու կը հաշմէ ճիգերը՝ տնտեսական ու բարոյական մեկուսացման ենթարկելով Պատրիարքարանը:

Հիմա՛ անշահ, ուրեմն աւելորդ փորձ է յանցանքի ու մեղադրանքի բաշխում կատարելը այս դժբախտ կացութեան հեղինակներուն, նժարի դնելով անոնց շարժառիթներուն նկարագիրը եւ գործելակերպին բնոյթը: Բայց տարակոյս չկայ, որ կենսական է եւ անհրաժեշտ՝ հիմնապէս վերափոխել ու դարձանել գայն: Վանքէն ներս ու ժողովրդային խաւերուն մէջ, ընդդիմաճարտ հատուածներու պաշտօնական կամ անտիրոջութեան պետերու հետ մըտերմական հանդիպումներ եւ լուրջ խօսակցութիւններ, միացած հաշտարար աշխատանքի՝ դիւրաւ կը յանգին քանի մը յուսալից խոստումներու եղբրակացութեանց: Բնականաբար իբրեւ մեկնակէտ ընդունելով անվիճելի, բացարձակ նախապայմանը՝ միասնական ողբի ու գործունէութեան վերականգնումին, Ամմանի եւ Երուսաղէմի հայ համայնքներուն եւ Պատրիարքարանին մէջ:

Որպէս ազնուագոյն նշանակէտ՝ այդ համերաշխ գործակցութիւնը էական է գաղութի ազգային գոյատեւումի պայքարը առաւելագոյն արդիւնքով մղել կարենալու համար: Փրկութեան հասարակաց նպատակ, որուն հանդէպ պէտք է նահանջն լայր նախաբերութիւններն ու վիրաւոր սկզբունքները, պէտք է լռեն բոլոր անձնական սխերն ու հատուածական կիրքերը, որքան այ անմեղ կամ արդարացի չբեղանքներ ունենան անոնք: Որովհետեւ ամէնէն նուիրական ու գերազոյն իտէալը՝ հայ հաւաքականութեան ոգեկան ու ֆիզիքական պահպանումն է, եւ բարիք է ամէն միջոց

կամ հիւ, որ կը գորացնէ անոր թափը, իսկ շարիք է ամէն պա-
ռակաւում ու քէն, որ կը հեղքէ, ուրեմն կը տկարացնէ մեր Հա-
ժայնքային պաշտպանութեան պատուարները:

Մակայն այդպիսի վէճերը չեն լեցուիր նոյնիսկ ամէնէն ան-
կեղծ ապաշուով կամ ջերմեանոց բաղձանքներով: Անոնք կրնան
կամրջուիլ միայն հանգուրժոց ու ներողամիտ մերձեցման կամար-
ներով, որոնք կ'արձակուին խրամատին երկու Հակոտնեայ ափե-
րէն: Հայկական Հասոցութենէն վեր արտաքին ազգակներ ուզե-
ցին, որ Գեր. Եղիշէ Արք. Տէրտէրեան զառնայ Երուսաղէմի պա-
թիարքական աթոռին զահակալ: Բայց վանքի Հնամեայ պարիսպ-
ներէն ներս բնամարտած ողբերգութեան վախճանէն յուսարեկ ու
զառնացած բաղձութիւններ պէտք է Համոզեն իրենց միտքերն ու
խիղճները, եւ դարձեալ Համախմբուին վանքի Հաստատութեան
չուրջ եւ օգնեն, որ ան կրկին վերածուի Հայկական հոգեւոր, կրթ-
թական, մշակութային եւ ինքնապաշտպանման ամբողջ մը: Որով-
հետեւ, որքան ալ բուռն ու ամօթալի եղաւ կոխը պատրիարքական
աթոռին Համար՝ ան վարչական ներքին տրամի մը պոսթիլուան էր,
որ Համադադութային պառակտումի եւ եկեղեցական Հերձուածի
քաղաքական-դաւադրական դրգպատճառ չունէր, ինչպէս Ամթի-
լիանի գլխաւորած Հակա-էջմիածնական շարժումը:

Բայց, նաեւ, Ամեն. Եղիշէ Արք. Տէրտէրեան, Պատրիարքի
իր Հանգամանքով՝ բարձրագոյն իշխանութիւնը կը Հանդիսանայ
Յորդանանի Հայ Համայնքներուն հոգեւոր ու կրթական մարդերուն
մէջ: Ուրեմն գաղութի ազգապահպանման ճիգերուն առանցքը կը
Հիմնուի իր պաշտօնին ու Հեղինակութեան խարխախին վրայ: Եւ
յայտնորէն, որքան զորաւոր ըլլայ անոր Հայթայթած Հիմունքը,
այնքան ամուր կրնայ կառուցուիլ գաղտփարի, աշխատանքի ու զո-
հողութեան վերնաշէնքը: Իսկ ազ բարեբար զօրութիւնը կը ոտեզ-
ձուի՝ Հանրութեան բոլոր խաւերուն, բոլոր տարրերուն իմացա-
կան, բարոյական ու նիւթական ուժերուն ներդաշնակ միախառ-
նումով եւ զօրաշարժումով գէպի ընդհանրական, գերագոյն նպա-
տակը:

Եւ պատրիարքը, իր իշխանութեամբ ու վարկով՝ միակ
անձն է Յորդանանի Հայ գաղութին մէջ, որ կրնայ իրադրօժել

բաժանում ու վառնուող մարդկային ազգակներու Համերաշխ
միութիւնը, ոգիի եւ արարքի լայնախոս, ազնիւ կիրարկումով մը,
որ Համայնքը վեր բարձրացնէ յաղթողներու վրէժխնդիր տիրա-
պետողի եւ պարտուածներու յուսահատ մեկուսացման ճախճա-
խուտէն, եւ մշակելով ամբապնդէ անոնց ազգային դիմագիծն ու
նկարագիրը: Բայց այդպիսի սերտ գործակցութեան մը մթնո-
լորտն ու պայմանները ստեղծելու Համար, անհրաժեշտ է, որ՝

«Սիռն» ամսաթերթի էջերէն մշտապէս վտարուին Հին վէր-
քերու դեռ թարմ սպիները պատուելու մտայլ փորձութիւնը եւ կու-
տակուած սիւերէն նոր ժահր թափահարելու ամուլ, ցաւապին Հա-
կուածները: Եւ անոնց սիւնակները միայն վճիտ մտածումներ, ոգե-
կան ճշմարտախոյզ որոնումներ, գրական ու պատմագիտական
յայտնուած արժէքներ վկայեն, Հայ մշակոյթի ազնուական շուն-
չին եւ քրիստոնէական կրօնի եղբայրութեան ու սիրոյ բովին բիւ-
րեղացումով:

Եւ զառնութեան ու քէնի ամէն մնացորդէ ձերբազատ ու-
րջումով մը՝ Միարանութեան մէջ անդամի իրենց լիակատար ի-
բաւունքներով վերահաստատուին վտարուած երկվեցեակ մը
բարձրատարածան հոգեւորականները: Ատիկա՝ արդարութեան
տարրական Հատուցում մը պիտի ըլլայ նախ: Յետոյ՝ Միարանու-
թեան մտաւորական մակարդակն ու վանքին բարոյական
վարկը վերականգնելու հօգ մղում մը պիտի ընծայէ: Ան նաեւ
կարելի պիտի դարձնէ կրուսաղէմի եւ Ամմանի Հայութեան Հա-
կամարտ Հատուածներուն միութիւնը, — զանոնք վերստին բոլորե-
լով Պատրիարքարանին եւ անոր գլխաւորած Համայնքային ձեռ-
նարկներուն շուրջ:

Եւ տակաւին, Հաստատութիւնը վերածել ճշմարիտ հոգեւոր
կեանքի, մշակութային լարում ճիգերու եւ դպրոցական ծրա-
դրուած աշխատանքի բեղմնաւոր կեդրոնի մը: Տարակոյս չկայ,
թէ այսպիսի վերաբերում ու արարքներ պիտի վերափոխեն վան-
քին միջավայրը, տակաւ պիտի ընջեն Յորդանանի եւ արտատա-
ճանի Հայ գաղութներուն վերապահումներն ու դառնութիւնը
Պատրիարքարանին Հանդէպ եւ պիտի վերահաստատեն անոնց
բարեացակամ վստահութիւնն ու նիւթական օժանդակութեան

կամքը, աւելի ծաւայուն ծանօթեցուն ասպարէզ բանալով Աթոռին համար: Եւ անկասկած որ նման մթնոլորտ մը զբաւական խոշոր ներգործում պիտի ունենայ ոչ միայն ժառանգաւորացի, այլ նաև Երուսաղէմի եւ Ամմանի Հայկական վարժարաններու ներքին խաղաղութեան եւ կրթական մակարդակին վրայ, — որովհետև անոնք սերտորէն ենթակայ են վանքի հոգևոր իշխանութեան (բացի, անշուշտ, Հայ կաթողիկէ եւ բողոքական համայնքները), ուրեմն կը փոթորկին անոր տաղանայներուն հետ եւ կը խաղաղին անոր անգործութեան մէջ:

Անոնց ուսուցիչներն ու տնօրէնները լիապէս արժանի են այդ յաւազոյն հեռանկարին, որ հաւանաբար զբամական առաւել յատկացումներով՝ պիտի ընդլայնէ իրենց ծառայութեան մարզերը, նորատի տղոց եւ աղջիկներուն հայեցի դաստիարակութեան գերազանց նպատակին մէջ: Երուսաղէմի հայերը աւելի բարեբախտ են, տրամադրելի դպրոցական շէնքերով: Եւ կրնան անոնց դասարանները լեցնել իրենց անմեղ մանուկներով, երբ համայնքի հաւաքական վերապրումին ստորագասնն մեղաւոր հին վէճերու քայքայիչ վիրաւորանքն ու կսկիծը եւ եղբայրութեան սպեղանիով զարմանն, սպիացնեն անոնց պատուած խոցերը:

Իսկ Ամմանի ներկայ կրթարանին նեղ, մթին սենեակները բարեբախտաբար կը լքուին շուտով: — Լեռան մը սեպ զառիթափին վրայ, անհրապոյր ու վտանգաւոր չրջապատ մը, սորվող կամ զբօսնող փոքրիկներու համար: Եւ հանդիպակաց բլրակողին աւելի ընդարձակ ու հարթ գետինին վրայ արդէն կը կառուցանեն նոր վարժարանին քարակերտ շէնքը, Բարեգործական Միութեան ընծայած գումարով:

Երուսաղէմի եւ Ամմանի մէջ, մեր Երիտասարդական միութիւնները, իրենց ազուրններուն շուրջ ծաւալուող մշակութային ու մարզական գործունէութեամբ՝ նշանակելի դեր մը կը կատարեն Հայ նորահաս սերունդի ընկերային կեանքի զարգացման եւ աղջային գիտակցութեան արծարծումին ու ոգիի պահպանումին մէջ:

Յորդանանի գաղութին ամէնէն սրտայոյզ պատկերը կը ստորգուծի Ռեսէյֆա աւանին մէջ, Ամմանէն շուրջ տասը մղոն հե-

ռու, ուր հողին կապուած քանի մը տասնեակ չքաւոր Հայ ընտանիքներ կ'ապրին: Անոնք կը պահեն մէկ սենեակնոց մանկապարտէզ մը, մօտ 25 երկսեռ մանուկներով, որոնց ուսուցչուհիին համեստ թոշակը կը վճարուի Բարեգործականի եւ Մարաշի Հայրենակցական Միութեան կողմէ առաքուած նուէրներով: Գաղթականի խեղճուկ հիւղերը յիշեցնող այդ «դպրոցը» կը նմանի մօայլ, լքուած մարզի մը, որուն յատակը, պատերը, տանիքը եւ դուռը նորոգուելու կամ վերաշինուելու կարիքն ունին: Իսկ դուրսը կարօտը կայ քանի մը կանգուն լայնքով տափարակ ու պատնէշուած բակի մը, ուր փոքրիկները դադարի պահուն կարենան խաղալ առանց զառիթափէն վար գլորուելու վտանգին: Եւ անոր խնամակալ ազնիւ հողիները սրտառուչ կորովով կը փայփայեն այդ դպրոցը, իրենց մատներով ու լուծաններով երբեմն կը կարկանեն զայն, խոհարհ ու փոշոտ իրենց երեւոյթներուն մէջէն մտրակուած վսեմ մտասեւեռումէ մը, որ այդ հեռաւոր լեռան քարքարուա կողերուն ծնած ու մեծցող անմեղ, ամօթխած պզտիկները Հայերէն զբել ու կարգալ սորվիլ, հայերէն երգեն ու արտասանեն, մանաւանդ հայ մնան ու տեւեն:

Բ.

ՌՈՒՍԱՆԻՈՅ ԵՒ ՊՈՒԼՎԱՐԻՈՅ ՀԱՅԿԱՍՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Վերջին ընդհանուր պատերազմի բռնկումէն մինչեւ վախճանը՝ Ռուսմանիա եւ Պուլկարիա գիւնակիցներ եղան նացի-Փաշիստ առանցքին: Եւ երբ հիթլերական մեքենագէն, բարբարոս լեզուններուն փուլզումին հետ, Կարմիր Բանակի գրոհներով ազատադէրոււնցան այդ երկիրները՝ անոնք սրղեզրեցին համայնավար վարչակարգ եւ մնացին յազթական դաշնակիցները խրամատող վարպոյրին արեւելեան կողմը: Անոնք այսօր ալ մաս կը կազմեն Ս.

Միութեան քաղաքական ու տնտեսական հակակշիռի ծիրին պատկանող պետութեանց խմբակին: Բայց այդ իրողութեամբ անդամ, Թումանիոյ եւ Պուլկարիոյ հայ գաղութները տակաւին լրացուցիչ հաստատմանը կը համարուին Հայկական սփիւռքին, իրենց ծագումին ու յատկանիշներուն բնոյթով:

Պալքանեան այդ երկիրները հիւրընկալ տպաստաններ հանդիսացան թրքական վայրապ լոնակալութեան արեւոտ մաղիւններէն փախտողական հայ բեկորներու, որոնք սակայն հոծ համախումբում չկազմեցին անոնց փեհրուն վրայ, այլ գաղթեցին դէպի աւելի ապահով հորիզոններ, առաւել բարգաւաճ տնտեսական պատեհութիւններ փնտռելու: Այսօր, տակաւին Թումանիոյ եւ Պուլկարիոյ Հայոց միացեալ համարներ 35,000 հոգիի կ'ըհասնի, շնորհիւ ներքին բնական աճումին, — հակառակ այն իրողութեան, որ արտաքին յաջողական տաղանակներ կամ յեղաշրջումներ անոնցմէ կարեւոր մասնիկներ մղեր են տարրեր տեղաշարժերու: Եւ ներկայ չըջանին իսկ, մինչ որոշ ընտանիքներ կը ներգաղթեն Հայաստան, եւ ուրիշներ կ'արտագաղթեն մինչեւ Արժանթին՝ ազգային գոյատեւման պայքարը նոյնքան կենսական նշանակութեամբ կը յայտնուի նաեւ Թումանիոյ եւ Պուլկարիոյ հայ գաղութներուն համար:

Անոնք վստահարար ամէնէն բարեբախտ պայմաններով նըպաստուած համայնքներն են րովանդակ սփիւռքի մէջ: Որովհետեւ անոնք ամբողջապէս ապահով են հիւրընկալ իշխանութեանց կողմէ ճնշումի եւ հալածանքի որեւէ վտանգէ, իրրեւ «համայնավար գործակալ» կամ «ձգտուած ուղեկից» զրպարտութեան դէմ: Հայաստանի Պետհրատը անոնց հայկական վարժարաններուն կը հայթայթէ անհրաժեշտ հայերէն լեզուի, պատմութեան, գրականութեան եւ նման դասագիրքերը բոլորովին ձրի, եւ անոնք ազատօրէն կրնան գործածել այդ հատորները, առանց կտուավարական արգելքի կամ խոժոռումի, — ինչպէս պիտի ըլլար Մերձաւոր Արեւելքի եւ ուրիշ երկիրներու պարագային: Աւելին. խորհրդահայ մտաւորականներ եւ արուեստագէտներ, նաեւ էջմիածինէն առաքուած հոգեւորականներ աւելի յաճախ կ'այցելեն Թումանիոյ եւ Պուլկարիոյ հայ գաղութները, աւելի հզօր ու կենդանի կապեր ամրացնելով անոնց ու հայրենի ժողովուրդին ու Հայաստանի մի-

ջեւ:

Պուլքէշի եւ Սոֆիայի մէջ կեդրոնացած Հայկական հոծ համայնքները, իրենց թերթերու էջերէն եւ մշակութային ձեռնարկներու կենսունակ թափով՝ կը ցոլացնեն Հայրենիքի մերձաւոր ազդեցութիւնը: Անոնց ղրական, թատերական եւ երաժշտական շարժումները, իրենց սիլոած արձագանգներուն ծաւալով՝ աշխոյժ խանդավառութիւն մը եւ նորահաս տաղանդներու ծաղկիւլը կը վկայեն: Այդ բեղմնաւոր գործունէութեան դաշտերէն հասունցած երիտասարդ արուեստագէտներ տարրեր առիթներով այցելած են Երեւան: Եւ փայլուն համբաւ նուաճած անոնց երգիչները դըրխաւոր դերերով երեւցեր են Հայաստանի պետական օփերայի բեմին վրայ:

Բայց որպէսզի վաղուան չափահաս սերունդը կարենայ ժառանգել այս ճիգերով ու մաքառումով պահպանուող ազգային աւանդութիւնները, ձգտումներն ու մշակութային ազնուագոյն արժէքները, — մանաւանդ որդեգրելով շարունակէ զանոնք՝ հիմնական նախապայման կը մնան հայ դպրոցները: Որովհետեւ գալիք երիտասարդ տարրը կրնայ միայն խմորուիլ այն երկեսն մանուկներէն ու պատանիներէն, որոնք այսօր կը ներգրաւուին այդ վարժարաններուն մէջ: Եւ ինչ որ հիմա կը ստանան, կը ներծծեն իրենց դասարաններէն, որպէս ազգային իտէալ, իմացական զարգացում եւ հայրենասիրական խանդ՝ միայն ատիկա պիտի կրնան ապրիլ եւ ընծայել վաղը, իրրեւ չափահաս մարդ, իրենց համայնքին, գաղութին եւ ժողովուրդին:

Ուրեմն, սփիւռքի բոլոր գաղութներուն նման՝ Թումանիոյ եւ Պուլկարիոյ հայերն ալ՝ իրենց հասարակական, մշակութային եւ եկեղեցական ձեռնարկներուն զուլքնթաց՝ պարտաւոր պէտք է զգան ոչ միայն պահել, այլ նաեւ ընդլայնել հայկական դպրոցներու տարողութիւնը եւ բարձրացնել անոնց կրթական մակարդակը: Եւ այդպիսի ծրագիրի մը գործադրման համար, ամբողջ արտասահմանի մէջ ամէնէն նպաստաւոր պայմաններու բացառիկ շնորհը կը վայելեն անոնք: Որովհետեւ, ինչպէս Ս. Միութեան երկիրներուն, նոյնպէս համայնավար Թումանիոյ եւ Պուլկարիոյ սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ ազգային որեւէ փոքրամասնու-

թեան անկապտելի իրաւունքը, բանալու եւ վարելու սեփական շարժանքը, իր նորահաս սերունդներուն տոհմային գաստիրարու- կութիւն ֆամբելու համար: Եւ հիւրընկալ իշխանութիւնը պարտա- լոր կ'ըլլայ ոչ միայն յարգելու անոնց բողոքները, այլ նաեւ հա- թախելու այդ ազգային վարժարաններուն շէնքերու, թռչակներու եւ յարակից բոլոր ծախքերը, պետական դանձէն:

Որէնքը կը արամադրէ հոն, որ ինքնուրոյն մշակոյթով օժ- տուած ցեղային իմրակցութիւն մը, երբ թաղի մը մէջ կ'ապահովէ ոահմանուած նաւազագոյն թիւով աշակերաններ՝ անջատ դպրոց ու- նենայու դիմումնագիր կուտայ կառավարութեան, որ հարկադր- ուած է ընդառաջելու այդ պահանջին, յատկացնելով վայր եւ նիւ- թական բաւարար պիւտձէ: Սահմանադրական նոյն իրաւունքին պարգեւն է, որ երեւանի եւ Լենինականի օտար» փոքրամասնու- թիւներ, — ռուս, քիւրտ, թաթար, — ունենան ուսուցիչն կամ քրտերէն բարձրանցով վարժարաններ, որոնց մէջ, ընականաբար կ'աւանդուին նաեւ հայերէն լեզու, պատմութիւն, գրականութիւն:

Կը նշանակէ, թէ մինչ սփիւռքի բոլոր միւս կայքերուն մէջ, հայ ազգային դպրոցներ կը թոյլատրուին որպէս շնորհ՝ որ կրնայ ջնջուիլ, կամ կը հանդուրժուին մասնակի թէ խստասիրտ՝ սեղ- մուաներով, կամ արդիւրեւելով կը վերածուին իրիկնային վտիտ դասընթացներու, — Պուլկարիոյ եւ Ռուսանիոյ գաղութներուն համար, սեփական հայեցի վարժարան ունենալը՝ այդ երկիրնե- րուն սահմանադրութեամբ ապահովուած հիմնական առանձնաչը- նորհում մըն է: Եւ եթէ անոնք, գաղութահայ ազգային դոյաւե- ման դատան պայթարին մէջ լիապէս չօգտագործեն իրենց ընծայ- ուած բացառիկ պատենութիւնը՝ յանցանքն ու գաստպարտութիւ- յը իրենք պէտք է կրեն միայն, — որովհետեւ անոնց պարագային կարելի է մեղքը շարտել արտաքին որեւէ խափանարար գործոնի վրայ:

Այն գաղափարը եւ իրողութիւնը, որ վարչակարգային կա- պով Հայաստանի մերձաւոր «դրացիներ» են Ռուսանիան եւ Պուլ- կարիան, թերեւս մտածել տայ այդ հիւրընկալ երկիրներու հայ համայնքներու վարիչներուն, թէ իրենց համար ձուլման վտանդը մտահոգիչ տագնապ չէ այլևս: Մանաւանդ, յոռեզոյնին հան-

դէպ՝ կրնան նետուիլ դէպի փրկութեան դարպասը եւ ներգաղթել Հայքենիք: Ուրեմն էական չէ, որ լարուած, յամառ ճիգերով շա- րունակեն ինքնապահպանման տաժանագին մաքառումը: Եւ լուսա- դոյն է յանձնուիլ հաճոյալի ինքնալքութի հանգիստին ու դրօսան- քին, եզրակացնեն անոնք հաւանաբար:

Սակայն ազատարար նախ մը ամէնէն մօտիկ նաւարկեալը, հազիւ քարընկէց մը անդին՝ անկասկած սուղուելով պիտի խեղ- դուի այն վայրկեանին, որ նոյնիսկ հրճուանքէն հաշմուած՝ դաղ- րի լողալէ: Մինչ մէկ քիլոմետր հեռու ինկած բախտակիցը՝ որ վերապրելու վճռական կամքով կը կոռի ալիքներուն դէմ, վրա- տահարար պիտի հասնի իրեն արձակուած փրկարար գօտիին: Այդ- պէս, ոչ միայն Ռուսանիոյ եւ Պուլկարիոյ մէջ, այլ նաեւ Հայաս- տանի սահմաններուն շուքին տակ, հայ մարդիկ ու կիներ աւելի դիւրին կրնան ուժանդտով տպասերիլ, — եթէ լքեն իրենց ազգու- թեան գաղափարը եւ անոր յաւերժական բնոյթէն բխող մշակոյթը, ճշտումներն ու խտէւանքը, քան ովկէանոսներ ու ցամաքամասներ անդին ծուարած համայնքներ, որոնք սրտատուչ հաւատարմու- թեամբ եւ անընկճելի կոթովով փարած կը մնան այդ թանկագին արժէքներուն, անոնց ոգիով ու տարագով հիւսուած շքեղ աւան- դութեանց եւ հնամեայ երազներուն:

Ռուսանիոյ եւ Պուլկարիոյ հայ գաղութներուն մտաւարա- կան առաջնորդներն ու հանրային ղէմքերը, ուրեմն, մշակութա- յին, հասարակական եւ ընկերային իրենց ձեռնարկներուն զուգըն- թաց, եւ անոնց ապագայ սնուցման իրրեւ նախապայման՝ պար- տաւոր պիտի մնան տակաւ պահել եւ առաւել զարգացնել հայ կրթական հիմնարկները: Եւ անոնց մակարդակին բարձրացու- մով, — մանաւանդ ուսմաներէնի եւ պուլկարիէնի մարզերուն մէջ, համոզել հայ ծնողները, որ իրենց զուակները նախընտրեն զրկել հայկական վարժարան, փոխան տեղականի:

Ճիշդ է, ունայնամիտ փաստաբերութիւնը եւ չքաւոր մաս- ծումը հաւանաբար կարգ մը հայրեր ու մայրեր դեռ մզեն իրենց փոքրիկները օտար դպրոց տարած ըլլալու «փառք»ին տխուր ինք- նախարկութեան: Բայց տարակոյս չկայ, որ խոշորագոյն մասը պիտի յօժարի իր մանուկները վստահիլ հայկական վարժարաննե-

բուն, — ուր անոնք պիտի ստանան հիւրընկալ երկիրներու հաւա-
տարիմ քաղաքացիներու արժանի յաւադոյն զստտխարակութիւն
ճը. եւ աւելին, — անոնք պիտի կրթութի նաև որպէս գիտակից
հայեր, հին եւ ստեղծագործ Ժողովուրդի մը կիրտած հոյակապ
ժառանգութեան բաժնետէր ըլլալու հպարտութեամբ եւ գոյն ճո-
խացնելու, զայն տեսականացնելու ազնիւ կամքով:

Որովհետեւ, անկասկած, հայոց ազգային վերականգնումին
եւ հայրենիքի վերածագնումին մէջ՝ իրրեւ մարդկային համբանք,
յղացոյ միտք եւ կառուցանող բազուկ, այնքան թանկարժէք են
Ռուսներոյ եւ Պուլկարիոյ հայերը, որքան Իրանէն, Եգիպտոսէն
կամ ... Զանդիպարէն ներգաղթողները: Եւ նոյնքան կենսական է,
ուրեմն, անոնց գոյատեւումը երկարաձգող բոլոր փորձուած ազ-
գակներուն կիրարկումը, բոլոր զոհողութեանց անտրտունջ յանձ-
նատութիւնը, բոլոր ծրագրուած ձեռնարկներուն հետեւողական,
ժողովանդ կատարումը: Զէ՞ որ Հայաստանը որպէս հարադաս
հայրենիք որդեգրելու, եւ հայ ժողովուրդը իրրեւ ընդհանրական
մայր դաւանելով՝ անոր մարմնաւոր ու ողեղէն բովանդակին ան-
խոցելի մասնիկը դառնալու միակ, բայց բացարձակ նախապա-
մանը՝ հայ ըլլալն է, մտածումով, էութեամբ եւ իտէլաններով:

ՊԱՐՍԿԱԶԱՍՅՈՒԹԻՒՆԸ

Հայ զաղթաշխարհի հնազոյն ու մեծազոյն կեդրոններէն
մէկը եզեր է Պարսկաստանը: Մասանեան լուծի դաժան շրջանէն
մինչեւ Շահ Աբրահիմ նախճիրային արշաւանքը Հայաստան, եւ
մինչեւ օսմանեան եաթագանի խուժուած հալածանքն ու սպանդ-
ները՝ հարիւր հազարաւոր հայեր իրրեւ պատանդ, զերի կամ տա-
րազիր՝ բնակեր ու տուայտեր են պարսկական օստաններուն ու

գիւղերուն մէջ: Անցած շարաշուք դարերու ընթացքին, անոնցմէ
քանի՛ բիւրաւորներ հալեր ու անհետ չքացեր են այդ դժխեմ պան-
դըխտութեան զղեակներուն, ճահճուտներուն ու դոխներուն մէջ՝
ո՛չ պատմութիւնը արձանագրեր է, ոչ ալ ամէնէն մոռոյլ երեւակա-
յութիւնը կրնայ ենթադրել:

Իրանի հայկական զաղութը հիմա 135,000 հոգիէ բաղկա-
ցած կը նկատուի: Բայց նոյն համբանքը կը տրուէր նաև քառա-
սուն տարի, ուրեմն երկու սերունդ առաջ: Բնական աճումի միջին
սակով մը՝ այդ թիւը պէտք էր հասած ըլլար մօտ 300,000ի, որով-
հետեւ ձուլումի գերանդին շատ բուժ ու ժանդոտ է հոն: Եւ եթէ
Հայրենադարձով ներգաղթող եւ արեւմտեան կիսագունդ արտա-
գաղթող շուրջ 30,000 անձերու դուժարը ղեղչուի՝ տակաւին
պարսկահայ համայնքները նշանակելի յաւելումով մը պէտք է ե-
րեւին սփիւռքի ընդհանուր պատկերին վրայ: Բայց արդէն բազ-
մաթիւ երկիրներու մէջ, ազգային փոքրամասնութեանց լրիւ մար-
դահամարի բարդ, յաճախ անկարելի բնոյթը հնարաւոր չի գար-
ձներ ստուգապէս գիտնալ քանակը արտասահմանի ամբողջ հայու-
թեան:

Վերջին աղիտայի պատերազմին յաջորդող տարիներուն՝
Իրանի կրած քաղաքական արտաքին ճնշումները, տնտեսական
ճգնաժամերն ու ներքին յեղաշրջումները նաև խորապէս խոռովե-
ցին, երբեմն ուժգնօրէն փոթորկեցին պարսկահայ հանրային կեան-
քը: Այն շրջաններուն, երբ իշխանութիւնը ազատ ու ժողովրդա-
փար վարքագիծ ու նշանակէտ կ'որդեգրէր՝ ան բարերար ներդոր-
ծումով կը վերափոխէր ամբողջ զաղութին հասարակական գոյա-
վիճակը: Հայրենիքի ջերմեռանդ սէրին ու ազգային հեռահաս
ձատուումներու եւ խանդավառ աշխատանքի մակընթաց հոսանքը
կ'օղողէր իրանահայ մտաւորականներու եւ ժողովրդային խաւե-
րու էութիւնն ու ստօրեան: Եւ տասնեակ հազարաւոր պանդուխտ-
ներ ներգաղթեցին Հայաստան, մինչ ուրիշ բիւրաւորներ արգիլ-
ուեցան երկիրէն մեկնել:

Գրական եւ գեղարուեստական ստեղծագործ ճիգեր կը թափ-
ուէին եւ ինքնուրուպ ոճի ու յանդուգն խորքի որոնումներ կը կա-
տարուէին: Մամուլ, երիտասարդական աշխոյժ շարժումներ եւ

մշակութային բարձրորակ ձեռնարկներ, վարակիչ ուղեորութեամբ ու յուզերով կը համակէին իրանահայ գաղութը: Արաքսէն հիւսիս փերածնող Հայաստանի եւ հայ ժողովուրդի շքեղ յարութեան շունչով տարջամ եւ տեսիլքով նորագուած: Եւ անոնցմէ սփռուած միտքի յայն ու ողբի ջերմութիւնը կը տարածուէին, բնականօրէն, հայ գաղտնիքէն ներս եւ կը պարուրէին պատանի սերունդը, անգուրելով զայն ազգային արժէքներու հպարտութեամբ եւ գոյատեւման կամքով:

Սակայն յեղաշրջական իշխանութիւններ յաջորդեցին իրարու: Հայրենասէր թերթեր փակուեցան, կաղձակերպուած ակումբներ լուծուեցան եւ հալածանքի երկիւղը հաշմեց անոնց կենսունակ գործունէութեան յարահուտ թափը: Դաշնակցական պետեր հոն եւս, Իրանի մէջ ծաւալող պարբերական խռովութեան ու սարսափի մթնոլորտին դաւադիր շահագործման կառչեցան: Անոնք չգոհացան միայն հայրենասէր մտաւորականներ ու հանրային գործիչներ զրպարտելով որպէս «խռովարար» ու «համայնաւար»: Իրենց համար այլեւս բնականոն, ընթացիկ դարձած խարդաւանքի միջոցներով՝ անոնք պատակտեցին իրանահայ եկեղեցական թիւը եւ զայն խզելով էջմիածինէն՝ շղթայեցին Անթիլիասի Հերձուածին, բարեհաճ հովանիովը թեհրանի կառավարութեան:

Եւ հիմա պարսկահայոց հսկայ մեծամասնութիւնը, իր նըսիրումին ու հաւատքին մէջ դարաւոր, անբակտելի հաւատարմութեամբ կապուած կը մնայ Ամենայն Հայոց Հայրապետութեան եւ Մայր Աթոռի վեհափառ գահակալին: Բայց արտաքին աղքատներու դրանին տակ՝ զրկուել է զայն արտայայտելու հաւաքական ձայնէն, կապտուել է զայն իրազորելու կազմակերպուած իրատուէրէն: Եւ վարչական ամօթալի զեղծանումով՝ ազանդին պետերը Անթիլիասի կապտնջուած կը պահեն իրանահայ թեմին կմախքը:

Հակառակ Իրանի հայկական դադութին այս տխուր գոյափրձակին, հոն հայրենիքի ու ժողովուրդի ջերմեանդ սէրով թաթաւուն եւ արուեստի տաղանդով օժտուած գրողներ ու հասարակական դէմքեր կը դարգանան: Եւ աւելին. անոնց գիրքի ու աշխատանքի յարատեւ ճիգերը, մշակութային ու գեղարուեստական

ձեւարկներու ափսոսեցնող ազգային շունչի, նկարագրի եւ իտէւաներու կենարար տարրեր կը հոսեցնեն համայնքային կեանքին մէջ: Հայ վարժարանները, հաւատարիմ իրենց կոչումին՝ կը հանդիսանան գլխաւոր աղբիւրը նորատի սերունդին տոհմային կրթութիւնը ջամբելու: Տարակոյս չկայ, որ կարելի է այդ գաստիարակութիւնը աւելի ծաւալուն դարձնել ու բարձր մակարդակի հանել, նիւթական առաւել միջոցներու յատկացումով:

Բայց նաեւ, բովանդակ արտասահմանի մէջ՝ պարսկահայ գաղութը վստահաբար ամէնէն չքաւոր, նոյնիսկ թշուառ համայնքները կը պարունակէ: Ծիշող է, որ թեհրանի եւ ուրիշ քաղաքներու մէջ կան ունեւոր հայ առեւտրականներու եւ բարեկեցիկ խանութպաններու դասեր: Սակայն խոշոր հատուած մը կը կազմեն արհեստաւորներն ու գիւղացիները, որոնք տարրական կենսապետոյթներու դառն զրկանքները կ'ապրին: Յետամնաց երկիրի մը աղքատ տնտեսութեան մէջ՝ անոնք ծանր տաժանքով հաղի աղ ու հացի ցամաք ապրուստ մը կրնան վաստկիլ: Կարիքէ զարնուած այդ հազարաւոր ընտանքիներուն հայրենադարձը՝ պիտի փրկէ զանոնք թշուառութեան մղձաւանջէն, չարքաշ աշխատանքի ընդունակ ու յօժար բազուկներ ու ձիւրքեր պիտի պարգեւէ հայրենի ժողովուրդին ու Հայաստանին եւ իրանահայ համայնքներուն կենցաղային մակարդակին միջինը պիտի բարձրացնէ, թանձրացած կարտութեանց կուտակումը թեթեւցնելով:

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԳՈՅ ՄԷՋ

Եղբրական հեգնանքի նման պիտի հնչէ թրքահայ գաղութ արկումը: Բայց գոյութիւն ունի այդ ողբերգական հակասութիւնը, հակառակ Թուրքիոյ զեկավար դէմքերու այն վայրագ յանկերգին, թէ իրենց երկրին մէջ այլեւս չկայ որեւէ ազգային փոքրամասնութիւն: Եւ բոլոր տարրերը, ցեղի, լեզուի ու կրօնի ինչ տարբերութեանց կիրճերով ալ անջատուած ըլլան՝ անբաժան մասերը կը համարուին թուրք ազգին: Սակայն արեւմտահայ ժողովուրդին նախաեղեռնեան 2,700,000 հօգիներուն խուժողութօրէն անճիտուած եւ հողմացրի տարագրուած միլիոնաւոր զոհերէն հոսք՝ տակաւին շուրջ 125,000 հայեր կ'ապրին հոն, մեծադոյն կեղ-

բանացումով՝ Պոլսոյ մէջ, նաև տարադնուած Անբարայէն ու Կե-
տարիայէն մինչև Տիգրանակերտ ու Թարբերդ:

Անցեալ քառասուն տարիներու ընթացքին պոլսահայ հա-
մայնքային եւ ընկերային կեանքը յաջորդական տագնապներու խր-
սովքին ու սարսափներուն ենթարկուեցաւ: Քալանի ու սպանդի
քիչատիչ ընազդները, որոնք պետական վարիչներու եւ մուսուլման-
զանգուածներու մէջ ոճրապարտ շղթայազերծումով՝ պատմու-
թեան ամէնէն հրէշային նախճիրը գործադրեցին 1915ին՝ պարբե-
րաբար պոռթկացին այդ տարիներուն: Եւ արդիւնքները եղան ա-
տելավատ արշաւներ հայերէն լեզուին դէմ, «եկամտային տուբք»ի
քրէական կողմուրտ եւ Սեպտեմբեր ճի եղեռնական վանտալու-
թիւն:

Ի այց երբ, յիտաշրջական բունակալութեանց միջանկեալ շր-
ջաններուն, նոյնիսկ կիսաստուեր ազատութեան դազ շունչի մը
թեւածումը կը թոյլատրուէր՝ պոլսահայ համայնքային կեանքը
զրական եւ մշակութային նոր վերազարթնումով մը կ'ոգեւորուէր:
Ազգային նկարագրով ու ձգտումներով սողորուած հասարակական
շարժումներու կապանքին հանդէպ՝ այդ ոգին ու կարօտները կ'ար-
տայայտուէին ինքնատիպ կամ արտականոն բերթուածներու, լոգ-
դալայալատ կամ յորդորական արձակի եւ գեղարուեստական բարձ-
րորակ ձեռնարկներուն մէջ: Եւ փառաշուք անցեալի մը կենսաւիչ
ժառանգութենէն սնանելով, եւ Պոլսոյ հայկական լաւագոյն վար-
ժարաններէն օժտուելով սոհմային ազնիւ դաստիարակութեամբ
մը՝ Հոն տակաւ զարդացան երիտասարդ, տաղանդաւոր գրողներ
ու մտաւորականներ, որոնցմէ քանի մը համակերչի անուններ ա-
պաստան փնտոցին տարբեր երկիրներ, իսկ մեծագոյն մասը
կ'ապրի, կը տուժայի, կ'արտագրէ իր ընավայրին մէջ:

Հիմա, Հարկադրաբար, թրքահայ դադութիւն գոյատեւման
ճիգերը պարուրուած են եկեղեցական ու մշակութային սահմանա-
փակ հովանիին ներքեւ: Ան կը շարունակէ նկատուել պիտութենէն
որպէս կրօնական համայնք մը, եւ այդ հանդամանքին բարեացա-
կամ ճանաչումով էր, որ արտօնուեցաւ պատրիարքական վերջին
ընտրութիւնը, իր բարեբար ներգործումովը Թուրքիոյ հայոց հան-
րային եւ կրթական ծրագիրներուն ու ջանքերուն վրայ: Որովհե-

աւե նորընտիր Պատրիարք Ամեն. Ենորհք Եպո. Գալուստեան, հո-
գեւորականի իր կոչումին խոր գիտակցութեամբ եւ առաքինի յատ-
կանիչներով՝ ոչ միայն պիտի զօրացնէ հայ եկեղեցիին միասնակա-
նութիւնը, էջմիածնի հանդէպ իր անխախտ հաւատարմութեամբ՝
այլ նուիրեալ կորովով պիտի հովանաւորէ Պոլսոյ հայ դպրոցնե-
րուն զարգացումը եւ զաւաններու մեկուսի, անտէրունջ հօտերու
փնտտուքն ու պահպանումը:

Վեհափառ Հայրապետին այցելութիւնը Պոլիս եւ իրբեւ հայ
եկեղեցոյ շնորհազարդ հովուապետ, նաև հայոց ազգային ու հո-
գեւոր միութեան խորհրդանիշ՝ անոր ընծայուած խանդավառ,
յուզումնալից ընդունելութիւնը միայն աւանդապաշտ ոգիի եւ
կուտակուած կարօտներու պոռթկումին վազանցիկ արտայայտու-
թիւնը պիտի չմնայ: Ան պէտք է մեկնակէտ մը դառնայ նաև ա-
ւելի ծրագրուած ու յարատեւ աշխատանքի, որուն առաւել ար-
դիւնաւորման համար կենսական դեր մը վիճակուած է պոլսա-
հայ մտաւորականներուն: Որովհետեւ, հակառակ ծանր դժուա-
րութեանց ու հասկնալի վախերու, տակաւին իրենց տրամադրելի
կը մնան օրաթերթներ ու գրական հանդէսներ, Պատրիարքարանի
եւ Ս. Փրկիչ հիւանդանոցի նման հաստատութիւններ, Կեդրոնա-
կանի եւ Եսայեանի պէս վաստակաւոր կրթական հիմնարկներ,
չրջանաւարտ սաներու եւ գեղարուեստական միութիւններ, դըպ-
րեվանք եւ Թաղային դպրոցներ:

Պոլսոյ հայութեան չի սպառնար ձուլումով անհետանալու
անմիջական վտանգ, — թէև կայ արտագաղթով նօսրանալու հե-
ռանկարը: Ետտ աւելի դժխեմ ու մտատանջող է ներքին շրջաննե-
րու տասնեակ հազարաւոր տարադնուած հայ բեկորներուն վիճա-
կը: Եաթաղանի եւ տարագրութեան ոչնչացումէն ճողոպրած դիպ-
ուածին կամ Թաքստոցի մը շնորհիւ՝ անոնք վերապրեր են չբաւ-
րի դառն զրկանքներով եւ անոնց մեծագոյն մասը մշտապէս մատ-
նուած մտացեր է անտեսական թշուառութեան տաժանքին եւ Քի-
զիբական անապահօտութեան մզձաւանջին: Տակաւին մինչև այ-
սօր, անոնք զրկուած են հայ դպրոցի լոյսէն կամ նոյնիսկ եկեղե-
ցիի մը ոգեղէն նպաստէն: Իրենց կտրատուած կողմացման երկիւ-
ղին մէջ՝ անոնցմէ շատեր փոխելով թրքացուցեր են անունին ան-

զամ ի կը ծածկեն իրենց ազգային ինքնութիւնը, որովհետեւ կոր-
որնցուցեր են այդ մահաշուք միջապայրէն ձերբազատուելու յոյսը:
Իսկ երբեմնի շէն ու կենսալի թրքահայ գաւառներու ներկայ ամա-
յութեան ու խաւարին մէջ իբրեւ հայ ապրիլը պատիժ ու անէծք է
առ նուազն: Միայն Անքարայի իշխանութեան հետ կնքուած մաս-
նաւոր համաձայնագիրով մը անոնց զոնէ կարեւոր մէկ հատուա-
ծին Հայաստան ներգաղթը կրնայ փրկել զանոնք ստոյգ չքացումէ:
Այլապէս՝ որպէս հայ, անպարձ կորուստի սեւ վարագոյրը պիտի
իջնէ անոնց յաջորդ սերունդին վրայ:

ժ.

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Արտասահմանի հայութեան ամէնէն հոծ ու կենսունակ կեդ-
քոնացումներն են Լիբանանի եւ Սուրիոյ գաղութները, որոնք Ի-
քաքի համայնքներուն հետ՝ աւելի քան 250,000 հոգիի հսկայ քա-
նակ մը կը պարփակեն, որակի թանկագին արժէքներով, մանա-
ւանց տակաւ զարգացող ուժերու գերազանց խոստումներով: Թը-
քիփոլիէն եւ Չահլէէն մինչեւ Պաղատա ու Մուսուլ, եւ Իսմաիլո-
սէն ու Լաթաքիայէն մինչեւ Քեսապ ու Տէր էլ Չոր՝ կ'ապրին տա-
րազրի հայերու խոշոր կամ փոքր խմբաւորումներ: Բայց սփիւթ-
քահայ երկու մեծագոյն կեդրոնները կը հանդիսանան Պէյրութը
եւ Հալէպը, իւրաքանչիւր քաղաքի մէջ մօտ 85,000 անձերով, եւ
չուրջ 400ական հայ վարժարաններով, — մտնկապարտէզ, նախա-
կրթարան եւ բարձրագոյն:

Երկու դրացի, եւ ճակատագիրով զուգահեռ գաղութներ, ի-
րենց մարդկային տարրերով ու հաւաքական կեանքով զայութեան
եկամ նոյն հասարակաց աղէտէն, — Կիլիկիոյ քրէական լքումէն
յետոյ՝ կոտորածի սարսափէն փախտական անհարկ ու թշուառ

բեկորներով: Մինչեւ վերջին ընդհանուր պատերազմին վախճանը
եւ Ֆրանսայի հոգատարութեան մականէն Սուրիոյ ու Լիբանանի
ազատագրումը՝ համանման էին այդ բախտակից երկիրներուն քա-
ղաքական հոգերն ու տնտեսական զրկանքները: Բնականօրէն՝ իրա-
րու նման պիտի բլլային, անոնց բնիկ ժողովուրդի կենցաղային
գրութեան հետ, նաեւ հիւրընկալուած հայ բազմութեանց ընկերա-
յին, անհատական ու համայնքային վիճակները, իրենց իրաւունք-
ներով ու պարտաւորութիւններով:

Հաւանաբար նկատելի առաւելութիւն մը կը վայելէր Սու-
րիոյ գաղութը, որովհետեւ, անցեալ դարու վերջերէն՝ Իսմաս-
կուսի եւ Հալէպի մէջ հաստատուելը էին հայ ընտանիքներ, որոնք
ահաւոր եղեանի շրջանին արդէն տիրացել էին բարեկեցիկ կենցա-
ղի եւ ազդեցիկ դիրքերու, շնորհիւ իրենց մտերմիկ կապերուն ա-
րար ականաւոր դէմքերու հետ: Եւ անկասկած, այդ նիւթական ու
բարոյական գործօնները ստատրեցին, որ աւելի նպաստաւոր մթ-
նոլորտ ու պայմաններ ստեղծուին թրքական արիւնտ գարշապա-
րէն ճողոպրելով հարաւ խուժող հարիւր հազարաւոր հայ գաղթա-
կաններու համար:

Տարակոյս չկայ, որ այդ դրական ազդակները հեռզհեռէ
աճող թափ ու տարողութիւն ընծայեցին մանաւանդ Հալէպի հա-
յոց ազգային, կրթական ու մշակութային կեանքին եւ շարժում-
ներուն: Հայ դպրոցներու շրջանաւարտ շարքերէն տակաւ ծաղկե-
ցան ու յայտնուեցան նորահաս գրողներ ու մտաւորականներ, ո-
րոնք խանդավառ նուիրումով փարեցան հանրային ծառայութեան
մարզերուն, որպէս դրագէտ ու խմբագիր, կամ իրրեւ ուսուցիչ ու
հասարակական գործիչ:

Մինչեւ նացի վանտալութեան մեքենադէն, մահաշուք թա-
ւալումը ազատութեան ու քաղաքակրթութեան պատուարներուն
դէմ, Հալէպը դարձաւ ու մնաց Մերձաւոր Արեւելքի շուրջ կէս մի-
լիոն հայութեան ամէնէն խոշոր եւ առաջաւոր կեդրոնը, — իր կազ-
մակերպուած կուսակցական ակումբներով ու մամուլով, հայկա-
կան վարժարաններու ծաւալուն ցանցով ու եկեղեցիներով եւ ա-
նոնցմէ բխող ազգային շարժումներով ու մշակութային ձեռնարկ-
ներով: Շարք մը տաղանդաւոր գրողներ, յայտնի մտաւորական-

ներ եւ վաստակաւոր ուսուցիչներ, որոնք հիմա կ'ապրին ու կ'արտադրեն Պէյրութի մէջ կամ աւելի հեռաւոր ամերու վրայ՝ իրենց կոչումներուն ուղիները բացեր էին եւ ասպարէզներուն ջահերը վառեր էին Հալէպի այդ տարիներուն բաղմերանդ, խանդավառ գործունէութեան ու վերակերտումի բովին մէջ:

Սակայն անցեալ երկու տասնամեակներու շրջանին, Սուրիոյ հայ գաղութը մասնուեցաւ յաջորդական տագնապներու, որոնք երբեմն բռնութեան եւ աղէտի ահաւոր ուժղնութեամբ հարուածեցին թէ արար ժողովուրդը եւ թէ մանաւանդ հայ հայրենասէր համայնքները: Չայիմի եւ Չիլէքլի նման վայրադ բռնակալներու անողորմ հայածանքները, դաշնակցական պետերու զրպարտիչ մատնանշումով՝ զարկին հայրենասէր հայ կազմակերպութեանց եւ անոնց վարիչներուն: Եւ սարսափի մաղիլներով հաշմեցին դաղափարի ամէն թռիչք, զրական ու զեղարուեստական ամէն ճիւղ, հանրային ամէն ձեռնարկ: Մատնչական նոյն խարդաւանքով, դաշնակցական պարագլուխներ զաղութին ազգային հիմնարկներն ու եկեղեցական կալուածները իրենց յերուդակային մենակալութեան ենթարկելու համար՝ անոնց ղեկավար հոսանքներն ու առաջնորդները նշաւակեցին «Մոսկուայի գործակալներու» յերիւրուած պիտակով: Բայց զեռ աւելի քրէական մեղանշումի զիջեցան անոնք:

Եւ գայիմական զրգուած արար խուժանը մոլորեցնելով՝ զայն արձակեցին Ռամկավար Աղատական «Եփրատ» օրաթերթի տպարանին վրայ, — իբրեւ «համայնավար միջնարբերդ», — որուն կազմածները խորտակուեցան եւ մամուլը խեղդուեցաւ: Փակուեցան նաև ուրիշ թերթեր: Ակումբներ լուծուեցան եւ գրողներ ու մտաւորականներ բանտերու մէջ ահռելի շարչարանքներու ենթարկուեցան, կամ ապաստան գտան Պէյրութ եւ այլեւս չվերադարձան Հալէպ եւ Դամասկոս, նոյնիսկ բռնաւորներու անկումէն յետոյ: Եւ անոնք նոյն ահարեկչութեան սուրբներով յափշտակեցին Սուրիոյ հայոց թեմական պատգամաւորներու աթոռները, որոնց ձայները, տարիներ յետոյ, Շամունի առաքած գնդացիներու մեղաւոր հովանքին տակ՝ զաւազրեցին Անթիլիասի ազգային ազանդն ու եկեղեցական Աքրուածը:

Հիմա, իր պարբերական յեղաշրջումներէն մէկուն վաղարդայնէն կ'անցնի Սուրիան: Կարճատեւ ապստամբութեամբ մը՝ ան խզուեցաւ Միացեալ Արար Հանրապետութենէն (Եգիպտոս), կըրկին դարձաւ անկէ անջատ եւ անկախ երկիր, եւ նոր խորհրդարանի ընտրութեամբ կազմեց քաղաքային դահլիճ մը, որ փոխարինեց զինուորական պետերու իշխանութեան: Գործարաններու եւ ըստացուածքի դրաման անողոք օրէնքները եւ առեւտրական կամ ընկերային խտտասիրտ սեղմումները ստեղծեր էին ահարեկիչ մթնոլորտ մը, որ բազմաթիւ հայեր փախուստի մղեր էր գէպի Լիբանան: Տակաւին, Նախագահ Նասրի եւ անոր խորհրդանշած համարարական ազգային զարթոնքի եւ ազատութեան խաչալին հաւատարիմ տարբերը զօրաւոր են Դամասկոսի եւ Հալէպի մէջ, — ընդհանրապէս երիտասարդներ եւ համալսարանի խանդավառ ուսանողներ, — որոնք երբեմն, անոնց հանդէպ իրենց յարումը կ'արտայայտեն բողոքի բուռն ցոյցերով, ընդդէմ ներկայ վարչակարգին:

Եւ ժողովուրդը անձկութեամբ կը յուսայ եւ ուժգնօրէն կը բաղձայ, որ նոր կառավարութիւնը չի յանձնուիր կամ չ'ապաստիր որեւէ յետաշրջական, բռնակալ հոսանքի: Մինչ նախաւոր կը դառնայ հեռզհետէ նուաճել լաւագոյն առօրեայի մը հանդրուանը, քաղաքային իրաւունքներու եւ տնտեսական բարօրութեան ապահով ուղիներու մէջէն:

Բնականօրէն, այսպիսի թոյլատու պայմաններ բարերար ներգործումով կ'անդրադառնան Սուրիոյ հայ գաղութին ազգային հոգիներուն ու ձգտումներուն, հաւաքական ճիգերուն եւ ընկերային կեանքին վրայ: Հիմա ջնջուած են առեւտուրը կաշկանդող հին կապանքներ, եւ արարներու հետ՝ հազարաւոր հայ խանութպաններ ալ, սնանկութեան ու զրկանքի մղձաւանջէն՝ բարեկեցիկ ապագայի մը հեռանկարին կրնան նայիլ: Իսկ հանրային գործունէութեան ասպարէզին վրայ՝ հայ ազգային կազմակերպութեանց ու մշակութային մարմիններու կողմէ կը սարքուին հաւաքոյթներ ու հանդէսներ, առանց խափանուելու սպառնալիքին: Եւ այդ վաստակութիւնը կը ստեղծէ յղանալու, ծրագրելու եւ իրագործելու ազատ ու քեղմնաւոր միջավայր մը, ուր միտքը կը յանդգնի սուտա-

նիլ դէպի նոր գաղափարներու բարձունքներ եւ ոգին կրնայ նեւ-
ուիլ արդիւուած ճշմարտութեանց փնտռտուքին:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շորս թեմերէն երկուքը, —
Գամասկոսի եւ Հալէպի, — կ'ընդգրկեն Սուրիոյ Հայութեան Հա-
մայնքները: Եւ անխուսափելի էր, որ Անթիլիասի Հերձուածով
ճեղքուած եկեղեցական խրամատը երկարէր նաեւ անոնց հասարա-
կական ու ընկերային կեանքի մարզերէն ներս եւ կտրատէր գանձք
պատահաւումի նոյն տապարով: Այդ բաժանումէն սնանոյ նոյն
պայքարն ու դաճումները կը տեսնէր առկաւին: Իսկ գաշնակցա-
կան աղանդին պետերը նոր դաւերով ու ստալոյ վերադրումներով
կը շարունակէն մշտապէս արծարծել արդէն կոտտացող թշնաման-
քը:

Նոյնիակ Սուրիոյ վերջին ընտրութեանց նախօրեակին, երբ
պիտուութեան վարիչները իշխանութենէ Հրաժարեցան, իբրեւ թեկ-
նածու կարենալ ընտրապայքարի թատերարեմ իջնելու Համար, եւ
երկիրը քանի մը օր մնաց տաանց Հեղինակաւոր դահլիճի՝ դաշ-
նակցական պարապետները գիմեցին իրենց ընթացիկ վատութեան:
Դժուար չէ երեւակայել, թէ անոնք ինչպիսի սնոպայ զրպարտու-
թեամբ եւ օժանդակ միջոցներով մոլորեցուցին ստտիկանական ու-
րոշ պաշտօնեաներ, Գամասկոսի առաջնորդ Գեր. Տ. Շաւարշ Եպի-
ֆոյսյումճեանը իր պաշտօնէն եւ երկրէն վտարել տալու Համար:
Արովհետեւ ան, անվհատ կորովով եւ զինք ընտրող բանաւոր հօ-
տին իբրեւ ուխտապահ հովիւ՝ կը մերժէ ճանչնալ եւ ենթարկուիլ
Անթիլիասի անգոր, ապօրինի կալանաւորին եւ կը շարունակէ Հա-
ւատարիմ մնալ Գեր. Տ. Սաղ Աբբ.ի գլխաւորած Կիլիկիոյ Աթոռի
միաբանութեան: Եւ ամօթալի բռնութեամբ մը, որ բիրտ առեւան-
գումի խուճապային արարքի մը կը նմանէր՝ ոստիկաններ Շաւարշ
Եպիֆ.ը արտօրեցին Լիբանան, — հակառակ անոր սուրիական քա-
ղաքացիի հանգամանքին: Բայց քանի մը օր ետք, կը լուսարանիչ
շիմումներ բարձրադոյն Հեղինակութեանց մօտ փարատեցին Հեր-
ձուածին շարաննէլ խարկութեան մշուշը, Գամասկոսի Հայոց ա-
ռաջնորդը, արտօնութեամբ Սուրիոյ նոր կառավարութեան, կրկին
վերադարձաւ իր պաշտօնին: Եւ դարձեալ ձախողեցաւ թեմը յա-
փտուելու Գաշնակցութեան անարգ դաւը:

Մայրաքաղաքի Հայ գաղութին Համրածքը բաղադարար
փոքր է, — Հագիւ 8000 հոգի: Բայց իր անցեալի ժառանգութեամբ՝
թիւով ու որակով աւելի վերագանց վարժարաններ ունի, քան քա-
նակով իրմէ գերակշիռ Համայնքներ, եւ որոնց մէջ մատաղ սե-
քունդին ջամբուած տոհմային դաստիարակութիւնը՝ Հիմնական
մեկնակէտը կը Հանդիսանայ սփիւռքահայ գոյատեւման ծրագիր-
ներուն ու ճիգերուն: Անոնց ընծայուելիք նիւթական աւելի լայն
միջոցներ՝ մէկ դպրոցին պիտի պարզեւեն անհրաժեշտ նոր դասա-
րաններ, ուրիշի մը պիտի ապահովեն շէնքին կից հողաշերտ մը
իբրեւ խաղաղալը զրօնոյ փոքրիկներուն, երրորդի մը պիտի օգ-
նեն նորոգելու կոտրած գրասեղաններ, — յաւելումներ, որոնք ան-
կասկած որ պիտի ընդլայնեն դրական արդիւնքները թափուող
անձնուէր ջանքերուն:

Եւ հիմա, Հանրային, կրթական ու մշակութային շարժում-
ներու եւ աշխատանքի ներկայ ազատ պայմաններուն նպաստով՝
մեր երիտասարդական ակումբներն ու միութիւնները պիտի կարե-
նան աւելի աշխոյժ ու բովանդակալից ձեռնարկներու լծուիլ ղըզ-
րոցներէն շրջանաւարտ Հայ երկսեռ պատանիները ազգութեան վր-
սեմ պաղափարով եւ հայրենիքի յաւերժական սէրով տողորելու, —
գանձք առօրեայի գոհիչներէն՝ իմացական որոնումներու եւ հոգե-
կան խոշանքներու ազնուական վայելքին բարձրացնելու Համար:

Իսկ Հալէպ կը պարունակէ ամէնէն խոշոր հայկական կեղ-
րոնացումը ամբողջ սփիւռքի մէջ, հաւասար Պէյրութին: Ան նաեւ,
տակաւին ձերբազատ է ուժացման այն թակարդներէն, որոնք կը
տարածուին արեւմտեան քրիստոնեայ ազգերու գերագանց տնտե-
սական խաչմերկէն, մշակոյթներուն հրապոյրներէն եւ մարդկային
շփումներէն: Հալէպի Հայ գաղութը օժտուած է հիմա միջավայրով
մը, որ բնիկ արաբ ու մահմետական ժողովուրդի վեհանձն հան-
դուրժողութեան շրջապատին մէջ՝ կրնայ ամէնէն հարագատ դի-
մագիծը եւ անեղձ նկարագիրը պահպանել իր հաւաքական կեանքին
մէջ: Եկեղեցիները բաժնուած կը մնան Անթիլիասի Հերձուածին եւ
Էջմիածնի հաւատարիմ հասուածներուն միջեւ: Մինչ քաղաքին
մօտ քոտն Հայ լրիւ դպրոցներուն մէջ տասնեակ հազարաւոր տը-
գաք ու աղջիկներ կ'ուսանին, հայկական յիսկատար դաստիարա-

կուրսան հետ՝ արտաբերէն լեզուի եւ բնդհանուր զարգացումի կա-
կան տարբերք իւրացնելով :

Շէնքի տարոզութեամբ ու սարքաւորման սրակով՝ Հալէպի
յաւագոյն կրթարանն է Բարեգործական Միութեան Նաճարեան-
կիւլյանկեան վարժարանը, նաեւ ամէնէն ճոխը բովանդակ արտա-
սահմանի մէջ, իր աւելի քան 800 երկսեռ աշակերտներով, մանկա-
պարտէզի, նախակրթարանի եւ բարձրագոյն կարգերով: Բայց
նոյնիսկ ան կարիք ունի յաւելնալ դասարաններու, կազմածներու,
գրադարանի հասարակութեւ որովհետեւ մանուկներու թիւը կ'աճի ա-
մէն տարեմուտի: Իսկ միւս դպրոցները առաւել ստիպողական պա-
հանջներու հանդէպ կը դռնուին: Ամէն տնօրէն, իր զլխաւորած
վարժարանին մէկ խորխուլ մասը նորոգելու, քանի մը անհրաժեշտ
դասարան աւելցնելու, կամ փոքրիկներու խաղաղայր մը շինելու
ցերեկուան կարօտով կը տուայտի եւ դիշերուան երազը կը փայ-
փայլէ: Արտայայտ պատկեր էր, — տեսնել նեղ ու երկար սրահ մը,
չքաւոր ու մաւր, ուր մանկապարտէզի չորս կարգերը լեցուեր է-
ին, առանց նոյնիսկ կիսորմներով անջատուած ըլլալու իրարմէ,
եւ չորս ուսուցչուհիներ կը դասաւանդէին անոնց միաժամանակ,
երգի ու խօսքի խառն ժխտով, — որ քաղցրալուր կը հնչէր՝ որով-
հետեւ հայերէն էր պարզապէս:

Հալէպի կենսունակ համայնքին մէջ, ամէնէն ոգեւորիչ ե-
րեսոյթներէն մէկն է Բարեգործական Միութեան Հայ Երիտասար-
դաց Ընկերակցութեան վարած մշակութային բազմերանգ գործու-
նէութիւնը, որ կը յատուի բացառիկ արժէքով ու ծաւալով, նոյն
իսկ բազդասամաք ուրիշ գաղութներու իր քոյր մասնաճիւղերուն
նոյնքան աշխոյժ, բարձրորակ ձեռնարկներուն: Անոր ընդարձակ
չէնքը դարձեր է ընկերային կեանքի եւ գեղարուեստական խանդա-
վառ ճիւղերու ետուն կեդրոն մը եւ տարբեր սենեակներ ու սրահ-
ներ յատկացուեր են արուեստի եւ հակումի ձիրքերով օժտուած
երկսեռ երիտասարդներու աշխատանքին ու փորձերուն, — նկար-
չական, քանդակագործական, դերասանական եւ երաժշտական բա-
ժիններով:

Իսկ Թէքէեան ակումբը, իր երէց, միջին եւ նորահաս սե-
րունդներուն անդամներուն կորովին ու նուիրումին աննահունջ

Թափով՝ կը շարունակէ հանդիսանալ ազգային նպատակներու,
հայրենական ուղեգրի եւ սփիւռքահայ գոյատեւման շարժումնե-
րու հարազատ անդամներ: Տարակոյս չկայ, որ ան շատ աւելի խո-
շոր արդիւնքներով պիտի կարենայ կատարել իրեն սահմանուած
այդ դերը, երբ յաջողի վերստին ձայն ու զազափար տալ «Եփրա-
տ»ի լուծ մամուլին:

Սուրիոյ եւ մերձաւոր արաբական երկիրներու հայութեան
համար ամէնէն վտանգալի եւ շարաշուք դէպքը եղաւ դաշնակցա-
կան լրտեսներու ձերբակալումն ու դատավարութիւնը Դամասկոս-
ի մէջ: Անոր զգայացունց յայտնութիւնը խորապէս վրդովեց եւ
ամօթի ու երկիւղի խառն զգացումով համակեց չրջակայ բոլոր գա-
ղութները: Տեղական օրաթերթեր, կարմրասառ հսկայ խորագիր-
ներով կը կրկնէին կառավարական ամբաստանութիւնը, թէ «հայ
լրտեսներ եւ վնասարարներ դարձեր էին վարձկան գործակալներ
Իսրայէլի եւ ուրիշ օտար երկիրներու եւ կը դաւադրէին Սուրիոյ
պետութեան դէմ»: Բորբոքած արարներ, փողոցներու մէջ եւ այ-
լուր, անհատ անմեղ հայերու հանդէպ բուռն արարքներու սկսեր
էին զիմեւ, որոնք կ'ընային աղիտալի բնոյթի յանգիլ:

Բարեբախտաբար կարելի եղաւ արար պետական վարիչներն
ու թերթերու խմբագիրները համոզել, թէ հայ հասարակութիւնը,
իր մտաւորական եւ զեկավար դասերով՝ ամբողջապէս անպարտ էր
այդ ահաւոր մեղանդրանքէն եւ հաւատարիմ ու շինարար տարրը
կը մնար իր որդեգրած սուրիական հայրենիքին: Եւ «հայ» ընդ-
հանրական մակդիրը վերցուեցաւ «լրտեսի եւ վնասարարի»
գրգռիչ կոչումին առջեւն ու փոխարինուեցաւ «դաշնակ» որոշի-
չով, յանցանքը սահմանափակելով բախտախնդիր խմբակի մը վը-
րայ: Սարսափի միջնաւորորդ այնքան թանձրացեր էր, որ Հալէպի
«առաջնորդ» Ղեւնոյ Եպս.ը, «ողորմելին» կոչեցեալ՝ աքաղաղի
կանչէն առաջ եւ ինքնամատոյց՝ ուրացաւ իր տէրերը եւ վատագի
խստութեամբ հրապարակով նշաւակեց դաշնակցական լրտեսներն
ու վնասարարները, — յետոյ, դատարանին մէջ, անոնց «անմեղու-
թեան» վկայ դառնալով: Ամբաստանուած թշուառներէն քանի մը
հոգին մեռան հարցաքննութեան շարշարանքին տակ: Իսկ դատա-
վարութեան աւարտին՝ դատախազը պահանջեց մահապատիժ՝

նշանակութեամբ, Բաւական է արձանագրել քանի մը պերճախօս փաստեր:

Բաւանդակ արտասահմանի մէջ Պէյրութը միակ քաղաքն է, ուր կը հրատարակուին չորս հայերէն օրաթերթեր, որոնք գաղութահայ ազգային ձգտումներու, բնկերային դաւանանքներու եւ քաղաքական ուղեգիծներու տարրեր բնոյթներն ու նպատակները կ'արտայայտեն: Եւ անոնց շուրջ դեռ լոյս կը տեսնեն տասնեակ մը շարաթաթերթ, ամսագիր ու պարբերաթերթ, զրական ու հասարակական բովանդակութեամբ: Սփիւռքէայ մամուլը, հիմա, նորահաս գրողներու խոտոմնայի տարրերով, իր ամէնէն ճոխ, ծանալուն ու սպաշով ծաղկումով կը յայտնուի Պէյրութի մէջ:

Լիրանոսի ալլ զեղադիր ստանը դարձեր է նաեւ, Հայաստանէն դուրս՝ հայեցի գոտախարակութեան մեծագոյն կեդրոնը: Բացի մանկապարտէզ եւ նախակրթարան դպրոցներու իր ընդարձակ ցանցէն՝ Պէյրութ ունի մանուանդ նուագադոյն վեց հայկական բարձրագոյն վարժարաններ, — կրկնալէս աւելի քան ուրիշ սրեւէ գաղութ: Կոհոն ու բողոք կարգերէն մինչեւ երկրորդականի աւարտող դասարանները՝ անոնց շէնքերուն թշուառ կամ Հոյակապ կառոյցները եւ ուսումնական մակարդակի միջակ կամ առաջնակարգ աստիճանները կը տարբերին իրարմէ լայն անջրպետներով: Բայց ամէնէն մթին ու խեղճուկ խորշերէն, որոնք կը ծառայեն իրրեւ դասագար, մինչեւ ամէնէն լուաւոր ու գեղակերտ սենեակները՝ սկսնակ կամ վաստակաւոր ուսուցիչներ հայերէն լեզուին կախարդական չէքեաթը, հայոց պատմութեան գմայլելի դիւցազներգութիւնն ու եզերական սղփրգութիւնը, հայ ժողովուրդի կենսախայտ հանճարին ստեղծած շքեղ ժառանգութիւնն ու անոր հրաշալի վերածնունդին ոգին ու փառքը կ'աւանդեն ծանուկ ու սրտանի սերունդներու, մասաւր լայնածիր զարգացման մը խորքսփին վրայ: Հազարաւոր մանուկներ, ամէն տարի, իրենց երկիւղած նախամուտը կը կատարեն անոնց հողածեփ կամ մարմարէ դարձանքերէն ներս, ուր ամէն գրասեղան միաքի ու ոգիի մարտիոց մըն է, գաղութահայ ազգային ինքնապահպանման գոյափարօին մէջ:

Հայկական դպրոցներու թուական աճումին եւ կրթութեան

որակի բարձրացման դիտար ազգակ մը եղաւ ուսուցիչներու նութեան վարձարութեան բարելաւումը: Հաղիւ տասը տարի առաջ՝ անոնց վճարուած թոշակները անբաւական էին նոյնիսկ չբար ապրուստի մը, որ տարրական պիտոյքներու զրկանքին ցաւով եւ անստույգ վաղուան մղձաւանջով կը դառնանար: Այն ատեն՝ ուսուցչական ասպարէզ կը յօժարէին մանկ անոնք միայն, որոնք սոգորուած էին փրկագործ առաքելութեան մը կոչումով, կամ համակուած էին ուրիշ որեէ մարդի մէջ ձախողանքի երկիւղով: Իսկ հիմա, հայ ուսուցիչներ ապահովուած են համեստ բայց բաւարար կենցաղային պայմաններով: Եւ բնականօրէն աւելի ընդունակ զարգացած ու խանդավառ ուժեր կը արամագրուին նուիրուելու նորահաս սերունդի կրթութեան, ուրեմն ազգային դոյաւեւման վսեմ աշխատանքին:

Կրթական գերազանցութեան տիպար հիմնարկներ են Բարեգործական Միութեան երկու բարձրագոյն վարժարանները, — Յովակիմեան-Մանուկեանը՝ մանչերու եւ Դարուհի Յակոբեանը՝ ազգիկներու համար, միասին՝ շուրջ 160 աշակերտներով: Իրրեւ Փրփրական հաստատութիւն, անոնց շէնքերը, — միջանցք ու դասարան եւ աշխատանոց ու սրահ, իրենց արդիական գեղակերտ ոճով, ընտիր սարքաւորումով եւ պայծառ ու զուարթ մթնոլորտով՝ արտասահմանի լաւագոյն հայ վարժարանները կրնան նկատուիլ: Բայց անոնց գերազոյն, անփոխարինելի արժանիքը՝ իրենց կոչումին խոր գիտակցութեամբ սոգորուած եւ անձնուէր, ձեռնհաս տնօրէններ եւ ուսուցիչներ ունենալու առաւելութիւնն է: Որովհետեւ անոնց ծրագրուած, յարասե ջանքերուն եւ խանդակաթ նուիրութիւն արդիւնքով է, որ երկու երկրորդական վարժարաններուն շրջանաւարտները կ'օժտուին բարձրագոյն մակարդակի գոտախարակութեամբ, դառնալով առաջնակարգ ու մրցանակաւոր, նոյնիսկ օտար համալսարանական մրցադաշտերու վրայ:

Իսկ զրկանքի պայմաններու մէջ, անձնակազմի շարքաշ, անարտունջ աշխատանքի եւ ջերմեռանդ փարուսի որտաուու օրինակ մըն է վահան Թէքէեան վարժարանը: — Շին շէնք մը, որուն նեղ ու մռայլ սենեակները խճողուած են 530 երկսեռ աշակերտներով, զրտականները փակած իրարու, — սրանց վրայէն մալցելով

պիտի անցնին ուսանողներ, ելքի ու մուտքի պահերուն, — որպէս զի առաւել թիւով մանուկներ կարենան ընդունիլ նախակրթարանի եւ մանկապարտէզի գասարաններուն մէջ: Եւ տակաւին, քանի մը փողոցներու շրջագիծէն ներս, տարբեր տուներէ վարձուած սենեակներ, վերածուած դասարանի, բայց իրարմէ բաժնուած, անձրեւի շրջանին, տղմոտ, խորտուրորդ եւ յաճախ անանցանելի բախիղներով: Որովհետեւ խնամակալ մարմինին եւ անօրէնին խիզճքն ու գիտակցութիւնը թուէ չեն տար մերժել օրեւէ մայր, որ իր փոքրիկ ազուն կամ ազգկան ձեռքէն բռնած կը բերէ Վ. Թէքէեան դպրոցը, արուած, յուսահատ թախանձանքը աչքերուն մէջ, որ հայերէն կրթին, հայ դաստիարակին իր գաւակը եւ գայն շմտանեն փողոցի դիրտին կամ օտար վարժարանի մը դուրսին: Եւ տեղի դրժխեմ կարիքին հետ պիտի շարունակուի նաեւ անոր վարիչներուն եւ ուսուցչական կազմին հոգեկան տուայտանքը, մինչեւ իրականանայ հազար աշակերտոց նոր, ընդարձակ շէնքի մը կառուցման փայտայտած ծրագիրը:

Պէշրութի մէջ կազմակերպուած դործունէութիւն կը վարեն հայ աւետարանական եւ կաթողիկէ համայնքները, իրենց անջատ դպրոցներով — նախակրթարան եւ բարձրագոյն, եւ կը հրատարակեն կրօնական ամսաթերթեր: Լիբանանի մայրաքաղաքը նաեւ սփիւռքի միակ կեդրոնն է, որ ունի հայ թոքախտաւորներու բուժարան եւ կոյրերու սպասարան, ուր անոնք յարմար գրագումներով կ'արտադրեն ու կ'ապրին:

Վարժարաններու եւ մամուլի կենսական դործունէրուն գուգահեւ՝ Պէշրութի հայութեան հաւաքական կեանքը կը ճոխացնեն բազմաթիւ երիտասարդական միութիւններ: Անոնք կազմուեր են ու կը հովանաւորուին սփիւռքահայ դիտաւոր կազմակերպութեանց կողմէ եւ իրենց ծրագիրներն ու ձեռնարկները կ'ընդգրկեն նոր սերունդի միտքին, ճաշակին ու մարմինին զարգացման բոլոր մարզերը: Այդ միութիւնները ունին իրենց գրական թերթերն ու չլէզփանակները, գեղարուեստական գերագանց ելակներն ու մարզական խումբերը, որոնք յաճախ յաղթական մրցախաղերով կը հակադրին օտար մարզախումբերու գէժ: Անոնց շարքին, իրենց քաղաքական, երգ ու պարի, ընկերային եւ մարզախաղերու բա-

ժիններով եւ բարձրորակ յայտագիրներով ամէնէն տարածուն ու ազդեցիկ կազմակերպութիւնները դարձեր են Հայ. Երիւ. Ընկերակցութիւնը (Բարեգործականի) եւ Թէքէեան Մշակութային Միութիւնը, իր սկումբով, ժողովարահով ու գրադարանով՝ «Զարթո՛ւ» օրաթերթի շէնքին մէջ:

Եւ տակաւին, մինչեւ վեց տարի առաջ, Լիբանանի հայ հասարակական կեանքը սնուցանող ու զարգացնող, անոր տեւելն ու աճիլը պայմանաւորող բոլոր այդ բարերար ազդակներուն եւ հաստատութեանց հետ կար նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը, Պէշրութի մերձակայ Անթիլիաս դիւղին մէջ, որ իր վանքով, ապարանով ու դպրանոցով՝ ոգեկան առանցքի մը գերը կը կատարէր: Բայց ան դարձաւ ու դեռ կը մնայ պառակտուած անփառունակ, ամայացած իրամատ մը: Որովհետեւ արծաթի տենչէն եւ մենակալութեան կիրքէն ապաստած՝ Դաշակացութիւնը փորձեց Մերձաւոր Արեւելքի բովանդակ հայութիւնը խզել Էջմիածինէն ու մայր հայրենիքէն եւ վաճառուիլ օտար շահերու մաքաւորներուն: Եւ անարգ դաւով մը՝ արտաքին ճնշումներու եւ սակարկուած սուփններու ուժով, Անթիլիասը վերածեց կեղեցական հերձուածի մը եւ ազգային ուրացումի տիրահամբաւ, խարանուած խորհրդանիշի մը: Այն տան՝ Անթիլիասի հայրագետական գահէն համերաշխութեան սէրը, մշակոյթին լոյսը եւ բարիքին շրճորհքը կը սփռուէին իր չորս թեմերուն բանաւոր հօտին վրայ: Հիմա՝ նոյն աթոռէն ու որմերէն ստեղծութեան ժահըր, դրժումի ու յեղուգակային թախանի սազրանքները եւ շարիքի վատութիւնը կ'արտածուին մինչեւ հեռաւոր գաղութներ:

Սակայն այդ դառն պայքարի եւ եղբայրասպան ոճիրներու ահաւոր փորձառութեանց տարիներուն, եւ անոնց քայքայիչ ներգործումին հակառակ՝ Պէշրութի հայ գաղութին իմացական թախն ու մարդկային ուժերը արագօրէն աճեցան եւ անոր սահմանուած գերին տարողութիւնը առաւել շեշտուեցաւ սփիւռքի գոյատեւման համատարած կոիւին մէջ: Հայրենասէր կազմակերպութեանց ահուճքներէն, օրաթերթերէն ու գրական հանդէսներէն բխած գաղափարներու խմորումը եւ ազգային խեղճանքու հրայրքը, հայ վարժարաններու ջամբած միտքի լոյսն ու ոգիի խանդը, երիտա-

սարդական միութեանց աշխոյժ, բողոքականոց գործունէութեան հայթայթած ծառայելու եւ իրագործելու նամբան ու գոհունակութիւնը, միասնաբար, յօրինեցին երիտասարդ տարրերն ու իմացական միջնորդար, որոնցմէ կարծուեցաւ պէյրութեան հայ նորահաս մտաւորական սերունդ մը: Այդ բոլոր կենսական պայմաններն ու բեղմնաւոր գործօնները միայն Լիբանանի մէջ կը լրացնեն զերար այդպիսի տարողութեամբ ու որակով: Եւ անոնց ընդելուզումէն, անոնցմով մշակուած ու սերմանուած արգաւանդ միջավայրէն միայն կրնան ծաղկիլ ու հասուննալ գաղութահայ գրողներ, խմբագիրներ, ուսուցիչներ եւ հանրային գործիչներ:

Եւ բացառապէս, ընդունուած իրողութիւն դարձեր է, որ ոչ միայն Հեռաւոր գաղութներ, այլ նաեւ Մերձաւոր Արեւելքի դարացի համայնքներ, իրենց տարեց մէկ պաշտօնեան երիտասարդ հայ մտաւորականով մը փոխարինելու հարկին հանդէպ՝ բովանդակ արտասահմանի մէջ միակ վայրի մը կը յտին, միակ աղբիւրի մը կը դիմեն, — Պէյրութին: Նոյնիսկ երբ մօտակայ կեդրոններու հայ վարժարաններէն չըջնաւորապէս պատանիներ ընդունակ ու յօժար են նուիրուելու սփիւռքի հասարակական աշխատանքի առաջնորդին՝ անհրաժեշտ է, որ փորձի եւ կազմութեան չըջան մը անցընեն Պէյրութի մէջ, անոր հայկական կենսայի միջավայրին եւ յարաշարժ գործունէութեան բովէն թրծուելու, ոգեպնդուելու համար: Եւ եթէ աւելի բողոքաբէր ու տաղանդաւոր անուններ չեն հասած համբաւի եւ առաւել տիրական ազդեցութեամբ չեն յայտնուած Լիբանանի ազգային շարժումներուն ու մշակութային ձեռնարկներուն մէջ՝ պատճառը գաղութային կարիքներու ստիպողական բնոյթն է:

Որովհետեւ յաճախ, օժտուած ու իսնդափառ տղաք, իրենց ձիրքերուն լիութեամբը զեւ շրացուած եւ իրենց գաղափարի ու նկարագիրի շաղախը տակուին չկարծրացած՝ տարուեր են արտասահման, հանրային ծառայութեան պաշտօններու հարկադրական պահանջին: Եւ խզուելով Պէյրութի չըջապատին ընծայած բողոքելու աւիշէն եւ սաւառնելու փառասիրութեան թեւերէն՝ անոնց նորարոյս տաղանդները երբեմն կը խամբին իրենց աճումին մէջ, կամ կը վատնուին դրազրային առօրեայ գրադմունքի տաղ-

տակին մէջ: Զուլումի մահացու վերանդիէն վերապրելու համար, տարագիր արեւմտահայութեան վարած տեւական պայքարին մէջ՝ մտաւորական դասին վիճակուած է վճռական դեր մը: Որովհետեւ ըստ փիւռքի գոյատեւման բոլոր ճիգերը պիտի թափուին, բոլոր կոնիները պիտի մղուին գաղութահայ մամուլին, դպրոցներուն, մշակոյթին եւ կազմակերպութեանց կողմէ, — անոնց գիրով ու խօսքով, անոնց ծրագիրներով ու արարքներով: Իսկ անոնցմէ ոչ մէկը կրնայ յղանալ ու արդիւնաւորել, ոչ մէկը կրնայ իր գոյութիւնն անգամ պահել, առանց գրողի, ուսուցիչի ու հանրային գործիչի, — փոյթ չէ թէ քանի՛ բիւր անգամ ունենայ, կամ որքան պարարտ դրամազուիւ:

Եւ Պէյրութը միակ կեդրոնը դարձեր է, ուր հնարաւոր է գաղութահայ մտաւորականութիւն պատրաստել եւ պարզեւել մերձաւոր ու Հեռաւոր հայկական համայնքներուն, որոնք ազգային ինքնապահպանման իրենց յամառ, սրտատուչ մաքառումին մէջ՝ Հեռոցհեռէ աւելի շեշտուած, աւելի յուսահատ կարիքը պիտի ունենան պաշտօնեաներու եւ հանրային առաջնորդներու, հեռոցհեռէ աւելի թախանձող դիմումներով պիտի ապաւինին Լիբանանի հայութեան:

Պէյրութի գաղութին համար այս երեւոյթը խորունկ հպարտութեան իրաւունք մըն է, անտարակոյս: Բայց նաեւ անդրժեղի հրաւէր մըն է ան, հաւատարելու պատմական դիպուածէն կամ բախտի քմայքէն իրեն սահմանուած այդ առաջապահ դերին: Ուրեմն պատուոյ մատուցում մը եւ ազգային ժառանգական մուրհակի հատուցման պահանջ մըն է ան, Պէյրութի հայրենասէր հոսանքներուն եւ անոնց մամուլին ու զեկավարներուն, հայկական դպրոցներուն, երիտասարդական միութեանց վարիչներուն եւ երէց ու կրտսեր գրողներուն համար: Եւ բարոյական մարտակոչ մը, որ իրենց անմիջական հոգերէն ու առօրեայ տաղնապնդէն մը, որ իրենց անմիջական հոգերէն ու յանդուգն տեսիլքով նաեւ դիմաւորեն աւելի քան մէկ միլիոն գաղթական արեւմտահայոց վերապրումի պայքարին՝ ոգիի ու միաբեր առաջնորդներ հայթայթելու պարտադիր հարկը:

Եւ այդ կոչումն ու փառքը նոյն ստեն իրենց ընծայումս թաղանթիկ պատէհութիւն մըն է, — պատրաստելու եւ հանրային ծառայութեան քորքարուտ ստպարէզին պարզեւելու մտաւորական մշակներու դաս մը, որ ձերբազատ ըլլայ բոլորումս վարկածներու, յուսակոտոր խարխափումներու եւ անարգ ուրացումներու կապանքներէն ու մոլորանքէն: Երիտասարդ գրողներ ու գործիչներ՝ որոնք առարկայական, դրապաշտ դաստգութեամբ հասկնան աշխարհը իր կոտտացող ցաւերով ու տաժանագին ոգորումներով եւ անոր վրայ ճանչնան հայ ժողովուրդին ու հայրենիքին փոքրիկ՝ բայց մեղի համար բախտորոշ ու չքեղ տեղը, անցեալի աղէտներէն վերականգնելու, հնամեայ մեծութեան բարձրացնելու իր գերագոյն նշանակէտով: Գաղութահայ մտաւորականներ՝ որոնք մարդկային ճակատագրի պայծառացման վսեմ խաչայնեքով տոգորումս ըլլան: Սահայն նաեւ՝ իրենց մկաններուն ու կորովին բովանդակ թափով, իրենց էութեան բոլոր տարերքով փարին հայոց սգգային անկապտելի իրաւունքներուն ու յաւերժական ձրգտումներու աննահանջ հետապնդման, վերածնած Հայաստանի փրկարար խարխալը իրբու մեկնակէտ, եւ հիմնական նպատակներու նոյնութեամբ, գաղափարական ուղիներու համագործումով, ճիւղերու անքակտելի միութեամբ:

Կարելի չէ հարկաւ, լրիւ պատկերացումը տալ սփիւռքահայ հասարակական կեանքին ու համայնքային գործունէութեան, կըտրատումս ովկէաններու անհուն անջրպետով եւ բեկորումս հին ու նոր աշխարհներու անձիր տարածութեան վրայ: Ամէն գաղութ համակում է տարբեր պայմաններու, կարիքներու, զրկանքներու մշտական ցաւով ու երկիւղով: Մէկ երկիրին մէջ՝ նիւթական չքաւորութեամբ մաւրամ գոխեմ առօրեան է մեծաւոյն հոգը, որ դառն տպրուտի մը մտատանջութեամբ կը ճնչէ հայ ընտանեկան յարկերը, եւ կը կոչկոնդէ, յաճախ կը հաշմէ հանրային շարժումներ ու կըթական ձեռնարկներ, որոնք ղլխաւոր, անփոխարինելի սողակներն են գաղութահայ սգգային գոյատեւման պայքարին մէջ:

Ուրիշ վայր մը՝ քաղաքական թաքուն հայածանքը կամ բացայայտ կապանքները տիրող իշխանութեան կողմէ, սարսափի

մթնոլորտի մը տակ կը շղթայեն կամքերը, յաճախ կը խափանեն ծրարութեամ ճիւղերը տարազիր հայոց խոշոր կամ փոքր բազմութեան մը: Որովհետեւ ան կը գործէ մեղապա՛րտ «յանցանք» կարօտակէզ, խանդակաթ զգացումով սիրելու իր դարաւոր, նուիրական հայրենիքը, Հայաստանը, որ պատմական զիպումով կը դռնուի գաղափարական թշնամանքի վարապոյրի մը միւս կողմը:

Թանի մը հիւրընկալ պետութեանց հովանիին տակ՝ այս ստղնապալի գոյավիճակը առաւել կը մթաղնի ներքին յեղաշրջումներու եւ քաղաքացիական կռիւներու պարբերական բռնկումներէն: Որովհետեւ կարելի չէ նախատեսել գալիք կառավարութեան մը բնոյթն ու հակումները, կամ զանոնք կիրարկելու անողոր թափը՝ յաճախ անհրաժեշտ կը դառնայ ծայրայեղ ինքնազրսպում անգթօրէն բռնակալ իշխանութեան մը հանդէպ, նոյնիսկ հեռաւոր, ապահով գաղութներու մէջ, կամ վերապահում հայրենասիրական խօսքի եւ արարքի, — որոնք սոսկ հայկական բնոյթ ու տարողութիւն ունին, սակայն խեղաթիւրուելով կը հաղորդուին կասկածի ու վախի խուճապէն դարնումս ոստիկանութեանց: Օտարի տղմոտ արծաթին եւ ստրկամիտ ծառայութեան մէջ ապասերած դաշնակցական պետեր, երկար տարիներէ ի վեր՝ միայն այդ մատնչտկան յերիւրանքներուն ու կըքայրասպան սճիրներուն կ'ապաւինին, սփիւռքահայ հայրենասէր կազմակերպութիւններ ու մտաւորականներ հարուածելու համար: Այդպէս փակուեցանս ազատ աշխարհի գօտիէն ներս, մեր երկու օրաթերթերը, «Եփրատ»ը Հալէպի եւ «Այսօր»ը Փարիզի մէջ, ինչպէս ուրիշ քանի մը շարթաթերթեր:

Եւ դեռ կան գաղութներ, որոնք անտեսապէս բարեկեցիկ են եւ օժտումս համայնքային աշխատանքի եւ անհատական ազատ մասնակցութեան լայն իրաւունքներով: Բայց նման թոյլատու պայմաններուն դէմ, այդ որդեգրումս երկրորդ հայրենիքներու կենցաղային ճոխութեան հրապոյրները եւ մշակութային բազմերանգ զարգացման խայծերը կը ստեղծեն արագ ճուլումի ու կորուստի յարաճուն սպառնալիք մը, որ աւելի կը շեշտուի կրօնի ու բարքերու տարբերութեան պատուարներուն փլչելով: Եւ անոնք, որ անձնապէս կ'ապրին նիւթական լուսադոյն մակարդակի մը ապահովու-

Քեան ու բարիքներուն մէջ՝ հաւաքուցէս կը դիմադրաւեն ուծա-
ցումի ամէնէն դատան վտանգները եւ կը կրեն անոնց անձկութիւ-
նըն ու տուայտանքը, — գոյատեւելու իրենց յամառ ճիգերուն սահ-
մանափակ արդիւնքին հանդէպ :

Ուրեմն տարբեր են սփիւռքահայ մեծ կամ փոքր կեդրոննե-
րու հոգերը, ցաւերն ու պահանջները՝ իրրեւ անհատ ապրելու եւ
որպէս համայնքային խմբաւորում տեսելու իրենց ցանկութեան ու
ջանքերուն մէջ : Բայց անոնցմէ ամէն մէկը կը քայլ ներկայ կամ
վերահաս ճգնաժամի մը մէջէն, որ թանձրացած է տնտեսական
կարիքէ, կամ քաղաքական ճնշումներէ, կամ ազատերման դիշա-
տիչ միջավայրէ, — սակայն բոլորն ալ վերածուած ընթացիկ մըզ-
ձաւանջներու, որոնց դէմ վերապրելու անհաւասար կռիւը կը մղէ
հողմացրիւ արեւմտահայութիւնը, իր ազգային հեռահաս խտէաւ-
ներուն եւ հայրենասիրական ջերմեռանդ խանդին մշտանոր զօրու-
թեամբ :

Եւ սակաւին, իրաքէն եւ Եթովպիայէն մինչեւ Աւստրալիա
եւ Հնդկաստան, քանի մը տասնեակ հազար հայեր, առօրեայի տա-
ժանքէն ու խոնջէնքէն յետոյ, կը մտատանջուին, կը ծրարեն եւ
կը մտաբռնին, իրենց առճամային արժէքները, դիմադիծը եւ երազ-
ները պահպանելու համար : Հասարակական շարժումներ, մշակու-
թային ձեռնարկներ, դպրոցներ եւ եկեղեցիներ ինքնուրոյն ու լրա-
ցուցիչ դերերով, սնուցիչ ոգին ու մղիչ ուժերը կը հայթայթեն
այդ համարառն ճիգերուն : Եւ ինչ որ սրտառուչ բնոյթ ու հերո-
սական երանգ կուտայ այդ գոյամարտին՝ անոր այլազան, անթիւ-
զբուազներուն յուսահատ ու եղբրական, բայց նոյն ստեն անհա-
շանջ ու դիւցազնային տարրերն են :

Որովհետեւ՝ նիւթական գրկանքներու կտպանքը յաճախ կը
խեղդէ կենսական ծրագիրի մը մարմնաւորումը : Հիւրընկալ իշխա-
նութեանց կամայական, բռնաւոր թշնամանքը, հայածանքով կամ
սուիներով, երբեմն կ'ասպատակէ գաղութահայ հանրային, եկե-
ղեցական ու կրթական հիմնարկներու եւ գործունէութեան մարզե-
քէն ներս, խորտակելով ահագին ջանքերու, հսկայ զոհողութեանց
եւ դառն պայքարներու շողախով կերտուած հասարակական կեան-
քի եւ գործելակերպի գրութեան մը հիմունքներն ու նպատակները :

Եւ ներքին ապականած շարիք մը, որ իրրեւ օտար մթին շահերու
վաճառուած մեղսակից՝ անոնց սպիտին ու մականին հովանիով,
մշտական տաղնապներու եւ ցաւազին պառակտումներու կը մատ-
նէ հայկական սփիւռքը, — որ իր գոյութեան ահաւոր կռիւին լու-
ծը կը կրէ արդէն :

Սակայն բոլոր այդ հարուածներուն, կաշկանդումներուն ու
դաւերուն դէմ, զմայլելի, անընկճելի տոկոսնութեամբ կը կանգնի
աւարագիր արեւմտահայոց գոյատեւելու կամքը : Ամէն ընկրկումէ
եւ պարտութենէ ետք, անոնք աւելի յամառ ու վճռական խոյան-
քով մը նոր վերականգնումի, նոր յաղթանակի յոյսին կը կառչին
եւ դայն նուաճելու ճամբան կը նետուին : Ամէն խափանուած ձեռ-
նարկէ, ոտնահարուած իրուունքէ եւ աւերուած հանրային օճախէ
յետոյ, անոնք նոյն սրտառուչ նուիրումով, նոյն լուսեղէն տեսիլ-
քով եւ անվճատ եռանդով կը լծուին աշխատանքի, դէպի նոյն սե-
ւեռուն նշանակէտը, — վերաշահիլ ինչ որ իլուեր էր իրենցմէ եւ
վերաշինել ինչ որ քանդուեր էր, — ապրելու, ստեղծագործելու եւ
տեսելու տարերային անսպառ կենսունակութեամբ մը, որ հայ
ժողովուրդին հոյակապ վերածնունդներու հրաշքը բաշխեր է քը-
սան դարեր եւ որ կը մերժէ քայքայուիլ ու մեռնիլ, կը մերժէ գե-
րեզմանուիլ ու անէանալ :

Արտասահմանի հայութեան գոյատեւելու այս լարուած ու
տարածուն գործունէութիւնը եւ արտաքին վտանգներու կամ ներ-
քին աւերիչ պառակտումներու դէմ հակազդող դրական ճիգերը կը
ծրագրուին եւ կը ղեկավարուին երեք դիւաւոր կազմակերպու-
թեանց կողմէ, որոնք գաղափարի ու ներշնչումի առանցքներ են եւ
շարժումի ու ձեռնարկի լծակներ նոյն ստեն : Անոնց ծառայութեան
մարզերը կը հանդիպին իրարու եւ միասնաբար կ'ընդգրկեն հայ-
կական սփիւռքի կարիքները եւ նպատակները, անհատական, հա-
մայնքային թէ համազգային մակարդակի վրայ :

— Հայ եկեղեցին, հաւատարիմ իր երկար դարերու աւան-
դութեան եւ մշակութային հարուստ վաստակին՝ փարած կը մնայ
ժողովրդային խաւերու հոգեւոր աղոտացման եւ մտաւոր կրթու-
թեան իր նուիրական կոչումին : Ամէն գաղութի մէջ հիմնուած

ասանարներ, բացի ծխական պաշտամունքներէ, նաեւ կը հանդիսանան ընկերային կեանքի կեդրոններ, ուր տարագիր հայեր կը համակուին հայրենի ժառանգութեան հարազատ ուղիով եւ կ'ազդեն հազարամեայ սովորութիւններու, պապենական տօներու եւ ծրնրնդալալարի յուշերու տոհմաշունչ միջավայրէն ներս: Եւ գրեթէ ամէն եկեղեցի իր կողքին կը պահէ ծխական դպրոց մը, ուր թաղին երկսեռ հայ մանուկները կը հաւաքուին, իրենց մայրենի լեզուն ու ժողովուրդին անցեալ սրբերգութեանց ու փառքերուն պատմութիւնը սորվելու եւ հայութեան բանաւոր հօտին ժառանգորդ գաղտնիկները դասնալու:

Պանդխտութեան դժխեմ պայմաններուն եւ թախծայի կարիքներուն հանդէպ, սփիւռքի մէջ եկեղեցիին վիճակուած է յուսելիալ պարտաւորութիւն մը: Ան կենդանի խորհրդանիշ մը եւ սգեկան հզօր խարխիւ մը դարձեր է տարասփիւռ հայկական հատուածներու, գաղութիւններու, իմբակներու եւ քեկորներու ազդային միասնակութեան, Ամենայն Հայոց Հայրապետութեան գերագոյն, սրբազան հովանիին սակ:

Եւ հիմա, երբ միջազգային հակամարտ բախումներու եւ թշնամանքի մթնոլորտին մէջ, սեփական հայրենիքի հանդէպ տնարատ սէրն անգամ, կը խեղաթիւրուի որպէս յանցանք կամ մեղանշում՝ հիւրընկալ երկիրներու դէմ, հայ եկեղեցին կ'ընծայէ հողուոր ամպհովանի մը, որուն ներքեւ կը համախմբուին քեւրաւորներ, ապրելու եւ գործելու համար հայրենական շունչով ու ձեռտումներով չըջապատի մը մէջ, եւ որոնք, հասկնալի վերապահութեան ու երկիւղի պատճառներով, կը դժուարանան բոլորուիլ ազգային ու հայրենասիրական հոտանքի մը շուրջ:

— Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը դարձեր է սփիւռքի կրթական, մշակութային եւ բարեսիրական մարզերու մէջ ծառայող մեծագոյն կազմակերպութիւնը, ճշմարտապէս բարերար դերով եւ համապարփակ ծաւալով: Անցեալ կէս դարու ընթացքին, հայ ժողովուրդը հարուածած ահաւոր աղէտներու ու դառն կարօտութեանց հանդէպ, Բարեգործական Միութիւնը եղաւ կարեկից հոգածութեան եւ սրտաբուխ նպաստի անխաբար սպա-

ւէն մը: Կեղեքուած ու հայածական, յետոյ՝ տարագիր արեւմտահայութեան ճգնաժամային կարիքներէն եւ ցաւագին տառապանքէն ծնած՝ ան ընդառաջեց անոր ամէնէն ստիպողական պահանջներուն եւ վերափոխուող պայմաններէն թելադրուած իղձերուն ու նպատակներուն: — Ան բահ ու գութան նուիրեց դաստներու հայ չքաւոր զիւլպայիին, խնամեց որբերը, օգնեց այրիներուն ու թըլուստներուն եւ դարմանեց հիւանդները: Եւ ան թուղթ ու մատիտ, գիրք ու դատարան ընծայեց մատաղ սերունդի հայեցի կրթութեան համար, յաճախ կաթիլ եւ հագուստի հետ: Հայաստանի աղատութեան փրկարար իրողութիւնը նոր անկիւնադարձ մը բացաւ հայոց ազգային վերականգնումի դաժան պայքարին մէջ, նոր եւ աւելի պայծառ խոստումներով, բայց նաեւ ծրագրելու, աշխատելու եւ զոհաբերելու առաւել հեռահաս պահանջներով: Եւ Բարեգործականը եղաւ հայրենիքին մէջ տուն ու աւան կառուցանող, մշակութային ու նիւթական օժանդակութիւն մատուցանող եւ ներգաղթի հանդանակութեանց հսկայ ձեռնարկները վարող կազմակերպութիւն:

Հիմա, բուսանդակ արտասահմանի հոծ կամ փոքր գաղութներուն մէջ, Հ. Բ. Միութիւնը կը տարածուի կրթական խնամատարի վսեմ դերով, գաղթական հայ մանուկները կեանքի ապարկզին համար դաստիարակելու եւ գանտք զարգացումով, ուրիշ ու ձգտումներով հայութեան շագկապելու գերագոյն առաքելութեամբ: Իր սեփական վարժարաններու ցանցէն դուրս, — որոնք չէնքերու կառուցուածքով ու կրթական մակարդակով լուսագոյնները կը պարունակեն ամբողջ սփիւռքի մէջ: Բարեգործական Միութեան բարիք սփռող ձեռքերը կ'երկարին նաեւ հարիւրաւոր ուրիշ հայ դպրոցներէ ներս, — մանկապարտէզ, նախաընթացիկ կամ բարձրագոյն, կրթական յատկացում մը բաշխելու, կամ անհրաժեշտ նորոգութեան մը ծախքը հսկալու:

Կարելի չէ բնուել, անոր տարեկան հաշուեկշիռներու ցամաք թուանշաններէն պատկերացնել անհուն արժէքն ու ահապին ծաւալը նիւթի, համակրանքի ու խնամքի այն յարաճուն նպաստներուն, որոնք կրթական այդ օճախներուն կ'ընծայուին Բարեգործականին կողմէ: Պէտք է այցելել բազմաթիւ նորակերտ ու լուսաւոր, կամ

Հողածէփ ու մտայլ վարժարանները, և նայլ Հազարուոր Հայ ար-
զոց ու ազջիկներու դուարթ կամ անձկայի դէմ քերուճ և թախծոս
կամ ժպտացող աչքերուն: Եւ պէտք է լսել ուսուցիչներու և տնօ-
րէններու երախտապէս զեղումները արուած օժանդակութեան հա-
մար՝ և տրտում թախանձանքը նոր կարիքի մը հանդէպ յաւելեալ
յատկացումի խնդրանքով: — լիպէս ըմբռնել ու գնահատել կա-
րենալու համար այն հսկայ, բարերար ծառայութիւնը, որ սփիւռ-
քահայ մասազ սերունդի առհմային դաստիարակութեան և երի-
ասասարդչներու մշակութային շարժումներու մարգերուն մէջ կը
մատուցանէ Բարեգործական Միութիւնը:

— Ռամկավար Ազատական Գուսակցութիւնը կը շարունակէ
հանդիսանալ տարազիր հայութեան ազգային յաւերժական ճիշդ-
տումներուն, հողային կապաւած իրաւունքներու և քաղաքական
սոցալայի տեսիլքին առէնէն հարազատ արտայայտիչը և հզօր
ախոյեանը: Մինչև ասուցի եղանին արհաւիրքը և Գիլիկիան
հայրենիք մը կերակուր ձեռնարկին խորատկուիլը Ծրանայի դը-
բուտան լքումով՝ Ռ. Ա. Կ. ը բազկայնող երեք մարտական կազմա-
կերպութիւնները, — Արմենական, Վերակազմեալ Հնչակեան և
Սահմանազիր Ռամկավար՝ ծրագրեր ու մարտնչեր էին թրքական
վայրագ ետթալանին դէմ, արեւմտեան Հայաստանի ու հայու-
թեան ազատ և ինքնավար գոյապիճակ մը ապահովելու նպատա-
կով: Եւկ Պորհրդային Հայաստանի հաստատման դէպքով՝ յեղա-
շրջուած միջազգային պայմաններ և ազգային գոյատեւման բախ-
տորոշ հեռանկարներ հայ ժողովուրդին ճակատագիրը կապեցին
պատմական նոր անկիւնադարձի մը սեմին:

Եւ 1920ի այդ հանգրուանին հանդէպ՝ Ռամկ. Ազատական
Գուսակցութիւնը իր համոզումներուն բովանդակ թափով, իր քա-
ղաքական դաստիարակութեան թելադրանքով և կազմակերպուած ու-
ժին ու մամուլին համապարօթային ծաւալով՝ գարձաւ ջատագո-
ւիք և ախոյեանը իր որդեգրած հիմնական նպատակներուն:

— Որ օտար մտկանէ ազատագրուին հայոց պայքենական հո-
ղամասերը և անոնց հատուցումով ամբողջացած Հայաստանի մէջ
ու հայրենի պետութեան հովանիին ներքև իրաւործուի հայ ժողո-
վուրդին լրիւ ազգահասաքը:

— Որ այդ նշանակէտին հասնելու իրրեւ նախապայժման ըն-
դունուի, թէ Պորհրդային Հայաստանը կը հանդիսանայ հայ ժողո-
վուրդի Փիղիքական փրկութեան երաշխիքը, և գրաւականը անոր
ազգային վերածնունդին ու ապագայ աճումին, և խարխուր հա-
յոց տակաւին կայանուած հոգերու վերադարձի պայքարին:

— Որ ուրեմն, տարազիր արեւմտահայութիւնը լիպէս ա-
ջակցի Հայաստանի պետական զօրացման և տնտեսական վերելքին,
նոր աւաններու շինութեամբ, նիւթեղէն ու մեքենական կազմա-
ներու առաքումով և այլ պիտոյքներու օժանդակութեամբ:

— Որ սփիւռքի պանդուխտ գանդուածներուն հայրենիք ներ-
գաղթով՝ անոնք փրկուին ուժացման կորուստի յորձանուէն, նա-
և կալիքի անստգութեան մղձաւանջէն, և Հայաստանը հարոտա-
նայ անոնց բազուկի, միտքի ու համբանքի թանկագին տարրերով,
մինչ տակաւ կ'իրականանայ ազգահասաքման ծրագիրը:

— Որ մշակութային սերտ յարաբերութեանց շողկապով՝
հայրենիքի և արտասահմանի անջատուած հայութեան միջև ու-
ղիի, արժէքներու և նպատակներու նոյնութիւն ստեղծուի և ազ-
գային միաձոյլ ամբողջութեան ըմբռնումը խորանայ և խտլուր
մարմնաւորուի:

— Որ գաղթական դարձած արեւմտահայութիւնը պաշտ-
պանուի ձուլումով չքանալու և ներքին պատահումով կոտորուե-
լու մահաչափ վանդներու դէմ, և պահպանուի իրրեւ ազգային
կազմակերպուած հաւաքականութիւն, — որպէս մարդկային ուժ՝
հեռակեակ հայրենիքի մայր հատուածին վրայ աւելնալու, և իր-
րեւ քաղաքական գործոն՝ հայկական դատին ժողովուրդի իր ի-
րաւունքը պահանջելու:

Բայց այդպիսի ընդհանրական ու հեռահաս յայտագիր մը
կարելի չէր հիմնել բաղձանքի, անուրջի կամ ցնորքի պղպղակնե-
րուն վրայ: Աքսորի ու ջարդի դժոխային սարսափներէն ճողպրած
արեւմտահայ գանդուածները վերածուեր էին թշուառ բեկորներու
և հոգմաքրի փշրանքներու, որոնց մէջ խորատկուած էր յոյսի ու
կամքի առէն հիւլէ, որոնց սնուցած ազգային ազատութեան ու վե-
վերականգնումի բոլոր տենչերն ու երազները թաղուեր էին Լոզա-
նի եղեռնական դրժումի տաղանաքարին տակ:

Եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ձեռնարկեց արեւմտահայ ահաւոր փրկարման իմացական ու սգեկան աւերակներէն վերակերակելու՝ ազատ Հայրենիքի եւ հայ ժողովուրդի ստոյգ վերածնունդին հաւատքն ու տեսիլքը, Սորհրդային Հայաստանի կենդանի իրականութեան վրայ: Որովհետեւ այդ համոզումին ու իտէպին վերակառուցումը բացարձակ պայման էր, եթէ տարազիր հայութիւնը ամբողջապէս պիտի չկորսուէր ապրող Հայաստանին համար, իրեւ քանակային, մտաւորական ու նիւթական տարբերութեան կարճէք, անփոխարինելի հարստութիւն մը: Եւ եթէ սփիւռքը որեւէ նպատակ եւ արդարացում պիտի գտնէր իր հաւաքական գոյատեւման հեռանկարով մտածելու, աշխատելու եւ մաքսոնյու համար:

Ուրեմն, անցեալ տելի քան քոտասուն տարիներու միջազգային ճգնաժամերուն ու աղէտներուն հանդէպ, եւ հակառակ արտաքին մտէն հայաժամերի ու վաանգի եւ ներքին դրպարութեանց, սպաննայիքի եւ ահաբեկչական ոճիրներու, Ռամկ. Ազատական Կուսակցութիւնը անվհատ նուիրումով եւ անընկճելի կորովով ծրարողեց, ձեռնարկեց ու պայքարեցաւ՝ իր ընդգրկած այդ ազգային նշանակէտներու իրագործման ուղիով: Եւ Սորհրդային պետերու լաճախ անողոք բանութիւններէն բխած մտէն դաժնութեան վրայէն եւ վեր սկզբունքային մտէն տարբերութենէ, որ կը թելադրուէր գազափարի, խօսքի, դիրի ազատութեան եւ մարդկային անկապտելի իրաւունքներու իր դաւանանքին՝ Ռ.Ա.Կ.ը յասակօրէն, ուժգնօրէն սահմանեց ազգային-քաղաքական այն միակ սղեղիծը, որուն շուրջ պէտք էր համախմբել տարազիր արեւմտահայութեան բոլոր խաւերը:

— Թէ Սորհրդային Հայաստանը կը հանդիսանար, իր պետական կառուցումով եւ կեդրոնացած ու յարաճուն բնակչութեամբ, միակ առանցքն ու լծակը, — որ կրնար հնարաւոր դարձնել հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւնը սոցաւակելու, հայկական գերիվար հոգեբուն վերադարձը հետապնդելու եւ սփիւռքի հայց ազգապահպանումը շահելու որեւէ մասսուեւում ու երազ, որեւէ քանք ու գոհողութիւն եւ արդիւնքի հաւանական երաշխիքը աւել անտեղ:

Եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը այդ համոզումէն ու նպատակներէն բխած եղբակացութիւնն էր, որ թանձրացաւ որպէս ծրագիրի ու գործելակերպի վարքագիծ մը, որուն անկաշառ հայրենասիրութեան խանդով եւ իրապաշտ իմաստութեան յոյսով՝ ան կրցաւ հեռուհեռ համոզել ու խանդավառել պարութեան հայ մասւորական դասերն ու զանգուածները, եւ զանոնք բորբեղ սրկեցրուած կենսական առաջադրանքներուն շուրջ: Գաղափարի անոր գերազանց ուժին, անոր կազմակերպուած յամառ ջանքերուն եւ միշտ աննահանջ պայքարներուն հոյակապ արդիւնքները՝ ըստփիւռքահայ պատմութեան մտէնէն փառաւոր դրուաղները կը մընան:

Որովհետեւ անոնք կ'ընդգրկեն՝ հայկական դատի հետապնդման, — միջազգային տառաններու եւ պետական բաժանմունքներու մատուցում յուշագիրներուն եւ կատարուած դիմումներուն աշխատանքները: — Հայաստանի գորացման համար սարքուած օղնութեան յաջորդական արշաւները: — Հայրենաշինութեան կարօտաբարձ յոյսերով ձեռնարկուած նոր աւաններու կառուցման շարժումները: — Ներդապի հակառակ ծրագիրով մը՝ շուրջ հարիւր հազար պանդուխտ հայերու Հայաստան դարձը, որ իր մարդկային ու նիւթական տարբերութիւնի տարողութեամբ, նշանակելի իրագործում մը եղաւ նոյնիսկ աշխարհային շախմախով: — Եւ սփիւռքի անձիր տարածքին վրայ՝ տարազիր հայութեան դոյաւանեման անհրաժեշտ ազգային, կրթական, մշակութային եւ եկեղեցական կազմակերպութեանց, հիմնարկներու եւ շարժումներու գաղափարական ուղեգիծ, աշխատանքի մղում եւ պաշտպանութեան վահան ընծայելու մշտական գործը եւ պարտադիր հարկը:

Նպատակի ու գործունէութեան այս յայտադրին յարեցան նաեւ Հնչակեաններ, տարբեր շրջաններու եւ վայրերու մէջ՝ առաւել կամ նուազ թափով եւ արդիւնքով: Հեռուհեռ, անոնց ընկերվարական դաւանանքին մէջէն շեշտուեցաւ ու բիւրեղացաւ հայրենասիրական վարքագիծը: Եւ անցեալ երկու տասնամեակներուն հնչակեան վարիչներ եւ շարքայիներ լիապէս գործակցեցան Ռամկավար Ազատական Կուսակցութեան հետ, ազգային ընդհանուր ընդլծով ձեռնարկներու մէջ, համոզումի քաջութիւն, հայրենասիր

բական եսանդ եւ զոհուելու յօժարութիւն յայտնաբերելով :

Բայց մանաւանդ՝ Ս. Ա. Կ. ր յաջողեցաւ յարասեւ, ծաւալուն ճիգերով եւ անխարդախ ու յանդուգն զեկամարութեամբ, այդ ընդհանրական ծրագիրին շարժ համարմբել, եւ անոր գործադրման կամքին, զօհողութեանց ու ջանքերու կապել գաղութաւոր զբողոքներու, մտաւորական առաջնորդներու եւ հանրային դէմքերու շարունուն րազմութիւն մը, եւ աւելի քան յիսուն կազմակերպութիւններ ու մարմիններ, սփիւռքի հասարակական ծառայութեան բոլոր մարզերուն վրայ : Եւ այդպէս գործունեցաւ, եւ մշտապէս կ'աճի ու կը զօրանայ արտասահմանի մէջ հայրենասէր հայութիւնը, որ երբեմն «Թամկալար կողմ» կը կոչուի, եւ երբեմն «Հայաստանեան ճակատ» մակղերով կը պիտակուի եւ որ կը կազմէ վերապրող արեւմտահայութեան հսկայ մեծամասնութիւնը :

— Դժբախտաբար այս ընդհանուր, բարերար գործակցութեանն նախընտրեց դուրս մնալ Դաշնակցութիւնը եւ անոր հակամարտ, անհաշտ թշնամին դառնալ : Եւ պառակտումի խորունկ ու ցաւազին խրամատ մը պատուեցաւ զազուրկներու մէջ, — ուր մտրդկային, իմացական ու նիւթական բոլոր ուժերու համախառն լարումը անհրաժեշտ էր, զարհուրելի եղեռնէն կոտորացող կսկիծը մեղմացնելու եւ արիւնոյ վէրքը սպիւացնելու համար : Բայց դաշնակցական վարիչներ ինչպիսի խարուսիկ շարունեով ալ քօղարկել փորձեն իրենց շղթայագերծած առելավառ պայքարին բնոյթը՝ անոր դրդապատճառները կը մնան մերկ եւ անարդ : Անոնք, թէկուզ պատահապաշտ շահախնդրութեամբ՝ ջատագով կը կանգնին հայրական դատին եւ գաղութներու պահպանման, — «Արտասահմանեան Հայաստան» մը բանդազուշելու ապերասան, եղբրական զուեւշտով : Բայց մոյեգծօրէն կ'ուրանան նոյնիսկ անոնց հիմնական ժեկնակէտն ու նշանակէտը, — Խորհրդային Հայաստանը մէ առանց սկզբունքային աարբերութեան մը չքմեղանքին, իրենք որ ընկերվարական Միջազգայնականին անդամ կը մնան միշտ : Այլ անդամ կորսուած իշխանութեան մը փառքն ու գանձը վերադրակելու ախտաւոր աննչով, որ մինչեւ հայրենադաւ արկածախնդրութիւն եւ եղբայրասպան ոճիր ապասերեր է գանոնք :

Հայաստանի դէմ դրժումի եւ թշնամանքի այդ անփառունակ

ուզին Դաշնակցութիւնը գահավիժեց ամէնէն ամօթալի անկուճեալուն, ամէնէն ազժոռ վատութեանց : Եւ քրէական ուրացումի հանգրուաններ եզան անոր սարկային զինակցութիւնները յաջողաբար Բեմալական Քուրքիոյ, կովկասեան փախտական դաւադիրներու, հակասովեա ճարտրական կոտորութեանց՝ անսուրբ խմբակին, նացի Գերմանիոյ արիւնազանդ բռնակալութեան եւ որեւէ ձեւալ Պայարի կամ Եամուսի հեա, միա՛կ պայմանով մը, — որ անոնք արձակուած ըլլան նաեւ Խորհրդային Հայաստանի կործանումին և զազուրկաւ հայրենասէր հոսանքներու և մտաւորականներու գերին եւ ազդեցութեան խորտակումին համար : Եւ Խորհրդային Հայաստանը հոշակելով ազգա ու անէժք, եւ դայն քանզելու ցնորքով ամէն խարէութեան ու դաւի զիջելով՝ բնական եղաւ նաեւ, որ Դաշնակցութիւնը փորձէ ձախուղցնել հայրենաշինութեան, ներպայթի եւ հայրենիքին ընծայուած սրեւէ աջակցութեան ձեռնարկ, զբարտաշական եւ ահարեկշական բոլոր միջոցներուն նեւտուելով :

Սրեմն բացարձակ, անժխտելի ճշմարտութիւնը կը մնայ, որ Հայաստանի հանդէպ հակոտնեայ այս զիրքաւորումն է միակ ու ողբերգական պատճառը սփիւռքը խոռովող բոլոր վէճերուն ու պայքարներուն, գայն փոթորկող բոլոր պառակտումներուն ու ոճիրներուն : Ապացոյց, որ եթէ Թամկալար Ազատական Կուսակցութիւնը, անկարելի զիմաշրջումով մը, սկսի հարուածել ու վարկաբեկել Հայաստանի իշխանութիւնը եւ հայրենիքը, խափանէ կազմակերպուող ներգաղթը եւ ժխտէ վեհափառ Հայրապետին եւ Էջմիածնի գերագոյն հեղինակութիւնը Հայ եկեղեցիի նուիրապետական կառուցուածքին մէջ՝ դաշնակցական զեկամարներ գայն պիտի ներբողեն իբրեւ ազատանձն զազմակերպութիւն : Եւ անմիջապէս պիտի լուծուի ամէն կոբու հերձուած, — եւ պիտի հաստատուի ճաղային միասնականութիւն՝ ամբողջ արտասահմանի մէջ : Եւ եթէ, հակազարձ զիմաշրջումով մը, Դաշնակցութիւնը ինք գաւբեցնէ սուտի, առելութեան ու գաւերու իր արշաւը Հայաստանի դէմ, սամկալար ազատական եւ հայրենասէր միւս հոսանքները պիտի ողջունեն այդ դրական արարքը, եւ գարձեալ պիտի իրականանայ համերաշխ ու լիակատար գործակցութիւն մը

սփիւսքի մէջ, որ պիտի հարթէ ամէն տարակարծութիւն, պիտի կամբջէ ամէն խրամ :

Բայց նման ազնիւ շրջագարձի մը համար՝ դաշնակցական պետեր պէտք է կարենան հրաժարիլ Հայաստանի իշխանութիւնը տառաջէլու իրենց ցնարական մոլուցքէն, մանաւանդ՝ հայրենագաւ ու պատակտի: այդ պայքարներուն շահեցուցած յուզայական արձակէն, որ իրրեւ մասնութեան վարձք կը բաշխուի իրենց օտար պետութեանց եւ լրտեսական գործակալութեանց զանձատուէն: Եւ այն խարկական զվարկէն, որ նայն օտար ճնշումներն ու սուխնները կ'ընծայեն իրենց քանի մը դազութներու մէջ, մեկնելով Անթիլիասէն: Իսկ ապաւին հետու կը թուի այդպիսի վերափոխում մը:

Որովհետեւ՝ Դաշնակցութիւնը գեռ յուսահատ մոլեղնութեամբ կառչած կը մնայ եղծամուած չափանիշներու, աղճատուած դատումներու եւ վաճառուած սկզբունքներու իր թշուառ մոխրակոյտին: Բոլոր դարերուն ու բոլոր ազգերուն մէջ՝ իրրեւ ուրացող ու դաւաճան խարանուեր են անոնք, որոնք դաւեր են իրենց հայրենիքին ու ժողովուրդին դէմ, եւ մեղսակցեր են արտաքին սուխններու արշաւանքներուն ու աւերումներուն: Իսկ Դաշնակցութեան ալլասերած մեկնութեամբ՝ արտասահմանի մէջ «ուրացող» ու «դաւաճան» են բոլոր անոնք, որոնք Թամկավար Ազատական ուղեքիծով կը յարին վերածնած Հայաստանին, անոր հայրենի պետութեան եւ ստեղծագործ, լուստենչ ու կառուցանող ժողովուրդին, — եթէ՛ նոյնիսկ անոնք ըլլան իրենց երէկուան փառքերէն, եթէ՛ անդամ անոնք կոչուին Աւետիք Իսահակեան, Նիկոլ Աղբալեան կամ՝ Անդրանիկ Մառուկեան, Մանասէ Աեւակ եւ կոստան Զարեան:

Այսպէս է, մօտաւորապէս, Հայկական սփիւսքը:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ա.

Արտասահմանէն ամէն տարի առաւել թիւով այցելուներ կը մեկնին Պորտուգալիոյ Հայաստան, մեծազոյն մասը՝ հեռաւոր, երազային հայրենիք մը ողջունելու թախմալի կարօտով: Ուրիշներ՝ մերձաւոր ազգականներ ողջազուրեւու անհամբեր անձկութեամբ: Եւ անոնք կ'ենթարկուին, ընդհանրապէս, որեւէ տարբեր երկիր իրրեւ դքսաշրջիկ պատողներու ընթացիկ ու բնական փորձութեան, — ամէն երեւոյթ, պատահար կամ շնջուած կարծիք՝ հազճեպ ու հարեւանցի դատելու եւ վճռելու վրիպանքին: Գրեթէ ամբողջապէս միջին դասակարգի մարդիկ ու կիներ են այդ ուղեւորները, որոնք իրենց հաստատուած վայրերուն մէջ, քառասուն եւ աւելի տարիներու չարքաշ աշխատանքով տիրացեր են կենցաղային բարեկեցիկ վիճակի եւ կը բնակին դեղեցիօրէն կահաւորուած ընտիր տուներու մէջ, արդէն մոռցած հոգեկան տապնապներու տուայտանքը եւ նիւթական զրկանքներու կոտտացող վէրքերը, որոնք կրէք էին անցեալին, իրրեւ կանխալմար հատուցում այդ շահուած բարիքներուն:

Դէպի Երեւան իրենց ուղեքիծին վրայ՝ հայրենաբաղձ ճամբորդները կ'անցնին յաճախ Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի շքեղ ստանաներէն եւ կ'իջեւանին ամէնէն արդիական ու զեղակերտ պանդոկներուն մէջ: Անոնք կը շրջին մեծ մայրաքաղաքներու, — Փարիզի եւ Լոնտոնի, Աթէնքի եւ Վիեննայի կամ Պէյրութի ու

Գաճիբէի ամէնէն դատիչ պողոտաները եւ հարուստ վաճառատու- ները, կը զիւան միայն փարթամ թողոմասերը, գեղեցիկ հը- բադարակներն ու հոյակապ շէնքերը:

Օտար, անձանօթ ալը քաղաքներուն մէջ, դադութաճայ ան- ցորդներ ոչ ժամանակ ունին, ոչ ալ միջոց, այցելելու եւ տեսներու ցուադին ու թշուառ ստօրեայի մը տառապանքը տպրող մարդկա- յին քաղմութեանց հիւղերն ու դռիճները, — ուր ժանգոտած թի- թեղը, բորբոսած փայտը եւ չորցուած ցեխը դիտար շինանիւթե- րը կը կազմեն սրպէս սլաա ու տանիք, — ուր նեղ, ծամածուռ շա- շիղներ ազր ու փոշի կը կրեն արեւոտ օրերուն կամ սրոնցմէ տիղ- մի ու տիրտի առուներ կը հոսին անձրեւոտ եղանակին: Հայ գրօ- սաշրջիկները, գէպի Հայաստան իրենց ճամբուն վրայ չեն մտներ մեծ սաւաններու չաւոր թողերուն մթին ու քաշքայուած յարկե- րէն ներս, չեն հաղորդուիր անոնց բնակիչներու սեղաններուն զրը- կանքին եւ յուսալքումի վիշտերուն, չեն ճանչնար անոնց կենցաղին անփոփոխելի թշուառութեան ու ցաւին մղձաւանջը, զոր անոնք իրենց Հայրերէն ժառանգք են սրպէս պապենական նորմք, եւ կը ձգեն իրենց գաւակներուն՝ անոնց թոռներուն վրայ սփռուելու մը- սայլ հեռանկարով:

Մինչ Հայաստանի սահմաններէն ներս հիմնովին տարբեր պայմաններ կը չրջապատեն արտասահմանէն այցելող հայերը: Հոն կը քանդուին լեզուի պատուարն ու օտարականի երկիւղը: Ա- նոնցմէ շատեր, Երեւանի, Լենինականի եւ նորակերտ աւաններու մէջ ունին սպառնանք կամ բարեկամներ, ներզաղթած Յունաս- տանէն, Ճրանասոյճն կամ Մերձար Արեւելքի երկիրներէն, որոնց մէկ մասը դեռ կը բնակին փոքր, անհրապօր տուններու մէջ: Ա- նոնք իրենց սահմանափակ ժամանակը կ'անցընեն ընտանեկան հան- դիսղումներով ու զրոյցներով, եւ անկասկած կը լսեն անցեալ զրը- կանքներու կամ ներկայ կարիքներու եւ դժուարութեանց մասին դառն գանգատներ: Եւ զրօսաշրջիկներու համար բնական՝ ամէն լսյո ու ստուեր, կամ գէպք ու վարկած քաղցատելու եւ պատելու կանխակալ հակումով՝ անոնք կ'անտեսեն հայրենիքին ու ժողո- վուրդին Փիղիքական փրկութեան, անտեսական վերելքին եւ աղ- զային վերածնունդին բախտորոշ, վիթխարի եղելութիւնը: Կը

մտնան մանաւանդ՝ տարրական դատողութեան թելադրանքով, պատկերացնել անոնց անցեալ դոյալիճակը իրբու մեկնակէտ, ա- նոր յեղաշրջման իրագործած հանգրուանները եւ ապագայ նշանա- կէտին նուաճման ստուգութիւնը:

Եւ կը յանձնուին՝ մասնակի արատներու սեւ դիտակով տմ- քողջ Հայաստանի բարդ իրականութիւնը տեսնել փորձելու կամ գնահատելու ինքնահաճ գրօսանքին: Անոնք կը նախընտրեն համե- մատել միշտ, բայց արտաուց չափանիշ մը կ'իրարկելով: Եւ Հա- յաստանի մէջ նիւթական խոնարհ մակարդակի վրայ ապրողներուն կենցաղային պայմանները, անոնց փոքր ու տօգոյն տուններով՝ կը քաղցատեն իրենց չրջանակի միջին կամ հարուստ գասերու վիճա- կին ու բնակարաններուն հետ: Երեւանի, Լենինականի, Հրազդա- նի, Կիրովականի նոր ու գեղակառոյց շէնքերը չեն հակադրեր Ա- թէնքի եւ Պէյրութի, կամ Լոնտոնի ու Շիքակոյի թիթեղէ կամ սախաակէ, հողէ եւ խիճէ խարխուլ, կիսաւեր հիւղերուն, կամ դոնէ չեն ընդգրկեր կեանքի եւ նիւթեղէն արժէքներու հաւասար սատիճաններու քաղցատութեան եղանակը: Այլ պարզապէս կ'առ- նեն Հայաստանէն ամէն մարդի մէջ յոռեգոյնը, եւ զայն կը զու- պադրեն արտասահմանեան երկիրներու լաւագոյնին քով եւ կը յանգին նոյն անխուսափելի պատասխանին: Այդ մօտեցումով՝ ա- նոնք կը զրկուին հայ ժողովուրդին քաղաքական, մշակութային ու սոցեկան վերականգնումին դիւցաղներդութեան վսեմ ու հեռահաս խոյանքը ճանչնալու եւ ողջունելու խորունկ հրճուանքին: Եւ կը դառնան անոր յաղթական թաւալումին ձգած մուրին ու փրկութիւն խոտասիրտ քննադատները:

Այցելողներու միւս գասը կը չրջի Երեւանի լայն ու ծառու- զարդ պողոտաները, զմայլանքով կը դիտէ հոյակապ շէնքերու եւ հիմնարկներու գեղակերտ կառոյցները, կը պտտի արդիական հրու- կայ գործարանները եւ սպառնար ու գործով կը փայտի շոտա- չող կամ կարիհաճոց մեքենաները, թախծալի վերացումով կ'ուն- կընդրէ օփերայի, թատրոնի, երգի ու նուագի գաշնաւոր կախար- գանքին, եւ կը վերադառնայ իր պոնդուրտի կայքը՝ հայրենա- րաղճ տարազերի խանդավառ, զգացական ցնձութիւնը հոգիին մէջ ու ներքոյ չրթներուն վրայ: Բայց հիացումի եւ հպարտութեան

անոնց սրտառուչ զեզուսին մէջ կը թաղուին, կը կորսուին տաժա-
նագին աշխատանքի, դաւն զրկանքներու եւ հերոսական նուիրումի
այն սակղծարար տարրերը, որոնք շաղարհ ու մարմին, նաեւ խորք
ու վեհութիւն ընծայած են Հայաստանի այդ իրականացած երա-
զին: Եւ որոնք ոչ միայն պէտք չէ ծածկուին, այլ անհրաժեշտ է,
որ արձանագրուին ու հռչակուին իբրեւ գերազոյն գոհութեան
մատուցում եւ փառքի յանրակամ պատկ՝ Հայաստանի դորձա-
ւորներուն, զիւզացի մշակներուն, գիրի եւ արուեստի փարօղտնե-
րուն եւ պետական ու հանրային առաջնորդներուն համար:

Որովհետեւ, եթէ հոն առատութիւնն ու պերճանքը ոչպէս
տուօրեայ կանցազի բոլոր խաւերը, եւ զեղեցկութեան շորհքը ա-
նարատ պճնէր աւն ու փողոց եւ գիւղ ու քաղաք, եթէ կատարե-
լութիւնը արեւը հայոց աշխարհին եւ մարդոց ու կիներուն մէջ,
եւ կարիքն ու վիշաք, եւ ձախողանքն ու յանցանքը ամբողջապէս
չքացած ըլլային մեր մայր երկիրէն՝ այն ատեն ամէն տարագիր
հայ պէտք էր համակուէր կործանման սարսափով եւ մահուան սը-
հաւիրքով: Որովհետեւ ան պիտի խորհէր անարեւի, թէ Հայաս-
տանն ու հայ ժողովուրդը ուրեմն գահալիթած են Նիրվանայի ու-
շքնչութեան անդունդը, կամ շարտուած են ածիւն ու մոխիր դար-
ձած անջրպետային մոլորակի մը վրայ, — քանի որ՝ այս երկրա-
գունտի երեսին չկայ, եւ հաւանաբար երբեք պիտի չըլլայ այդպի-
սի վայր, ուր երկիրքի արքայութիւնը կամ հէքեաթներու վեհա-
շուք, զերբնական բայց անկարելի փարթամութիւնը տիրապետէ:

Եւ յետոյ՝ եթէ իրապէս մեզր ու կարող հոսէին Հայաստա-
նի ժեռուտ, անարկու լեռներէն, եւ ճոխութեան վայելքն ու մեղ-
կութեան թաւիչը ածկին անոր երբեմնի խոպան, անջրդի դաշտա-
քուն վրայ՝ գիւրին, անտազանդ ճիգերով որեւէ միտք ու բազուկ
պիտի կրնար քնական զարգացում մը կերտել այդպիսի արգաւանդ
խարխախ մը վրայ: Բայց ինչ որ հայ ժողովուրդին եւ անոր զե-
խալարներուն անընկճելի կամքին, տարերային կենսունակութեան
եւ սակղծագործ հանճարին զերազոյն արժանիքն ու հրաշքը կ'ա-
պագուցանէ՝ այն իրողութիւնն է, որ Հայաստանի մէջ անոնք մեկ-
նեցան աւերի, թշուառութեան ու մահուան զերեզմանէն եւ քրտին-
քի, սուսայտանքի ու արեան սանդուխէն բարձրացան ներկայ ազ-

գային վերածնունդի գմայլելի յարութեան:

Հայրենիք այցելուներ, ուրեմն, որպէս զի կարենան լիազե-
քժքանել ու գնահատել հարազատ ժողովուրդի տշխատանքին, գո-
հութեանց եւ իրագործումներուն ճշմարիտ արժէքն ու տար-
գութիւնը եւ համակուին յայտնուած արդիւնքին հոգեկան երանու-
թեամբ՝ անհրաժեշտ է, որ նախ ձեռքադատուին գատախաղի կամ
Ջատագավորի մտայնութեանց կապանքներէն: Որովհետեւ, այդ-
պիսի մտեցում մը պիտի վկայէ պարզապէս, թէ ազատուած են
մեր խնայական ու բարոյական շափանիչները: Այլապէս՝ անցեալ
մ'ը գարուն հայոց ս'ը սերունդը իջեր է այն ախտը, ամօթալի գա-
ւանանքին թէ մայր երկիրին ու ժողովուրդին հանդէպ իր սէրն ու
նուիրումը պէտք է պայժմանաւորուին անոնց նիւթական բարօրու-
թեան ատիճանով:

— Թէ Հայաստանը կարելի է մեծարել ու սիրել՝ երբ անոր
բոլոր փողոցները սալարկուած ու ծաղկազարդ քառուղիներ դառ-
նան, բոլոր հիւզերն ու ատենբը՝ տուֆէ ու մարմարէ պայտանե-
քու վերածուին, եւ բոլոր սեզանները ճոխութեամբ յարդին, եւ
բոլոր մարմինները մեծաքառով ու մուշակով պարուրուին: Մինչ-
դեռ, սեփական հայրենիքի եւ ազգի, — ինչպէս հասարակաց ծը-
նոգքի, — հանդէպ հաւատարմութիւնն ու գորովը պէտք է աւելի
սերտ ու խոնգակաթ զեզուսով աաքնան, երբ անոնք վէրքեր ու
վիշաք ունին, կամ կարիքի ու զրկանքներու թէկուզ վաղանցիկ
անձկութեամբ կ'ապրին: Որովհետեւ երբ հօգը ու բարգաւաճ են
անոնք, արդէն չեն կարօտիր նոյնիսկ իրենց զաւակներու նեցուկին
ու փայփայտանքին, որոնք ստակ աւելորդ պերճանք գործած կ'ըլ-
լան:

Սփիւռքի խոնարհ կամ բարեկեցիկ խաւերէն Հայաստան այ-
ցելող տարագիր հայ գրուաչըջիկներ պարտաւոր պէտք է զգան հը-
բաժարելու մայր երկրին մէջ «արքայութիւն» կամ «դժոխք»
փնտախու իրենց կանխակալ հակումներէն, որովհետեւ ո՛չ «գը-
բախա» պիտի գտնեն հոն, ոչ ալ «վայսաստան»: Մանաւանդ պէտք
է վերջիչեն այն անաւոր աղէտներն ու դարհուրելի փլուզումները,
որոնց արհաւիրքներուն մատնուեցան հայոց ազգն ու հայրենիքը
անցեալ 15 դարերու ընթացքին: Եւ փորձեն պատկերացնել նաեւ

քառասուն ասրիներու հարն ու փոթորկալի չըջանք, զարնուած ներքին յեղաշրջումներու եւ արտաքին պահրագծի արտափններէն, որոնց մէջէն, ցաւագին երկունքով ծնու ու աճեցաւ, եւ Հերոսական մարտումներով կերտուեցաւ ու զարգացաւ Խորհրդային Հաս-
յաստանը:

Անոնք պէտք է նաեւ անդրադառնան քանի մը պարզ, աստ-
րական իրողութեանց, որոնց խորքին վրայ աւելի ցայտուն ու
վճիռ պայծառութեամբ պիտի տեսնեն Հայրենի երկրին ճշմարիտ
պատկերը: Յիշէ՛ն, օրինակ, թէ աշխարհի երեք միլիար ընդ-
շութեան 85 տո հարիւրը տակաւին չքաւոր ու կիսաքաղց կեանքի
մը եղերական թշուառութեամբ կ'ապրի, մթին հիւղերու եւ ծուալ
տնակներու մէջ: Եւ Ասիոյ, Աֆրիկէի ու Լատին Ամերիկայի երկու
միլիար հոգիներուն մո՞տ գլուխ եկամուտը՝ օրական 20 սենթի (19
կոպէկի) եզկելի մակարդակին վրայ կը յամենայ: Թէ նոյնիսկ՝ ար-
բեւտեան ամէնէն փարթամ աստաններուն մէջ, — Լոնտոնէն ու
Փարիզէն մինչեւ Նիւ Եորք ու Լոս Անճելըս, — միլիոնաւորներ իր-
ճողուած կը բնակին նախնական յարմարութիւններէ զուրկ դար-
չելի դռններու կամ կիսափուլ ատներու մէջ, — յաճախ 6-8 հո-
գինոց ամբողջ ընտանիք մը միակ սենեակով մը, — ուր արտեր ու
ոճիրները կը ճարակին, և ուր՝ ցերեկին վաշխառու կալուածատե-
րեր անոնց տարաբախտ բնակիչներուն խեղճուկ տնտեսութիւնը կը
գիշատեն, իսկ գիշերը՝ քաղցած առնէտներ քնացող գոհերու մատ-
ներն ու տկանջները կը կրճոտեն:

Եւ դեռ մտարբերեն, թէ աշխարհի ամէնէն առաջացած, Հա-
րուստ ու կենցաղային գերազանց մակարդակի Հասած երկրին, —
Միացեալ Նահանգներու մէջ անգամ՝ տակաւին քառասուն միլիոն
աղքատներ կան, իսկ 17 միլիոն հոգի երեկոները անօթի կը մանն
անկողին: Թէ բովանդակ մարդկութիւնը լծուած է ամեհի, բախ-
տորոշ պայքարի մը, որ երբեմն կը բռնկի արիւնտ յեղափոխու-
թեանց եւ քաղաքացիական կռիւներու մահաճոտ ցատումով, աւե-
լի բարեկեցիկ, ճոխ ու խաղաղ կեանքի մը երազուած հեռանկարը
բռնելու համար: Եւ բնական է, և անխուսափելի է, որ կարիքի ու
զրկանքի, եւ մաքառման ու յաղթանակի այդ ուղիէն կ'ընթանայ
նաեւ Հայաստանը:

Բ.

Վերջին ապհասլի պայտերագմին սփռած նախճիրներն ու
տակայծած ազատարար մարտնչումները եւ հիւլէի փշրուելէն ար-
ձակուած ահռելի զօրութիւնը՝ արագ շարժումի, համապարփակ
փոփոխութեան եւ տարերային պոթիկումներու շրջան մը բացին:
Նիւթեղէն աշխարհը վերակերտելու, մարդկային գաժան առօր-
եան յեղաշրջելու եւ ազատութեան կախարդոց հանգրուանը նուա-
ճելու մոլեգին ձգտումն ու շղթայակերձ խոյանքները զարձան
պոյթուցիկ ուժեր, որոնց թաւալման թափէն հազարամեայ բնկե-
րային կարգեր ու վարկածներ կը փլչին եւ բռնութեան ժանդոտ
անուրներ կը խորտակուին: Եւ անոնց աւերներուն ու բեկորներուն
վրայ՝ նոր ազգեր իրենց գոյութեան աճաւոր երկունքը կ'ապրին
և զարբերու գերութեան ու թշուառութեան ասնջանքին մէջէն՝
հուշտ ապրուստի եւ ապահով երդիքի թանձրացած իտէայները կը
հեռագնդեն: Բայց կեանքը նորակերտելու եւ երկիրը վերակառու-
ցելու այդ լարուած աճապարտներն հակառակ՝ դեռ ցաւագին
յամբութեամբ կ'առաջանայ բարեշրջումի կառքը, — ա՛յնքան յե-
ղակարճ բարդումով անոր վրայ կը կուտակուին արագօրէն աճող
մարդկութեան եւ անոր բազմապատկուող կարիքներուն ահարկու
բեռները:

Հայաստանի մէջ, փոփոխութեան այդ դնացքը վերածուեր
է ճեպընթացի մը, որ հասած է իր գերագոյն թափին եւ կ'ընդգրկէ
քաղաքներու Ֆիզիքական երևույթն ու ժողովուրդին ոգեկան մթի-
նոշարը, ճարտարարուեստին ծաւալող տարողութիւնն ու գրա-
կանութեան եւ արուեստներու մարդերուն մէջ՝ ազատ որոնումի եւ
ինքնազատահ կատարման միջավայրը: Այդ իրողութեան վկայել
գժուար պիտի չըլլայ որեւէ աննախապաշար միտքի համար, որ
ծանօթ է Խորհրդային Հայաստանի մերձաւոր անցեալի գոյավի-
ճակին, նաեւ կը ճանչնայ քաղաքակիրթ կամ նորադատ երկիրնե-
րու վերափոխման աստիճանը եւ կրնայ առարկայական հիմերու
վրայ եզրակացնել իր գնահատման ու բողբառութեան փորձերը:

Ինչուածք այնպէս դասաւորեց, որ տրեւմասնայոց անճի-
 ասումի գարհաւրելի եղեքնէն ետք, երկու տարի (1916-8) ապրիմ
 ներկայ Հայաստանի մէջ, եաթասղանի ոսպնդէն ճողապրած ուրիշ
 բերաւոր սրբերու եւ զաղթականներու հետ: Մեկի համար՝ տա-
 րեկրային ցամաք եղելութիւններ չէին այն չըջանէն հոն տիրապե-
 տող համաճարակներն ու սոսիք, նաեւ հատուածական ատելութե-
 նքն ու եղբայրասպան սճիրները, որոնք կը սերմանուէին
 մազգերական տհաքեկիչներու հոտանքին կողմէ: Եւ վիճակագրա-
 կան անշուշտ թիւեր չեղան մօտ վեց հարիւր հազար տարաբախտ,
 թշուառ դահերը, որոնք ինկան քաղցի, մանրէներու եւ քրէական
 անիշխանութեան ու կուրաներու մահատուանի մէջ, մինչեւ 1920ի
 աշունը:

Երկրորդ առիթը հայրենիք այցելելու՝ եկաւ 1935ի Հոկտեմ-
 բերին, երբ աւելի քան երկու ամիս կրցայ շրջիլ Երեւան, Լենինա-
 կան, Էջմիածին, Կիրովական, Իջիլիան եւ ուրիշ ւաններ ու վայ-
 րեր եւ ճանօթանալ երկրի գարգայման մակարդակին ու բնակչու-
 թեան կենցաղային պայմաններուն: Այն ատեն, Հայաստանի տըն-
 ակաութիւնը դերագոյնցօրէն հողագործական էր տակաւին եւ ա-
 նոր ծանր ու թեթեւ ճարտարարուեստին կեդրոններն էին, Լենի-
 նականի՝ հիւսուածեղէնի ու միսի, Ալավերտիի՝ սպինճի, Կիրո-
 վականի՝ քիմիական, Արթիկի՝ աուֆաքարային եւ Երեւանի՝ ար-
 սեւասական քառչուկի, նաեւ գինիի ու պահածոյի գործարան-
 ները:

Չբաւորութեան ու գրկանքի տարիները իրենց վախճանին
 մօտեցեր էին եւ խանութներու մէջ սկսեր էին սպառման առատ եւ
 այլազան ապրանքներ կուտակուիլ: Բայց դեռ կարիքը եւ կարօ-
 տութիւնը տիրական կը մնային կառուցման թէ առօրեայի բոլոր
 մարդերուն մէջ: Բնակարանի տաղնապին չտի ճնշիչ պահանջ կար-
 արաաղբական մեքենաներու, ելեկարական գործիքներու, բժշկա-
 կան կազմածներու, — որոնցմէ հնարաւոր քանակով հայթայթե-
 լու ձեւնաբեկներ սարքուեցան Ամերիկայի մէջ: Սակայն լուսողոյն,
 շքեղ սպառայի մը կերտումին խանդավառ հաւատքը կլաներ եւ
 հերոսական ճիգերու ներշնչեր էր հանրային ու մտաւորական ա-
 սաջնորդները: Ազատի Թանջեանի տեսլապալատ ոգին, անձնուրաց

նութրումը եւ իրագործելու վարարուն տեղը համակեր էին խոր-
 հրգահայ բովանդակ իրականութիւնը, մանաւանդ երիտասարդ
 սերունդը: Անօթութեան ու ծարաւի, աւերի ու կործանման եւ մահ-
 ուան ու սղրի բաւիղներէն անցնելով՝ անոնք կը յօրինէին հայ ժո-
 զովուրդի ազգային վերածնունդին ու Հայաստանի պետական վե-
 բականգնումին հոյակապ գիւցաղներգութիւնը, — զոր արուեստի
 փառքով կը պսակէին Եղիշէ Չարենցի տիրական հմայքն ու խոս-
 վայոյց հանձարը:

Անոնք տողարուած էին իրենց կուսմին ու անսիւքին վսեմ
 տարողութեան, իրենց առաքելութեան եւ արարքներուն փրկա-
 դորձ բնոյթին համոզումով: Եւ փայփայուած երազ, եւ մարմնա-
 ցող կամք էր արդէն, հողաչին անակներու, գեանափոր հիւղերու,
 ծամածուռ նեղ բաւիղներու, աղճատուած լմբոնումներու, քայ-
 քայի թշուառութեան եւ ընկերային հաշմոյ խաւարին նիւթական
 ու մարդկային մոռյլ տարածութեան վրայ կառուցանել առաջա-
 դէմ ու բարդաւած նոր Հայաստանը, — կենսախայտ, միաձոյլ ու
 ստեղծագործ հայ ազգութեամբ մը: Անկարելի թուացող այդ հը-
 բաշքին հիմերը ամբացուցին եւ ծրագիրին լաստակերտը բարձրա-
 ցուցին անոնք: Բայց ներքին վայրազ հալածանքի եւ մաքրագործ-
 ման մահաչափ խորշակը, եւ նացիական ներխուժման խուժուժ
 ուրականը ծուաւեցին ու անդամալուծեցին անոնց խոյանքին, թե-
 ւերն ու հանգրուանները, ամբողջ տասը տարիներ: Եւ հազիւ տաս-
 նամակ մը առաջ, Հայաստանի նոր գեկավարները եւ երէց ու
 կրտսեր մտաւորականները, դարձեալ կամբջեցին եղբերական ան-
 ջրագետը եւ անոր լուսաւոր ափէն կրկին փարեցան ժողովուրդի
 վերակերտումին ու հայրենիքի կառուցման գիւցաղնական արշա-
 ւին:

Իսկ անցեալ Դեկտեմբեր ամիսն ու Յունուարի առաջին շա-
 բաթը, իրենց պայծառ, մշուշոտ կամ ձիւնապատ օրերով՝ ինծի
 պարգեւեցին երջանիկ յոյգերու եւ հպարտ հաստատումներու ապ-
 բուած փորձառութիւնը, դարձեալ հայրենի երկրին մէջ: Աւելի
 քան 25 տարիներու ճղնամամ, աղէտ ու պատերազմ արձանագրած
 շրջանի մը միջնարարէն ետք, այս հանդիպումը հին ու թախծալի
 կարօտներու եւ նոր ու խոռովիչ հրճուանքներու երանութեամբ պա-

բուրեց զիս Սրբովհետեւ ամբողջ աշխարհն ու Խորհրդային Միութիւնը աւերի, արեան ու ամառանքի մասնած արտաքին ու ներքին փոթորիկներու, կործանարար պատերազմի, բռնակալ սարսափներու եւ հրդեհուող յեղափոխութեանց այդ ժամանակի վախճանին՝ Հայաստանը կը յայտնուէր հիմնական, բարերար վերափոխման մը կենսալի, ստեղծարար մակընթացութեան մէջ:

Սմէլնէն անմիջական ու հզօր տպաւորութիւնը, բնականօրէն եկաւ քաղաքներու եւ աւաններու Ֆիզիքական փոփոխութեան, որ ապշեցուցիչ էր իր մեծութեան ու ճաշակին վիթխարի, գեղակերտ տարողութեամբ: 1935ին, անոնք նոր սկսեր էին բարձրանալ միջնադարեան գեանափոր խրճիթներու, հողաշէն հիւղերու եւ քարէ անակներու տղմոտ դռներէն: Նոյնիսկ Երեւանի մէջ, փողոցները կ'եղերէին անտաշ քարերէ կամ շորջուած ցեխի աղիւտներէ շինուած հնամաշ ու մթին աւաններու գորշ շարքեր, որոնցմէ շատերուն ծոած պատերը կը կրթնէին փայտէ յենակներու, չփլուչելու համար: Եւ Քանաքեռի բարձունքէն, մեծ ոստանին համայնապատկերը, հեռուոր, շքեղօրէն պայծառ Արտարաի վեհափառ ստուերին տակ, կը փուռէր հինին ու նորին տրտում հակադրութեան խառնուրդով:— Անոր մութապատ, անհրազոյր ու մոռյլ հարթութեան վրայ, կարծես պատահարար հոս ու հոն նետուած, մենաւոր կոթողներու վարդապոյն գեղեցկութեամբ կը կանգնէին նորակառուց շէնքերը:— պետական հիմնարկներ, վարժարաններ, մշակութային կեդրոններ, հիւանդանոց, գործարան եւ Ծ-Յ յարկանի բնակարաններ, ստիպողական պահանջի կարգով շինուած, ականաւոր ճարտարապետ Թամանեանի յատաղծին համաձայն:

Հիմա՝ հիմնովին շրջուեր է հակասեւեայ այդ եղբրուն, — հազարամեայ տիեզծ հինին եւ գեղակերտ նորին յարաբերական տարողութիւնը: Հիմա՝ նոյն մայրաքաղաքին մէջ, հայկական ինքնատիպ ճարտարապետութեան բազմաուսեռ կիրարկումով կառուցուած սրաւիչ ու հոյակապ շէնքերու, ծայրամասային հսկայ գործարաններուն, եւ լայն, ուղղաձիգ ու յաճախ ծոտաղարգ պողոտաներու, եւ արձաններով, շտարուաններով ու ծաղիկներով պնդուած լայնարձակ հրապարակներու, եւ հանրային կանանչապեղ պարտէզներու լուսաւոր համայնապատկերին վրայ՝ սեւ կար-

կանի, ազմուտ ցնցոտիի նման կ'երևին ողբերգական անցեալէն ճնայած քանի մը թաղամասեր, որոնք կը քանդուին տակաւ, արգիական գեղեցիկին վերափոխուելու համար:

Իսրաէլալ՝ 1935ին, յեղափոխութեան շրթայտերը պոսթ-կուսին նորակերտող թափն ու ահաբեկիչ խոռվքը կը տեւէին դէս: Գիւղերու եւ հուաքատնտեսական (կոլտոգային) ծրագրին անողոք գործադրման եւ կիրովի զգայացունց սպանութեան ստեղծած հալածանքի խոտութիւնը եւ սարսափի ճնշումը մեղմացեր էին եւ յարաբերական հանգուրժանքի մթնոլորտ մը սկսեր էր տարածուիլ: Բայց տակաւին՝ փոխադարձ կասկածի ու վախի մտայնութիւնը կը տիրէր, եւ դժգոհութիւն ու դանդաւ, կամ սրամիտ հեղանք ու քննադատութիւն կ'արտայայտուէին մտերմիկ շրջանակի մէջ կամ մրմունջներով: Եւ զրպարտիչ մտանանչումով մը, յանցանքի որեւէ յերիւրուած պիտակի տակ ոստիկանութիւնը կրնար քմահաճ բրտութեամբ ձերբակալել ու պատժել նշուակուած դոհը:

Յարաճուն մղումով կը ծաւալէին գիտական, մշակութային, կրթական ու ճարտարարուեստական զարգացման ձեռնարկները: Ճաննեակ հազարներու տպաքանակով կը հրատարակուէին Աբովեանի եւ Ռաֆֆիի, Մուրացանի ու Գոռչեանի, Երվանդաւելի եւ Թումանեանի, Նարդոսի եւ Իսահակեանի, Տէրեանի ու Գեմիլը-ճեանի, Չարենցի եւ Բակունցի, Զօրեանի եւ Զապէլ Եսայեանի, Մահարիի եւ Գեղամ Սարեանի, Թոթովենցի եւ Արաղիի, Տարօնցիի ու Նորենցի, Մ. Արմէնի, Ն. Չարեանի եւ Վշտունիի, եւ արեւմտահայ յայտնի գրողներու վէպերը, պատմուածքներն ու բանաստեղծութիւնները: Բայց նաեւ, պարբերաբար, մեղադրանքի ու պարսափի գրոհ մը կ'արձակուէր «Տալիստալիստական տեմ-տեմն»ներու (ազգայնական ձգտումներու) ենթադրական վտանգին դէմ, կարծես, իրրեւ ընթացիկ տուրք «ճանկական ձախութեան»:

Սակայն հիմա՝ նորայայտ տրտութեան վարակիչ շունչով մը համակուեր են երկիրն ու ժողովուրդը, մանաւանդ մուսուրական խաւերը եւ սուանող ու երիտասարդ դասերը: Սորհրդային Համայնավար Կուսակցութեան 20րդ եւ 22րդ համագումարներուն

մէջ իրագործուած զանհատի պաշտամունքի դրութեան, — ուրի-
 մըն նաև անոր բռնակալ մականին բարեբար քանդումը՝ Միու-
 թեան բողկացուցիչ ազգերու պարզեւեր է ձերբազատման զգա-
 յութիւնն ու հրճուանքը: Ոստիկաններ դադար են երկիւղի և
 բռնութեան խորհրդանիշներ ըլլալէ և դարձեր են Հանրային ան-
 դորութեան պահակներ: Եւ Հայաստանի փողոցներուն, հանրա-
 կառքերուն ու թատերասրահներուն մէջ, աւելի հնչեղ զրոյց, հա-
 մարձակ ազմուկ ու լիախիղ ծիծաղ կը լսուին հիմա, թերևս իր-
 բեւ փոխվրէժ տնցեալ լուսթեանց դէմ:

Եւ առնելու, ճաշարաններու կամ ժողովներու մէջ՝ աւելի
 լայնածիր զազափարական տարակարծութիւններ, սկզբունքային
 վէճ ու յանդուգն վերադնահատում կամ դատապարտութիւն կ'ար-
 տայայտուին ազգային, տնտեսական, ընկերային, գրական ու գե-
 դարուեստական կարիքներու, շարժումներու և երևույթներու
 շուրջ, կամ պետական, մշակութային ու կուլտակցական զեկավար-
 ներու դէմ, — յաճախ դառն խտուութեամբ, հանդէպ առաջնորդնե-
 րու՝ որոնք համոզուած կամ վերապահ մտանակիցներ եղեր են
 անցեալ ճշումներու և անիրաւութեանց:

Բայց տակաւին, քողարական պայմաններու, հոգեբանական
 վիճակի և գործնական կիրարկումի այդ ընդհանուր փոփոխու-
 թիւնը նաև կը բացայայտէ առաւել խիզախ ու հետահաս ծրա-
 գրում մը, և աւելի վճռակամ ու փերմեռանդ հետապնդում հա-
 մապարփակ յայտադիրի մը, որ հայոց հայրենիքն ու ժողովուր-
 դը հսկայաբայ վերելքի, և դարգացման ու դորութեան նոր ու
 շքեղ բարձունքներ հասցնելու կոչուած է: Ան կ'առաջադրէր երկրին
 հողագործական ազբատ տնտեսութիւնը փոխարկել բազմերանդ
 ճարտարարուեստի յորդ ու հարուստ ազբիւրներու: Եւ բարելաւել
 բնակչութեան կենցաղը՝ կենսական պիտոյքներու և պերճանքի
 առարկաներու առատ հայթայթումով, հանդատուէտ ու գեղեցիկ
 բնակարաններու մէջ: Եւ աւելի ընդլայնել գիտական հետազո-
 տութիւնները, հոգի ընդերքէն մինչև անջրպետն ու աստղերը, և
 մշակել ազգային ինքնատիպ տարազով ու նկարագրով մեր գրա-
 կան ու գեղարուեստական արժէքները, առաւել նշանակելի մաս-
 նակցութիւն ընծայելով և առաջաւոր դիրքի ու վարկի բարձրա-

նայով Խորհրդային Միութեան համախառն յատկութեան մէջ:
 Եւ հայրենագործի յարատեւ հոսանքով, Հայաստանի սահմաննե-
 րէն ներս մարմնացնել հայ ժողովուրդին ամբողջական ազգահա-
 տաքման գարաւար տեսիլքը, իբրև մեկնակէտ անոր հազարամեայ
 երազներուն իրագործման, որպէս կենդանի մուրհակ տնոր յաւեր-
 ժական իրաւունքներուն հասուցման:

Ինչ որ զազութահայ այցելուն կը զարմացնէ ու կ'ողելորէ
 մանաւանդ՝ ընդգրկուած այդ ծրագիրներուն, մտադրուած այդ
 նշանակէտներուն բախտորոշ ահապնութիւնը չէ միայն, այլ այն
 խանդավառ եռանդն ու բոլորանուէր աշխատանքը, որով փարեք
 են անոնց հետապնդման, և այն հպարտ ինքնապատահութիւնն ու
 յայթականի ուրախութիւնը, որոնցմով կը դիմեն դէպի անոնց ան-
 վրէպ, բացարձակ նուաճումը:

Գ.

Ամէն քաղաք ունի Ֆիզիքական ինքնուրոյն դիմագիծ մը և
 կենդանի նկարագիր մը, որոնք անոր կառուցման նիւթերուն ու
 ձեւերուն հիւսուածքին մէջէն՝ նաև կ'արտայայտեն զայն կերտող
 բնակչութեան ոգին ու ճաշակը, և կը ցոլացնեն անոր անցեալի
 աւանդութիւններն ու դալիքի ձգտումները: Սեփական հայրենիքին
 մէջ, գերութեան ու հալածանքի դաժան դարերու շրջանին՝ հայ
 ժողովուրդը գրկուեր էր, իր էութեան գեղապաշտ շունչով և
 մտաներուն շնորհալի ձիրքերով, մայր երկրի քարին ու մարմա-
 րին և երկաթին ու պղինձին ներդաշնակ դիժերու տարազ և բո-
 բախող խորք ընծայելու ստեղծարար պատեհութենէն: Եւ երբ
 բնութեան ու սարսափի ամբարտակները քանդուեցան՝ շինելու,
 քանդակելու, կոթողելու անոր շղթայուած տաղանդն ու դիզուած
 կարօտը յեղակարծ պոսթկուսով կարծես յորդեցան յանկարծ: Եւ
 Հայաստանի վերակառուցուող ստաններուն, մանաւանդ մայրա-
 քաղաքին տուին հայոց համեայ ազգային ճարտարապետութեան
 ամէնէն գրաւիչ տարրերուն, — անոր հաստարեստ կամ նրբուզէչ
 սիւններուն ու պատկերաւոր խոյանքներուն, անոր բազմաձև կա-
 մարներուն և զմայլելի քանդակներուն ինքնատիպ ընդլայնումը:

ու հմայի: զեղեցկութիւնը:

Երեւանը հիմնուած է շուրջ 2800 տարիներ առաջ, եւ օտար նուաճողներու աւերիչ արշաւանքներուն ու արիւնալի տիրակալութեան դարերուն մէջէն՝ ան մնացեր էր գեանափոր հիւղերու եւ հոգածեփ ու քարէ անակներու անշուք աւան մը, որ մինչեւ 1920 թուականը՝ հազիւ 30,000 հոգի կը հաչուէր: Այսօր ան արգէն դարձեր է միջազգային մակարդակով շքեղ ու տարածուն քաղաք մը, աւելի քան 610,000 բնակիչներով, եւ բազմաշարկ ու հոյակապ շէնքերու, ընդարձակ ու գեղատեսիլ հրապարակներու եւ հանրային պարտէզներու, ծառադարձ լայն պողոտաներու եւ տակաւին հնամաշ տուներով մտայլ ճամբաներու համայնապատկերով:

Սերմն, քառասուն տարիներու կարճ միջոցին, որուն կէսը կլանուեցաւ աղէտի ու պատերազմի յորձանուտէն՝ Երեւան իր մարդկային քանակով ու մեծութեան ծաւալով բազմապատկուեր է քսան անգամ, — անհաւատալի, անկարելի թուացող աճումի առասպելական չափանիշ մը, որուն չէ կրցած մօտենալ աշխարհի վրայ ուրիշ որեւէ քաղաք: Բնակչութեան այս արտակարգ յաւելումը շահուեր է, շնորհիւ ծնունդներու բարձրագոյն սակին, եւ արտասահմանէն ներգաղթած տարազիր հայերու, նաեւ Սօրհըրգոյին Միութեան տարբեր մարզերէն եւ Հայաստանի գիւղերէն Երեւան տեղափոխուող ընտանիքներու եւ երկսեռ ուսանողներու համախառն կուտակումին:

Բայց մինչ մայրաքաղաքին մէջ Ժողովուրդին անսովոր թափով բազմանալը կը դորացնէ նաեւ անոր քաղաքական վարկը եւ կ'աճեցնէ անոր մշակութային ճիղերու ծաղկումն ու բարոյական հմայքը՝ ան նոյն ատեն կը ստեղծէ բնակարանի յարաճուն պահանջ: Եւ այդպիսի տաղնապի մը բնական երեւոյթին հանդէպ, Երեւան կը պարզէ տարօրինակ հակասութեան մը պատկերը: — Անոր կեդրոնական մասերուն մէջ, մանաւանդ շրջակայքը՝ 4-5-6 յարկանի գեղակերտ տուններու ամբողջապէս նոր թաղեր կը կառուցուին, տարուան բոլոր եղանակներուն անդուլ աշխատանքով, յարասեւ շինարարութեամբ: Եւ երէկուան տիղմին ու քարին, խորշին ու գոխին վրայ, քառակուսի փողոցի լայնքով ու երկայնքով կը բարձրանան հսկայ շէնքերու վարդազոյն շարքեր, որոնց-

մէ ամէն մէկուն մէջ, մինչեւ 40 կամ 50 ընտանիքներ կը բնակին:

Սահայն դեռ կը մնան ինչ ու քարքարուտ ուղիներ, մաշած ու մթին տնակներով, ուր երբեմն 4-5 հոգի կ'ապրին մէկ-երկու սենեակներու մտայութեան մէջ: Որովհետեւ, արագօրէն կանգնող նորաշէն բնակարաններ հազիւ աւարտած՝ կը լեցուին առաւել թափով անոյ բնակիչներով: Եւ շինուած գեղեցիկ նորին փոքրագոյն մասնիկը միայն կրնայ յատկացուիլ, փոխարինելու համար եղկելի հինը: Բայց մինչեւ 1970-ը, իրենց հիմերէն քանդուած՝ պիտի սրբբուին ու չքանան եզերական անցեալի այդ տխուր մնացորդները: Եւ Երեւանը պիտի դառնայ ներկային մէջ զոյատեւող հնագոյն ուստաներէն մէկը, որ նաեւ մօտ միլիոն մը բնակչութեամբ եւ ամբողջապէս ու շքեղօրէն նորակառոյց քաղաքի ճշմարիտ հրաշքը իրագործած պիտի ըլլայ, քանի մը տասնամեակի ընթացքին:

Յաճախ շրջեցայ ես, բոլորովին առանձին ու երկար ժամերով, Երեւանի փողոցներուն ու թաղերուն մէջ, ցերեկուան արեւին, մշուշին թէ ձիւնին, կամ իրիկնային լոյսերու աղօտ սփռումին կամ յորդ ողողումին տակ: Եւ ամէն պոստա, դէպի տարբեր գօտի մը՝ անակնկալ ու սրտախոյզ յայտնութեան մը հրճուանքով եւ հպարտութեամբ կը համակէ հեռակայ այցելուին էութիւնը:

Քաղաքի կեդրոնին, վիթխարի սիրտի մը պէս կը տարածուի Լենինի անուան լայնարձակ հրապարակը, ուրկէ բազմաթիւ պողոտաներ ու ծառուղիներ կը բացուին կպրապտտ կամ սալարկուած երակներու նման՝ որոնց մէջէն կեանքի ու շարժումի տախտակը կը հոսի: Չայն կը շրջապատեն 6-7 յարկանի հսկայ պերճաշուք շէնքեր, — կառավարական հոյակապ պալատը, ուր հաստատուած են վարչապետին, արտաքին գործոց նախարարին եւ յարակից պետական բաժանմունքներու գրասենեակները, անոր գիմաց՝ Հայաստանի անտեսական խորհուրդին կեդրոնը, որ գեղարուեստական կառոյցի վճայելի կոթող մըն է: Վերեւի ճակատին՝ պատմական հարուստ թանգարանն է, որուն արտաքին գաւիթի բարձրաբերձ կամարներուն ու դարպասին առջեւ, ընդարձակ աւազանին մէջէն կը ժայթքեն խոշոր շատրուանին ցայտաղբիւրները: Անոր դէմը եւ հեռուն՝ Արմենիա նորակառոյց մեծ հիւրանոցն է (պանդոպ), ձախ կողմին՝ Լենինի արձանը, իսկ յաջորդ փողոցի անկիւ-

նին, նամակատան ու հեռագրատան (կապի) շէնքը, կամարակապ բարձրագիր յարկով մը կցուած աշխատանքի պայտահին: Ամբողջ հրապարակը, ճարտարարուեստական յղացումի ու գործադրման ներդաշնակ եւ փառաշուք համադրութիւն մը կը պարզէ, մեծութեան ու գեղեցկութեան պայծառ, պերճահիւս ընդելուցումով մը:

Մայրաքաղաքին տարբեր թաղերը կը կրեն լոյսի եւ շորհքի նոյն ձգտումներուն մարմնացած դրոշմները: Անոնք օժտուած են բազմաթիւ ծառայատ ու ծաղկապարզ պուրակներով եւ գրասանիւններով եւ մեծ կամ փոքր հրապարակներով, — Եասուսեանի, Սպենդիարեանի, Արսլեանի, Կայարանի եւ ուրիշ անուններով, որոնց մէջ արձանն ու շարուանը, տուֆն ու մարմարը, կանանչն ու ծաղիկները նոյն գեղապաշտ ճաշակներուն կենսախալոյ, դրուարթ ցոլացումը կը վկայեն:

Աւելի պարմանայի ու փառաւոր է նորակերտ փողոցներու նկարչազեղ փարթամութիւնը: Գազութահայ ուղեւորը երեսօրերով շրջիլ անոնց երկայնքին, մեկնելով Քանաքեռի ստորոտէն, իջնելով Արսլեան մայրուղիէն դարձար եւ շեղելով իր աջին ու ձախին ճիւղաւորուող պողոտաներէն ու ճամբաներէն ներս, քայլելով մինչեւ Հրազդանի կամուրջը: Ան թերեւս պիտի մոլորի հինէն մնացած շարք մը նեղ ու սլորուն ուղիներու մէջ՝ որոնցմէ մէկ ինքնաշարժ հապի յամբընթաց կ'առաջանայ, ստանց անցորդներ պատերուն դէմ ճգմելու: Եւ պիտի շրջադայի, աչքերը ապշանքի սեւեռումով վճիռ կ'առ կարօտարազձ թախիծով պղտոր, Արսլեան եւ Նայրանտեան, Չարենց ու Մոսկովեան, Թումանեան եւ Լեւոնտով, Կոմիտաս եւ Լենինեան, Բարեկամութեան ու Քումանեան, Եասուսեան եւ Սպենդիարեան, Կիւեան եւ Ամիրեան, Տէրեան ու Խանջեան (դեռ կը շինուի) եւ ուրիշ բազմաթիւ փողոցներու մէջ, — երբեմն վերանորոգուած, յաճախ ամբողջապէս նորակառոյց լայն սրդոտաներ, եզերուած՝ 4, 6, 8, եւ նոյնիսկ 10 յարկանի հոյակերտ հսկայ շէնքերով, որոնք ձեւերու եւ դիժերու ինքնատիպ գրաւչութեամբ կը դանապանուին եւ որոնց վրայ հայկական հին ճարտարապետութեան շորհչայի, ինքնուրոյն յատկանիշները կը բարեխառնուին արդիական սճի պարզ, օգտապաշտ տարրերուն պատուաստումով:

Արսլեան պողոտայի վերակառուցուած երկար մասը կանայի ու թուփերու լայն շերտով մը կեդրոնէն կիսուած է երկու բաժինի, իւրաքանչիւր կողմ չորս ինքնաշարժի բաւարար միջոցով: Երկու ասիւրուն՝ զոյգ կարգ ծառուղիներով եւ տարածուն մայթերով, որոնք տուածին՝ արեւմտեան քաղաքներու միջին փողոցներուն լայնքը ունին: Նոյնպէս լայնարձակ ու գեղակերտ են Լենինեան, Կոմիտաս, Չարենց, Բարեկամութեան, Լեւոնտով, Թումանեան, Մոսկովեան, Թումանեան եւ ուրիշ շարք մը պողոտաներ, որոնց վրայ կը համադրուին անցեալի գեղապաշտ սղին եւ ներկայ մեքենական դարու պահանջները, եւ ծառերու, ծաղիկներու եւ թփիկներու երկոյններուն մէջէն կը սուրան ինքնաշարժներ, բեռնատարներ, եւ էլեկտրավար կամ ինքնաշարժ հանրակառքեր:

Եւ կեանք ու խորհուրդ կը ժայթքին բազմերանոց համայնպատկերէն: Հրաղւանի հանդիպակաց մէկ բարձունքին՝ դեռ երէկուան ժեռուա լերկութեան վրայ ամբողջապէս նոր թաղամաս մը կը կառուցուի, կազմուած 5-6 յարկանի մեծ բնակարաններէ, ամէն մէկը՝ բառակուսի փողոցի մը ծաւալով: Եւ կը յիշեմ, — 1935ին էր, շէնքեր կը կանգնէին նախնական մեքենաներու, բաշի ու բրիչի, մարդկային քամակի ու ասժանքի հիմնական «գործիք» ներով: Հիմա, այս թաղին մէջ միայն՝ կարելի է համբել փորող, բեռնարարձ, գլանող, շաղախող մեքենաներու լեզէոն մը եւ անոնց հետ՝ 11 վիթխարի բեռամբարձներ, որոնք իրենց պողպատէ բազուկներով ահագին ծանրութեամբ շինանիւթեր գետինէն կը վերցնեն մինչեւ 10-12 յարկերու բարձրութեան: Թաղամասին աւարտած յարկարաժինները անմիջապէս կը գրաւուին կարգի արձանադրուած բնասանիքներէ: Երեք տարիէն պիտի վերջանայ աշխատանքը այս ծրագիրին վրայ եւ ամբողջացած նոր թաղը արդիական դրաւիչ տուներ պիտի հայթայթէ 70,000 բնակիչներու, նորագոյն արուարձան մը պարգեւելով Երեւանին:

Փեղակերտ, հսկայ կառուցուածք մըն է երկաթուղային կայարանը, որ արբայական պալատի մը շքեղ փառքով կը կանգնի հրապարակի ճակատին: Անոր արտաքին ու ներքին կամարները կրող սինաշարքերը, կեդրոնի սրահին բարձրագիւր դմբէթը իր քանդակներու պատկերաւոր գրաւչութեամբ ու մեծագիր ջահով եւ

յարակից բաժանմանը քննարկելու նորարարական տեսլական ու
հար համազգութիւնը՝ կործէս տնտեսայ հաղարարականներու շուքը,
ուսանողութիւնն ու հմայքը ներկայի խորհրտին վրայ մարմնաու-
րած՝ գտնոնք կ'արձակեն դէպի դայիք դարերը:

Բայց տակաւին, կայարանի հրապարակը փառաւորներ է
ուելի հոյակերտ հոբոյով մը, որ Սասունցի Դուռիքի պղնձաձուլ
արձանն է: Աորհուրդի ու վեհութեան պրոնոզուած ժայթքում մը,
մայրորէն աճարկու եւ կախարհօրէն գեղեցիկ, — անտաշ հսկայ
ժայտի պատուանդանին վրայ, իր ցատու մնայի թռիչքին մէջ ար-
ձանացած նմուշը, ետեւի պիտի սաքերուն ու ջրվէժոյ պոչին յե-
նակներով կանգնած քարին, եւ ամբողջ իրանը, առջևի սմբակնե-
րուն եւ գլուխին յաղթական խոյանքով ու ծածանոյ բաշերուն ծր-
փանքով՝ արձակուած գէպի միջոցը: Եւ վարք, քարածայտի եզեր-
քին՝ թեքած բաժակ մը, ուրկէ հայ ժողովուրդին լեցուած համ-
բերութիւնը կը յորդի եւ կը հոսի վար, ջուրի բարակ երակով մը:

Իսկ ձիուն թամբին, սրունքներով ասպանդակներուն ծառա-
ցած՝ առասպելական բիրեղէ հերոսը, — Սասունցի Դուռիքը, բո-
լոր դարերու աւանդալէպերուն ու հեքիաթներուն ամէնէն արդար
ու բարի, ամէնէն ինչպիսի ու անպարտելի դիւցազնը, երկու պող-
պատէ բողբոջներովը քաշած կայծակէ մերկ թուրը, բռնութիւն ու
չղթայ, աւեր ու թշուառութիւն սիրող ստրկներու դէմ: Եւ կո-
հակուող յուզումն ու մակընթաց հպարտութիւնը կը թանձրանան
գիտողին հուսկանն ու աչքերուն մէջ: — Ահա՛, հայոց ազգային
ազատութեան յաւերժական տենչանքին, անոնց ապահով ու խա-
ղաղ եւ անկապանք ու ստեղծարար կեանքի երպին պղնձաձուլ
բայց կենդանի, ցուրտ բայց հրեղէն խորհրդանիշը, — Սասունցի
Դուռիքը իր հազարամեայ խոյանքին մէջ: Եւ ահա ոպեշնչուած
արուեստագէտը, որ տաղանդի արտակարգ գեղումով մը մարմին
ու շունչ, իմաստ ու ոգի տուած է առասպելին: Եւ ահա՛ հայրենի
իշխանութիւնը, որ երեւանի մուտքի գեղեցիկ հրապարակին վրայ
զայն կոթողելու փառապսակը շահեր է:

Տարբեր է հրապոյրը պետական օփերայի շէնքին, որ իր հո-
յակերտ շքեղութեամբ կը կանգնի ծառախիտ պուրակին մէջ: Անոր
հակառակ բացատրին երկու կողմերուն տրուած են Ալեքսանդր ըՍ-

պնդիարեանի եւ Յովհաննէս Թումանեանի արձանները, քարէ
քանդակներն բարձր պատուանդաններու վրայ եւ նստած, իրենց
ծունկերուն բացուած տետրերով, որոնք «Այլապատ» եւ «Ահալ» օ-
փերաները կը թելադրեն: Եւ կը յիշեմ, 1935ին էր, — այս ամբողջ
վայրը փորուած անդնդային լայնածիր փոս մըն էր, որ պիտի
բարձրանար ապագայ թատրոնը, իր շուրջանակի եւ ուղղաձիգ
չարժական բեմով: Տուֆի ու կիրի եւ երկաթի ու տախտակի շի-
նանիւթերու դէղերուն մէջէն կը քալէինք, մինչ համբաւուար ճար-
տարապետը, Ալեքսանդր Թամանեան, գրուիչ դէմքը հեղ ժպիտէ
մը պայծառացած՝ կը պատմէր իր երկնած զմայլելի մասապա-
կերին մասին: Եւ եղբակնոցուց, ձայնին մէջ խանդակաթ շեշտով
մը:

— Ես չըջել եմ եւրոպայի համարեայ բոլոր մեծ մայրաքա-
ղաքները, եւ սուսմնասիրել եմ նրանց օպերաների եւ թատրոննե-
րի ոճերը: Կասկածից դուրս է, ի հարկէ, որ նրանցից ոմոնք շատ
փառաւոր եւ տպաւորիչ շէնքեր ունեն: Բայց մենք հաւատում ենք,
որ Հայաստանի օպերայի եւ բալէտի այս տունը, երբ աւարտի՝ կը
լինի եւրոպական չափանիշով ամէնից գեղեցիկ եւ արդիական
թատրոններից մէկը, եւ նա կը ցուցնի հայկական ճարտարապե-
տութեան հարազատ յատկանիշները:

— Ձեր յատկագրիձէն դատելով, ըսի տարակոյս չկայ, թէ
դեղարուեստի այս պալատը նաև ինք արուեստի սքանչելի գործ-
մը պիտի ըլլայ: Միայն կարելի է մաղթել, որ այսպիսի բացառիկ
ձեռնարկի մը անհրաժեշտ նիւթական ահագին պահանջները կրնան
լրիւ հայթայթուիլ:

Անոր նայուածքին թախիծը գոհութեան ժպիտի մը ցուրե-
րէն փարատեցաւ:

— Դա ամենամեծ խոչընդոտն էր, բայց հարթուեց, թէկուզ
գժուարաւ: Անգամ շատ պատասխանատու դէմքեր պնդում էին, եւ
իրաւունք էլ ունէին, թէ Հայաստանը դեռևս շատ աղքատ երկիր
է, ժողովուրդը բաւարար հաց չունի, հազուատեղէն չունի, բնա-
կելու յարմար տուններ չունի... Եւ շոյլ վատնում կը լինի 45,000,
000 ուրբի ծախսել մի թատրոնի կառուցման համար: Բայց մենք
բախտաւոր եղանք: Մեր պետութեան գեղավորները իմաստու-

թիւն եւ անտիւր ունեցող ժողովի են, կարողացան դնահատել դա-
 իքի կարիքները... եւ համազուեցին: Եւ չէր էլ կարող տարբեր
 լինել: Անցեալում, հայ դերասանը, երգիչը, պարուզը, նկարիչը,
 անգամ դրողը՝ փախչում էին մայր երկրի արուեստով եւ կուլտու-
 րայով խուսան միջավայրից եւ իրանց տազանդն ու շնորհը տանում
 էին օտար քաղաքներ: Հիմի մեր վրայ ծանր պարտք է ընկնում
 փոխել էպ վիճակը: Մենք պէտք է յաջողուենք, մի տաս-քսան տա-
 րում, Երեւանը դարձրել արուեստների եւ կուլտուրայի մի այնպի-
 սի առաջաւոր, հրապուրելի կեդրոն, որ ոչ մի հայ արուեստագէտ
 Հայաստանից չզաղթի դէպի հեռու, փախուն բեմեր: Դեռ ան-
 լին, — մենք մի այնպիսի փառաւոր եւ աննման թատրոն կը շինենք
 այստեղ, որ արաստածանի շատ վայրերից հայ դերասաններ, եր-
 գիչներ, պարուզներ ցանկան դալ հայրենիք, որա բեմերի վրայ ի-
 բանց տաղանդները ցուցադրելու համար:

Թանձրացած խոչալի մը խորունկ, իրապաշտ համոզումն էր
 սկանաւոր ճարտարապետին մէջ, կամ թերեւս մարդարէաշունչ
 սեւեռում մը՝ աւերով ու պղտով մթազնոց դալիքի մը աղջա-
 մուղջէն անդին: Բայց ահա կը կոնգնի ան արդէն, կիտարուորածեւ
 իր ճակատով, կամարներու եւ սիւներու, խոյանքներու եւ քան-
 դակներու ինքնատիպ, դժայլելի ընդելուզումով եւ շքեղօրէն գե-
 դեցիկ՝ Սպենդիարեանի անուան օփերայի եւ պայէտի մեծ թա-
 րոնը, ներքին գաւիթներու, միջանցքներու եւ սրահներու փարթոճ
 դրուչութեամբ, շարժական հսկայ բեմով եւ ընդարձակ դեզակերտ
 գահալիճով, ուր չորս յարկի վրայ բաժիններու եւ օթեակներու ա-
 թոռները հազարաւոր հանդիսականներ կը հիւրընկալեն: Իսկ
 թատրոնին միւս կողմի կիտարուորակը կը պարունակէ Հայֆիլ-
 հարժոնիայի շէնքն ու սրահները: Եւ արդէն գաղութահայ երգիչ-
 ներ, դերասաններ, երաժիշտներ, պարողներ ու համանուագային
 խմբավարներ, պանդխտութեան ցուրտ քառուղիներէն հեռոցեակ
 կը վերադառնան մայր երկրի հարազատ ջերմութեան, եւ Երեւանի
 մէջ կենսունակ, յարածուն թափով խճորուող, ծաղկող, պտղա-
 ւորուող գրականութեան եւ արւեստներու մակընթաց յորձանքին
 կը խառնեն իրենց տաղանդներուն շորհներն ու բերքերը եւ կը հա-
 տուցուին նոր հանդրուաններու նուաճումին հրճուանքով ու փառ-

քով:

Իսկ հազիւ կը ճանչնամ այս թաղը, 1935ի մտերմութեան մէ-
 ջէն: Անոր նեղ ճամբաներէն հազիւ կ'անցնէր եզան սայլը եւ ուր
 քայլերը, հակառակ յամբ եւ զգոյշ ընթացքի մը, յաճախ տիղմով
 լարծուն քարերու վրայէն կը սահէին մշտահաս ջուրի պլտոր վը-
 րակին մէջ: Հիմա՝ առֆարտուած լայն պողոտան կ'երկարի, մէջ-
 անկէն կիսուած անջատող պատուարով եւ իւրաքանչիւր կողմ՝ ե-
 րեքական ինքնաշարժի դնացքին յայնքով, Երեւանի լամբերու
 ձողերէն չորսական կտուցներու փունջիւր կախուած: Անոր աջ ա-
 փին ձուլեր են մայթերը եւ սրբան նայուածքը կրնայ պարապրկել՝
 կը բարձրանան 5-6 յարկանի խոշոր ու գրաւիչ շէնքերը: Պողոտան
 եւ անոր աջ եղերքին կտուցուած բազմալարի բնակարաններն ու
 հիմնարկները, վարդաթոյր երանդաւոր տուֆերով, սիւնազարդ ու
 պտուղամաներով՝ նո՛ր Երեւանը կը կազմեն, քրտինքով ու տածան-
 քով, երազով ու խանդով կերտուած:

Մինչ դիմացը, երեք փողոցի երկայնքով, հին թշուառու-
 թեան յուշարար կղզի մը կը մնայ, տախտակորմով պատուած,
 ուրկէ քանդող մեքենաներու շագին ու շառաչը կը սփռուին: Դու-
 աէն ներս՝ անսովոր տեսարան մը, ուր ներկան իր պողպատէ մա-
 դիլներով կը փեռեկտէ միջնադարեան դռհները, — նեղլիկ ուղի-
 ներ եւ անել բուրդներ, եւ կիտափուլ հիւղեր ու խրճիթներ, որոնց
 վրայ քարն ու ցեխը եւ տախտակն ու թիթիղը կարկանդուած են ի-
 բարու՝ դարաւոր դերութեան ու գրկանքներու անէճքով: Եւ եր-
 կաթէ առամներով լայնարաց կլափներ, փորատող ճիրաններ,
 հարթող դլաններ ու բեռնատառ կառքեր, — որոնք շայլունով ու
 ժրտրով կը խորտակեն, կը փորեն, կը մաքրեն անցեալի այս ժա-
 ուանդուած նզովքն ու գարշութիւնը, անոր տեղը լուսաւոր ու գե-
 դակերտ շէնքեր բարձրացնելու համար:

Եւ գտուութեան այցելուն կը դարձնայ, բայց ոչ թէ եղե-
 րական հինին այս եղկելի բեկորին տեւելուն վրայ: Այլ ան կը հա-
 մակուի երջանիկ ապշանքով, որ չբաւորութեան, դիրտի ու խա-
 ւարի այս կոյտերէն՝ հայ ժողովուրդը յաջողեր է կամքի, տոկու-
 նութեան ու տեսիլքի հրաշագործ կիրարկումով ծրագրել ու կառու-
 ցանել նոր Հայաստան մը, եւ 27,000 հոգինոց Երեւանի անչուք ա-

ւանք վերածել 610,000 բնակչութեամբ շքեղ մայրաքաղաքի, առաջաւոր գիտութեամբ, ճարտարարուեստով ու մշակոյթով, որոնց յայտն, կազմածներուն ու գեղարուեստին բարիքն ու հռչակք արդէն կը տարածուին աշխարհի բոլոր ցամաքներուն վրայ: Տարագիր հայր կը նայի շուրջը եւ կը խորհրդածէ արտօրէն. ինք ապրեր կամ չքջեր է օտար մեծ ոստաններու ահագնութեան ու ճութութեան մէջ, — Պուէնոս Այրէսէն եւ Սան Փաւլոյէն մինչեւ Շիքափօ ու Նիւ Եսթ, եւ Լոնտոնէն ու Փարիզէն մինչեւ Գահիրէ ու Պէյրութ, եւ Աթէնքէն ու Վիեննայէն մինչեւ Պերլին ու Երուսաղէմ, եւ Պաղտաաէն ու Թեհրանին մինչեւ Կարկաթա ու Սիտնի: Ան տնցեր է միջին դոկտինրէ կամ պերճագեղ սոցոցոտանրէ, կանդներ է խոնարհ կամ շքեղ հրապարակներու վրայ, բնակեր է մտայն խրճիթներու կամ փարթամ տուներու մէջ: Բայց ամէն տեղ, իբրեւ յարուած քաղաքացի, հանդուրժուած հիւր կամ հալածուած օտարական՝ ան ինքզինք զգացեր է գրեցի, խորթ ու մենաւոր, եւ գիտէ՝ թէ ինչ որ յղացեր ու ստեղծեր է, ինչ որ ծագկեցուցեր ու կերտեր է այդ վայրերուն մէջ՝ կը յանգին միակ վախճանական ժառանգութեան մը, — գերեզմանի, փոշիի եւ ոչնչացման, որպէս անճոզապրելի խեցեմիջիւ:

Բայց ահա Երեւանի այս սոցոցոտային վրայ, փոյթ չէ թէ ո՛ր Հեռաւոր հորիզոնէն եւ ի՞նչ անհարագտ ափերէ եկած ըլլայ՝ կըրնայ կանգնիլ զազութահայ այցելուն եւ հրճուանքէն փղձկող ձայնով ազապակել իր էութեան մէջ: — Եւ սակա՛յն երկրագունտի բոփանդակ մակերեսին վրայ, իմս են միայն այս քանդուող հողաչէն Հիւղերը եւ կոստուցուող տուֆէ ու մարժարէ պալատները, իմս են միայն այս փոքոցներն ու ծառուղիները եւ այս հողն ու ջուրը, իմս են միայն այս քաղաքն ու երկինքը եւ այս լեռներն ու երկի՛րր...: Ասոնք են իմ ամբո՛ղջս, իմ անխոխարինելիս, իմ միա՛յնս, անթիւ նախահայրերու կտակով ու աւանդուած դայիք սերունդներուն եւ անցեալ հազարամեակներէն մինչեւ ապագայ յաւերժութիւնը...:

Գ.

Ամէն ընկերային յեղաշրջում, որ կը տապալէ ապականած ու բանակալ վարչակարգ մը եւ կը հարկադրուի մխրճուիլ օտար ոստիներու դէմ ազխապի զոյամարտի մը նախճիրներուն եւ եղբայրասպան կռիւներու արհաւիրքին մէջ՝ կ'ենթարկուի եղերական եղծանումի մը: Գուրսէն՝ ներխուժման սպառնալիքը, եւ ներսէն՝ դաւերու մղձաւանջը, որեւէ յեղափոխութեան զեկալարներուն նախանձառոյց, իստասիրտ յատկանիշները կը կարծրացնեն եւ դանոնք կը մղեն անոյրք քէնի ու հալածանքի, ընդդէմ իրական կամ ենթադրական ամէն հակառակորդի: Իրենց համոզումներուն եւ արարքներուն ճիշդ, անվրէպ ըլլալուն բացարձակ վստահութիւնը զանոնք կը դարձնէ անհանդուրժող սրեւէ տարակարծութեան հանդէպ: Եւ դէպի ամէն ընդդիմադիր՝ անոնց կասկածները կ'ապաստելին թշնամանքի եւ երկիւղները կը փոխարկուին ատելութեան: Իրենց դաւանած իտէայններուն եւ անոնց իրագործման համար յատուած ծրագիրներուն քանդուելուն վտանդը զանոնք կը համակէ խուճապի ու սորսափի մտայնութեամբ, որ կ'ապաւինի նիւթական ու մարդկային ամէն խոչընդոտ հարթելու անողորմ անապարանքին:

Ֆրանսական Յեղափոխութեան ժազուպէն վարիչները ապրեցան ամէնէն ողբերգական վիճակը այդ ձախողանքին: Ասոնք կործաներ էին Ֆրանսայի արքայական իշխանութիւնը եւ անոր փլուտակներուն վրայ կը հիմնէին ռամկալարական հանրապետութիւն մը, մարդկային իրաւունքներու, քաղաքային ազատութեանց եւ ընկերային հասարակութեան վսեմ սկզբունքներով:

Երուսալի գլխաւոր գահերը զինակցած՝ իրենց միացեալ բանակներով կը յարձակէին Ֆրանսայի սահմաններէն ներս, յեղափոխութեան տեսիլքն ու զօրութիւնը խորտակելու եւ Լուի Աքրդի փշրուած մականք վերականգնելու համար: Պատերազմի ու փլուզման այդ մթնոլորտին մէջ, հասկնալի էր եւ թերեւս անխուսափելի, որ ժազուպէն պետեր կառափնատի շեղքին մասունքին աւատա-

պետական գրութեան արձաններն ու պաշտպանները, — իշխաններ ու գուբեր, մարքիզներ, կոմսեր ու դերժմսեր, եւ նոյնիսկ՝ թագաւորն ու թագուհին, սրպէս թշնամիներ ու դաւադիրներ հայրենիքին դէմ:

Բայց յետոյ՝ կասկածի ու վախի շղթայագերծ յորձանքը կրլանեց զիրենք եւ անոնք հարուածեցին իրենց նախկին գործակիցներն եւ անգամ զազափարի բնկերները, ո՛չ այն պատճառով, որ համոզումի կամ կարծիքի որեւէ խրամատ կը բաժնէր զանոնք յեզափոխութեան հիմնական նպտակներուն շուրջ, այլ որովհետեւ՝ անոնց հեռագրիման միջոցներուն ու գործելակերպին մէջ տարբեր ուղիներ կը նախընտրէին ու կը ջատագովէին անոնք: Եւ հետզհետէ, ամէն տարակարծիք ձայն եւ ամէն առարկող միտք նկատուեցան լրտես, դաւածան ու ոսոխ, եւ յանձնուեցան կառավարութիւնը: Այդպէս՝ Ժիրոնտէն առաջնորդներ, ազատական մտաւորականներ եւ նոյնիսկ Ժագոպէն զեկազարներ շարասեցան մահուան, իրենց իսկ աւելի ահարեկած ու մոլեռանդ բնկերներուն կողմէ եւ սնչացուցին զիրար, մինչեւ որ Պոնաբարգի կայսերական զարշապարին տակ խեղդուեցաւ յեզափոխութիւնը:

Արտաքին արշաւանքի, քաղաքացիական կռիւներու եւ ներքին փոթորիկումներու նման արիւնալի երկունքով մը ծնաւ ու մարմնացաւ սուսական համայնավար յեղաշրջումը: Իական տարբերութեամբ մը, որ ան կը յաջողէր դոյաւեւել, որովհետեւ կ'ամբանար միաձոյլ կուսակցութեան մը զազափարի եւ ուժի խարխախտումն մտայ, եւ կը պաշտպանուէր անոր մենակալութեան վահանին ետեւ, որ կ'արտայայտուէր «պրոլետարական տիկտատուրան» կարգաբաժնով: Նոր գրութիւնը, իրրեւ վերապրումի պայման՝ չէր թոյլատրեր ազատ մտմուլ կամ հուսաբայթ, ուրեմն կարելի չէր պետական վարիչներու սխալները մասնանշել եւ յանցանքները քննադատել հրապարակով: Այդ կաշկանդումին ժխտական հետեւանքը պիտի ըլլար ծաւալիլ փոփոխած գանդատներու, դազոնի գրոյցներու եւ խմբական թագուն ճիգերու, որոնք դաւադրական երևուցիլ ու խորք կուտան որեւէ բնականոն միջավայրի անգամ:

Իսկ Պորհրդային Միութեան մէջ Ստալին հաստատեր էր անվիճելի տիրակալութիւն մը, որ հին Հոռմի եւ Բիւզանդիոնի

կայսրներուն միահեծան բռնատիրութիւնը կը վերակուշէր: Եւ անոնց նման՝ պետութիւն ու կուսակցութիւն այնքան անխղիճօրէն նոյնացուցեր էր իր անձին հետ, որ ջնջուեր էր անջատման ամէն դիմ: Այդ քմահաճ միաձուլումին մէջ այլեւս չէր փորձուեր անգամ իշխանութեան թշնամիէն զանազանել իշխանաւորին նոյնիսկ իրաւացի ընդգիծադիրը, թէկուզ անխախտ հաւատարմութեամբ ան փարած ըլլար իր հայրենիքին եւ անոր կառավարութեան: Եւ հաւասար ցատումով կը պատուհասուէին երկուքն ալ, — յանցապարտին հետ՝ անմեղն ալ, մինչ երկրին ու պետութեան ստիճանը պատժելու պատրուակը՝ նախ չքմեղանք կը հայթայթէր զգեանելու իր անձնական լուծին եւ անոր տեւականացման հակառակորդները: Անխալիբի եւ ամենազօր ըլլալուն վարկածը վաւերական փաստի փոխարկելու համար՝ Ստալին բաղձաց եւ տակաւ սնուցանեց իրեն շուրջուած մեծարման, ներքողի ու պաշտամունքի ցայցերը, որովհետեւ այդ հմայքով իր անհատի բռնակալութեան կենթարկէր ոչ միայն Պորհրդային Միութիւնն ու Ժողովուրդները՝ այլ նաեւ նոյնինքն «պրոլետարական տիկտատուրան» եւ անոր զեկավար համայնավար կուսակցութիւնը:

Այդպիսի բացարձակ եւ անուղք տիրապետութեան մը ողբերգական արդիւնքն եղաւ, — բռնկած և առաւել մոլեղնած Նացի Գերմանիոյ վերահաս արշաւանքին սպանալիքէն, — 1937-8ի սարսափներուն շղթայագերծումը, երբ վաւերական կամ կասկածուած յանցագործներուն հետ՝ բանտարկուեցան, աքոսուեցան կամ ըսպաննուեցան բիւրաւոր պետական առաջնորդներ, գրողներ, արուեստագէտներ եւ կուսակցական ու հանրային դէմքեր, յաճախ զո՛ւ ըլլալով նախանձորդ մրցակիցներու զրպարտութեանց: Աւելի քրէական վայրագութեամբ գործադրուեցաւ 1949-53ի շրջանի ահարեկական արշաւը, զեկավարուած զազանի ոտտիկանութեան պետ Բերիայի կողմէ, որ Միւլերիոյ խոպան մարզերը բնակեցնելու եւ մշակելու պատրուակով՝ իրեն ընդգիծադիր կամ դժգոհ նկատուած մտաւորականներ, առաջնորդներ եւ բազմութիւններ փոխադրեց այդ հեռաւոր ամայութիւնները, ծերացած Ստալինի մականն ու փառքը գրաւելու եւ իր միահեծան քմայքներուն եւ եղեռնական ծրագիրներուն լծելու համար:

ձնչումի եւ հալածանքի այդ ուրականը զարկաւ նաեւ Հայաստանին, մարդկային սուերի ու տառապանքի իր դաժան տուրքը կորզելով հայ ժողովուրդէն: Բազմաաւարտ ազատ եւ ապահով զարգացման տարիներուն՝ կենցաղային պայմանները կը բարելաուէին արագօրէն եւ դրական, մշակութային ու գիտական վերածնունդը կը կերտուէր խորունկ իմաստի ու գեղեցիկ տարազի որսնումներու կենսայի թափով: Բայց անոնց յարածուն բարիքը եւ ստեղծարար հրայրքը հաշմուեցան 1937-8ի եւ 1949-53ի ներքին փոթորիւմներու ու սարսափին եղերական խորշակէն: Եւ յուսալքման ու վախի մթնոլորտը դարձեալ մթազնեց առօրեայ կեանքը եւ թանձրացաւ իմացական թռիչքներու, դեղարուեստական յղացումներու հորիզոնին վրայ:

Սակայն յեղաշրջուեր են հիմա, Պորհրդային Միութեան եւ բնականօրէն՝ նաեւ Հայաստանի մէջ, յեղափոխական այլաձեւերժ դաւանանքն ու անձնաւորուած տիրակալութեան կառուցուածքը, որոնցմէ կը բխէին անցեալի այդ արհաւիրալի դէպքերը: Եւ ընդմիջա խափանելու համար նման վիճակներու վերադարձը՝ երկրին գերագոյն իշխանութիւնը ինք, անողոք խստութեամբ նշաւակեց ու դատապարտեց այդ վայրագ զեղծումներուն գլխաւոր հեղինակները: Նախ՝ իրբեւ իր պաշտօնին կոչումը չարաշահող եւ եղեռնագործ՝ մահուան պատիժի ենթարկեց Բերիան, պետական գաղտնի ստաթիկանութեան (Չեկայի) վարիչը, որպէս կազմակերպողն ու գործադրողը «մաքրագործման» ոճիւրներուն: Երեւանէն ու Լենինականէն մինչեւ Մոսկուա եւ Արխանգէլսկէ մինչեւ Վլադիվոստոք՝ Բերիայի արձանները քանդուեցան եւ անուր սրբուեցաւ փողոցներու եւ հրապարակներու, աւաններու եւ դաւաններու վրայէն: Եւ ան անարգուեցաւ խորհրդային պետութեան ու ժողովուրդներուն թշնամիի ու չարագործի անջնջելի խտրանով:

Բայց որպէս զի նոր Բերիաներ չբարձրանային ինքնակալ սթաթի եւ սարսափի պատուանդանին եւ երկիրը չմտածէին նոր բռնութեանց աղէտին՝ անհրաժեշտ նախապայտան էր, որ փչրուէին անհատի պաշտամունքի եւ մենակալութեան հիմերը, որոնք սկզբունքային կիրարկումի եւ սրբագործուած աւանդութեան խորհուրդով թանձրացել էին Ստալինի անձին մէջ: Եւ Պորհրդային

Միութեան համայնալար կուսակցութեան 20րդ համագումարի տեսանէն, ընդհանուր քարաւզար Պրուչչեւ մեղադրեց Ստալինը՝ իր հակառակորդներուն դէմ քրէական յանցանքներով, նշելով հանդերձ նախկին ղեկավարին կատարած խոշոր դերը՝ յեղափոխութեան նպատակներուն հետապնդման եւ խորհրդային պետութեան ու ճարտարարուեստին ամբացման մէջ: Այդ մեկնակէտէն սկսաւ ու հետզհետէ ծաւալեցաւ «տպասաալինացման» ծրագրուած արշար:

Սակայն չուրջ երեսուն տարի, Ստալին եղեր էր առաջնորդ ու խորհրդանիշ, ոչ միայն խորհրդային երկիրներուն՝ այլ նաեւ միջազգային համայնալար շարժումին: Եւ որքան յանդուզն, նոյնքան դժուար ու վտանգալի ձեռնարկ էր զայն տապալելը իր տիրապետութեան գահէն, նոյնիսկ անոր մահէն տարիներ ետք: Որովհետեւ ան տակաւին ունէր գաղափարի ու գործելակերպի համոզուած, մոլեռանդ հետեւորդներ Ալպանիայէն մինչեւ Չինաստան, եւ նոյնիսկ Պորհրդային Միութեան պետական ու կուսակցական ղեկավար տարրին մէջ: Բայց պատմութեան բարեբախտ պարզելով՝ Պրուչչեւ, Միխայիան եւ անոնց համախոհները խիղախ, կորովի եւ իրապաշտ տեսիլքի յատկանիշներով կանգնեցան արտաքին ամէն հերձուածի եւ ներքին ամէն դաւի սպառնալիքին դէմ: Եւ դիմեցին ընդգրկուած բարեշրջման բանաւոր ու բարերար եղբակացութեան:

Անոնք տակաւ զօրացուցին իրենց դիրքերն ու հեղինակութիւնը, ո՛չ թէ գնդակահարել, աքսորել կամ բանտարկել տալով ընդդիմադիր համայնալար պետեր, — Մոլոթով, Պուլկանին, Մաչինքով, ժուրով եւ ուրիշներ, այլ գանոնք մեկուսացնելով նուազ ազգեցիկ պաշտօններու վրայ: Եւ անոնց 22րդ համաժողովը արձանագրեց պսակումը «անհատի պաշտամունքը», ուրեմն նուիրագործուած բռնատիրութիւնը ջնջելու արշաւին: Եւ հրապարակներէն վերցուեցան Ստալինի արձանները, անոր մարմինը հանուեցաւ Լենինի դամբարանէն եւ թաղուեցաւ Քրեմլինի պարիսպին քով, անոր անուին նուիրուած փողոցներ, աւաններ ու քաղաքներ նոր կոչումներով մկրտուեցան: Նոյնիսկ զմայլելի դիւցազնամարտով յաւերժօրէն փառաւորուած Ստալինկրատը փոխուեցաւ Վուկա-

կրատի: Դեռ աւելին, մշտապէս փակելու համան ճանհատի պտշտամունքքի վերադարձին ճամբան՝ որդեգրուեցաւ սկզբունքը, որ կոթող չկանգնուի, ներքոյ չընծայուի, պողոտայ, գիւղ կամ սասան չկոչուի սրեւէ քաղաքական զեկաւորի անձին եւ անունին, որքան ասեն որ կենդանի է ան:

Տարակոյս չկայ, որ վերջին քանի մը տարիներու կարճատեւ շրջանին՝ հիմնական փոփոխութիւններ առաջացեր են Պարսերգային Միութեան վարիչներուն ու գանդուածներուն դաւանական, պետական ու հոգեբանական բարոնումներուն ու կիրարկումներուն մէջ: Արտֆեանեւ համալսարաններէ շրջանաւորաւ սերունդ մը արդէն առաջնորդող գիրքերու բարձրացեր է, որուն զուգահեռ ասնի է տնտեսական բարեկեցութեան հասած միջին խաւ մը, որ քանակով կը ծաւայի եւ աղղեցութեամբ կը զօրանայ արագօրէն: Անոնք կրնան տակաւին խանդավառութիւ յեղափոխութեան բնագրից ու տակաւ նուաճուող գայիքի մը հրատարիչ հետանկարով, բայց նաեւ կը ցանկան իրենց ներկայ սուօրեան ապրիլ աւելի ճօր ու դուարթ — նիւթական բարիքներու մտաշելի աստատութեան եւ իմացական առուել ադատութեան շնորհներով: Եւ անճամբեր են անոնք, այդ անմիջական հանդրուանք գրաւելու իրենց շտապին մէջ:

Բնական էր, որ այդպիսի հետահատ փոփոխութիւն մը աւելի խոր անդրադարձ պիտի ունենար Հայաստանի բնկերային, վարչական ու մշակութային կեանքին ու շարժումներուն վրայ: Արտֆեանեւ հայ ժողովուրդին խառնուածքն ու նկարագիրը շաղախուեր են անցեայ Հաղարամեակներու ադատաւէր երազներու եւ բարոտ պայքարներու աւիւնով ու տեղերով: Եւ ան կրբեմն խուլ ընդվզումով, յաճախ խօշական խոյանքով մաքառեր է բունակալ լուծերու դէմ: Եւ ադատութիւնը անոր համար եղեր է, ապրուած իրականութեանէ մը աւելի՝ հմայիչ տեսիլք մը կամ չյաղեցուած ծարաւ մը:

Այդ դարաւոր կարօտը կարծես հիմա շունչ ու սղի կը ծծէ Հայաստանի մէջ պայծառացած նոր միջնորդութիւն: Հնամեայ, կուտակուած քողց մը, որ կշտանալ կ'աճապարէ, միաքին մասները արձակելով դէպի անհատական թէ հանրային մարդերու բոլոր սե-

ղանները, անոնցմէ՝ արտայայտութեան ու յաղեցումի պատասներ կորզելով: Հանրակառքերու եւ ճաշարաններու մէջ կամ փողոցներու եւ հրատարակներու վրայ՝ մարդիկ ու կիներ եւ աղջիկներ ու ասղաք կը խնդան աւելի հնչեղ ծիծաղով կը կը խօսակցին համարձակ գրոյցով ամէն նիւթի մասին: Հատու երգիծանքով կը քննադատուին պաշտօնեաներ, հիմնարկներու նախագահներ, եւ կառավարական առաջնորդներ, իրենց մեծ կամ փոքր թերութեանց համար: Մանր միջադէպով, անոնք գիւրաւ կը վիճին սպասակի մը, հանրակառքի վարիչի մը, ռոտիկանի մը կամ հաստատութեան մը պետին հետ — որոնք իշխանութիւնը կը խորհրդանշեն, որուն հանդէպ՝ իրենց անհատի իրաւունքն ու հպարտութիւնը կը հռչակեն այդպէսով:

Մոսկուայէն ուղղակի Երեւան թաչող ինքնամուղ (նէք) սաւանակին մէջ՝ աննշան պատահար մըն էր: Անոր վարորդները եւ ծառայող աղջիկները հայեր էին, գրաւիչ համազգեստով ու շնորհալի վարմունքով եւ կը խօսէին դողար հայերէն մը: Միջադային կանոնով՝ օդանաւային ամէն աթոռ ունի դօտի մը, զոր ուղեւորը պարտաւոր է կապել իր մէջքին շուրջ, սաւանակի մեկնելու կամ իջնելու պահերուն, գայն ձախորդ ցնցումի մը վտանգին դէմ պաշտպանելու համար: Կողքին նստած էր համակրելի երիտասարդ մը, որ բանակէն արձակուած՝ կը դառնար Հայաստան, իր հայրենի տունը, ձայնին ու շարժումներուն մէջ անհանգիստ աշխոյժ ու ուրախութեան խառնուրդ: Մաւտանակը սկսեր էր թափ աննել, իսկ ան կը կանգնէր, կը քալէր, կը շրջէր եւ ու առաջ, կը զրուցէր անփութօրէն, խօսքն ուղղելով սրեւէ անորոշ ունկնդիրի: Հսկիչ հայուհին նկատեց ու վաղեց անոր մօտ:

— Խնդրում եմ, իսկոյն նստէք եւ ձեր մէջքին անցրէք էդ դօտին, ըսաւ ան անձկալի շեշտով:

— Դրան հարկ չկայ... ուզում ես ինձ կապանքի տակ պե՞լ... պատասխանեց անոր դարձացած ու դժգոհ:

— Իսկ դուք գիտէք, որ նա ոչ մի կերպով կապանքի չի նըմանում, դա միայն ձեր անձի ապահովութեան համար է... մի քանի բոպէից կը բարձրանանք վերեւ եւ էլի կ'արձակէք:

— Իսկ դու կարիք չունես իմ անձի ապահովութեան մասին

Հողայու, անդեց երիտասարդը: Ես դեռ կարող եմ ինքս ինձ խնամել:

— Բայց դուք պէտք է հասկանաք, որ ես պատասխանատու եմ ամէն մի ճամբորդի համար... մի փոքր արկած, դուք կարող էք մնասուել, եւ ես պարտաւոր կը լինեմ հաշիւ տալ:

— Դու չա՛տ ես չափազանցում, է՛... ես էնպիսի ծանր վրտանդներ եմ անցկացրել... իսկի չեմ էլ մտահոգում պալատի նման ինքնաթիռ է սա, ի՞նչ կարող է պատահել որս հեռ որ...:

— Թէկուց ոչի՛նչ... եւ աղջկան ձայնին մէջ բարկութիւն չաչեց... Եթէ կարծում էք քաջութիւն է անխոյժ գտնուել ձեր կեանքի հանդէպ, դրանում ազատ էք, բայց իմ պաշտօնի իրաւունքը չյարդել չէք կարող: Հիմի վերջացնենք, էդ դօտին ձեր մէջքին կապելու՞ էք թէ ոչ...:

— Ի՞նչ ես անելու, թէ որ չյօժարուեմ...:

— Ոչինչ, կը գնամ, իսկ ինքնաթիռը չի բարձրանայ, մինչեւ ձեր մէջքին կ'անցկացնէք էդ դօտին:

— Դէ լա՛ւ, լա՛ւ, կապում եմ ինչքան էլ խիստ աղջիկ ես:

Մեր բամբակին մէջ կային նաեւ դիմուորական եւ քաղաքային պաշտօնեաներ, հայ եւ օտար: Բայց ոչ մէկէն լսուեցաւ մեղադրանքի կամ միջամտութեան մրմունջ մը վիճոց երիտասարդին դէմ, որուն արարքը թերեւս ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ իր ինքնութիւնը եւ կարծիքը յայտնելու ազատութեան կիրարկումին քմահաճ փորձ մը:

Ընտանեկան եւ ընկերային հանդիպումներու մէջ՝ սկսած են թեթեւ, անմիտ գրոյցները, մինչ աւատ, ինքնատիպ է երգիծանքը, որ միշտ դադարաւոր մը կը խտացնէ կամ ժանիք կուտայ քննադատութեան մը: Խօսակցութիւններ ընդհանրապէս կ'ընդգրկեն ընթացիկ կենտական խնդիրներ եւ լուրջ նիւթեր, — դիրքեր ու հեղինակներ, հայերէն լեզու եւ դպրոց, օփերա եւ թատրոն, երգիչ ու դերասան, կուսակցական պետեր եւ կառավարական դէմքեր, բնակարանի կարիք եւ կառուցման թափ, անտեսական վիճակ եւ ապրուստի մակարդակ: Եւ ամէն դէպքի ու հարցի մասին, եւ ամէն երեւոյթի կամ եղելութեան շուրջ՝ մտածումներ կարտայայտուին բուն համոզումով, կամ սրամիտ հեղնանքով, բայց միշտ

յանդուզն անկեղծութեամբ, եւ այնքան տարրեր տեսակէտներ ու Հակոտնեայ դադարները ջատագովելով, որքան կը կատարուին արտասահմանի սրեւէ հայկական կեդրոնի մէջ:

Միջավայրի ու դաստիարակութեան նոյն լույն թրծուած եւ ընկերային ու քաղաքական դասնանքի նոյն «կադապար»էն կարծրացած սերունդի մը մէջ զարմանալի, նոյնիսկ ապշեցուցիչ յայտնութիւն էր գտնել ըմբռնումի աչքքան տարրերութիւն եւ դատումներու նման այլազանութիւն, գանոնք բանաձեւելու վճիռ ուժգնութեան մը հետ: Այդ երեւոյթը կը վկայէր հայ միտքին արտակարգ կենսունակութիւնը, անկաշկանդ արտաբանելու եւ եզրակացնելու անոր ժառանգական յատկանիշը, նաեւ հայ անհատին անսովոր հակումը՝ խորհրդածելու, վիճելու նիւթերու եւ հարցերու շուրջ՝ որոնք լուրջ են բնդհանուր ասարդութեամբ եւ մտահոգուելու, անգամ տանջուելու իր մարդկային հասողութենէն դուրս ու դերիվեր՝ աշխարհային տաղանայներու հանդէպ:

Կան, անշուշտ, բացարձակ համաձայնութեան քանի մը առանցքներ: Տարակարծութիւն չկայ, օրինակ, որ անցեալ տասը տարիներու ընթացքին, Հայաստանի մէջ մշակույթն ու գիտութիւնը արտասովոր ծաղկումով զարգացեր են: Ճարտարարուեստը ծաւայեր է հսկայաքայլ եւ աննախընթաց թափով աներ է բնակարանային կառուցումը: — Որ սփիւռքի տարագիր հայութիւնը, իբրեւ ազգային տարր եւ իմացական արժէք՝ հայ ժողովուրդին համար կենսական ուժ եւ անփոփոխութիւն չարտոթիւն մը կը կազմէ: — Որ հայոց պատմական հողերուն վերադարձը պէտք է հետապնդուի նպատաւոր բոլոր առիթներով եւ տրամադրելի բոլոր միջոցներով: — Որ Բերիան վայրագ եղենագործ մըն էր, որուն սճրապարտ բնութեանց վէրքերը դեռ չեն սպիացեր: — Որ Թըբուշէն ժողովրդանուէր, խաղաղասէր եւ լայնախո՛հ ղեկավար մըն է, եւ պէտք է «մաղթել» կամ «ագօթել» որ ան երկար ապրի եւ շարունակէ հետապնդել բարեկեցիկ ու խաղաղ կեանքի «ծրագրի» իրագործումը:

Իսկ Ստալինի հանգէպ գնահատումը ժխտականի եւ դրականի դորշ խառնուրդ մըն է, ուր գերակշիռ է պարօտելի հատուածը: Վկայութիւնը ընդհանուր է, որ անդորմ ու միահեծան բըռ-

Յողութեան ու յայթանակի վարկը կը կապէր իր անձին, մինչ ք-
մէն ճարտղանքի պատիժը կը նետէր հակառակորդի մը պարանո-
ցին: Բայց «սպաստալինացման» արշաւի միջոցին նոյնիսկ՝ որեւէ
զրոյցի պահուն, ներկաներէն մէկը առանց վարանումի կամ եր-
կիւզի կրնար արտայայտել նաեւ այսպիսի տեսակէտ մը:

— Ի՞նչ խօսք, որ Ստալին մի անոգոք տիկտատոր էր...: Նա
ծանր սխալներ գործեց, անգամ ոճիրի դիմեց, իրա թշնամիները
լռեցնելու համար: Այնուամենայնիւ չի կարելի ժխտել, որ Ստա-
լին խոշոր դեր է կատարել Սովետական Միութիւնը. նախնական
խեղճ փիճակից այսօրուան հօր եւ առաջաւոր պետութիւնը դար-
ձնելուն մէջ: Պէտք չէ նաեւ մոռնալ, որ հայրենական պատերազ-
մի ամենամութ պահերին, հազարաւոր կարմիր բանակայիններ,
իրանց մէջքերին ոււմբեր կապած՝ նետուեցին նացի տանկերի (հը-
բասայլ) ներքեւ, ոչ թէ հայրենիքի եւ կամուսնի մոտենով, այլ
«Ստալինի համար» ազազակը իրանց շուրթերին:

Ուրիշներ կը հակաճառեն յուզումով, կիրքով եւ բոլոր կար-
ծիքները կը լսուին սրտաուռ հանդուրժողութեամբ:

Գրողներու շրջանակէն ներս, վերափոխուած մթնոլորտը
թաթաւուն է աւելի խանդավառ, ինքնավստահ ու զուարթ տրա-
մադրութեամբ:

Ղեկավարներու ձօնուած բանաստեղծական բռնագրօսիկ
ներբողներու տուրքը ջնջուեր է, եւ օգտապաշտ, հայրենասիրական
ու դիւցաներգային մարգերուն հետ՝ քերթուածին առջեւ լայնօ-
րէն բացուեր են քնարական, սիրային, հովուերգական ու խորհրդ-
գապաշտ սեւերուն դարպասները: Եւ վէպը կրնայ վերարտադրել
խորհրդային անցեակի բացասական դէպքերն ու նկարագիրները,
էրապաշտ խորացումի եւ վերլուծման նոր ապարէզ մը մտնելով:
Հիմա արդէն՝ «մաքրագործման» շրջանին Սիպերիա տարազրուած
խորհրդահայ գրողներ սկսեր են հրատարակել վէպ ու պատմուածք
իրենց աքսորական կեանքէն, — շափազանց դիւրագգած նիւթ մը,
որուն մասին որեւէ ապագրուած վերլուծում չէր թոյլատրուեր
մինչեւ երէկ:

Բայց իրադրոժուած համապարփակ, բարեբար փոփոխու-

թիւնը թերեւս կարելի է բացայայտել աւելի պերճախօս բիրեղա-
ցումով, պարզապէս հակադրելով քանի մը թանձրացած իրողու-
թիւններ: — Այսօր, Հայաստանի մէջ կործաներ են Բերիայի բո-
լոր արձանները եւ անոր անունը ընդմիշտ սրբուեր է փողոցներէն
ու հրապարակներէն: Եւ փոխարէն՝ կը շինուեր Աղասի Խանջեան
փողոցը. արդէն աւարտեր է Չարենց լայն պողոտան եւ կը կանգնի
մրրկաշունչ բանաստեղծին անունով զեղակերտ զպրօցը, իր կի-
ստնդրիով զլիաւոր մուտքին առջեւ: Եւ կոթողուեր է Սասունցի
Դաւիթի հայտնաբերակ արձանը, դէպի ազատութիւն իր հէքեա-
թային, իր շղթայազերծ թռիչքին մէջ:

Եւ տակուին՝ կը ջնջուին Ստալինի տիրապետութեան հետ-
քերը, ինչպէս Խորհրդային Միութեան՝ նոյնպէս Հայաստանի
զիւղերուն ու քաղաքներուն մէջէն: Երեւանի ամէնէն շքեղ ծառու-
ղիներէն մէկն էր Ստալինեան պողոտան, — որմէ վերցուեցաւ ա-
նոր անունը եւ փողոցը կոչուեցաւ Լենինեան: Արդէն սրուած է
նաեւ քանդել Ստալինի հսկայ արձանը, որ մտայլ ահազնութեամբ՝
Քանաքեռի ըրակողէն կարծես կը սպառնայ Երեւանին, եւ անոր
պատուանդանին վրայ պիտի կառուցուի այլաբանական յուշարձան
մը, որ հաւանորբար մեծ պատերազմներուն մէջ ինկած հայ դահ-
բուն նահատակութիւնը պիտի խորհրդանշէ:

Եւ աւելին. արդէն կը քանդակուի Վարդան Մամիկոնեանի ար-
ձանը, որ պիտի բարձրանայ Հայաստանի մայրաքաղաքին մէկ գե-
ղեցիկ հրատարակին վրայ, իրրեւ պղինձէ ու մարմարէ մարմնա-
ցումը բռնութեան զերակիչիւ ուժերու եւ ստրկութեան շղթաներուն
դէմ՝ հայ ժողովուրդի ազատութեան յանրձեռնական տենչանքին, եւ
անփոփոք քաջութեան, եւ մարանչելու անընկճելի կորովին:

Ե

Անցեալ տասնամեակի ընթացքին, Մարտէն մինչեւ Ղանա
եւ Մատակոսբար, եւ Իսրայէլէն մինչեւ Ինտոնեզիա ու Ֆիլիպ-
քաններ՝ մօտ երեսուն նոր երկիրներ պետական դոյափիճակի տի-
րացան եւ անգային ազատութիւն նուաճեցին: Եւ լծուեցան անկա-
խութեան պայքարէն կամ պատերազմէն աւելի բախտորոշ ու տա-

ժամացին մաքառումի մը, որուն փորձաքարէն յազմական կանգ-
նիլը նախապայման էր դոյստեւեման: Անոնք իրենց նիւթական,
մտքկային ու մաւսօր բոլոր ուժերուն ու միջոցներուն համա-
խառն, յարատեւ զօրաչարժով փարեցան նոյն ընդհանրական նը-
պասակին սեւեռուն հետապնդման, — ստեղծել եւ ընդլայնել բող-
մերանդ ճարտարարուեստ ու լիառատ արգիւնարեւութիւն: Որով-
հետեւ անոնց բնակչութիւնը՝ արագ աճումով կը բարձրանար, եւ
անհրաժեշտ էր այդ աւելցող ձեռքերուն՝ աշխատանք, ու բերան-
ներուն՝ գոնէ ցամաք հաց հայթայթել: Մանաւանդ, որովհետեւ
միայն զործարաններէն արտադրուած եւ չուկաներուն մէջ սպա-
ռող ապրանքներուն սակացոյցին մազլցող ածախմաններէն անոնք
պիտի կարենային իրենց ժողովուրդները զբկանքի ու թշուառու-
թեան յատակէն բարձրացնել գալոյ ու բարեկեցիկ կենցաղի մը ե-
րացուած հանդրուանին:

Հողի ու քարի եւ արաի ու ակօսի վրայ արդիական ճարտա-
բարուեստ հիմնելու այդ յարուած մրցարշաւին մէջ՝ քիչ երկիր-
ներ կրցիր են մտնելու Հայաստանի իրագործած վերափոխման
թափին ու տարողութեան, — Հայոց Հապարտեայ, յետամնաց
գիւղատնտեսութեամբ շքուոր հայրենիքը՝ նորագոյն, ինքնագործ
մեքենաներով օժտուած հսկայ գործարաններու, ծանր ու թեթեւ
ճարտարարուեստային Հարուստ մարդի մը վերածելու արտակարգ
յաջողութեան:

Գարձեայ 1935ին էր: Կը շրջէինք օփերայի ու պարերդի հս-
յակապ թատրոնին կառուցման շինանիւթերու կոյտերուն մէջէն:
Եւ Հոչակասր ճարտարպետը, Ալ. Թամանեան, առաքելի ներ-
շնչումով կը խօսէր կերտուելիք փառաշուք շէնքին գեղեցկու-
թեան, ոճին ու գերազանց յատկանիշներուն մասին, նաեւ կը բա-
ցաարէր տուֆի ու մարմարի խոշոր շերտերը պահանջուած շափե-
րով կտրելու եւ տաշելու գծուարութիւնը, անհրաժեշտ կազմած-
ներու պակասին պատճառով: Յառնեցինք իրեն, թէ կը փափաքե-
ինք կերպով մը աջակցիլ, եւ թերեւ կարելի էր Ամերիկայէն մե-
քենայ նուիրել, եւ ի՞նչ էր ամէնէն ստիպողական կարիքը: Ան
պահ մը մտածեց եւ երբ աչքերը վերցուց ամօթխած հեղ ժպիտով
մը՝ արտում թախանձանք կար նայուածքին մէջ:

— Ուզում էք մեզ ոգնե՞լ, տէ լա՛ւ... Էնքան մեծ շտրհք կը
շինի, եթէ կարողանաք մեզ ուղարկել մի էլեկտրական սղո՛ց, էս
տուֆաքարը աւելի արագ կտրատելու համար: Էնքան թանկագին
ժամանակ կարող է շահեցնել մեզ մի էլեկտրասղոցը... եթէ հնա-
րաւոր լինի ունենալ:

Յաջորդ օրը՝ կառուցուկի (արուեստական ձգախէժի) հսկայ
գործարաններուն կ'այցելէինք եւ ընդարձակ հիւրանոցին մէջ սար-
քուած ընդունելութեան սեղանի մը շուրջ, անօրէնը կը խօսէր շեշ-
տով մը, որ անարկու խոչընդոտներ հարթելով այդ վիթխարի ծը-
րաղիրը գործադրելու հպարտութենէն ու հրճուանքէն կը բխէր.

— ... Մենք էս մեծ կռաւիմատի հիմերը փորում էինք մեր
բահերով ու բրիչներով, անգամ մեր ձեռքերով, եւ բացուած փո-
սերից հանում էինք ոսկորների եւ գանկերի դէզեր... Նրանք կը-
մախքներն էին մեր հարազատների, որոնք գոհ էին ընկել սովի,
համաճարակի եւ մաւզերական ոճիրների եւ չարտուել էին հասա-
րակաց փոռերի մէջ...:

Եւ դեռ, Երեւանի ինքնագործ էլեկտրականային անրիծօրէն
մաքուր բաժանմունքները պտտելէ յետոյ՝ կողքի լեռնակողէն
բարձրացանք մինչեւ ջրանցքի հարթակը, ուրկէ պողպատէ լայն
խողովակներու մէջէն ջուրը շտաշելով կը գահավիժէր մինչեւ ձո-
րը, կեանք ու մղում տալու էլեկտրական ուժանակներուն եւ լոյս
ու գորութիւն կորզելով անոնցմէ: Մեր հիացական արտադրաու-
թեան պատասխանեց վարիչը, մինչ ինքնահաճ ուրախութիւնը կը
ծիծաղէր ձայնին մէջ.

— Է՛, սքանչելի՛ է, ասում էք, էս ինքնագործ հիարսկայանը:
Դէ՛ ի հարկէ: Եւ մենք Հպարտ ենք նրանով: Բայց տեսնո՞ւմ էք էս
ջրանցքը: Մենք նրա տասը կիլոմետր խրամը փորել ենք էս կարծր
ժայռերի միջից, եւ էն շեռան ծոցից տունել (փապուղի) ենք բա-
ցել մեր բրիչներով եւ փետատներով, մեր մատներով եւ կուսնո-
ներով...:

Բայց առիկա 1935ին էր, երբ տուֆ սղոցող մեքենայ մը,
կամ էլեկտրական ստոցարան մը, կամ նոյնիսկ բժշկական մանրա-
դիտակ մը խոշոր շտրհ էր, արտասահմանէն մատուցուած Հա-
յաստանի: Իսկ հիմա հիմնովին, շքեղօրէն շրջուեր է պատկերը:

Մանր ու թեթեւ ճարտարարուեստի բազմաճիւղ ցանցով պատուած է երկիրը: Հանրային տարրեր, հարուստ պահեստներ կը յայտնաբերուին միշտ, երբեմնի շարաշուք, անմաշկելի լեռներու ընդերքներէն, սրտնցմէ հանուած հում նիւթերը, — երկաթը, պղինձըն ու սոկին, եւ կապարը, ալիմինումն ու զինգը, եւ տուֆը, մարմարն ու կրաքարը կը մշակուին արդիական վիթխարի դորձարաններու մէջ եւ կը վերածուին խոշոր մեքենաներու, նուրբ գործիքներու եւ կենցաղային անհրաժեշտ ապրանքներու եւ բազմազան առարկաներու:

Եւ այսօր Հայաստան իր ճարտարարուեստին այլազան արտադրանքները կը վաճառէ մօտ երեսուն եւ հինգ երկիրներու, բացի Սորհրդային Միութեան անգամ հանրապետութիւններէն: Այդ ապրանքները կ'արտաձուռնին Չիլիէն եւ Արժանթինէն մինչեւ Յունաստան ու Իսլանտա, եգիպտոսէն ու Լիպիայէն մինչեւ Ինտոնէզիա, եւ նոր Չեխնտա, եւ Իրաքէն, Իրանէն ու Թուրքիայէն մինչեւ Պուրժա, Հնդկաստան ու Կամպուիա: Բայց տակաւին, զէպի միջազգային շուկաները այս արտակարգ ծաւալումին անսեռական արժէքէն աւելի նշանակալից է անոնց առաքումը արտադրութեանց բնոյթը: Որովհետեւ անոնք Հայաստանէն կը գնեն ո՛չ միայն դինի, բոնեաք ու ծխախոտ, եւ բամպակէ գործուածքներ եւ պտուղի ու բանջարեղէնի պահածոներ՝ այլ նաեւ, ու մանաւանդ, արուեստական կաւաւ չուկէ պիտոյքներ ու քիմիական նիւթեր, զարթոյցիչ ժամացոյցներ ու մետաղահատ հաստացներ, էլեկտրական սարքուածքներ ու ջրհաններ, էլեկտրական ուժի փոխարկիչներ եւ շարժիչներ (մոտոր), ճշգրտաչափ նրբագոյն գործիքներ եւ շարժական ելեկտրականներ, սրտնք միայն առաջնահարգ ու բազմասեռ ճարտարարուեստ մը կրնայ արտադրել: Եւ այդ վաճառումներուն փոխարէն՝ Հայաստան կը ներածէ ցորեն եւ այլ կենսամթերքներ, հազուատեղէն, քարիւղ եւ բնական կազ, փայտեղէն ատաղձ, մետաղներ, քիմիական արտադրանքներ, մեքենաներ եւ ուրիշ բազմատեսակ առարկաներ:

Օգտակարը գեղեցիկով պարուրելու հայկական ճաշակը կը ցոյանայ նոյնիսկ առեւտրական հիմնարկներու եւ գործարաններու գեղակերտ կառուցուածքին մէջ: Ինքնատիպ են ու գրաւիչ,

հսկայ շէնքերը Ունիվերսալ մեծ վաճառատան եւ ծածկուած շուկային, Պետհրատի ապարանին եւ բոնեաքի գտարանին, մետաքսի, գինիի եւ այլ գործարաններուն եւ յայնարձակ մարդաղաշտի ամփիթատրոնին, մանուանդ հոյակապ էլեկտրականներուն, սրտնց բոլորին կերասումին մէջ, հայոց հնամեայ ճարտարապետութեան էական գիծերն ու սարքերը, կամարներն ու սիւները եւ երկաթէ վանդակներն ու պղինձէ բանդակները համադրուել են արդի ճարտարարուեստի պահանջներուն: Բայց խարուսիկ է անոնց արտաքին անդորր ու վեհաշուք երեւոյթը: Որովհետեւ տուֆէ թանձր որմերէն ներս, անթիւ մեքենաներու անգուլ շոտաշը կը տարածուի, եւ տենդոտ աշխատանքի եռուղեք կը ծաւալի, համոյթներու եւ ազրանքներու հոսին ու գոլորչիին, գոյներուն ու թաւալումին խոռոնուած: Իսկ ամէն գործարանի մէջ, անոր արտադրական վազքին ու ժխորին իրբեւ անբաժան կցորդներ, կան լուս ու հանդարտ բաժնեակները, — դարձանատուն ու բժիշկ, վնասուած կամ հիւանդ բանուորներու անմիջական խնամք ընծայելու համար: Եւ մանկամուր ու մանկապարտէզ, ուր լիտպէս կը հոգատարուին ներսը աշխատող մայրերու նորածին կամ գեռ դպրոցական տարիքի չհասած փոքրիկները:

Երեւանի մէկ արուարձանին մէջ, ծառազարդ ընդարձակ դեռնի մը վրայ շինուել են շարք մը խոշոր ու տպաւորիչ տաղանարներ, իրարմէ բոլորովին տարբեր սճերով: Անոնք մասնատուած են բազմաթիւ դահլիճներու, սրտնք կը բովանդակեն Հայաստանի վերափոխման ու նուաճումներուն բովանդակ տարողութիւնը պատկերացնող մշտական ցուցահանդէսը: Հոն ներկայացուած են պատմութեամբ ու վիճակագրական թիւերով, նկարներով եւ արտադրուած ապրանքներու նմոյշներով այն հանգրուանները՝ սրտնց մալլցեր է հայ ժողովուրդը ճարտարարուեստի, գիւղատնտեսութեան, կենցաղի ու մշակոյթի մարդերուն մէջ՝ անցեալ քառասուն տարիներու դառն գրկանքներուն եւ անվհատ պայքարներուն, ըստեղծարար ճիւղերուն ու սխրալի իրագործումներուն ուղիով:

Հոն ցուցադրուած են հոյին բազմատեսակ բերքերը, պլաստիկներն ու միրգերը, եւ գորգը, կերպաններն ու տուֆաբի աւելցուք փշուրներէն յօրինուած նուրբ դունազեղ մետաքսթելը,

և դիրքը, արուեստն ու գիտութիւնը, եւ պահածոները, դիւին ու գանհաքը, եւ կահոյքը, մետաղն ու մարմարը, եւ ինքնաշարժի անուարդօսին, հեծելանին ու ժամացոյցը, եւ հանքանիւթերը, կօշիկն ու դուշպաները, եւ ելեկտրական շարժիչները, հաստոցները, մանրաշափ գործիքներն ու հսկայ մեքենաները, եւ ամէն հունձք, առարկայ, մշակուած, բանուածք ու երկնուած, — հողէն ու քարէն, ջուրէն ու օդէն, կենդանիէն ու գործարանէն, Կւ մասներէն ու միտքէն, — ամէնքէն, որոնք Հայաստանի Ֆիզիքական տարերքը կը կազմեն եւ նիւթիցէն հարստութիւնը կը հանդիսանան, եւ հայ ժողովուրդին մշտական քրտինքին ու դարաւոր հանճարին փարթեամ պտղաւորուածը կը վկայեն: Եւ պերճախօս թուանշաններ անժխտելի ապացոյցը կուտան արտակարգ աճումի մը, արտադրական քուլոր ապարկչներուն վրայ:

— Վերջին երկու տասնամեակներուն՝ բնական եւ արուեստական շինանիւթերու արտադրանքը Հայաստանի մէջ բազմապատկուեր է քսան անգամով:

— Հրապարակ կը հանուին շուրջ 25 տեսակ դիւիններ ու գանհակներ, որոնք այնքան բնտիր են որակով՝ որքան քաղցրալուր են իրենց անուններով, — «Լուսի», «Հրազդան», «Մեղրածոր», «Կոտայք», «Արաքս», «Ոսկեկաղ», «Էջմիածին», «Արենի», «Արաաշատ», «Վերնաշէն», «Դաւնի», «Մեղրի», «Ոսկեհատ», «Հայաստան», «Դուին», «Երեւան», «Տօնական», «Յարեյկանական»... որոնք մեր աղդային անցեալէն ժայթքող դիւցազներգութեան մը յանգերը կը հիւսն կարծես:

— Սպառման կը յանձնուին տարեկան 100 միլիոն պահածոյի սուպեր, պտուղի ու բանջարեղէնի եւ միսի ու ձուկի 80 տարբեր տեսակներով:

— «Ձերմուկ» եւ «Արզնի» հանքային ջուրերէն կը լեցուին տարեկան 50 միլիոն շիշեր:

— Միախտտի գործարանը կուտայ տարեկան 6,155,000,000 դրանիկ:

— 3-4 անգամով աւելցեր է միսի, պանիրի, կարագի եւ յարակից սննդեղէններու արտադրութիւնը:

— Բազդատմամբ նախատրհրդային շրջանին՝ Հայաստան

նի մէջ կօշիկի, դուշպայի եւ նման հիւսուածքներու արտադրանքը բազմապատկուեր է 50 անգամ:

— Նոյնիսկ համեմատած 1940ի հետ՝ այսօր տարեկան եօթը անգամ աւելի կօշիկ, 25 անգամ աւելի բամպակէ եւ 40 անգամ աւելի բուրդէ գործուածքներ կը հանուին շուկայ:

— Ելեկտրական մեքենաներու եւ կազմածներու տարեկան արտադրանքը աւելցեր է 19 եւ 20 անգամ:

— Հազիւ տասնամեակի մը գոյութեամբ՝ Երեւանի գործարանը կ'արտադրէ տարին 1,750,000 գարթուցիչ ժամացոյցներ, գրաւիչ ու զուռագեղ, որոնցմէ կ'արտածուին 18 տարբեր երկիրներ:

— 1920ի 60,000ից փոխարէն՝ հիմա Հայաստանի մէջ կը մշակուին աւելի քան 242,000 հեկտար հողամասեր (մէկ հեկտարը՝ երկուքուկէս էյքր — արտափար) ոտոզման ջրանցքներու շէնորհի:

Սակայն անհրաժեշտ չէ ընդլայնել այս թուարկումները, երկրին արգիւնարեութեան քուլոր մարդերը ընդդրկելու համար, որոնց մէջ աճումը կատարուեր է նոյնքան արագ ու ծաւալուն թափով: Բայց այդ ցամաք թուանշանները շունչ ու թոխիք կը ստանան այցելուին աչքերուն առջեւ, որեւէ գործարանի զարգաններէն ներս: Երիտասարդ ու միջին սերունդի աշխատաւորներ ամէն բաժանմունքի մէջ, ուր դժուար է հանգիպիլ երէց բանուորներու, որոնք հանգստեան կը կոչուին իրենց 60 տարեկանին: Եւ սալչեցուցիչ առատութիւնը ինքնագործ, բարդ մեքենաներու, որոնց ատաններուն ու ժխորին մէջէն, եւ որոնց դոտիններուն, բազուկիններուն ու մտաններուն վրայէն հում նիւթերը կը շարժին, կը ձեւաներուն ու մտաններուն վրայէն հում նիւթերը կը շարժին, կը ձեւափոխուին, կը կատարելագործուին եւ կը դառնան գեղատիպ մետաքս ու գրաւիչ ժամացոյց, արուեստական ձյախէժ (սիմքետիկ ռըպըր) ու հեռադիտակ, կօշիկ ու հիւսուածեղէն, ճշգրտաշափ նրբազոյն գործիք եւ ելեկտրաշարժ խոշոր մեքենայ:

Եւ դարձեալ կը շրջինք Երեւանի մեծագոյն մէկ «կոմպիւտաին» առանձին բաժինները (յարակից գործարաններու խումբ, որուն ամէն մէկ միւսերը՝ աւարտող ապրանքի մը արտադրութեան տարբեր աստիճանը կը լրացնէ, կամ նոյն հում նիւթէն՝ տարբեր

առարկայ կը շինէ) : Մէկ շէնքէն կը դիմենք միւսին , այդ պահուծ
կը կարգում դիմացի երկփեղկ դասն ճակատի ցուցանալը եւ կանդ
կ'առնեն :

— Թնդրեմ , էս դոնից ենք մտնելու , կը յիշեցնէ քովէս բա-
րեկում ձայն մը :

Կը նայիմ իրեն , առանց շարժելու , եւ շուարած երեւոյթ մը
առնել փորձելով , կ'ըսեմ .

— Բայց ես կրկնակօշիկ հագած չեմ . . . :

— Գրան կարիք չկայ , կ'ապահովցնէ ուրիշ ուղեկից մը ,
մենք անցնելու ենք դրսի ձիւնից պաշտպանուած միջանցքից , իսկ
բաժանմունքում կատարեալ մաքրութիւն է պահուած :

— Իրա՞ւ , շիտակը ես վախցայ դասն փերելի ցուցանակէն .
տեսէք , հան գրուած է « շուախմա՛ս ցեխ » : Ես խորհեցայ որ այս
բաժինին մէջ կը հաւաքուին դործարանին բոլոր աւելցուքները ,
աղաները , ցեխերը եւ . . .

Սմէնքս կը նայինք իրարու եւ կը խնդանք :

— Դա ուրի՞շ ցեխ է , ժպտելով կը բացատրէ վարիչը , իսկ
սա նշանակում է՝ « հաւաքման բաժանմունք » :

— Ուրեմն լուսդոյն չէ՞ գրել ճիշդ այդպէս , կ'աւելցնեմ :
Որովհետեւ առարկելին միայն այս լատին օտար բլաւը չէ , այլ
որ գայն դործածելից իրապէս կը շփոթեցնէ դադութա՛հայ ըն-
թերցողները : Անոնք հայերէն լեզուին մէջ միա՛կ ցեխ բառ մը դի-
տեն , որ ծանօթ տիպն է : Եւ երբ արտասահման դրկուած յօդ-
ուածներու մէջ կը յիշուին « գործարանային ցեխերը » , պիւսքի
հայը կը հետեւցնէ , թէ այդ դործարանը կամ ցեխ ու տիպ կ'ար-
տադրէ , եւ կամ անոր յատակը ցեխապատ է : Մեղք չէ՞ , որ այս-
քան բծարնդիք մաքրութենէ յետոյ , յօդուածագիրները գրիչով
« ցեխ » օտեն դանոնք : Արդեօք կարելի չէ՞ անոր տեղ որդեգրել « բա-
ժին » կամ « բաժանմունք » ձևեր :

Արդէն միջանցքի ելքին հասեր ենք :

— Դէ ի հարկէ , որ կարելի է , կը ժպտի բարեկամ ձայնը :
Եւ կը մտնենք հաղարաւոր մեքենաներու շինարար շաշիններուն եւ
աշխատող բազուկներու ստեղծարար արշաւին մէջ :

Հայաստանի ճարտարարուեստին թեթիւ ու ծանր թեւերուն

հակադաս ծաւալման , — արտադրուած ապրանքներու անսակ-
ներուն աճման եւ որակին ազնուացման գլխաւոր պարբերը , մարդ-
կային տարրէն ետք՝ ելեկտրական ուժն է : Իսկ լոյս ու շարժում
պարզեւող այդ գորութեան անսպառ , բարեբար շտեմարանը եղաւ
ու կը մնայ Սեւան լիճը , որ գայն կը բաշխէ իր ծոցէն հոսող Հը-
բազդան գետին բնական կամ արուեստական ջրվէժներով , որոնք
հիմա վեց ելեկտրակայաններու շարժիչներն ու ուժանակները կը
դարձնեն :

Սեւանը մէկն է աշխարհի ամէնէն ընդարձակ լեռնային լի-
ճերէն , ծուարած աւելի քան 1900 մեթր բարձրութեան մը վրայ ,
իր ներկայ նուազած ծաւալով անգամ՝ տակաւին շուրջ 70 քիլո-
մեթր երկայնքով ու 40 քիլոմեթր լայնքով՝ գեղամիտ ծովակի մը
լայնածիր ատարածութեամբ կը փոսի գայն պարագրիող Գեղամայ ,
Վարդենիսի , Սեւանի եւ Արեւիունի լեռնաշղթաներու թեւերուն
մէջ : Անոր ափերէն մինչեւ Երեւան եւ Արարատեան գաշտը՝ մօտ
հազար մեթր կ'իջնէ Չանդու- Հրազդան գետը , գահավէժ որտեղ
համ փրփրածուփ թաւալումով , եւ անոր կողերէն բացուող առու-
ները կ'ոսոգեն արտեր ու գաշտեր եւ ալգիներ ու մրգաստաններ ,
որոնք ամբողջ հազարամեակներ եւ մինչեւ 10-20 տարի տաջ՝
որոնք ամբողջ հազարամեակներ էին : Հրազդանի հոսանքէն
քարքարուտ ու խոպան լերկութիւններ լայն ու երկար երակները , փոր-
կը լեցուին նաեւ ջրանցքներու լայն ու երկար երակները , փոր-
ուած ժայտերու մէջէն եւ լեռներու ընդերքէն , որոնք Սեւանէն
մինչեւ Երեւան ծրագրուած վեց ելեկտրակայաններուն արդէն ա-
ւարտած կառուցներուն աւիշ ու կեանք կը հայթայթեն , եւ վերա-
ւարտած լոյսի ու գորութեան՝ իրբեւ հաց ու ապաստան , եւ որ-
պէս արուեստ ու դիտութիւն , եւ ուժ ու վերակերտում՝ կը բաշ-
խուին Հայաստանի փողոցներուն ու տուններուն , դպրոցներուն ու
մշակոյթի օճախներուն , պետական հիմնարկներուն ու ճարտարա-
ուեստի սնիւններուն :

Այդ վեց ջրակլեկտրակայաններուն ամէնէն արտակարգը՝
Սեւանն է , շինուած լիճի ափին , բայց 5-6 յարկանի խորութեամբ
փորուած հողի մակերեսէն դարվար , որպէսզի հարիւրաւոր կան-
դունի բարձրութենէ ջուրը կարենայ գահավէժ հոսիլ ցած եւ դար-
ձնել շարժիչներուն թեւերը : Անոր ահագին մեքենաներն ու բարդ

Հարտարագիտական տառելի լաշն հնարարութեանց ստեղծումին:

Արդէն կառուցման վրայ են երկու խոշոր երկկտրակայաններ Երեւան և Հրազդան քաղաքներուն մէջ, որոնք պիտի գործեն կապի ջերմութեան ուժով և այդ համեմատութեամբ պիտի պակասեցնեն պահանջը Սեւանի ջուրերուն վրայէն: Կը շինուին նոր ջրակիրակայաններ, աւելի փոքր գետերու հոսանքային թափը օգտագործելով: Պիտի փորուին բազմաթիւ նոր ջրհորներ, հեռոցհեռէ մշակման յանձնուող նոր հողամասերու ստղծման համար: Նաև՝ Սեւանի շրջապատի աւազաններու և ազրիւրներու ջուրերուն հասումը պիտի շրջուի դէպի լիճը: Օրինակ, Արփա գետը, որ Վարդենիսի լեռնաշղթային հարաւի գագաթափէն իջնելով կ'երթայ խաւանուելու և կորսուելու Արաքսին մէջ՝ նոյն լեռներուն տակէն բացուելիք ջրանցքով պիտի դարձուի և մատուցուի յաւերժական Սեւանին:

Եւ մինչև 1965, կը նախատեսուի աւելցնել լիճի ջրային ներհաման քանակը, և պակասեցնել արտահոսման չափը, և կաշտնացնել անոր խորքին ու ծաւալին տարողութիւնը: Ան կը վերածուի բարերար, հակահիւստած հարստութեան մը, որուն անսպաս մթերքէն պիտի վերցուի այնքան հեղուկ գրամազլուխ, որքան էական ըլլայ Հայաստանի և հայ ժողովուրդի բարօրութեան ու զօրացման համար:— տառելի կամ նուազ բանալով անոր լոյս ու ջերմութիւնն փոսող և ուժ ու աւել բաշխող ջրանցքներուն դարպասները: Արեւմն լիճէն «փոխ» պիտի առնուի աւելի ջուր՝ նեղ, երաշտի շրջաններուն և ևս պիտի վերադարձուի սոսա անձրեւի ու ձիւնի եղանակներուն: Արովհետեւ, անցեալ երեսուն տարիներու միջոցին՝ ազգային հրաշալի վերականգնում մը իրագործուեցաւ մայր երկրին մէջ, ստեղծուեցաւ ստալինական ճարտարարուեստ, զարգացաւ արդիւնարեւութիւնը հողի ու զործարանի, զբաղիտութիւնը ծաւալեցաւ, արուեստներն ու մշակոյթը ծաղկեցան, գիտութիւնը դժադիլի բարձունքներու մագլցեցաւ, — և այդ համախառն նուաճումներուն մէջ, հայուն շարքա՛ն տակունութեան, պողպատէ կորովին և իմացական շքեղ խոյանքներուն հետ՝ նշանակելի, զմտական բաժին ունեցան Սեւանի ջուրերը:

Անարկայական դատումին համար, արեւմն՝ ի դուր են վի-

պային ու զգացական ախտանքն ու եղբերեղները, Սեւանի օդադարձուած ջուրերուն համար: Արովհետեւ, կարելի՞ էր անոր անասման բարիքները շղթայուած պահել երկնամերձ լեռներու պարիսպներուն մէջ, էրբ անոնց ստորատներուն, հայ ժողովուրդը, հազարամեայ մահաչուք ու դիւցապնական գոյամարտէ մը ուժասպաս, քայքայուած ու կիսաքաղց՝ նոր վերածնունդի մը ցաւազին երկունքէն կ'անցնէր: Արովհետեւ՝ եթէ նոյնիսկ հալած սակի և հեղուկ աղամանը ըլլային Սեւանի ջուրերը՝ տակունի հարկ էր իրենց վեհափառ մենութեան պատուարներէն զանոնք արձակել Հրազդանէն վար, հայ գործարարին ու շինականին՝ աշխատանք ու հաց հայթայթելու, հայ մօր զրկանքի արցունքը սրբելու և վիշտին հեծեմանքը լուցնելու, հայ մանուկին զբասեղանն ու դասադիրքը բնծայելու, հայ մշակոյթի ջահին պատրոյզը վառելու, հայ գիտնականին գործիք ու սաւառնում պարգեւելու և հայրենիքի վերակերտումին գլանները դարձնելու համար:

Մինչև 1965, արեւմն, կը ծրագրուի կայունացնել Սեւանի տարածութիւնը 45-50 մղոնի երկայնքով և 20-25 մղոնի լայնքով՝ ծովամտան հսկայ լիճ մը, իր մշտնջենական գեղեցկութեան, շրմորհներուն ու հմայքին մէջ: Բայց մինչ մեր ինքնաշարժը լիճին ափերէն կը սուբայ դէպի Երեւանի քառուղին՝ մտածուծս կ'երթայ անոր շրջակայ լեռնաշղթաներու կողերուն և ստորտներուն տըքնող, կառուցանող, երազող բազմութեանց: Եւ տրտում սեւեռուձով մը կը խորհրդածէ ան — Իսկ եթէ չդոյատեւէ ու չզօրանայ հայ ժողովուրդը, թո՛ղ բնդմիշտ ցամքի ու չորնա՛յ Սեւանը, թող անոր յատակը դառնայ արեւախանձ ամառութիւն և անոխախտ անապատ, ուր միայն մողէզներն ու կարիճները ճարակեն, կաթիլ մը ջուրի պապակէն՝ թոյն ծծելով: ... Եթէ չըլլա՛յ հայ ժողովուրդը, թո՛ղ հայոց անթիւ սերունդներուն մաքառումին ու տառապանքներուն, և կարօտներուն ու տենչերուն կուտակուած ցասումը բռնկի հրեղէն անէժքով մը և պայթի Արարատի վեհափառ գաղաթներուն դէմ, և կործանէ, հիւլէացնէ զանոնք, և վերածէ ափ մը փոշի ու զայն հողմացրիւ սփռէ Տէր էլ Զորի աւազներուն վրայ:

... Եթէ պիտի չվերապրէր ու պիտի չտեւէր հայոց աղբը:

9.

Տարակոյս չկայ, որ երկիրի մը Փիղիբական կառուցուածքը խորապէս կը ներգործէ իր բնակիչ ժողովուրդի նկարագիրին վերայ, անոր էական տարրերը խմորելով եւ յատկանիշները բերեղացնելով: Հաւանաբար ճիշդ է նաեւ, որ հնամենայ ցեղեր, ապահով ու արգաւանդ բնավայրեր փնտռելու իրենց թափառումին մէջ՝ կ'ընտրէին այնպիսի հողային գոտիներ, որոնց բնական կազմութիւնը ներդաշնակուէր իրենց կարիքներուն, խառնուածքին ու հակումներուն հետ: Եւ այդ վարկածին իրրեւ վկայութիւն կ'ընայ յիշատակուիլ Հայկ նահապետը, որ հարաւի բռնաւորին, Բելի իշխանութեան կապանքները թօթափելով եւ մերժելով անոր բոլոր խոստումներուն խայծերն ու հրապոյրները՝ նախընտրեց ապաստանիլ հայկական լեռնաշխարհը, հոն ինքնապար, արտո գոյավիճակ մը ստեղծելու յոյսով, բախտորոշ կռիւի մը մէջ՝ մահացու սոսիւր զգեստնելէ ետք: Կ'ենթադրուի ուրեմն, որ հայոց աւանդական նախահայր ինք չազդուեցաւ մեր երկիրէն, — այլ զայն որդեգրեց՝ որովհետեւ անոր անդնդային ձորերուն եւ անարկու լեռներուն անկապտելի արծակութիւնը համերաշխ գաւառ մեղկութեան լուծը եւ հպատակի դերութիւնը մերժող իր ճաշակին ու ձգտումներուն:

Բայց Հայկ նահապետը առասպելի հէքեաթային դիւցազն էր, յղացուած ու կերտուած հայ ժողովուրդի ոգիին ու միտքին դարաւոր երկունքէն, որուն մէջ ան մարմնաւորած էր իր ազատութեան անմար տենչը, բմբոստութեան շունչը եւ խիզախ քաջութիւնը: Իսկ մեր պապերը ուրիշ՝ ժառանգեր էին այդ մղումն ու յակութիւնները, ի՞նչ ուժերով սնուցաներ եւ ազնուացուցեր էին զանոնք եւ ի՞նչպէս յայրեր ու գոյատեւեր էին անոնցմով, ստրկութեան դժխեմ դարերուն մէջէն, եւ ներխուժող թշնամի փոհմակներու կործանող, յափշտակիչ ու ջարդարար յորձանքներու թաւալումին տակէն:

Թերեւս այդ խորհուրդը կ'ընայ բմբոստել, այդ աւեղծուա-

ծը կ'ընայ մեկնուիլ Հայաստանի բնանկարներուն վեհալուք ահագնութեան հանդէպ, եւ անոնց լուռ բայց հոգեխոսով բարբառով: Ետ ա երկիրներ կան, որոնց մարմինները կազմուեր են տնձիր դաշտային լանջքերէ եւ ընդարձակ հովտային կողերէ: միայն բլրափներու սակորներով ամբացած եւ առանց լեռնային ողնայարներու: Մինչ Հայաստանը՝ ափ մը իրան ու մէջք, որոնց երկայնքին ու լայնքին, 18 լեռնաշղթաներ կը հանգուցուին իրարու, եւ միմիեանց ընդհարող վիթխարի կոհակներու նման՝ իրենց քարացած կառարները կը ժայթքեն դէպի երկիրք: Եւ հիւսիսի Ղուկասեան ու Վիրահայոց լեռնադարերէն մինչեւ Զանգեզուր ու Մեղրի՝ անոնք ժայռեղէն աղնասիւններու ծամածուռ աղիւսակի մը վերածեր են ներկայ Հայաստանի «բարձրաւանդակը», — ուր ամէն կիրճ, ձոր ու հովիտ, եւ ամէն բլուր, սար ու լեռ, եւ ամէն առու, դետ ու անտառ՝ իր ինքնուրոյն գեղեցկութիւնը, իր տարրեր հմայքը, իր պաղտնի խորհուրդն ունի:

Անոնց բոլորին վրայ կը տիրապետէ Արագածը, իր լայնածիր թիկունքին շորս բարձրաբերձ գագաթներով, բոլորածու կանգնած Երեւանի եւ Լենինականի մէջտեղը: Զմեռնային ձիւնի, ամպերու եւ մարախուղի սպիտակ ու թանձր վարագոյրը կը պարզրկէ անոր կատարները: Բայց հայոց հէքեաթարոյր լեռան «փէշերուն» ծառապատ կամ ժայռալերկ ծալքերն անդամ, սարաւանդի ու բարձունքի, զառիթափի ու խորխորատի իրենց քմահաճ ընդելուզումով կը խոռովեն, կը հմայեն, կ'ահարեկեն ուղեւորին էութիւնը: Մշտապէս սրբուն կելեջող խճուղին յաճախ կը վերածուի ծայլուոյ արժուկներու վիթխարի սանդխամտներու, որ զահալէժ կ'իջնէ դէպի անդնդախոր ձորը կամ մթին կիրճերու քղանցքներէն յամբօրէն կը մազլլցի դէպի ամպածրար, անմատչելի թուացող գահաւանդները ամենի լեռնաշղթաներուն, որոնք վե՛ր, դէպի բարձունքները, դէպի կապոյտ միջոցն ու անջրպետը կը նետեն ճամբորդին նայուածքն ու մտածումները: Եւ ոչ մէկ երկրային շերտ, որ մեղկութիւն ներշնչէ, ոչ մէկ տեսարանի պատառ, որ միօրինակութիւն թելադրէ: Ամէն համայնապատակը յարափոփոխ, մշտանոր երեւոյթ մը, — գեղեցկօրէն վայրի եւ փոհմօրէն անարկու, որոնց մէջ բնութեան բոլոր տարրերն ու քմայքները, իրենց կամա-

յական ու մտային Հակադրութեամբ դարձուեր ու հրատարակուի են իրարու:

Լենինականը կը փառսի Շիրակի բարձրագոյն Հարթութեան վրայ, Արագածի սպիտակ սաւերին տակ, ձմեռը՝ անոր ջրառուէնէ հոգերուն ու կուտակուած ձիւնին յաճախանքէն զողալով, զարունը՝ անոր լանջքերուն կանանչին ու գեփուաներուն թովշանքը տարելով: Կիրովականը ծուարեր է լեռնադաշտներու արանքին, եւ զառիվար Հովիտին վրայէն, Փամբակ գետի աջ ափէն արդէն կը տարածուի դէպի ձախ եղերքը, անմիջական ստորոտին բարձրաբերձ լեռներու, որոնց սեպ կողերուն ու դալար ծառերուն վիպային հմայքը կը սփռուի վերակառուցուող ռոտանին վրայ: Գիլիմանի Հովտային կիրճէն ու դալարագեղ ձորերէն մինչեւ Աւանի քարափները՝ կը բացուին մշափափու համայնապատկերի մը յաջորդական ծիրերն ու հանգրուանները, այլապէս երանգներն ու կախարդանքները, — երբ ամէն բլուրի ետին՝ նոր դաղաթ մը, եւ անոր բարձունքէն անդին՝ տակաւին սւրիչ կառար մը կը յայտնուի, միշտ աւելի խորացնելով ներքեւի անդնդային խորխորանները, որոնց հրապոյրին դրուշուփիւնը աւելի հզօր է, քան անոնց ահադնութեան երկիւզը եւ կը կորթէ դիտողին աչքերն ու զմայլանքը:

Աւանի բարձրահարթակին, հազար մեթրի մալցումէ յետոյ անդամ, կը տիրէ պատրանքը ծովային մակերեսի մը մեկնակէտին: Լիճը կ'երկարի մութ կապոյտով մը, որուն վրայ, սպիտակ ծաղիկներու պէս կը պատուելին փոքր ալիքներու փրփուրներ, — Հեռաւոր ակերք կորսուած Հարիզոնի ճերմակ ամպերուն ու մոխրագոյն մութին մէջ: Իսկ անոր արեւելքի եւ արեւմուտքի կողերուն կը կոթողուին մասլ կատարները Արեգունի ու Գեղամայ լեռնաշղթաներուն, անյիշատակ դարերու անթափանց դաղանիքներով քարացած: Անոր հարաւի կուրծքին, ամենի լեռներու սապատած եւ զողին՝ միակտուր հսկայ ժայռի մը ծոցը փորուած ու գեղակերտուած է Գեղարդի տաճարը, քանդակուած դմբէթով, խորանով ու սիւներով: Քանի՞ դարեր առաջ, եւ ինչ յանդուգն սեւեռումով, մեր պապերը որոնք ու գտեր են այդ լեռնախորշը, անցեր են վրտանդալի ծերպիւրէ եւ սեպ զոսիթափներէ, կանդներ են այդ ժայռաբլուրին առջև ու գերբնականին երկիւզով համակուած՝ նայեր

են շուրջի աշտարակուող կատարներուն: Եւ կամքի, հաւատքի ու հանճարի ինչ անընկճելի, անհուն խոյանքով խիզախեր, ճեղքեր են ժայռը, կարասեր ու բացեր են անոր ընդերքը եւ խորհուրդ ու գեղեցիկութիւն քանդակեր են անոր մահաշուք խաւարին մէջ, իրենց մասններուն արիւնով, միտքին լոյսով եւ ոգիին թոխչքով նրաւիրադործելով զանոնք:

Տարբեր են Գառնիի հին հեթանոսական մեհեանին աւերակներուն դիրքն ու տեսարանը: Ան շինուեր է նախաքրիստոնէական շրջանին, ժայռեղէն հարթակի մը շրթունքին, որմէ վար՝ գահաձէժ, ուղղաձիգ կ'իջնէ վիհանման ձորը, սւրկէ Աղատ գետին թաւալման խուլ, մեղմօրօր շառաչը կը բարձրանայ: Գետնափոր ուրիշ կենցաղային բաժնեակներու կից, որոնց մէջ մեր նախահայր քուրմերը կ'ապրէին եւ պարէնեղէն կը մթերուէր, կառուցուեր է հոյակերտ մեհեանը, հելլէնական սիւներու եւ խոյակներու քանդակային փարթամութեամբ: Տակաւին կանգուն կամ տապալած սիւներու եւ պատուանդաններու վրայէն, այցելուին տկնարկը կը թափառի շուրջը, ահարկեամբ զմայլանքով: Վարը, անդնդախոր կիրճին յատակէն հոսող գետը հազիւ կ'երեւի փրփրոց երկզի մը նման: Եւ անոր հեռաւոր մոտենը կուգայ քաղցր հրաւերի մը մըրմունջով, որուն մէջ անթիւ սերունդներու ցնծութեան երգերը, առտապանքի հծծիւնները եւ յաղթանակի կանչերը խառնուեր են կարծես: Որուն մէջ՝ ոսկեմայր Անահիտի կաթնաթոյր մարմինը զովայցեր է թերես եւ վիշապաքող Վահագնի վրժատու թոխչքը ցոլացեր է բռնաւոր Աժտահաններու դէմ: Իսկ գետի հանդիպակաց ափերէն, վիթխարի իրաններուն վրայէն սեպ, անմատչելի գաղաթներով կը բարձրանան ահարկու լեռները, մէջքերին ձուլած իրարու եւ առասպելական շուրջապարի մը մէջ քարացած:

Այդքան տիրական ու հմայիչ է Հայրասանի Փիղիբական կառուցուածքը, իր բազմերանգ բնանկարներուն ահագնութեան ու կախարդանքին մէջ:

Եւ անհամար սերունդներու պալքարներուն, տուայտանքին ու տնչերուն վկայութեամբ, եւ անթիւ դարերու խորհուրդին եւ առեղծուածներուն յուած իմաստութեամբ՝ իրենց յաւերժական զօրութեան մէջ ինքնահաճ ու վեհաշուք, անոնք կարծես կը պատ-

դամեն, — թէ հայ ժողովուրդին դատակները եղան ու կը տեսնեն ինչպէս որ կան՝ աղատասէր ու հպարտ, եւ ինքնաբաւ ու կենսալի, եւ ազմկայաց, անսնկճելի ու դեղապաշտ՝ որովհետեւ անոնց խառնուածքը եւ նկարագիրը կերտուեցան շաղախովն ու շունչովը իրենց սիրտապանծ լիւններուն անկապտելի ազատութեան եւ անոնց կատարներուն ճայթող կայծակին ու հոգներուն խօշական ցասումին, եւ իրենց դետերուն յորձանուտ շառաչին ու անսոցճ ստորուող սկզբներու բեղմնաւորութեան, եւ իրենց անդնդային ճորճութուն մտայ թախիժին ու ծաղիւն բլրակոյներու զուարթ խայտանքին, եւ ամէն համայնապատկերի ինքնուրոյն գիծերուն ու վայրի կամ դաշնաւոր գեղեցկութեան:

Եւ հայրենի հեռաւոր, սխրալի անցեալը կ'ողեկոչէն եւ զայն կենդանի, բարախուն ներկայի մը կը վերածեն խճուղիները եզերող աւաններու եւ գիւղերու կամ գետերու եւ ճորճերու նորակոչ անունները, Հնչիւնի եւ իմաստի քաղցրալուր, սրտայայտ ընդելուզումով մը, — Հացաստ, Լուսաւան, Եղվարդ, Լճաչէն, Սեւան, Մաղկաձոր, Հրազդան, Լուսակերտ, Չորագրիւր, Բուրաստան, Արարատ, Օշական, Չորագիւղ, Բիւրական, Մրգաշատ, Գողթան, Կարուածոր, Ջրաստ, Մովսիսիւղ, Մեղրածոր, Մաւեան, Շահումեան, Թումանեան, Մարտունի, Ստեփանաւան, Նայրանտեան, — և դեռ՝ սեղանուններու այս գեղահիւս, գիւցադնական քերթուածին յանգերն ու վանկերը կը սփռուին դէպի հիւսիս՝ մինչև Լոսի, եւ կը տարածուին դէպի հարաւ՝ մինչև Զանգեզուր:

Ուղեւորական տարբեր ճարչաւաններով, մեր ինքնաշարժը անցաւ հնամեայ կամ նորակերտ բաղմաթիւ վայրերու մէջէն կամ եզերքէն, դադարի պահերով պատմական յուշարձանի մը, կամ բնութեան մէկ գմայլիլի տեսարանին առջեւ, եւ հանդիպումի ու գրոյցի առիթներով՝ որոնք հայրենիքի կառուցման եւ ժողովուրդի ազգային ու մշակութային վերածնունդին հեռահաս ծրագիրներն ու տաժանագին ճիգերը կը սթարգէին, եւ լուսաւոր երեւոյթ մը կամ թաղուն եղելութիւն մը կը յայտնէին, եւ գալիքի յանդուգրն տեսիլք մը կամ ներկայի յաղթական նուաճում մը կը վկայէին:

Նման սրտոյտ մը մեզ տարաւ նաև Լենինական, յետոյ կի-

րովական եւ անկէ Դիլիճան ու Սեւան, եւ Լուսաւանի ու Հրազդանի ճամբով՝ դարձուց երեւան: Ամբողջ շրջապտոյտի ընթացքին, ինքնաշարժին մէջ կողքիս կար մտերիմ, հաճելի ընկերակցութիւնը խորհրդահայ համակրելի գրապէտ Ստեփան Կուրախեանի: Մեր գրոյցը կ'ընդգրկէր Հայաստանի եւ սփիւռքի երկն ու նորահաս հայ գրողները, — անոնց գրական հակումները, վաստակներն ու ներշնչած յոյսերը եւ հաւանական խոստումները: Նաև ընդհանուր ազգային ու հասարակական խնդիրներ, — հայրենի բաղմախոգմեան վերելք ու հեռանկարներ, եւ գաղութահայ տաղնապաններ ու իրագործումներ, — և դեռ՝ հին ու նոր աւանդութիւններ, հիւսուած՝ մօտակայ աւանի մը, հեռաւոր լեռան մը, խորհրդաշուք ձորի մը կամ առտապելի բեկորին շուրջ, որոնք կը բացուէին այցելուին անձկութեամբ ու կարօտով խոնաւ նայուածքին դէմ, ճամբուն երկու կողմերէն: Երբեմն խօսակցութեան թափն ու լսութեամբ կը կլանէին մեզ, եւ ինքնաշարժի սրբնթաց վազքին ետև ծալուելով կը փախչէին գրաւիչ տեսարաններ: Բայց յանկարծօրէն յայտնուող նոր բնանկար մը, իր վայրի հրապոյրով կը կարթէր մեր աչքերը եւ կը վերադառնայինք անոնց կախարդանքին:

Լենինականը երկրորդ մեծագոյն քաղաքն է Հայաստանի, շուրջ 150,000 բնակչութեամբ, որ աւելի քան կրկնապատիկ համբունքն է 1935ի բնակիին: Նախկին Ալեքսանտրապոլը, դեռ քառասուն տարի առաջ՝ յետամնաց աւան մըն էր, ուր սակաւաթիւ ունեւորներէ բացի՝ բնակիչներ կ'ապրէին չքաւոր առօրեայի զբրկանքներուն ու թշուառութեան մէջ: Յետոյ՝ աւերիչ երկրաշարժ մը հիմերէն կործանեց վերականգնող քաղաքը եւ դաժան աղէտով մը պատուհասեց տասնեակ հազարաւոր մարդիկ ու կիներ, ծերեր ու մանուկներ: Լենինականը դիմադրաւեց ամբողջական վերակառուցման մը հարկը եւ յանդուգն, խանդավաւ կորովով լծուեցաւ՝ հնամեայ ցեխի ու քարի փլատակներուն վրայ նոր ու գեղեցիկ աստան մը կերտելու հսկայ ձեռնարկին: Եւ արդէն ան մօտեցեր է իր համապարփակ նշանակէտի իրագործման:

Որովհետեւ, աղքատ ու մթին անցեալին դէմ՝ Լենինականը դարձեր է բաղմաճիւղ ճարտարարուեստի եւ արդիւնաբերութեան առաջաւոր կեդրոն մը: Հիւսուածեղէնի, գուլպայի, կօշիկի, ման-

ուսածքային, միտի եւ պահածոներու, դարեջուրի, ելեկտրամեքենական, մահճակայանային եւ հեծերանիւի գործարանները, օժտուած՝ արդիական, ինքնագործ մեքենաներով եւ կազմածնեղով, քաղաքը վերածեր են արտադրական հարուստ ուսանի մը, որ երկրին բարդաւածման եւ ժողովուրդի կենցաղային մակարդակի բարձրացման դիտար լծակը կը հանդիսանայ, երեւանէն ետք: Եւ յաջորդ 2-3 ասարիներուն՝ տուել ծաւալուն տարողութեամբ պիտի ընդլայնուի ամէն ճարտարարուեստ, աւելի առատ ու բարձրակարգ սպասանքներու արտադրութեան միջոցները ստեղծելով: Հիւսուածակէն մարգերուն մէջ, բամպակի եւ բուրգի բնական հումքի թերէն առուել յայնորէն կ'օգտագործուին քիմիա-արուեստական բաղմեղանոց թելեր: Եւ միայն գուլպայի գործարանը, 22 միլիոն գոյգի փոխարէն՝ 1905ին պիտի արտադրէ տարեկան աւելի քան 30,000,000 գոյգ գուլպաներ, — կանանց նուրբ ու երկար, մեծաբանման կամ ձմեռնային, եւ մարդոց ու մանուկներու, զուսազեղ ու գրաւիչ, ամէն շափի եւ ճաշակի պահանջ գոհացնելով:

Գեղարուեստի եւ կրթական սպարէզներուն վրայ եւս, Լենինականը հասեր է արտակարգ զարգացման: Ան ունի Հայաստանի երկրորդ լուսագոյն թատերական իււմբը, իր բնիկ մամուլը՝ օրաթերթի ու հանդէսներ, գրողներու միութիւնը, համանուագային իււմբը, երաժշտական ու նկարչական բաժինները, եւ աւելի քան բառասուն ընդհանուր ու մասնագիտական վարժարաններ, որոնք քաղաքին մշակութային կեանքը եւ գեղարուեստական շարժումները կը պահեն ծաղկումի աչիտոյժ, բարձրագոյն մակարդակի վերայ:

Եւ գեւ Լենինականի մտաւորական ու վարչական առաջնորդները, բնավայրի հաւատարիմ սէրով ու հպարտ ինքնարաւութեամբ կրնան յիշել, թէ երեւան համախմբուած տաղանդաւոր, յայանի գրողներուն, գերասաններուն եւ արուեստագէտներուն կարելոր մէկ հատուածը ծլեր ու պողպատուրուր է իրենց ուսանին բեղմնաւոր շրջապատին մէջ եւ եթէ անոնք փոխադրուած չըլլային հոն՝ իրենք պիտի կարենային իրաւագոր մրցակիցը գտանալ մայրաքաղաքին զրական, մշակութային ու գեղարուեստական ըզմայլելի յառաջդիմութեան նուաճումներուն, վարկին ու հմայքին:

Նախկին Ալեքսանտրապոլի մէջ, մինչեւ 1920 թուականը, կային միայն մէկ հիւանդանոց եւ չորս բժիշկ, չուրջ 20,000 բնակչութեան համար: Երկայ վերակոչուած Լենինականի մէջ, բնակիչներու առողջապահական կարիքերուն կը ծառայեն չորս մեծ հիւանդանոցներ եւ բազմաթիւ բուժարաններ, ծննդատուն, մանկական հիւանդանոցներ, գործարանային բուժատուներ, բնական վայրեր, որոնց մէջ կ'աշխատին 230 այր եւ կին բժիշկներ:

Բայց Լենինականի համար ամէնէն արատուօր եղելութիւնը՝ անոր Ֆիզիքական վերափոխումն է, ամբողջական եւ ազնւոյցիչ, որ զայն դարձուցեր է բոլորովին անճանաչելի: Արեւմտահայ անճիտման գարհուրելի եղեռնէն ճողողբած՝ չուրջ երկու տարի (1917-8) սպրեցայ այս քաղաքին որբանոցներուն ու փողոցներուն մէջ եւ մանկական յիշողութիւնս սկսեք էր կարենար ճանշնալ ծանօթ անկիւններ ու մտերիմ վայրեր, եւ նոյնիսկ բնագորէն որոնել ու գտնել զանոնք եւ յամենալ անոնց թելադրած եղբրական յուշերուն, ահաւոր յաճախանքներուն հանդէպ: Սակայն 1926ի ահաւոր երկրաշարժը քանդեր էր զայն հիմնովին, — եւ անոր հարթիչ գլանէն վերապրեր էին քանի մը ամբանիտ շէնքեր միայն, — Պոլիկոնի ձարական գորանոցը, որ գինաղազարին՝ որբանոցի վերածուեր էր եւ հիմա կրկին փոխուեր է գորակայանի, քաղաքի կեդրոնին երկու քարաշէն եկեղեցիները, մէկը՝ բացուած կրօնական պաշամունքի համար, միւրը՝ հինէն արդէն վերափոխուած թանգարանի:

Երկրաշարժը, կարծես իբրեւ ցաւազին հեղնոնք՝ ինսայն է նաեւ շարք մը դեռնափոր հիւղերու, ցեխի ու քարի թշուառ, եղկելի կոյտերու, որոնք «տուն» կը կոչուէին եւ որոնց մէջ կանգուն պատ չէր գտած քանդելու արժանի: Անոնց ծամածուռ ճամբաները, փոշոտ կամ ցեխապատ՝ եղանակին քմայքով՝ մայթեր չունին: Եւ այնքան անկարգ, նեղ ու ոլորուն են «փողոցները», այնքան խարխուլ ու տիեզծ են շինուեր խրճիթները, սերունդներու տառապանքն ու նոսրօք իրենց պատուած պատերուն, որ ոչինչ կարելի է նորոգել, ոչինչ կարելի է կարկանդակ անոնցմէ: Այլ ամբողջ թաղամասը, իր սղոթա հիմերէն ու սղոթս գութհներէն կը կործանուի հսկայ մեքենաներու պողպատէ ժանիքներով ու մտղիլներով,

կը հարթուի զլաններու առկ, կը վերածուի ընդարձակ բացաստանի մը եւ անոր վրայ, դիտական ծրագրումով կը կառուցուի ամբողջապէս նոր, արգիական, գեղեցիկ թաղը բազմաբարկ, ամբառեսա, գեղակերտ շէնքերու:

Այդպէս է Լենինականը հիմա. — 3-4 յարկանի տուֆաշէն վարդազոյն ու դրուիշ բնակարաններ եւ սրնադարձ կամ կամաբաւոր հոյակապ հիմնարկներ, լայն փողոցներով ու ծառուղիներով եւ լայնարձակ հրապարակներով՝ ուր արձանն ու շատրուանը եւ դունադեղ ծաղիկներու դասին ու ծառերու փարթամ կանաչը՝ գեղապաշտ ճաշակէ բխած ներդաշնակ համադրութիւն մը կը կազմեն: Եւ ինչ արագ աճումով որ կ'աւելնայ բնակչութիւնը, նոյն ուժեղ թափով կը ծաւալի շինարարութիւնը ամէն մարդի մէջ: Միայն անցեալ տարուան ընթացքին՝ 500 նոր բնակարաններ աւարանք ու յանձնուէր են հասարակութեան: Եւ մինչեւ 1965, եօթնամեայ ծրագիրի վախճանին՝ Լենինականի մէջ 350 միլիոն ուրբի ծախսուած պիտի ըլլայ բոլորովին նոր կառուցումներու համար:

Փեղանիսա, արդիական ամբողջ քաղաք մը կերտելու այդ վիթխարի ձեռնարկին կատարման մէջ՝ անկասկած ամէնէն կենսական գործօնը հանդիսացեր է մարդկային տարրը, — աշխատաւոր թէ մասնագէտ եւ վարիչ ու մտաւորական, իրենց քրտինքով եւ կամքով, իրենց ստեղծագործ տաժանքով ու լուսաւոր տեսիլքով: Այդ թանկագին յատկանիշները համախառն կը յայտնուին այսօր Լենինականի բնակչութեան առաջնորդ, ծրագրող ու գործաւոր խաւերուն մէջ: Անոնք կը մարմնաւորուին բոլոր առաջադիւզներու գեղավար անձերու վրայ, — գործարանի անօրէն կամ ուսուցիչ, խմբագիր կամ դրող, կառավարական պաշտօնեայ կամ կուտակցական պետ, որոնք խորունկ համոզումով ու խանդավառ նուիրումով փարսած կը մնան ընդգրկուած նշանակէտի գործադրման ճիգերուն: Եւ ներշնչման կենդանի օրինակը կ'ընծայուի վերերէն: — Ահա Լենինականի քաղաքապետը, նորահաս երիտասարդի թարմ տարիքով, անհուն կարողով ու տեսլապաշտ խանդավառութեամբ, որ վաւերական տուեալներու պերճախօս լեզուով՝ իր գլխաւորած ստանին տասը տարիէն աւարտելիք պատկերը կը նկարագրէ սրտայայտ գործով ու դիտական ստուգութեամբ: Եւ իր ձայնին մէջ՝

Երկրային եզեմ մը ձեւակերտուի առաքելական խանդը կը դողայ եւ դէմքին վրայ երազուող ապագան ներկայի իրականութեան կամբջած ըլլալու երջանիկ հպարտութիւնը կը փայլի: Մասնազէտ մը քաղաքաշինութեան Փիղիքական, ճարտարագիտային եւ գեղագիտական մարդերուն մէջ, ան ստուան վաղ ժամերէն մինչեւ ուշ գիշեր կը շքի, կ'այցելէ, կը հետախուզէ Լենինականի սրբէ մէկ կողմը, ուր հեղեղ մը կը սպառնայ, կամ անմիջական կարիքի մը բարձունքին պահանջը կը յայտնուի, կամ լայն ծրագրի մը կառուցները կը բարձրանան: Եւ այդպէս, ամէն պաշտօնեայ, երիտասարդ ու աշխոյժ՝ անսպառ եռանդով եւ իր բոլոր ուժերուն մշտական զորաշարժով, ու մտասեւեւ մղումով լծուէր է իրեն սահմանուած նպատակի մը իրագործման:

Իրիկունը կը սորքուի հրապարակային մեծ հաւաքոյթ մը, մասնագիտական դպրոցի մը ընդարձակ սրահին մէջ, ուր լեցուէր են քանի մը հարիւր շափահաս տղաք ու աղջիկներ, հայկական թախծած պիտ, սեւ աչքերով եւ դրուիշ դիմագիծերով: Իսկ առաջին շարքերուն նստեր են անոնց ուսուցիչները, եւ քաղաքապետը զին շարքերուն նստեր են անոնց ուսուցիչները, եւ խմբագիրները: Հայրենական բարբառով՝ «Ելոյթ» մը, իսկ գաղութահայ բառով՝ ասեկախօսութիւն մը պիտի տրուի սփիւռքահայ դրողի մը կողմէ: Եւ զայն ներկայացնող ուղերձները այնքան շուայ են իրենց բարեացակամ զգացումներուն ու դրուատիքին մէջ՝ որքան կ'ըլլան արատահամանի որեւէ մէկ վայրը նման առիթներով խօսուած ներածականներ:

Սակայն շատ աւելի հիմնական ու սրտայայտ հանդիտութիւններ կը յայտնուին հայրենիքի եւ սփիւռքի ձգտումներուն, հողերուն ու հրճուանքներուն միջեւ: Ելոյթը իր բովանդակութեամբ ու ձեւով տարբեր չէ արտասահմանի մէջ անոր կատարած մէկ բանախօսութեան ընդհանուր խորքէն ու տարազէն: Իսկ դէմք՝ ունկնդիրներու բոլորովին նոր ու անձանօթ հասարակութիւն մը, իր բարձրագոյն զարգացումին շուքով թերեւս վերապահ ու խոտապահանջ՝ կամ անցեալ գրկանքներու եւ ներկայ իրադարձումներու դիտակցութեան մէջ հպարտօրէն ինքնարաւ, թերեւս անասրբեր: Բայց անակենկալը այնքան խուփիչ ու զարմանալի,

որքան արատավոր է ու հաճելի: Այցելուին «Ելույթը» կ'ընդգրկէ Հողմացրի տրեւմտահայութեան ազգային դոյառեւման անհաւատար, դաման պայքարը սփիւռքի մէջ, անոր տաղնապետն ու վիշտերը, եւ վերապրելու յամառ ճիգերը, եւ ապագայի վառ տենչերը, անոր հայրենարգած կարօտը եւ երախտադէտ հիացումը մայր երկրի բնակչութեան հանդէպ, որ չքաւոր ու տաժանագին տարիներու բախտներէն անցաւ, եւ շարքաչ աշխատանքով, ստեղծագործ խոյանքներով եւ պայծառ գալիքի մը խորունկ հաւատքով, մահաչափ աւերակներէն՝ կենտախայտ, գեղեցիկ ու բարգաւաճող Հայաստան մը կերակրեց եւ հայաց ազգին ֆիզիքական, մշակութային ու ողևկան վերածնունդը մարմնացուց: Եւ դեռ՝ հզօր երաշխիքն ու անխառն փառքը իրենց նաւաճումներուն, որոնք խաբխաւս աւ մեկնակէտ կը կառուցանեն հայ ժողովուրդի հազարամեայ տեսիլքի ամբողջական իրողործման համար:

Հոգերու եւ յոյսերու, եւ ուրախութեանց ու դալիք ձգտումներու հարազատ նսյնութիւնը չէր կրնար աւելի ուժեղ ու սրտաշարժ թափով արտայայտուիլ: Անկնդիր բազմութենէն բխող ու ծաւալող յուզումն ու վերմութիւնը կ'ոգոզեն որսօր եւ կը կլանեն ատեանը՝ մինչև զրոյցին աւարտիլը եւ մինչև հարց ու պատասխանի բաժինին վերջին պահը: Եւ ծափերու որսան ու կանչերու զիգումը՝ անժխտելի վկայութիւնը կուտան Հայրենիքի եւ սփիւռքի միջեւ՝ խորհուրդի, զգացման ու նպատակի ինքնաբերական, անբաժանելի միութեան:

Գիշերը, երբ պաղտկի մեր հիւրասենեակը կը մտնենք՝ ուրիշ հաճոյալի անակնկալ մը կը գիծաւորէ մեզ: Անիկա, հոն յարգարուած ճոխ սեղանէն աւելի՝ անոր շուրջ խմբուած երիտասարդ գրողներու եւ մտաւորական պաշտօնեաներու թանկագին ներկայութիւնն է: Նոյն հազարակալ մթնոլորտը կը տաքնայ նաեւ հոն, եւ մտերմութիւնը կը հիւսուի հայրենական ու գաղութահայ խնդիրներու, գրական գէճերու եւ երկերու, նաեւ ազգայ ազգային երազներու եւ ձեռնարկներու մասին՝ հասարակաց համոզումներու եւ կամքերու թելերով: Զրոյցը կը լրջանայ յաճախ ու կը դուարթանայ յանկարծ: Բաժակաճառեր շերտօրէն զգացական կը դառնան երբեմն, եւ մէկէն՝ կենսայի, հատու երգիծանքը զսպում

քրքիջի կը վերածէ դանտը: Կեանքի տարերային սէրը, ստեղծելու եւ գեղեցկացնելու անմար տարփանքը, ծիծաղի եւ երգի անյազ ծորաւը եւ միտքին թեւ ու ճախրանք տալու վսեմ կիրքը, — որոնք հայ ժողովուրդի խառնուածքին ու էութեան ժառանգուած տարրերը կը կազմեն՝ իրենց հարազատ բնոյթով ու վարակիչ յորդումով կը յայանուին, կը խայտան, կը պոռթկան հոն:

Յաջորդ օրը, նոր տեղացած ձիւնին ցուրտ շունչին տակէն՝ մեր ինքնաշարժը կը բարձրանայ դէպի Կիրովական, մեծագոյն մէկ կեդրոնը Հայաստանի քիմիական ճարտարարուեստին: Անցեալ 25 տարիներուն՝ աւելի քան կրկնապատկուել է քաղաքային բնակչութիւնը, հասնելով մօտ 75,000ի: Տակաւին մինչև 1935 թուականը, ան մնացեր էր հին Ղարաքիլիսէն, նեղ ու ծուռ փողոցներով եւ հոյի ու քարէ անշուք տուներով ու մռայլ հիւղերով: Այն տակն սակաւաթիւ նոր շէնքերու կարգին՝ կար քիմիական նիւթերու եւ կապերու արդիական գործարանը:

Հիմա հիմնովին փոփոխուել է Կիրովականը: Կարծես իրրեւ եղերական անցեալի տխուր յուշարձան՝ նախկին Ղարաքիլիսէնէն դեռ կը մնան քանի մը թաղամասեր: Բայց անոնցմէ վեր ամբողջապէս նոր քաղաք մը կառուցուել է գետին ափերէն մինչև լեռնաշղթային ստորտը բարձրացող հովիտին վրայ: Անոր կեդրոնին կը բացուի երկնիւզ լայն ծառուղին, որուն մեկնակէտին կանգներ է Կիրովի մեծագիւր արձանը, քարացած հարցանիշի մը նման: Եւ դէմը կը փռուի ընդարձակ հրապարակը, ծաղիկներու եւ ծառերու իր գօտիներով եւ գոյն չըջապատող 4-5 յարկանի հոյակերտ շէնքերով, որոնց հսկայ ճակատներուն ինքնատիպ կառուցաները ճարտարարուեստական տարրեր ձեւերու ներդաշնակ համագրութիւն մը կը կազմեն: Հրապարակին դուրիս՝ կառավարական պարտն է, մութ գորշագոյն տուֆէ, լայնանիստ վիթխարի սիւներով եւ միջնադարեան դղիակ-բերդի մը նման խորհրդաւոր, նոյնիսկ մռայլ, որ իշխանութեան թանձրացած հեղինակութիւնը կը խորհրդանշէ:

Անոր ձախ կողմին՝ վարդագոյն ու բազմերանց տուֆէ ուրիշ պաշտօնատուն մը, ոճային աւելի արձակ ու նուրբ գիծերով: Իսկ աջ կողմի երկայնքին՝ արգէն աւարտեր է նոր պանդոկ-հիւրա-

նոցը, բայց փարդադոյն և և աւելի պայծառ երանդաւոր տուֆերէ չի նուած, և քանդակի ու պատուհանի, և կամարի ու պատաշգամի ճարտարապետական տարրերու թեթեւ, նայնիսկ ծիծղուն բնդէլուդումով մը, որ դրուանքի ու դուարթութեան խայտանքը կը թեւադրէ դիտողին: Դիպուածի քմայք չէ վտտահարար, այլ ծրագրութի արդիւնք, որ այդ ահագին շէնքերը յաջողները յաջողներ են՝ անոնց արտաքին երեւոյթին ու գոյներուն մէջ ցոլացնել նաեւ անոնց բովանդակութեան ու դերին բնոյթը և նկարագիրը:

Իսկ հրապարակին վարի կէտը եղերոյ բազմաթիւ շէնքերը բնակարաններ են, որոնց աւաջին յարկերը վերածուել են խանութներու: Մենք կը շրջինք անոնց մէջ, իբրև յաճախորդ կը դիտենք վաճառատուներու տարրեր մասեր, ուր կը ծախուին հագուստ ու կոշիկ, կերպոս կամ ամանեղէն, կարասիներ ու դործիչներ և ստորեայ պիտոյքներ: Ապրանքները այնքան աշխտան ու փորթում չեն հարկու, որքան են Փարիզի, Լոնտոնի և Նիւ Եորքի նայնիսկ արուարձանային շուկաներուն մէջ: Անոնց բազմաձեւ ու շքեղ շրջապատներուն փոխարէն՝ Հոս կ'երեւին քանի մը պարզ ու գրաւիչ տեսակներ, որոնք սակայն կրնան վայելչօրէն ծածկել զանոնք հագնող մարմինը: Կամ անոնց Ծ-Յ չափի ու սրակի մօրձերուն դէմ՝ Հոս կան 2-3 տեսակներ միայն, բայց որոնք կրնան որեւէ գամ միւրձել տախաակի կամ տուֆի մէջ:

Նպարեղէնի խոշոր խանութի մը մէջ, հացի ու կարկանդակի, միսերու և երշիկներու, պահածոններու և ուրիշ կենսապիտոյքներու բաժնիներուն առջև քանի մը հոգի սովորական տուտուրով կը գրադին: Բայց ձախ կողմը, ամբողջ պատի յայնքին, խանուէր են շուրջ 20-30 այրեր ու կիներ, որոնց յարուցած ազմուկը մեզ կը գրաւէ իրենց մօտ: Անոնք ձեռքերնին կարկառած դէպի սղասարկող 2-3 մարդիկ՝ կը կանչեն աղերսող կամ պահանջկոտ շեշտերով:

- Իսկ ասոնք ինչ կ'ուզեն գնել, կը հարցնեմ զարմանքով:
- Սրանք, կարծում եմ, կարգի են սպասում կոնեակի համար, կուզայ պտտասխանը, ձայնին մէջ ծիծաղը զսպելով:
- Գոնեաքի՞, և զարմանքս կը փոխուի աղչութեան: Այսքան իրարանցում գոնեաքի՞ համար: Բայց միւս կողմը կան գինի-

ներ, օղի, զարեջուր...: — Դրանցից ունեն... և մի քանի օրից նոր տարին են տօնելու, ինկ առանց հայկական, կոնեակի՞ զա հագիլ թէ կարելի կը լինի:

Եւ կը տեսնենք միջին տարիքի կին մը, որ չորս շիշ գոնեաք բռնած երկու ձեռքերով՝ զանոնք կը տեղաւորէ դրան մօտ կանոնած տղու մը տոպրակին մէջ և միասին կը քալէ դուրս:

— Բայց չորս շիշ պէտք ունի՞... և գոնեաքը ամէնէն սուղ լմպելին է, կ'աւելցնեմ վարանումով:

— Դա ոչի՞նչ, կը պատասխանէ տեղացի գրողի մը զուարթ ձայնը: Մեր ժողովուրդը նոր Տարին սիրում է դիմաւորել առատ զկենացաներով և իսկական խրախճանքով: Անցեալում նա անչափ զրկանք ու ցաւ է կրել: Իսկ հիմի ցանկանում է երգել, ծիծաղել, ուրախանալ: Դուք կը մասնակցէք էդ խնջոյքներին, կը տեսնէք շատ բաժակների դատարկուելը, բայց չէք գտնի ոչ մի դիմով Հայաստանի փողոցներում կամ հանրային վայրերում:

Ինչպի լոններուն փէշերը հեղօրէն կարկառոյ առուի մը երկու ափերուն կը տարածուի բնդարձակ անտառ-պարտէզը, ուր բնութեան քմայքն ու մարդկային ճաշակը՝ թուփերու, ծաղիկների և հսկայ ծառերու դրախտային զեղեցկութիւն մը հիւսեր են, որուն մէջ, անջատ շէնքերով կը կանգնին Կիրովականի սոսոջարանին տարբեր բաժանմունքները, — ննջարան, գրօսավայր, ճաշարան և հանքային բուժարան: Ծնորհայի բժշկուհի մը կ'առաջնորդէ մեզ, հետաքրքրական ու հաճելի գրոյցով: Տարեկան հազարաւոր «Հիւրեր» կուգան Հոս, Հայաստանի և Խորհրդային Միութեան հետաւոր մարդերէն, կազդուրուելու և դարմանուելու, մասնագէտ բժիշկներու խնամքին, բնութեան կախարդական հրապոյրին և հանքային տարրերու բուժիչ զօրութեան շնորհիւ: Հաստատութեան մէջ նոյն միջոցին կրնան հոգատարուիլ մօտ 300 անձեր, տարուան օրեւէ եղանակին: Հիւրեր հոն կ'ապրին շուրջ ամիս մը և երթեւեկի ու յարակից ծախքերու մէկ երրորդը կը վճարեն իրենք, իսկ երկու երրորդը կը հայթայթուի այն հիմնարկին կամ գործարանին կողմէ, ուր կ'աշխատին անոնք: Անոնց համար կը սարքուին նաեւ ցերեկուան գրօսանքներ և իրիկնային գե-

դարուեստական յայտագիրներ :

Հանքային ուրիշ բուժարաններու շարքին՝ առաջնակարգ է Արգնիի համաբուսուոր անողջարանը, կառուցուած ծառայելու լեւնաշանջի մը վրայ, վայրի գեղեցկութեան մը հմայիչ համայնապատկերով չըջանակուած : Երեւանի մէջ՝ ձմեռանային ամպն ու մշուշը ձիւնի բաթիւներով կ'իջնէին մինչեւ փողոցներն ու հրապարակները, մինչ Արգնիի բարձունքներուն՝ կայ դազջ շուրճեր արեւին, երկինքի ջինջ կապոյտէն վար, ուր տարագիր ամպերու թափանցիկ ծուէններ կը փնտեկաւորին ցուրտ հովէ մը : Հաստատութեան դիւաւար դարպասէն ներս՝ կը բացուի գեղարեւոտ հսկայ դառիթը. ուրիշ կը ճիւղաւորուին մուտքերո գէտի յարակից բուժամասերներ : Այցելուներ, իրենց վերաբերու ու կրկնակօշիկը կը ձգեն քովն աննակի մը պաշտօնգիրն մօտ, վերնայարկերը տանոց մէջ յակի մանելէ առաջ : Եքեղ է անոս ճարտար, կառուցուածքով ու կաշաւորումով եւ կը փայտաշէ ամէնէն գեղապաշա ճաշակներն անգամ : Լուսաւոր ու դրախչ են բնթերցարանը եւ ըզրօտների սրահները, ուր երգի ու պարի եւ նուագի ու շարժանկարի հաճոյսի ժամանցներ կը արնին դարձանուող հիւրերուն :

Վերի յարկերուն վրայ կան բազմաթիւ ննջարաններ, մէկ կամ երկու մասճակարկներով, հանքային տաք ջուրերու լողանքի սենեակներ՝ ուժի ու ջերմութեան շարժական շափերով, քննութեան բարդ կազմածներու խուցեր, բաղնիքներ եւ յուելիալ օժանդակ մասեր, սրտնք փորձապէս բժիշկներու խնամքով, կը դիւրացնեն հոն գիմողներու յողային կամ սկիւրային ցաւերու տխրածանաշումն ու բուժումը :

Կը շրջինք դանաղան բաժնեակներ եւ ննջարաններ, սրտնց առժամեայ բնակիչները այդ պահերուն պիտի գտնուէին ճաշարանը կամ պարտէզը, գրօսապատյախ : Եւ կը մտնենք սենեակ մը, գոյն պարտպ կարծելով : Բայց երթասարդ մը, մահիճին վրայ երկնցած՝ կը կարգայ դիրք մը, սրուն կանանչ կողքին կը նշմարեմ «Միտիթար Սպարապետ» անունը : Մեզ բնկերացող բժշկուհին ներողութիւն կը խնդրէ անկէ, կարծես իրը չքմեղանք աւելցնելով. «Ամերիկայից եկած հիւր է...» : Եւ կը սկսինք հեռանալ :

Իսկ ան կը ցատկէ մահիճէն վար, արագ կը մօտենայ մեզի

Եւ ձեռքը երկարելով .

— Խնդրում եմ, մնացէք մի քիչ, կ'ըսէ թախանձող ժպիտով մը, զոր կարելի չէ մերժել :

Եւ կը խօսակցինք : Ան կը պատմէ իր անցեալէն : Սասունցի ծնողքի գաւաղ եղբւր է, ծնած 1923ին, Զանդեղուրի մէկ գիւղին մէջ : Բարձրագոյն վարժարանը աւարտելէ ետք մտեր է գործարան, եւ գեռ պատանի՝ նետուեր է «Հիթլէրեան վանապահներ» դէմ հայրենական դոյաժարտի խրամներուն մէջ : Հիմա, իբրեւ գերագանց աշխատաւոր, գինք դրկեր են մէկ ամսուան արձակուրդի, կազուրուելու :

— Իմ հայրը սուլթանների լծի տակ տանջուած էր ճարտի նման եւ մնում էր կիսաքաղց... Իսկ ես, ահանում էք, էլի՛, էստեղ հանգստանում եմ ինչպէս մի իշխան... Էզպէս է մեր հայրենի իշխանութեան բարիքը :

Եւ կը հարցնէ անձկութեամբ, խանդաղատանքով՝ սփիւռքի հայոց կեանքի պայմաններուն, — անոնց տնտեսական վիճակին, պարօցներուն, աղղալին շարժումներուն, դրական ու մշակութային ձեռնարկներուն եւ գոյաաւեժան հոգեբուն մասին : Իր ձայնին մէջ անհամբեր կարօտ մը կը զողայ եւ աչքերուն խորը մեղանոյճ թախիժ մը կ'առկայժի : Երբ կ'եզրափակեմ պատասխաններս, ան կը խնդայ ուրախ, յետոյ կը լըջանայ յանկարծ .

— Ա՛տ'իս, ինչ լաւ կը լինէր, թէ որ արտասահմանի մեր հարազատ եղբայրները եւ քոյրերը իրանց ոտներից թափ տային պանդխտութեան փոշին եւ դառնային հայրենիք... մեր քրտինքը եւ երազները կը խառնենք իրար, է՛լ աւելի կը զօրանանք իրարմով... եւ է՛լ աւելի գեղեցիկ, է՛լ աւելի փառաւոր կը կառուցենք մեր պապերի երկիրը, մեր Սոփեաական Հայաստանը :

Հեռաւոր ժամադրութեան մը հրաւերը կը ստիպէ մեզ աճապարել : Եւ հրաժեշտ կ'առնենք իրմէ մեկնելու : Բայց ան կրկին կը փորձէ ուշացնել մեր բաժանումը .

— Խնդրում եմ, մի բայէ եւս... թոյլ տուէք ինձ մի բաժակ կոնեակով հիւրասիրել ձեզ :

Եւ անմիջապէս կը դիմէ գէտի անկիւնի դարակը, արագ շարժումով կը բանայ անոր դուռը եւ կը հանէ մինչեւ կէսը դա-

տարկուած եւ մտերիմ պիտակով շիշը ու կը դառնայ մեզի, երջանիկ փպիտով մը դէմքը պայծառացած :

— Բայց դուք արտօնուած էք խմելու, իրեն կը հարցնեմ խնդարով :

— Այո, կը միջամտէ բժշկուհին, նա ոչ մի հիւանդութիւն չունի, նա եկել է հոս հանգստանալու :

Եւ կը ճարտարին փոքր ու մեծ շորս գաւաթներ, կը լեցունեն ու կը պարպուին յաջորդաբար, տարրեր ձօներով : — Եւ Հայաստանին սուելի շքեղ զարդացում եւ անոր պանդուխտ հոգերուն հայրենադարձ կը մաղթենք, եւ տեւական խաղաղութիւն, եւ սիւնաքահայ գրողներուն առաւել կորով եւ դանդուածներուն ներդաղթով ազգահաւաք... Եւ յանկարծ կը մթապնի անոր գրաւիչ դէմքը, երբ կ'ըսէ զսպուած ցասումով .

— Իսկ էդ... էդ դաշնակցականները, նրանք ինչի՞ են դաւում մեր մայր հայրենիքի դէմ... ինչի՞ են օտար աէրերի վաճառում մեր փողովուրդի կեանքը, նրա գալիքի բախար... քի՛չ ենք տուժե՞լ, քի՛չ արիւն զոհե՞լ է՞դ օտարների լարած որոգայթների մէջ ընկնելով... եւ դեռ նրանք քայլո՞ւմ են վասակի եւ ... Տէր Աւետիքի գաւաճան ճանապարհով... :

Ե

Ռուսական յեղափոխութեան զեկամարները, ճարտական քրտնակայ իշխանութիւնը տապալելու իրենց արիւնալի կոիւններուն նախընթաց եւ յաջորդող տարիներուն՝ զուգահեռ պայքար մը մըղեցին նաեւ կրօնական հաւատալիքներու եւ կազմակերպուած եկեղեցիներու դէմ : Կրկնակ շարժառիթներ կը վարէին դանոնք դէպի այդ թշնամական վերաբերմունքը, հանդէպ գերբնական ուժերու պաշտամունքին : — Դարերով թանձրացած նախապաշարումի շրջթաներէն ձերբազատել դանդուածներու միտքն ու ոգին, որ անոնք կարենային բմբռնել իրենց ջատագոված ընկերային ու անտեսական գրառաջաւ գաղափարները եւ յարէին անոնց վրայ կառուցուած նոր

վարչակարգին : Եւ մանաւանդ, որովհետեւ, սուս օրթոտօք եկեղեցին դարձեր էր գործօն զինակիցը ճարտական պետութեան, իր հոգեւոր հովանին եւ աշխարհիկ հզօր ազդեցութիւնը իրրեւ վահան ընծայելով անոր մականին գոյատեւման, եւ որպէս պատուար կանգնելով փողովրդային ամէն պահանջի եւ մաքառման դէմ, որոնք կը փորձէին ազատութեան ջահերով լուսաւորել եւ արդարութեան բարիքով տաքցնել կայսերական Ռուսաստանի մռայլ խաւարը : Եւ Չարի թագին հետ այնքան սերտօրէն նոյնացեր էին օրթոտօքս պատրիարքներու գահերը, որ առաջինին քաղաքական իշխանութեան հիմերը քանդել յուսացող յեղաշրջում մը հարկադրուած կը դպար նոյն ատեն քայքայել, կամ առ նուազն կապանքել երկրորդին կրօնական ահարկու գօրութիւնը :

Համայնաժար յեղափոխութեան պետերուն սխալը՝ իրենց սկզբնական թերեւս անխուսափելի խտտութեան եւ հակակրօն հալածանքի արշաւէն ետք, անոր անգիջող շարունակումն եղաւ, այլամերձ սկզբունքներու անողօք կիրարկումով : Անոնք մոռցան անցեալ դարերու անժխտելի վկայութիւնը, թէ քրիստոնեայ եկեղեցիներ միշտ յօժարեր ու յաջողեր էին, խաղաղ եւ նոյնիսկ ներդաշնակ համակեցութիւն ստեղծել որեւէ նորածին իշխանութեան հետ, ինչպիսի բնականոն կամ յեղափոխական ուղիով ալ ան նրտաճած բլլար պետական զեկը, — եթէ իրենք արտօնուէին պահել իրենց կրօնական հաստատութիւնը եւ ապրել անոր հաւատքով ու ծէսերով :

Իսկ քացայայտ իրուցութիւն է, որ քրիստոնէական դաւանանքն ու վարդապետութիւնը, անկախ իրենց գերբնական բնօյթէն, կ'ընդգրկեն ու կը պատգամեն նաեւ աշխարհային համոզումներ, որոնք համամարդկային եղբայրութեան, անդաստակարգ արդարութեան եւ բնաւոր լուծերէ ու կեղեքումէ անհատի ազատութեան իտէայները կը հետապնդեն :

Եւ խորհրդային պետեր կրնային, եկեղեցական հիմնարկներու խարէութեանց շարիքը սրբել եւ հոգեւոր սարսափներուն մղձաւանջը փարսաակել յետոյ՝ թոյլ տալ, որ անոնք վերադառնան իրենց ճշմարիտ գերին ու առաքելութեան, — ոգիի անմահութեան, բարոյական բարձր չափանիշներու եւ ընկեր կամ օտար

Ջերնին կը քննեն անհանգիստ, ապշահար դէմքերով եւ իրենց մանչ ու աղջիկ դաւակներու ձեռքերէն բռնած: Անոնց զրոյցը կը յայտնէ, թէ Հայաստան զրօսապտոյտի եկեր են Ուկրանիայէն եւ հիւսիսային Կովկասէն: Եւ անծանօթին զարմանքն ու խորհրդաւորին երկիւղը կայ իրենց ձայներուն մէջ, մինչ հարցումներ կը շնչեն իրարու եւ մեզի:

— Դէ սոսա, էլի՛, էգ միբուսաւորը ի՞նչ է անում էն բեմի վրայ:

— Չես իմանո՞ւմ... դա պատարապ սասող աէրաէր է, գուցէ եպիսկոպոս լինի:

— Ասում են՝ վազգէն Կաթողիկոսն էլ է էնտեղ, ճանաչում ես նրա՞ն...:

— Մի նայի՛ր էդ աշտարակին, է՞, ինչքա՛ն է բարձր... եւ ցոյց կուտայ դմբէթը... Տօ տա փուլ չի գալի՞ մեր գլխին:

— Հիմի էդ ի՞նչ է կարգում... Աւետարան ա՞... դա հայերէն ա կարդո՞ւմ... բա գրաբարն ի՞նչ ա...:

— Ինչքա՛ն դեղեցիկն են էս սիւները... շա՛տ են հի՞ն... բա էդ պատկերները, էն շապիկաւորները...:

Մինչեւ պատարազի աւարտին՝ մեր բոլորտիքը կը շարունակուին հարցերը, շարժումը, խոովքը: Երբեմն միամիտ ձայն մը կը մոռնայ ինքզինք ու շրջապատը եւ կը բարձրանայ: Եւ մեղադրական աղը կը հասնի սրեւէ անկիւնէ.

— Ի՞նչ էս բղաւում, այ մարդ, սա Տօ՛՛ սքաւիտմը չի՛, սա եկեղեցումն ենք...:

Եւ յանկարծ, դասին կողմէ կը յուսին գուսպ կոչեր, ինքնաբաւ հեղինակութեան շեշտերով, — «Ճամբայ տուէք, Ճամբայ տրուէք»: Երկու բարապաններ, իրենց մարմիններու բոլոր մկանները շարած, կը փորձեն ճեղքել Ժողովուրդին խոնուած, կոհակուտղ զանգուածը: Կը յաջողին բանայ նեղ ու ծփուն անցք մը, որուն երկու կողմերու մարդկային պատերը ետ կը հրեն իրենց թեւերով: Մինչ յամբօրէն կ'առաջանայ սարկաւաղներու, արեղաններու, քահանաներու եւ եպիսկոպոսներու թափօրը, որուն շքերթով կ'ընթանան վրացական եկեղեցիի ալեհեր պատրիարքը, ուսու օրթոտոքս եկեղեցիի պատրիարքին փոխանորդը՝ իրենց շքախումբով,

եւ Ամենայն Հայոց Հնորճադարդ Հայրապետը, վեհափառ Վազգէն Կաթողիկոսը, որ խաշի խորհուրդին հետ՝ հովուապետի իր սիրազեղ, բարի ժպիտը կը սփռէ դինք շրջապատող բանաւոր հօտին վերայ, բարդաւած ու խաղաղ կեանքի մը եւ իրականացած երազներով պայծառ ու փառաւոր ապագայի մը օրհնութեան նման...:

Ուրիշ օր մը, կանգնած ենք վեհարանի արտաքին դարպասին առջեւ, մտերմական զրոյցի մը մէջ կլանուած: Ինքնաշարժ մը կը կենայ մեր մօտ, անոր վարիչը կ'իջնէ կառքէն, իր բերած նորեկ հիւրը կ'առաջնորդէ դէպի դուռը եւ կը սեղմէ ելիկտրական զանդին կոճակը: Պահնորդը, ներսի իր քովնտի սենեակէն կուզայ դուրս, հանդիտաւոր, թերեւս բռնազրօսիկ լըջութիւն մը իր համակրելի դէմքին.

— Արտասահմանից մի օտար հիւր եմ բերել, փափաքում է նրան տեսնել... վերելումն է նա՞... կը հարցնէ շարժավարը նկատելի վարանուամով:

Բարապանին շրթները կը մնան կղզուած, ինք՝ անշարժ ու խոժոտ, նայուածքը յառած միջոցէն վեր անորոշ կէտի մը:

— Բա քեզ բա՛ն եմ հարցնում, էլի՛, չես լսո՞ւմ... հիմի մարդ բնդունում է՞ նա... եւ շարժավարի ձայնին պահանջկոտ շեշտ մը կը խառնուի:

— Ասում ես նա՛, իսկ ո՞վ է նա, ես չեմ իմանում... կը պատասխանէ երիտասարդը սրտմտած:

— Նա՛, էլի՛, չես հասկանո՞ւմ, ում համար եմ ասում:

— Նա կաթողիկոսն է... իսկ դու չես կարո՞ղ վեհափառ տեսիլ:

— Ի հարկէ կարող եմ, եւ ուրախ ծիծաղով խնդաց շարժաւարը, — բա ես հէնց էդ բառն էի փնտռում, մի՛ նեղանա, մոռացել եմ, էլի՛... դէ՛. սոսա, աղբեր ջան, վեհափառը իրա դահլիճումն է՞...:

Եւ մոռցուած բառեր կը վերյիշուին, լքուած վարժութիւններ կ'արթննան, հնամեայ անտեսուած աւանդութիւններ իմաստ ու շունչ կ'առնեն:

Իսկ ամբողջ այդ շարժումին սգեկան առանցքը կը հանդիսանայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վեհափառ Վազգէն Հայրա-

դարձեր է հայ եկեղեցիին սպեկան ու նիւթեղէն վերականգնութիւն համար: Եւ յաջորդ ազգային-եկեղեցական համաժողովը, եթէ յանդուզն, բարերար արարքի մը վաստակը կ'ուզէ ժառանգ ձգել զայլիք սերունդներուն՝ աւսիկա ջնջումը կրնայ ըլլալ կուտակրօնութեան:

Անոր զուգընթաց պայման է բարեացակամ մթնոլորտի ըստեղծումը հասարակական կարծիքին մէջ: Այդ աննշութեամբ՝ շահեկան եղաւ զրոյց մը՝ հայ եկեղեցիի վիճակին եւ զազուրթահայ համայնքներու հոգերուն ու յոյսերուն մասին՝ կրօնական խորհուրդի նախագահին հետ, — լայնախոհ ու խղճամիտ «նախարար» մը, որ խորապէս կ'ըմբռնէ իր պաշտօնին կապումը հայրենական ու միջազգային խնդիրներուն բարդ բնոյթն ու լայն տարողութիւնը նման հանդիպումի մը ընթացքին, ուրիշ հարցերու շարքին՝ կ'անդրադառնանք նաեւ խորհրդահայ մամուլին մէջ երբեմն հրատարակուող հակակրօն բուռն յողուածներու երեւոյթին: Կը փորձեմ արտայայտել զազուրթահայ բիւրեղացած տեսակէտը, թէ անձահ եւ աննպատակ են նման յարձակումները: Հասկնալի է հարկաւ, ու բնական, որ ամէն երկրի մէջ, ուր պետութիւն եւ եկեղեցի անջատուած են՝ մարդիկ ազատ զգան քննադատելու, նոյնիսկ ժխտելու կրօնական հաւատալիքները եւ անոնց դաւանանքին վրայ կառուցուած եկեղեցական հաստատութիւնները: Եւ արեւմտեան առաջադէմ ազգերու մէջ եւս, քաղաքացիներ անկաշկանդ կը կիրարկեն իրենց այդ իրաւունքը:

Բայց Հայաստանի մէջ կացութիւնը տարրեր է կապէս: Հոն՝ հայ եկեղեցին ո՛չ հաւարականութեան յայտնի կամ թաքուն դործիք մըն է, ո՛չ քաղաքական եւ բնկերային յեղաշրջական մտայնութեան արտիւտան մը, ոչ ալ անդեմականի հաւատքի հրատարակող ներկայ աշխարհային կեանքն ու անոր արժէքները, — ուրեմն ժողովուրդ ու հայրենիք ուրացող վերացական սպառնալիք մը: Ան ոչ թշնամի է, ոչ իսկ հակառակորդ հայրենի պետութեան, — այլ նուիրուած է հայաց սպեկան արժեւորմանն ու մշակութային ծաղկումին, եւ Հայաստանի ու սփիւռքի հայութեան միջեւ անոր բերած վաստակը, եթէ նոյնիսկ համեստ ըլլայ՝ թանկագին նպատակ է, ճանաչման ու գնահատման արժանի: Իսկ եթէ տակաւին պատահի, որ հա-

մալարան աւարտող ուսանող մը փափաքի իր աւարտածաւին նիւթ ընտրել կրօնը ժխտող պատմադիտական կամ փիլիսոփայական մարզը՝ աւելի պատշաճ է, որ զայն մշակէ առարկայական մտանցումով եւ վայելուչ լեզուով, փոխանակ ապաւինելու կողմէն՝ սփիւռքի եւ անարդական վերագրումներու թափին, որուն դէմ կ'ընդվզին նոյնիսկ պարկեշտ անհաւատի մը ճաշակն ու խիղճը: Եւ ան արդարացի կը գանձ զազուրթահայ այդ դատումն ու տկնկալութիւնը:

Իսկ անա Մայր Աթոռէն կը վերադառնամ Երեւան, մեր վերջին հանդիպումէն ու հրատեղական յետոյ, Վեհափառ Հայրապետին քննաշարժով, նստած վարիչի կողքին: Կ'անցնինք էջմիածին քաղաքի փողոցներէն եւ կառուցման տենղը կը յայտնուի նոյնիսկ ձիւնին տակէն բարձրացող նոր շէնքերու պատերուն մէջէն: Անկիւն մը, կարծիք լոյսին դէմ երբ կանդ կ'ստնէ մեր մեքենան, հոն իր դրաւիչ համազգեստին մէջ հանրակառքի սպասող ստախկան մը կը նայի մեզի եւ հեղ ժպիտով մը մտանալով կը հարցնէ. — Կարող է՞ք ինձ տանել Երեւան:

— Բայց անշուշտ, հաճոյքով, կը պատասխանեմ: Կը մտնէ ներս եւ անմիջապէս կը սկսի ջերմ, մտերմական զրոյցը: Նոյն անձկալի հետաքրքրութիւնն ու արտում կարօտը ըստ փիւռքի հայութեան համար: Ի՞նչպէս կ'աղբիւն արտասահմանի հայերը. ի՞նչ տեսակ հոգեր ու ցաւեր սնին, օտար իշխանութիւններ կը ճնշե՞ն կամ կը նեղե՞ն տարազիբ հայ համայնքները. որներ կը ճնշե՞ն կամ կը նեղե՞ն նոր սերունդը կը սորվի՞. կը պաքա՞ն մեծ է ձուլումի վտանգը. նոր սերունդը կը սորվի՞. կը պաքա՞ն հայկական լեզուն եւ ազգութիւնը: Եւ յետոյ՝ կուզայ անխուստի իր հարցումը.

— Մեր պանդուխտ եղբայրները սիրո՞ւմ են Մովսէսական Հայաստանը: Նրանք ցանկանո՞ւմ են դառնալ հայրենիք:
— Հարկաւ անոնք կը սիրեն մայր երկիրը, եւ թերեւս ձեզմէն աւելի, կ'աւելցնեմ ինդալով: Որովհետեւ դուք միշտ կ'աղբիք, կը շնչէք, կ'աշխատիք հօս եւ կը կշտանաք անոր սէրէն: Նոյնիսկ առօրեայ գժուարութիւններ կրնան ձեզ դժգոհ կամ դաւնացած ձգել անոր հանդէպ...: Իսկ զազուրթահայը կը սիրէ Հայաստանը՝ ազատ հայրենիքի եւ սեփական պետութեան հազար

տարուան չկշտացած կարտավ... իրրեւ անարատ մարմին, եւ սրբազան գաղափար եւ իրականացած երազ...:

— Իսկ երբ ներգաղթ կատարուի, ինչ էք կարծում, նրանք կը գան Հայաստան:

— Կուզան, անշուշտ: Կը յիշէ՞ք 1947ին: Երկրին մէջ հազիւ ձեզի բաւարար հաց ու երգիք ունէիք: Բայց շուրջ 100,000 տարազիր հայեր եկան Հայրենիք, աշխարհի բոլոր կողմերէն: Իսկ հիմա պայմանները այնքան բարեփոխուեալ են... արդիական նոր տուներ եւ պատրաստ գործ ամէն ներգաղթողի համար...: Տխուր միջազգայ մը կ'իջնայ միտքս: Ո՞ր օգակայանն էր, չեմ յիշեր: Մերունի բարեկամ մը եկաւ դիւ ճամբու գնելու: Նախ խնդրեց, որ Հայաստանի հողը համբուրեմ իր տեղը: Յետոյ, յանկարծ աչքերուն մէջ արցունք լծացաւ: — Ա՛խ, բաւ, ի՞նչ կ'ըլլար, ես ալ կրնայի հայրենիք երթալ... Թո՛ղ կանգնէի Արտիկան փողոցին վրայ, առնէի քար մը եւ զարնէի խանութի մը խոշոր պատուհանը կտարէի... եւ թո՛ղ հայ ստտիկան մը ինծի ձերբակալէր եւ հայկական գաղտարան տանէր, եւ հոն հայ գաղտար մը թող ինծի հայերէն հայհոյէր եւ հայկական բանտ մը զրկէր, ի՞նչ կ'ըլլար:

Լուեցինք պահ մը: Յետոյ ստտիկանը յարեց թախծալի ժպտով մը.

— Առէք նրան թող դայ: Ես մի մեծ քար կը տամ նրա ձեռք... Թող խփի եւ խորտակի ինչ ապակի, որ ցանկանում է... եւ ես նրան բանտ չեմ տանի, չեմ էլ ձերբակալի... Ես նրան կը տանեմ մեր սեղանին հիւր...:

Եւ մենք լուս՝ կը նայինք իրարու: Եւ մեր ինքնաշարժը կը սուրայ Յաղթանակի կամուրջին վրայէն: Իսկ ներքեւէն, խորունկէն, իր ափերու ժայռերուն դէմ փշրուող Հրազդանի ձերմակ, կաթնահամ փրփուրներուն շառա՞նչն է, որ կը փայտայէ մեր ազնունքը: Եւ իրոյ խոսովիչ կանչի մը, մայրական մտերիմ, քաղցր մեղեդիի մը նման:

Ը.

Պորապէս յուզիչ ու հաճելի յայտնութեան մը նման կուզայ անակնկալը Հայաստանի մէջ, որ ընդհանուր շահագրգռութեան եւ ընթացիկ գործի ամէնէն տիրական, անխուսափելի նիւթերէն մէկը գարձեր է ներգաղթը. — իրրեւ հեռահաս ծրագիր եւ իրագործուող ձեռնարկ: Պետական ու կուսակցական գերազոյն ղեկավարներ, գրողներ ու արուեստագէտներ, ուսուցիչներ ու գիտնականներ, եւ ժողովրդային բոլոր խաւերու մարդիկ ու կիներ՝ նոյն ջերմ հետաքրքրութեամբ ու սրտատուչ գորովով կը մտատանջուին արտասահմանի հայոց ներկայ քաղաքային ապահովութեան եւ ապագայ ազգային գորտեւման խոսովիչ խնդիրներով: Կառավարական ամէն մակարդակի վրայ, բնկերային ամէն շրջանակի մէջ կամ ընտանեկան ամէն յարկի տակ եւ որեւէ առիթով՝ հարազատի այդ բնածին խանդը կ'արտայայտուի, երբեմն առօրեայ կարիքներու մանրակրկիտ հարցերու, երբեմն՝ զղացական ընդհանրացած զուգումներու մէջէն:

Անոնք կը ցանկան գիտնալ, յաճախ վարակիչ անձկութեամբ եւ մերթ՝ անձանթին զաղանթքը ճանչնալու եւ հրապոյրին հազորուելու գուցայ իղձովը՝ թէ սփիւռքի հայութիւնը կենցաղային ինչպիսի պայմաններով կ'ապրի, եւ ի՞նչ արտաքին տաղանայներ ու ներքին գրկանքներ կը դիմապրուէ: Եւ իւրաքանչիւր գաղութի մէջ որքա՞ն է բողբոջուցիչ տոկոսը բանուոր ու հողագործ, խանութպան ու վաճառական, գրող ու արուեստագէտ, ուսուցիչ ու գիտնական տարբերուն: Եւ հիւրընկալ երկիրներու մէջ՝ անոնց հանրային, ճարտարարուեստական, մշակութային ու գիտական գաղտարանի ապարկչներուն վրայ ի՞նչ որակ ու թիւ կը կազմեն առաջուոր դիրք ու համբաւ վաստկած հայեր: Եւ տանելի՞ է դաղութահայ խոնարհ դասերուն ապրուստի մակարդակը, կամ առհասարակ ի՞նչ արհեստներով կը զբաղին անոնք, եւ ո՞րքան կրնան շահիլ, կամ անոնց համար կա՞յ համալսարանի, հիւանդանոցի ու

բժշկի ձրի մասուցում : Եւ արասասհմանի մէջ հայեր ունի՞ն բաւարար դպրոցներ, նոր սերունդը կը սորվի՞ հայերէն լեզուն, կը ծանա՞յ մնայ հայ : կամ վերապրող արեւմտահայութիւնը պիտի կաննա՞յ գեւ երկար ատեն պահել իր ազգութիւնը, — մինչեւ հայրենագարծի կարուածներ յաջողին զանոնք փոխազրել Հայաստան, փրկելով վերջնական ուժացումի եւ ձուլման կորուստէն :

Ուրեմն, անոնց մասնագութեան ու դատումին մէջ՝ ներդաշխի յարատեւ կատարման գլխաւոր մէկ շարժառիթը, սփիւռքի պանդուխտ զանգուածները սպասելն է իրենց բարօրութեան ու գոյութեան սպաննացող վերահաս վտանգներէն, — անզ մը՝ արեւսեակեան թշուառութիւն ու անյոյս ապագայ, այլուր՝ քաղաքային անողոր ճնշումներ ու հալածանք, եւ ամենուրեք՝ այլասերումով անհետանալու մղձաւանջը :

Եւ տարակոյս չկայ, թէ ներդաշխով հայրենիք փոխազրուած տարադիր բազմութիւններ, մինչեւ իրենց թոսներն ու հեռուոր սերունդները՝ կը դառնան ու կը մնան յաւերժօրէն հարազատ, անբաժան, անկործնելի մասնիկները հայ ժողովուրդին : Կը նշանակէ ուրեմն, թէ հայրենագարծը կը հանդիսանայ փրկութեան միակ լաստը, որ պանդխտութեան հողմերէն տարասփիւռ արեւմտահայ համայնքերը՝ շրաւորութեան, անստղութեան ու անէացման քարափներէն պիտի կարենայ հաւաքել ու տանիլ ապահով, ստեղծարար ազգային կեանքի վերջնական նաւահանգիստը, — հայրենի երկիրը :

Եւ զժուար չէ երեւակայել, թէ ինչպիսի դժխեմ առօրեայի փիճակ եւ անյուսօրէն միջին հեռանկար պիտի զիմակալէին այն 100,000 տարագիր հայերը, որոնք աղքատ ու յետամնաց միջավայրերէ Հայաստան մեկնեցան 1947-8 տարիներուն, — եթէ անոնք նախընտրէին կառչած մնայ գաղթականի իրենց հիւղերուն եւ պանդուխտի իրենց ճակատադիրին : Արտասահմանը, իր արամագրելի միջոցներով՝ ի փիճակի պիտի շրջար անհրաժեշտ թիւով ու մակարդակով հայկական վարժարաններ, — ուրեմն տոհմային կրթութիւն հայթայթել անոնց արագօրէն բազմացող ու մեծցող զաւակներուն համար, եւ անոնք, այդ դեռահաս աղաքն ու աղջիկները, դեռ մտնուել՝ պիտի օտարանային օտար գրասեղաններու

միայ կամ օտար գոիհներու մէջ : Նոյնիսկ հիմա, շատ սեղ ու անբաւարար կուզան Մերձաւոր Արեւելքի հայ դպրոցները, ուսանողներու աճող պահանջին հանդէպ : Եւ ծնողներ, նիւթական կարիքի եւ վաղուան գոյութեան վախի յաճախանքին տակ՝ նոր տարագրութեամբ մը պիտի նեւուէին դէպի նոր կայաններու որոնման անյայտ ճամբաները, — դէպի նոր յոյսեր, նոր տուայտանքներ, նոր սղրերգութիւններ : Եւ անոնք, իրենց զաւակներով ու գալիք շատախոյններով՝ ընդմիշտ կորսուած, շրացած պիտի ըլլային հայ ժողովուրդին համար :

Հայրենագարծին միւս, եւ ստուել հիմնական բարիքը անոր պարզեւած մարդկային համբանքի, բազուկի ու միտքի բաղադրուեալ, անփոխարինելի յաւելումն է Հայաստանի մէջ եւ հայոց ազգային մայր զանգուածին վրայ : Եւ էական է, որ լիապէս լսմբուսուի այդ թանկագին, բազմերանդ նպատին ըզմանակ արժէքն ու տարուցութիւնը՝ հայ ժողովուրդին ու հայրենիքին ներկայ ծաղկումին եւ ապագայ զօրացման մէջ : Որովհետեւ, պանդխտութեան իրենց կայրերէն պապենական հողերուն վերադարձող հարիւր հազարաւոր հայրենարագճ հայերը նաեւ փիթխարի, ինքն իր կուտակումով բազմապատկուող գրամազլուխ մը կ'աւելցնէ Հայաստանի արտադրական, քանակային եւ իմացական համախառն հարրուութեան վրայ : Այսպէս .

Երկրի ճարտարարուեստին բոլոր ճիւղերուն մէջ, — քիմիական, հիւսուածեղէնի, ժամացոյցի, կօշիկի, մեքենաշինական, մետաքսի, կահոյքի, տպագրական, կառուցման, — ներդաշխող այր ու կին գործաւորներ նշանակելի մասնակցութիւն մը կ'ընծայեն : Անոնց շարքին բազմաթիւ են ճարտար արհեստաւորներ եւ մասնագէտներ, որոնք վերակացուի եւ տնօրէնի պատասխանատու դիրքերուն բարձրացեր են իրենց խղճամիտ աշխատանքին եւ արհեստագէտի ձիրքերուն շնորհիւ : Հոն փոխադրուած տարրեր միջավայրերէ՝ անոնք իրենց հետ տարին տարրեր կազմածներու, գործիքներու, առարկաներու, արտադրութեան ինքնուրոյն եղանակներու նոր ծանօթութիւն ու լայն փորձառութիւն, որոնք գրական արդիւնքի վերածուեցան տարրեր գործարաններու մէջ : Նաեւ՝

Հայրենագարճ հայերու մանուաւնդ նոր սերունդէն՝ արժէ-

մասին, — որ ան սահմանուած է փրկարար կամուրջ ու հեռահաս զբոսական ըլլալու հայոց ազգային միութեան եւ Հայաստանի ամբողջական դարաւոր երազը մարմնացնելու ճամբուն վրայ: Բայց այլեւս սովորութիւն դարձեր է, եւ ուրացումի մահերգու եղերումայրերուն մօտ՝ ախտաւոր մասսեւեւում, ներգաղթի համար կատարուած ամէն ակնարկի կամ արարքի առիթով՝ անպայման անդրադառնալ 1947-8ի ձեռնարկին թերիներուն ու դժուարութեանց, եւ ափսոսալ կամ նշաւակել զանոնք: Իսկ քիչեր կը յօժարին տրամարանել, — իրապէս հնարաւոր էր, նոյնիսկ կատարեալ ծրագիրով եւ նիւթական շատ աւելի փարթամ միջոցներով, 100,000 մարդիկ, կիներ ու մանուկներ հաւաքել տասնեակ մը օտար երկիրներէ եւ փոխադրել բոլորովին նոր ու անձանօթ միջավայր մը, թէկուզ մայրենի ու հարպատ՝ առանց ենթականերուն համար ահազին նեղութեանց, զրկանքներու, անգամ յուսալքումներու:

Հայտոսանի պետական ղեկավարները իրենք չեն վարանիր ընդգծելու այն ծանր դժուարութիւնները, որոնց ներգաղթողներ ենթարկուեցան առաջին քանի մը տարիներուն, եւ որոնք դժգոհ ու դառնացած մտայնութիւն մը խորացուցին ոմանց մէջ: Բայց առիկա այն շրջանն էր, երբ Եւրոպայի հզօր ու հարուստ երկիրներն անգամ կը հեծէին թշուառութեան ու փլուզումի սարսափին տակ, եւ միայն Միացեալ Նահանգներու ընծայած զբամազուխի, մեքենաներու եւ կենսապիտոյքի հսկայական նպաստը կրցաւ փրկել զանոնք քայքայումէ ու քառսէ:

Պատերազմին կուտակած վէրքերու կտտանքը, սուղերու վիշտը եւ կարիքներու տուայտանքը ապրեցաւ նաեւ Հայաստան: Ամբողջ չորս տարի, անոր երիտասարդ, կենսախաշա զուակները, — 300,000 անվեհեր զինուորներ, հերոսաբար մարտնչեցան հեռաւոր ռազմադաշտերու վրայ ու աղմոտ խրամներու մէջ, մարդկային ցեղի ազատութեան եւ իրենց ժողովուրդին փրկութեան համար: Եւ մինչեւ յաղթական խաղաղութեան վերադարձը՝ նոր չէնք ու բնակարան չբարձրացան հայրենի քաղաքներուն մէջ եւ նոր ահօսներ չբացուեցան քարքարուտ սարաւանդներու վրայ: 1947ի հայրենադարձի օրերուն Հայաստանի ժողովուրդը տակաւին իրեն համար չունէր բաւարար սննդեղէն, տուն, հագուստ, ու կօշիկ:

Բայց Երեւան ներգաղթը կազմակերպեց՝ ընդառաջելով արտասահմանի հայոց յամառ ու յարատեւ դիմումներուն, պահանջներուն ու թախանձանքներուն: Կառավարութիւնը նորեկները պիտի տեղաւորէր առժամեալ տնակներու եւ սենեակներու մէջ, մինչեւ անոնք չինէին սեփական բնակարան, իրենց յասկացուելիք պետական վարկերով ու շինանիւթերով:

Սակայն կարելի չեղաւ սեղմուած մնալ այդ ծրագիրին ծիրերուն մէջ: Եւ երբ վերջին կարաւանը հայրենիք հասաւ՝ նախատեսուած քանի մը տասնեակ հազարին փոխարէն՝ շուրջ 100,000 տարագիր հայեր փոխադրուել էին Հայաստան: Յետոյ, ինքնակոչ տարագիր հայեր փոխադրուել էին Հայաստան, հայրենադարձի ձեռնարկը դատապարտելու եւ անոր վարիչները անուանարկելու իրենց աճապարանքին մէջ՝ մոռցան մարդկային այդ յորդ հեղեղումը շղթայադերժող պատճառներն ու մթնոլորտը: Հայրենասիրական խանդն ու կարօտը տողօրեր էր ափիւռքահայ լայն զանդուածները, եւ անհամբեր ու պահանջկոտ՝ անոնք կ'արշաւէին ներգաղթի յանձնախումբերու գրասենեակներէն ներս, անպայման եւ ամէնէն առաջ հայրենիք մեկնելու համար: Անոնք նոյնիսկ կը փորձէին կաշառել պաշտօնեաներ կամ սպառնալ անոնց, եթէ իրենց դիմումնադիրները չվաւերացուէին:

Հազարաւորներ եղան, որ սպասելու վճռական հրահանգ ըստանալով հանդերձ՝ ձղեցին իրենց գործերը, ծախեցին տուն ու խանութ եւ անուկներու մէջ դամեցին ամբողջ կահօքերին, — որպէս զի ստիպեն ներգաղթի պատուիրակները՝ զիրենք յաջորդ նստին արձանագրելու: Տակաւին ուրիշ հարիւրաւորներ խաբէական ինքնատիպ խաղերով կը մօլորեցնէին հսկող օստիկաններ եւ փախչելով կը միանային մեկնող խումբերուն:

Բայց միայն հայրենիքի կանչին կախարդանքը եւ աղբային վերածնունդին հմայքը չէր, որ զանոնք կը հրապուրէր դէպի հայրենադարձ կարաւանները: Յունաստանէն մինչեւ Պաղեստին ու Պարսկաստան՝ ներքին յեղաշրջումներու, քաղաքացիական կռիւներու եւ արտաքին պատերազմի աղէտներն ու արհաւիրքները կ'ահարեկէին նաեւ պանդուխտ հայ բազմութիւնները: Եւ նոր զաղթելու, թշուառութեան ու սարսափներու այդ մղձաւանջէն դէպք

ապահով ու խաղաղ ապաստան մը ճողոպրումի ու փրկութեան ճանապարհ մըն էր նաև ներդադրել անոնց համար :

— Գուցէ մենք սխալուեցինք, ծրագրից աւելի մարդ ընդունելով ներս... Կը բացատրէ պետական առաջուր ղեկավար մը, վարակիչ տրտում ժպտը համակրելի դէմքին : — Բայց սիրուքի հոգիքի պատգամաւորներ գիտում էին տարբեր երկրների սովետական գեապաններին, ներդադրի պատուիրակներին, գալիս էին մեկ մտ, և խնդրում, ազաւում էին, որ թոյլ տանք իրանց դալ... Թէկուց չոր հողի վրայ ընին և միայն ցամաք հաց ունենան ուտելու, իրանք գոհ և երջանիկ կը լինէին հարապատ հայրենիքի մէջ : Դէ՛, ի՛նչ ասենք, մեր սիրտերը քարից չէին շինուած, և ընդունեցինք նրանց... Մենք, ի հարկէ, չոր հացից և մերկ հողից շատ աւելին տուեցին նրանց, բայց էլի անբաւական էր և շատեր դժգոհ մնացին... :

Յիշեցի կոտորածի պետի մը պատկերաւոր սահմանումը մեծ հայրենադարձին կապուած գծուարութեանց, անոնց պտածաններուն ու տուած գասին :

— Պատերազմը մեկ էլ արժեց ծանր կորուստներ, լինի մարդկային, թէ նիւթական : Հայաստանը դանուած էր խոշոր կարիքների հանդէպ և ժողովուրդը ապրում էր դառը զրկանքներով : Ի՞նչ պէտք էր անէինք, ապուէ՛նք մի տասը-քսան տարի, մինչև երկիրը վերաշինէինք, կենցաղային աւելի ճոխ պայմաններ ստեղծէինք և առատութիւն լինէր ասուների և պիտոյքների : Իսկ մինչև և այլ ի՞նչ էր լինելու բախար սիրուքի մեր եղբայրների... Նրանք անդադար պնդում էին, պահանջում ու թախանձում էին, որ հայրենադարձի դռները լա՛յն բաց անէինք... : Եւ մենք այդպէս էլ արինք, մտածելով, դէ՛հ, նրանք վարժուել են շարքաշ աշխատանքի, շատ են տուժել և շարժարուել, թող գան հայրենիք, մի քանի տարի էլ հոս, հայրենի ժողովուրդի հետ կը քրանեն, կը կառուցեն, անգամ միասին կը կրեն զրկանքներ, մինչև կը բարեխուենք, կը հարստացնենք երկրի տնտեսութիւնը և... : Գիտէք ի՞նչ եղաւ մեր ամէնից մեծ սխալը, — մենք շատ խոշոր գրաւ դրինք արտասահմանի հայերի հայրենասիրական զգացումների վրայ, և ենթադրելով նրանք մեկ հետ կը ստիան ամէն գծուարութեան ու

ցաւի : Յետոյ միայն ասանք, որ հայրենասիրութիւնը որքան էլ անկեղծ լինի և ջերմ, նա մաշուած է ամենօրեայ նեղութիւնների և կարիքների դէմ, կամ երբ սեղմուած է փոքր սենեակների մէջ, և վերածուած է դժգոհութեան, անգամ դանդաղի և բողբոջի... : Ի հարկէ մենք էլ շենք կրկնի էդ սխալը : Մենք այժմ շինում ենք այնպիսի նոր բնակարաններ, թէ լայն, լուսաւոր, և թէ զեղեցիկ, և պատրաստում ենք յարմար գործեր ներդադրողների համար, որ նրանցից ոչ ոք էլ դժգոհելու պատճառ չի ունենայ :

Եւ այդպէս, ամբողջ տարիներ՝ դադութահայ հայրենաբաղձ բերաններ, կարօտի ու պաղատանքի սրտառու շեշտերով արձակեցին նոյն կոչը :

— Թո՛ղ բացուին Հայաստանի դուռերը, պէտք է բացուին հայրենիքին դարպասները : Եւ երբ բացուեցան անոնք՝ ամբարտապէս արձակուած հեղեղատի նման, տարազիր հայ բազմութիւններ, հազար ու բիւր հոգիներու յորձանքով խուժեցին ներդադրի կարուաններուն մէջ, և սղոցեցին դանոնք և մակընթաց կոհակներով շտեկան հայրենի սահմաններէն ներս : Եւ այսօր, 15 տարի ետք, երբ իրապաշտ, անտախապաշար ակնարկով կը գիտուի վիճակը և ստուել պայծառ ապագան այն 100,000 մարդոց, կիներուն և մանուկներուն, որոնք պանդխտութեան փերէն մեկնեցան Հայաստան 1947-8ին, և կը բաղդատուի սիրուքի հողմացրի հայութեան սպաննացող անստույգ, տողնապալի, յաճախ ճգնաժամային պայմաններուն հետ՝ միակ եզրակացութիւն մը կը բխի անկէ, — լա՛ւ էր, որ գացին : Արովհետեւ, հակառակ իրենց սպրած նախան տաժանքներուն՝ անոնք շահեցան հեռահաս բարիքը ապահով, հարազատ ու վերջնական կայքի մը, իրենց ներկայ ու դալիք սերունդներուն համար : Եւ որովհետեւ՝ անոնք մարդկային շինարար բազուկի ստեղծարար միտքի ու բազմապատկուող քանակի հակալակի նպատակով հարստացուցին հայ ժողովուրդն ու Հայաստանը :

Իսկ հիմա արդէն հիմնադէս տարբեր կը ծրագրուին և կը գործադրուին հայրենադարձի յաջորդ ձեռնարկները : Ամբողջ շարժումին մեկնակէտը յանդուգն առաջողութեան մըն է : — Ամէն ներդադրող ընտանիքի հայրթայթել աւելի հանգստաւէտ տուն ու յար-

մար աշխատանք եւ կեանքի լուսազոյն պայմաններ՝ քան անոր նախապէս ունեցածները. — որպէս զի ոչինչ փնտուռի ետեւ ձգուած փրձակներուն մէջ: Եւ ամէն շրջանի, միայն այնքան թիւով հայրենազարմներ պիտի ընդունուին, որքանի համար արդէն աւարտած են բաւարար արդիական բնակարաններ: Յատկանշական էր եւ որսառուչ, մասնաւոր տեսակցութեան մը ընթացքին՝ Հայաստանի վարչապետ Անտոն Քոչինեանի հաւաստումը:

— Նախորդ անգամ սիւսիներ պատահեցին մեր կամքից անկախ: Իսկ այս անգամ որեւէ թերացման համար պատասխանատու կը լինենք մենք...: Ինչք մեր միւս քաղաքները այցելելիս կը ականջ բազմալարի խոշոր ջէնքեր, յատկապէս կառուցուած ներդաղթողներէ համար: Ամէն մի հայրենազարմ բնտանիքի մէնք կը տանք արդէն պատրաստ մի բնակարանի բանալին, նրա անգամների թաւին բաւարար սենեակներով, եւ կ'ասենք. — ահա՛ սա ձեր սոււնն է, մտէք եւ հանդատացէք...:

Այս աշան՝ ներդաղթի կարուաններ Հայաստան պիտի ժամանեն կայրտակն, Եղիպտոսէն եւ Իրանէն: Բայց իբրեւ նախապայման՝ անհրաժեշտ պիտի ըլլայ, որ խորհրդային կառավարութեան եւ այլ երկիրներու իշխանութեանց միջեւ կայանայ որոշ համաձայնութիւն, որ թոյլատրէ հայոց զանգուածային մեկնումը, իրենց փոճառայի կաշուածներուն փոխարժէքով, կամ զանոնք վերածած անական կահոյքի եւ տարբեր կազմածներու, որոնց փոխադրութիւնը պիտի կատարուի ձրի եւ բարբոսի մտաւ մաքսային սուրբէ: Անոնց համար արդէն շինուէր են նոր թաղամասեր Կիրովականի, Հրազդանի, Լուսաւանի եւ ուրիշ քաղաքներու մէջ, ուր բնակարաններու զուգընթաց կը կառուցուին նաեւ նոր գործարաններ՝ չափահաս մարդոց ու կիներու զբաղում հայթայթելու, եւ զպրոցներ՝ մտնուէ ու պատանի երկսես աշակերտներու կրթութեան պահանջները հոգալու համար: Միւս աւանները հիմնուէր ու զարգացեր են 1947ի ներդաղթէն յետոյ միայն, անցեալ քանի մը տարիներու շրջանին:

Սակայն Կիրովականի մէջ՝ պերճախօս ու տպաւորիչ է հակադրութիւնը, որ կը զանազանէ նախորդ եւ ներկայ հայրենազարմ ձեռնարկները: Չորստեան տարատափի մը վրայ արդէն կը

բարձրանայ քիմիական նոր գործարանը, ուր աշխարհի մէջ առաջին անգամ ըլլալով՝ քարի աւելցուքներէն պիտի արտադրուի դոնապեղ, փափուկ ու տոկուն մետաքսի թել, հիւսուածեղէնի ճարտարաւեւոտին համար: Հոս պիտի գործեն մօտ վեց հազար հողի, որոնց մեծագոյն մասը ներդաղթողներ պիտի կազմեն, միջինէն բարձր սակի աշխատավարձով: Աւելի վեր, աջ կողմի հարթութեան վրայ կը կանդնին քառալարի հսկայ, գեղեցիկ ջէնքեր, վարդազոյն տուֆէ, 2, 3 եւ 4 սենեակներէ բաղկացած յարկարարփններով, իւրաքանչիւրին մէջ խոհանոց ու լուսարան-բաղնիք հասուն ջուրով: Անոնց առջեւ լայն փողոցներ՝ կ'ասֆալտուին եւ մայթեր կը ձգուին: Լեռնային դժաշուի բնակարանի հանդէպ՝ նորակառոյց թաղ մը, որ գրաւիչ պատկերի մը եւ հաճելի միջավայրի համադրուած վիպութեան եւ կենդանի հրաւերի մը նման կը կանդնի գեւ մինչեւ երէկ՝ խոպան, անհրապոյր հողին վրայ:

Իսկ անոր ձախ երկայնքին, դէմի բարձունքի կողերուն, գրեթէ իրարու կից շարուէր են միայնարկ փոքր տուններ, մէկ-երկու սենեակներով, քարաշէն եւ անձեփ, որոնց մէջ կը բնակին 1947-8ի ներդաղթած բնտանիքներ: Այն տանն՝ զանոնք շիներ են իրենց ընծայուած պետական վարկերով եւ տրամադրելի սահմանափակ նիւթերով, առանց ընդհանուր ծրագրի, նախասիրուած հոգաչերտի մը վրայ, իբրեւ փողոց ձգելով նեղ ու ծուռ ճամբաներ: Եւ հիմա անոնք պիտի սպասեն դալիք առիթին, որ իրենց մըսայլ, նախնական տնակները քանդուին եւ անոնց փոխարէն կառուցուին բազմալարի, գեղակերտ, լուսաւոր բնակարաններ, նըման այն նոր ջէնքերուն, որոնք կը յատկացուին նորեկ հայրենազարմներուն:

Բայց տակաւին, անհրաժեշտ է, որ ներդաղթողներ իրատես պատումով գնահատեն հայրենազարմին ազգային կենսական, բախտորոշ նշանակութիւնը եւ բմբունեն անոր մարդկային բնական, անխուսափելի դժուարութիւնները: Արովհետեւ որքան ալ անթերի ծրագրումով ու լիակատար պատրաստութեամբ գործարկուի ան, եւ ինչքան ալ հոգածու խնամքով ու ջերմ գործով ընդունուին ներդաղթող փիւռքահայեր՝ դեռ կարելի չէ կանխել ամէն նեղութիւն, հնարաւոր չէ բաւարարել ամէն կարիք:

Ընտանեկան փոխադրութիւն մը նոյնիսկ նոյն երկրն Ինչ քաղաքէն միւսը, բացի անոր պատճառած խոնջէնքէն ու տաղաւուկէն՝ կը խոնդարէ ենթականերու կեանքին բնականոն ընթացքը, մինչեւ որ անոնք ընտելանան իրենց նոր շրջապատին եւ վարժուին փոխուած միջավայրի ընկերային ու անտեսական պայմաններուն:

Եւ երբ, երեսուն կամ քառասուն տարի, թէկուզ օտար աշխարհի մը մէջ իբրեւ տարազիր ապրելէ, — անոր շարով ու բարիով համակուելէ, անոր խայթերն ու խայծերը ճաշակելէ ետք՝ այդ տեղափոխութիւնը կը կատարուի գէպի հարազատ բայց անձանօթ հայրենիքը՝ տարակոյս չկայ, թէ աւելի ուժգնօրէն կը յայտնուին անօրեայ կենցաղի ու բարքերու տարբերութիւններ: Ուրեմն առաւել զիտակից կորով ու համոզուած նուիրում պէտք է, հաղորդուելու եւ նոյնանալու համար նոր գոյավիճակի նիւթեղէն տարերքին եւ հոգեբանական մթնոլորտին հետ: Թերեւս շատ ներգաղթողներու համար բնական, արդար կը թուի անհետեւի մտայնութիւնն ու յոյսը, թէ իրենք պանդխտութեան երկար ու ցաւազին տարիներու ընթացքին՝ արդէն բուական աշխատեք են անողոք տաժանքով եւ կրէք են վայրազ հայրածանքի սարսափներ եւ տըռւաշտեք են կարիքի ու զրկանքի սեւ մզձաւանջէն. ուրեմն այլեւս կ'երթան Հայաստան՝ այդ գոյնով անցեալին հատուցումը ստանալու, — հանդիստ, հաճոյսի կեանք մը «վայելելու» համար: Այդ ակնկալութեան, նոյնիսկ պահանջին իրաւունքը չունին իրենց մայրենի երկիրէն, հարազատ Հայաստանէն:

Մինչ աւելի արամտրանական, աւելի աղնի արարք պիտի բլլար շրջիկ այդ ենթադրական մուրհակին պահանջաւէրի ու պարտապանի դերերը: Որովհետեւ, ներգաղթի կարաւանին միացած պանդուխտ հայր, միայն բոլոր մը ունեկողրելէ յետոյ հայոց ազգային վերածնունդի ու հարեւրքի վերականգնումի զիւցազնական մաքառման մէջ իր պարտքի թելադրանքին՝ պիտի մտածէր խոնարհ ու տրտում:

— Մեր մանուկ ու սրտանի տարիքէն մինչեւ հիմա՝ մենք չարաչարազէն, անարտունջ աքնջանք օտար աշխարհներու մէջ, հեք համակերպումով ապրեցանք նախախնիքի, թշուառութեան եւ հայրածանքի չուրին կամ խարազանին տակ, եւ օտար ազգերու համար

տուն ու զղեակ, եւ գործարան ու դպրոց շինեցինք, անոնց քարքարուտ դաշտերն ու արեւախանձ անապատները ծաղկեցուցինք ու բերքաւորեցինք, եւ անոնց մշակոյթներուն զիտութեան լոյսի եւ արուեստի գեղեցկութեան ահագին տուրքեր վճարեցինք: Բայց այդ բոլորէն՝ միայն ստուեր ու մոխիր կը մնայ մեր հարազատ ժողովուրդին ու հայրենիքին: Մինչդեռ անոնք, մայր երկրի մեր եզրայրներն ու քոյրերը, իրենց մասներուն արեւում, հոգիներուն տառապանքով եւ անօրեային տաժանքներով՝ Հայաստանը իր հարաբաւեայ գերութենէն, մահաչուք փուլուսմանէն եւ ազգային քայքայման գերեզմանէն՝ հրաշալի յարութեամբ մը Ֆիդիքական, սղեկան եւ խնայական շքեղ վերածնունդի մը բարձրացուցին: Եւ ի՞նչ ահօս որ անոնք փորեցին հայրենի հողին վրայ, ի՞նչ քար որ դրին նոր պատի մը, ի՞նչ մեքենայ որ բացին ելեկարական հոսանքին, եւ ի՞նչ առու որ ճեղքեցին ժայռերու մէջէն գէպի նոր ծիւթով բողբոջող այգիները, եւ ի՞նչ ճառագայթ որ բռնեցին արեւէն ու զիբքի փարսս՝ որ վառեցին մամուլի սեւ մեխանէն, եւ ի՞նչ պալատ որ կերտեցին ու երգ, մեղեդի ու համանուագ որ յօրինեցին՝ այդ բոլորը, հայոց ազգին վերակառուցման կենսարաշխ տարրերը, — սոկորն ու միտք, յօգերն ու մեղաները, սիրտն ու թոքերը, ոգին ու միտքը, ներկայի կամքն ու ապագայի տեսիլքը հայթայթեցին, մինչեւ երէկ՝ քառասուն տարի, եւ այսօր եւ մինչեւ յաւերժութիւն: Եւ ահա՛, մե՛նք ալ, որ օտար հայրենիքներու մէջ եւ անոնց համար, երբեմն մնացինք անտուն ու կիսաքաղց, երբեմն եղանք ճնշուած ու հայրածական, եւ առանց զանգատի, նոյնիսկ երախտիքի զպայտումով կրեցինք ամէնէն կամալական անիրաւութիւններն ու դաժան զրկանքները. — հիմա՛, մե՛նք ալ երջանիկ պատեհութիւնն ու փառքը կ'ունենանք աշխատելու եւ շինելու, ստեղծելու եւ ծաղկեցնելու, մաքառելու եւ զոհարելու, այս անգամ՝ մեր պապենական հայրենիքին, մեր նայիրեան երկրին, մեր Մայր Հայաստանին համար:

Ափիւսքահայ ներգաղթողը հայրենի աշխարհ չի մեկնիր միայն ստանալու, — միայն ապահով ու խաղաղ կեանք մը վարելու պահանջով, այլ նաեւ տալու, — իր ժողովուրդին հոգերն ու կարիքները, ճիգերն ու յոյսերը, ձգտումներն ու հրճուանքները

բամենյու յոժարութեամբ:

Անժխուէի, բացարձակ իրողութիւն է ուրեմն, որ հայրենազարծի ձեւնարկը, սիրուքի եւ մանաւանդ հայրենիքին համար՝ կը դառնայ համապարփակ արժէքով շարժում եւ հեռահաս տարողութեամբ նշանակէտ: Բայց իր ներկայ ընդգրկուած ծաւալով ան պիտի չկարենայ ոչ միայն բռնալ՝ այլ թեթևացնել անդամ ձուլման աղէտին դէմ գաղութահայ ազգային գոյամարտին յարածուն սաստկութիւնը: Որովհետեւ ծրագիրը կ'առաջագրէ ամէն տարի արտասահմանէն Հայաստան փոխադրել շուրջ 10,000 տարագիր հայեր, եւ յետագային, այդ գումարը հաւանաբար բարձրանայ տարեկան մինչեւ 20,000 անձի: Հասկնալի, բանաւոր է այս քանակային սահմանումը: Կառավարութեան որոշումով՝ միայն այնքան ներգաղթող ընտանիքներ պիտի ընդունուին ամէն եզանակի՝ որքանի համար հանդատուէա, բուարար տուններ շինուած պիտի ըլլան նախորդ ամիսներուն, եւ աւարտած մինչեւ անոնց ժամանումը:

Բազմաթիւ, գրաւիչ բնակարաններ կառուցանելու պետական արշաւը կը շարունակուի անդադար, համապարփակ ծաւալով եւ ազնուացիչ թափով, Հայաստանի բոլոր շրջաններուն մէջ: Մակայն հայոց երբեմնի արիւնաքամ ու ամալացող հայրենիքին բռնակցութիւնը, հիմա՛, ծնունդներու աճումով տարեկան կ'աւելնայ մօտ 100,000 հոգիով, որոնց համար նոյնքան կենսական է, որ յարմար ու գեղեցիկ շէնքեր կերտուին ու յատկացուին: Եւ տակաւին, բացի անային այդ բնիկ կարիքներու հսկայական պահանջէն՝ առաւել կը շեշտուի նոր բնակարանի պէտքը, իրրեւ հետեւանք «ներքին ներգաղթին», — որովհետեւ, միայն անցեալ երեք տարուան ընթացքին՝ Սորհրդային Միութեան տարրեր երկիրներէն աւելի քան 40,000 հայեր տեղափոխուած, հաստատուած են Հայաստանի մէջ: Բարերախտարար, հոն չկան «օտար» իշխանութիւններ, որոնց հետ անհրաժեշտ ըլլայ բանակցիլ ու սակարկել, որպէս զի բարեհաճին արտօնել հայ համայնքներու հայրենիք գարձը: Հոն, որեւէ հայ ընտանիք, երբ կրնայ բնակարան սպահովել Հայաստանի որեւէ մէկ քաղաքային կամ գիւղական խորհուրդէն՝ ազատորէն կը փոխադրուի իր պապենական երկիրը, հոգ չէ թէ ո՛ւր է իր

բնակավայրը, — Վլատիմիրով, Լենինկրատ կամ Մոսկուա, եւ Կիեւ, Կովկաս, Թիֆլիս կամ Պագու:

Ուրեմն, նոր տուններու այդ կրկնակի ու յարածուն պահանջը բուարարելուն համընթաց՝ եւ անոնցմէ դուրս, դեռ պէտք է կառուցուին ահադին քանակով բնակարաններ, սիրուքահայ ներգաղթի կարաւաններուն պատսպարան հայթայթելու համար: Այդ պատճառով է, որ ներկայ ծրագիրով կը նախատեսուի տարեկան շուրջ 10,000 հայրենազարծ ընդունիլ արտասահմանէն:

Եւ սակայն, երբ եւ եթէ, յաջորդ տարիներուն, կառուցող բազուկներու եւ շինանիւթերու առատացման շնորհիւ հնարաւոր դառնայ առաւել թիւով բնակարաններ կանգնել եւ մինչեւ 20-25 հազար տարագիրներ տանիլ ու տեղաւորել հայրենի ստաններուն մէջ ու հողերուն վրայ՝ դեռ այդ յաւելումով իսկ կարելի պիտի չըլլայ համիլ գաղութահայ հարցի հիմնական լուծումին: Որովհետեւ, սիրուքի հայոց համբանքը, մանաւանդ Մերձաւոր Արեւելքի մեր համայնքներուն բնական աճումին շնորհիւ, տարեկան կը բազմանայ մօտ 30—35,000 հոգիով: Եւ ծնունդով ժամանող ու հայրենազարծով մեկնող անձերու թիւերուն հարեանցի բազդատութիւն մը պիտի հաստատէ, թէ ներկայ պայմաններուն տակ՝ ընդգրկուած ներգաղթի լայնադոյն ծրագիրին լրիւ գործադրումով անգամ՝ արտասահմանի մէջ հայութեան գումարը ոչ միայն չի՛ նուազիր, այլ կ'աւելնայ նոյնիսկ:

Իսկ այդ իրողութիւնը աւելի կը ծանրացնէ, կը վտանգէ սիրուքահայ ազգային գոյատեւման պայքարը, — որովհետեւ կը սաստկացնէ անոր պահպանումին սպառնացող կրկնակ շարիքները: — Տնտեսապէս չբուր ու քաղաքականօրէն անապահով հոծ գաղութներէն արտագաղթող դէպի արեւմտեան կիսագունդի հետաւոր հորիզոնները, Քանսասայէն մինչեւ Արժանթին եւ Աւստրալիա, նեոտելով անդերազարծ կորուստի ճամբան: Իսկ եթէ մնան իրենց վայրերուն մէջ՝ եւ բազմանան քանակով, բարդաւաճին նիւթապէս եւ զօրանան ազնուութեամբ ու դիրքերով՝ անոնք կը դիմադրուեն որեւէ ազգայնամոլ կամ յետաշրջական իշխանութեան կողմէ՝ հաւաքական ճնշում ու հարձանք, կալուածային բռնադրուում եւ կրթական ու մշակութային կաշիւնդումներ, ուղղուած՝ անոնց

աղղային յատկանիչները մաշկեցնելու եւ ինքնութիւնը հալեցնելու նպատակին :

Գաղութահայ դժխեմ, մթին ճակատապրին վախճանը միայն աւելի արմատական դարձանի մը լծակով կարելի է շրջել : Որովհետեւ՝ ձուլուելով անհետանալու վիճակուած հայերու լեզէոնները կորուստի յորձանուէն փրկելու միակ երաշխիքը՝ զանոնք հայրենադարձի ազատարար լստներուն բնօրինակն է : Բայց որպէս զի հնարաւոր բլլայ ընդունիլ ու տեղաւորել յաւելուալ բազմութիւններ՝ էական պայման է ունենալ բաւարար դեպքն ու դաշա, անոնց բնակավայր եւ ապրուստի աղբիւր հայթայթելու համար : Իսկ Հայաստան, իր սլատմական եւ իրաւական սահմաններով ընդարձակ, արգաւանդ ու հարուստ՝ ներկայ խորհրդային հայկական ծիրէն ներս մնացեր է անդամահատ եւ անձուկ, մանաւանդ լեռնային :

Այլապէս՝ տարակոյս չկայ երբեք, որ եթէ բարեբախտ դիպուածը միջամտէ եւ Մոսկուայի ու Անքարայի միջեւ կայացած համաձայնութեան մը իբրեւ արգիւնք, Հայաստանի վերադարձը աին արեւմտահայ վաւերական հողամասեր, Կարս-Արարատ ճակատի լայնքով մինչեւ Վան՝ արտասահմանի հայոց մէջ տարեբային խոսովքի ու խելայեղ ցնծութեան սրտաշարժ, աներեւակայելի վիճակ մը պիտի փոթորկի : Եւ աւելի անհաւատալի՛ն, աշխարհի բոլոր ցամաքներէն ու անյայտ խորշերէն, հարիւր հազարաւոր պանդուխտ հայեր, խումբ ու կարաւան կազմած, պիտի քալեն, պիտի յողան, պիտի թռչին գէպի այդ աւերուած ու ամայի, բայց անցեալ սերունդներու արիւնով ու երազներով եւ մարտնչումներով ու յողմանակներով նուիրազործուած, կախարդական վայրերը : Եւ հոն հիւզ ու անակ պիտի շինեն իրենց ձեռքերով ու քրտինքով, եւ հետզհետէ, եւ անձնուրաց խանդով ու յաւերժական տարփանքով՝ խոսքան մացառուտները պիտի վերածեն դաշար արօտի ու մրգատաւ ծառատանի, եպիտղանին կործանած նախկին շէնքերու փլատակներուն ու մոխիրին վրայ պիտի կանդնեն նոր ու փաստաւոր աւաններ, եւ շղթայի ու բարբոտի գարշութիւնը պիտի սրբեն ազատութեան նշգրակով ու արուեստին գեղեցիկութեամբ :

Եւ պիտի չտրանջան որեւէ կարիքի ու դժուարութեան դէմ, եւ պիտի չդառնանան որեւէ ցաւի ու տաժանքի հանդէպ :

Բայց միջազգային թշնամանքը կ'ուշացնէ այդ արդար հատուցման պահը, եւ մշտարժարձ հակամարտութեանց պատուարը դեռ կը խափանէ անոր ժամանումին ճամբան : Որովհետեւ անոր հաշուեյարդարը կախուած չէ միայն Խորհրդային Միութեան կամքէն ու բարեացակամ յօժարութենէն, — այլ նաեւ Արեւմուտքի հաւանութենէն կամ Թուրքիոյ մակարոյժ ախորժակը այլապէս որդեկու կարելիութենէն : Սակայն կայ եւ ներքին լուծում մը որ կրնայ հայրենադարձի դարպասները լայնօրէն բանալ դաղթական հայ զանդուածներու առջեւ : Եւ ատիկա՝ Ղարաբաղի եւ Նախիջևանի ինքնավար շրջաններուն ներմուծումն է Հայաստանի պետական սահմաններէն ներս, — խորհրդային մտայնութեամբ ու չափանիչով՝ վարչային աննշան կապի թերեւս ձեւական, անիմաստ փոխանցում մը, — քանի որ նոյն մարզերուն մէջ ապրող հայութիւնը ա'յնքան լիապէս ազատ է պահելու եւ զարգացնելու իր ազգային ինքնութիւնը, լեզուն, աւանդութիւններն ու մշակոյթը, որքան Հայաստանի մէջ :

Մինչ տարագիր արեւմտահայութեան համար այդ միացումը վճռական նշանակութիւն եւ բախտորոշ արժէք ունի, — որովհետեւ անոնց վերադարձով՝ հնարաւոր պիտի բլլայ հսկայ, բարերար ծաւալով ընդլայնել ներգաղթի կարաւաններուն քանակը, եւ որովհետեւ՝ այլապէս սփիւռքի հայեր պիտի չերթան եւ պիտի չհաստատուին որեւէ հողամասի վրայ, եթէ ան պետական, ազգային եւ աշխարհագրական սահմանումով՝ անբաժան մասը դարձած շրջայ Հայաստանին : Եւ այդ վարչական սրբազրուժը, բարեբախտարար ամբողջապէս կախուած է Խորհրդային Միութեան եւ Ազրպէյճանի եղբայրական հանրապետութեան կամքէն ու հասցութենէն :

Հասկնալի է, որ Պարու դիւրազգած բլլայ եւ երեւան՝ փափկանկատ, սահմանային նման խողիք մը յարուցանելու համար, երբ բոլորովին դեռ չեն մոռցուած հին դաւնութիւնները : Իսկ Մոսկուա կը խուսափի դրացի ժողովուրդներու միջեւ նախկին վէճեր արձարձուած տեսնելու անախորժ կացութենէն, որ հարկադրէ

իրեն միջամտելու ի նպաստ կողմերէն մնկուն: Հասկնալի է, եթէ նոյնիսկ առարկուի, թէ անիկա ներքին հարց մըն է, որ կը կարգադրուի յարմարագոյն առիթով, խորհրդային սահմանադրութեան նախագծած հանրաքուէի ուղիով, եւ անհրաժեշտ չէ որ արտասահմանը մտահոգուի այդ խնդիրով:

Մակայն անվիճելի փաստ է նաեւ, որ հայկական սփիւռքի դաժան, յուսահատ գոյամարտի վախճանին բնոյթը սերտօրէն կապուած է Հայաստանի համար հողային որեւէ իրաւունքի հատուցման հետ: Որովհետեւ, գաղութահայ հանրային գործիչներ ու մտաւորական առաջնորդներ դիտե՛ն վտահօրէն, եղբրական ստուգութեամբ, թէ ուժացման մանկաղբ այնքան անողոք է իր մահացու ճոճումին մէջ՝ որքան արիւնարբու էր ետիպաղանին եղեոնական սպանդը:

Եւ անոնք կը նմանին օրհասական, մշտտեւ ճակատամարտի մը դատապարտուած զօրականներու, որոնք ամէն առաւօտ կ'իջնեն սպիտակ ասպարէզ՝ անվհատ կորովով զբայց ցաւազին սարսափով մը, թէ իրենց բանակէն քանի՜ զոհեր պիտի խլէ ոսոխը մինչեւ երեկոյ: Եւ ամէն դիշեր կը մարեն իրենց սնարներուն լոյսերը սղալով, տանջուելով ողբերգական կորուստին համար ձուլումի եւ ապաստան խրամներուն մէջ անդարձ ինկած նահատակներուն:

Այդպէս. գաղութահայ զեկամարներ հանապաղ կ'սպրին իրեն կոչումին ու պարտքին կոտորացող առաջատանքով, — զարհուրելի եղևունէն վերապրած արեւմտահայ ժողովուրդին հողմացրիւ, դանդաղ, անարիւն՝ բայց ստոյգ ոչնչացման ահռելի մղձաւանջին տակ: Եւ այն իրողութեամբ՝ որ Ղարաբաղի եւ Նախիջևանի վերադարձով Հայաստանի, կարելի կ'ըլլայ բազմապատիկ ընդլայնել ներդադթի ձեռնարկը, ուրեմն բիրաւոր աւելի հայեր փրկել ըսփիւռքի մէջ այլասերման սպիտակ կոտորածէն՝ այդ հողային հատուցումը խորապէս կը շահագրգռէ արտասահմանի բովանդակ հայութիւնը: Եւ Մոսկուայի ու Պաքուի համար, երբ ճանչնան ըսփիւռքահայ ճգնաժամին ծաւալը եւ ողբերգութեան խորքը՝ դժուար պիտի չըլլայ հասկնալ անոնց տաղնապումն ու ակնկալութիւնը, թերեւս դժուար պիտի չըլլայ նոյնիսկ բարեացակամ համակրաբով ընդառաջել անոր:



Ամէն երկրի տնտեսական եւ ընկերային պայմաններուն, ամէն ժողովուրդի բմբունումներուն ու կենցաղին մէջ՝ մնայուն կամ վաղանցիկ հակասութիւններ կը յայտնուին, երբեմն իրենց բնոյթն ու տարողութիւնը փոխելով ժամանակին հետ: Հայաստանի մէջ եւս, գաղութահայ այցելուն ինքզինք պիտի գտնէ, երջանիկ ու հպարտ դարձանքով, արտակարգ հակադրութեան մը հանդէպ: Որովհետեւ հոն պիտի հաստատէ բնակչութեան ստօրեան կազմող երկու գուղահեռ երեւոյթներ. —

Մէկը՝ այն իրողութիւնը, որ անոր սպրուստի մակարդակը եւ նիւթեղէն ստացուածքի ու արժէքներու չափանիշը բարձրացեր է համաշխարհային միջինէն բաւական վեր: Հոն կեանքը աւելի բարեկեցիկ ու հաճելի դարձեր է սնունդի, բնակարանի եւ հագուստի ընդհանրութիւն մատչելի քանակով ու որակով՝ քան Հարաւային Ամերիկայի, Մերձատր Աւերելքի, Ափրիկէի եւ Ասիոյ հին կամ նորագատ երկիրներուն մէջ: Բայց կենցաղային սպրանքներու եւ այլադան պիտոյքներու առատութեան ու փարթամութեան տեսակէտէն՝ ան տակաւին քանի մը տասնեակ տարիներու անջրպետով ետ կը մնայ Եւրոպայի, մանաւանդ Միացեալ Նահանգներու շուկաներուն ճոխութենէն: Եւ ինչպէս Խորհրդային Միութեան՝ նոյն պէս Հայաստանի մէջ, պաշտօնապէս ընդունուած ու հռչակուած նշանակէտ է, — 1980ին հաւասարել ամերիկեան ժողովուրդի նիւթապէս հարուստ մակարդակին:

Բայց միւս երեւոյթը, իբրեւ հակադրութիւն իրագործուած տնտեսական միջինին՝ կրթական, մշակութային ու գիտական ասպարէզներուն մէջ կատարուած արտասովոր նուաճումներն են, որոնք զերազոյն կատարներու հասեր են նոյնիսկ միջազգային չափանիշով: Այդ հոյակապ վերելքին խարխուր եւ անուցիշ ազդիւրը կը հանդիսանայ այն բացառիկ եղելութիւնը, որ Հաստտանի մէջ անդրազիտութիւնը սրբուեր է ամբողջապէս, եւ շնորհիւ ձրի ու

պարտադիր դաստիարակութեան օրէնքին՝ ամէն անձ սորվեր է գրել ու կարդալ: Երկիրը ծածկուած է 1220 նախնական, միջնակարգ ու բարձրագոյն վարժարաններու համապարփակ ցանցով, որոնց մէջ 320,000 երկսեռ աշակերտներ կ'ուսանին, 20,950 կին եւ այլ ուսուցիչներու հովանիին տակ:

Ընդգրկուած է նաեւ պետական գիշերօթիկ դպրոցներու դրութիւնը եւ արդէն բացուած են 13 նման հաստատութիւններ, ուր աղայ կամ այջիկ ուսանողներ կը ստանան կրթութիւն, սնունդ ու բնակավայր, եւ Կիրակի օրերը կ'արձակուին, իրենց տուները երթալու: Կան նոյնպէս քանի մը տասնեակ արհեստագիտական եւ մասնագիտական վարժարաններ: Քառայարկ ընդարձակ ու գեղապետական շէնքեր են դպրոցները, լուսաւոր խոշոր դասարաններով: Անոնք օժտուած են ընթերցարանով, ուր գիրքերու եւ թերթերու ձոխ հաւաքածոներ կան, եւ դիտական ու արհեստներու աշխատանոցներով, որոնք սարքաւորուած են ամէնէն արդիական մեքենաներով, երկտրական կազմածներով ու ճշգրտաչափ դորժիքներով:

Իսկ Երեւանի համալսարանը դարձեր է դիտութեան ծաւարման լուսավառ փարոս, մշակոյթի կենսաւորման բերքառատ անդատան, — որուն վարկին ու վաստակին հաշակը տարածուեր է Հայաստանի սահմաններէն դուրս: Անոր բազմաթիւ շէնքերուն ու բաժանմունքներուն մէջ՝ շուրջ հինգ հազար երկսեռ ուսանողներ կը հետեւին տիանաւոր գիտական, Հայագէտ, բժիշկ, ճարտարագէտ, պատմարան, լեզուագէտ, բանասէր, մանկավարժ, գրագէտ, խմաստասէր եւ արուեստագէտ դասախօսներու աւանդած ընթացքներուն, իրենց նախընտրած որեւէ մէկ սապարէզին մէջ՝ մինչեւ բարձրագոյն հանգրուան մագլցելու լուսագոյն երաշխիքով: Համալսարանը արդէն երկրին պարգեւեր է 12,000 շրջանաւարտ մասնագէտներ, որոնք ծրագրեր ու ղեկավարեր են Հայաստանի հիմնական վերականգնումը՝ ճարարարուեստի, կառուցման, գիւղատնտեսութեան, քիմիական ու հանքային արտադրութեան, ինչպէս պատմա-բանասիրական եւ արուեստներու մարզերուն մէջ: Անոնց շարքին տասնեակ մը դիտնականներ համաշխարհային համբաւ ու փառք վաստկեր են արդէն, մթնոլորտին, ճառագայթներու եւ

աստղերու մասին նշանակելի գիտերով:

Ժողովուրդին, մանաւանդ նորահաս սերունդին առողջութեան պահպանումը էական պայման մը կը դաւանուի մշակութային վերածնունդի ոգեկան ու իմացական երկունքին եւ ազգային պարագման յարատեւ ճիգերուն ու պայքարներուն մէջ, անոնց առաւել արդիւնաւորումը ապահովելու համար: Եւ եթէ 1960ի տարեշջանին, պետական պիւտճէին մեծագոյն մէկ հատուածը, — 922,000,000 ուրլին յատկացուեր է կրթութեան, նոյն միջոցին 365,000,000 ուրլի ծախսուեր է հանրային առողջապահութեան համար: Հայաստանի բնակչութեան ծառայելու դերով հիմա կը պահուին երեսուն առողջարաններ եւ հանգստեան տուներ, լեռնային եւ հանքային ջուրերու գոտիներուն մէջ:

Քառասուն եւ հինգ տարի առաջ, ամբողջ երկիրը ունէր միայն վեց հիւանդանոց, նախնական վիճակի կազմածներով: Հիմա կառուցուած են 256 հիւանդանոցներ, նորագոյն սարքաւորումով եւ 12,245 մահճակալներով: Այն առեւն՝ գիւղերու եւ աւաններու մէջ կային միայն 16 բուժական կեդրոններ, իսկ այժմ՝ 380 հատ: Եւ մինչ 45 տարի առաջ միայն 57 բժիշկներ կը գտնուէին՝ այսօր արդէն 4200 բժիշկներ կը ծառայեն Հայաստանի մէջ, որակի ու քանակի գերազանց չափանիշ մը հաստատելով: Որովհետեւ, մինչ Երանի մէջ ամէն 9000 անձի կ'իյնայ միայն մէկ բժիշկ, Թուրքիոյ մէջ՝ ամէն 3500 հոգիի, Անգլիոյ մէջ՝ ամէն 1200 շունչի եւ Ամերիկայի մէջ՝ ամէն 770 հոգիի կ'իյնայ մէկ բժիշկ, Հայաստան ամէն 427 անձի համար ունի մէկ տրամադրելի բժիշկ:

Առողջապահական այդ արշաւը լայն թափով կը հետադընդուի մանաւանդ պատանի եւ երիտասարդ սերունդներուն համար, զանոնք բացօթեայ խողերու եւ մարզական մրցումներու կապելու նողատակով: Երկրին 12 բնագրածակ մարզապաշտերը եւ շուրջ 3000 զանազան շափի ու տեսակի մարզական խողերու հրապարակներ, դաշտեր ու դահլիճներ, ինչպէս նաեւ լողալու աւազաններ՝ միջոցներն են առողջ մարմիններ կերտելու կազմակերպուած աշխատանքին:

Լուսաւորութեան ու մշակոյթի այդ տենդագին ձգտումը եւ գիտութեան ու արուեստի այդ առհասակաւ ճարաւը կը սնանին եւ

մարմին, ոչի ու զեղեցիութիւն կը քաղեն տարրեր ազբիւրներէ, ալլազան ահօսներէ: Ալլազէս, ոչ միայն աւաններն ու քաղաքները, ալլ նաեւ Հայաստանի ամէնէն խոնարհ գիւղերն անգամ ունին ահամբ կամ մշակութային սուն, որոնց ընդհանուր թիւը 1210էն աւելի է, եւ որոնք հասարակութեան մէջ կը զարգացնեն հակումն ու ճաշակը գիրքերուն ու թերթերուն, երգին ու նուազին, մտաւորական գրոյցին ու գրօսանքին: Անոնց գերին զեղարուեստական մտքերը կը լեցնեն 15 թատրոններ, բացի շրջիկ թատերախումբերու բեմադրած ներկայացումներէն, եւ 495 շարժանկարի սրահներ: Եւ տակաւին՝ 240 ձայնասփիւռի (ռատիօ) կայաններ, 148, 000 ընդունիչներով, նաեւ 140,000 ռատիօկէտերով, եւ մօտ 40, 000 հեռուստացոյցներով (թելեվիժըն), որոնք ոչ մէկ առեւտրական ծանուցում կը հաղորդեն, եւ նուիրուած են զեղարուեստական յայտագիրներու, դաստիարակիչ գրոյցներու եւ սոօրեայ քաղաքական լուրերու սփռումին, որոնց կը խոսնուի, բնականօրէն՝ նաեւ քարոզչութիւնը (փրօփականտ):

Ինչպէս ամէն ուրիշ երկրի, նոյնպէս Հայաստանի մէջ՝ մամուլը կը հանդիսանայ վճռական գործօն մը բոլոր այդ շարժումներուն, ձեռնարկներուն եւ նուաճումներուն մէջ, որովհետեւ զաղափարական խորք, ստեղծելու ներշնչում, եւ աշխատանքի ուղեցոյց ու նշանակէտ կը հայթայթէ անոնց: Ան ուժգնօրէն կը հերքէ նաեւ, գիրքերու տպուկացոյցիչ սպառումին հետ, — այն վիրաւորական վերազրուամբ՝ թէ հայ ժողովուրդը չի սիրեր կարգալ: Որովհետեւ, մինչ 45 տարի առաջ հանրութեան անդրազէտ, անտարբեր ու թշուառ դաշտի ճակին իրբեւ հետեւանք, Հայաստանի մէջ կը հրատարակուէին միայն երկու ամսադիր եւ վեց լրաթերթ՝ այն եւս ինդճուկ տպագրանակով՝ այսօր արդէն լոյս կը տեսնեն 63 ամսաթերթեր եւ 87 լրագիրներ, որոնք կը տպագրուին ամէն շրջանի ու քաղաքի մէջ: Մայր ոստանը, Երեւան, ունի երեք հայերէն օրաթերթեր, որոնցմէ «Սովետական Հայաստան»ը կը հրատարակուի օրական շուրջ 115,000 օրինակ, որոնք կը սպառին քանի մը ժամէն: Կը խմբադրուին տարբեր ամսադիրներ՝ նուիրուած առաջնայէս գրականութեան, կամ արուեստներու, կամ հասարակական ու մշակութային, կամ պատմաբանասիրական նիւթերու,

կամ կանանց գործունէութեան, կամ ճարտարարուեստի ու գիւղատնտեսական խնդիրներու, կամ երգիծանքի եւ մարզական, եւ հարուստ բովանդակութեամբ ու առատօրէն պատկերազարդ:

Իմացական լոյսի, ձեւերու զեղեցիութեան ու կենդանի խորքի այդ տենչը եւ մտաւոր ժամանցի ծարաւը զերազանց թափով կ'արտայայտուին մանաւանդ գիրքերու եւ գրականութեան արտասուօր, անհաւատալի ծաւալումով: Անյաղ ընթերցող զարճեր է Հայաստանի բնակչութիւնը: Եւ այդ ընթերցասիրութիւնը տակաւ աւելի խտապահանջ կ'ըլլայ զեղարուեստական արժէքներու իր գնահատումին մէջ: Անկախ գրական որակի մակարդակը ազնուացնելու յարատեւ ճիգերէն՝ ուղղակի առտապելական կը թուի անոր քանակային աճումը: Ալլազէս, քառասուն տարի առաջ՝ ամբողջ երկրին մէջ կար միայն 13 գրադարան, համեառ չափանիւշով: Մինչ այսօր, Հայաստան ծածկուած է 2653 գրադարաններու համապարփակ ցանցով մը, աւելի քան 17,000,000 հատօրներով, որոնք կը կշտացնեն ժողովուրդին ընթերցանութեան քաղցը, եւ նոյն առնէն կը խորացնեն, կ'արծարծեն դայն:

Եւ զարգացող այդ հանրային ձգտումը յազնցնելու ծանր պարտաւորութեան կոշուած է Պետհրատը: Յարաճուն ծաւալով կ'ընդլայնուի անոր լոյս ընծայած գիրքերուն թիւը եւ տպագրանակը, բայց տակաւին, ամէն հրատարակուած գրական հատոր, վաճառման հանուելէն մէկ—երկու շաբաթ յետոյ սպառած՝ կ'անհետանայ գրախանութիւններէն: Քառասուն տարի առաջ՝ Հայաստանի մէջ հազիւ քանի մը տասնեակ գիրքեր կը տպուէին տարեկան, իւրաքանչիւրը մէկ—երկու հազար օրինակով: Իսկ միայն 1960ին, Պետհրատը տպագրեր է 1247 անուն տարբեր հատորներ, 7 միլիոն ընդհանուր տպագրանակով: Արեւելահայ թէ արեւմտահայ հեղինակներու վիպական երկերը կը վերահրատարակուին պարբերաբար՝ 15, 20 կամ 25 հազար օրինակով եւ կը գնուին նոյնքան արագօրէն: 1961ին Պետհրատը հրատարակ հանեց երկուստարգ գրող Սերօ Խանդատեանի ստուար պատմավէպը, «Միտքաբ Սպարապետ», 842 էջերէ բաղկացած եւ 40,000 օրինակով: Բայց հակառակ անոր վիպային կառուցուածքի յայտնի թերիւններուն՝ սպառեցան անմիջապէս եւ ծրագրուած է դայն յանձնել երկրորդ տպա-

զրուիթեան, — որ նաև կը թարգմանուի սուսերէնի: Արտասահմանի մէջ, որեւէ հայ լիպասան, եթէ հրաշքի մը միջնորդութեամբ յաջողէր այդպիսի հսկայ վէպի մը տպագրական ծախքը գոյացնել եւ անկէ հազար օրինակ հրատարակել՝ անոր մէկ-երկու հարիւր հատը նուէր պիտի բաշխէր, երկու-երեք հարիւր զիրք պիտի կըրնար ծախել թերեւս, եւ մնացեալ հինգ հարիւր օրինակները պիտի զիպէր միթին անկիւն մը, իբրև բնու պատիժ, որմէն խիղճը թոյլ չի տար ձերբարդատուիլ, վառելով կամ թափելով:

Իսկ հայերէն (նաև օտար) զիրքերու ամէնէն հսկայ ու հոյակապ կեդրոնացումը՝ Երևանի մէջ, Արեքսանդր Միտանիկեանի անունով կոչուող պետական գրադարանին պարփակածն է, — աշխարհի մեծագոյններէն մէկը, 4, 800,000 հատորներով: Ահագին շէնք մը, որուն բոլոր յարկերուն սենեակները, սրահները, նոյնիսկ միջանցքները պատուած են մինչև ձեղուն հասնող դարձնեբով, որոնց երկայնքին սեղմօրէն շարուած են զիրքերը: Ապակեպատ ընթերցասրահին սեղանները դրաւուած կ'ըլլան միշտ եւ օրական շուրջ հազար հոգի կ'այցելեն հոն, կարդալու կամ ուսումնասիրութեան համար: Գրադարանին մէջ կը գործեն 210 հոգի, հսկիչներէն մինչև տնօրէնը: Հաստատութիւնը կ'ընդգրկէ միայն տպագրական մարզը, — սկսելով 1512 թուականին մամուլէ լոյս տեսած առաջին հայերէն հատորէն մինչև մեր ժամանակը, եւ պարփակելով բոլոր տեսակները, — զիրք, պրակ, հանդէս, ամսաթերթ, լրագիր, շաբաթաթերթ, եռամսեայ, կիսամսեայ, — որեւէ տպագրուած գործ հայերէն լեզուով:

Գրադարանին գեկալօր մարմինը իրեն վստահուած պաշտօնը կը վարէ ազնիւ ծառայութեան մը, վսեմ առաքելութեան մը նախանձայն խանդով ու սրտաուշ նուիրումով: Եւ այդքան բացառօրէն հոյակապ է անոր հետապնդած նպատակը, այնքան շքեղօրէն գմայլելի է անոր հետապնդած նշանակէտը: — Հետախոյզ աշխատանքով, եւանդագին որոնումով՝ հետզհետէ հաւաքել, ամբողջացնել իր գարաններուն վրայ, հայկական տպագրուած գիրքին ու գիրքին բովանդակ վաստակը, աշխարհի բոլոր անկիւններէն, բոլոր տեսակներէն, բոլոր հեղինակներէն, իւրաքանչիւր երկի տարբեր վայրերու եւ թուականներու բոլոր տպագրութիւններէն,

երկու անջատ բաժիններու համար: Առաջինը՝ մայր հաւաքածոն, — ամէն հատորէ, հանդէսէ, պրակէ եւ թերթերէ մէկական օրինակ, իբրև նմոյշ եւ անձեռնմխելի, խնամքով պաշտպանուած եւ գործով փոյխալուած՝ յաւերժութեան համար, որպէս հայ ժողովուրդի ապագին մշակոյթին, անոր ճշմարտախոյզ միտքին ու գեղապաշտ ոգիին, անոր ստեղծագործ ճիգերուն ու հանճարին հոյակերտած ժառանգութիւնը, իբրև անփոխարինելի գտն՝ կտակուելու յաջորդ սերունդներուն ու գալիք դարերուն:

Միւսը՝ հանրային ընթերցանութեան յաւկացուած բաժանմունքն է, ուր կը հաւաքուին նոյն տպագիր երկերուն կրկնակ եւ աւելի օրինակները, որոնք կը տրամադրուին կարգալ, սորվիլ, ուսումնասիրել ցանկացող հասարակութեան, իր ընթերցասրահներուն մէջ: Պետական գրադարանի արտակարգօրէն ճոխ ու բազմաճիւղ հաւաքածոներուն մէջ սակայն՝ դեռ կը պակսին հազարաւոր հայերէն զիրքեր, որոնց մեծագոյն մասը կը կազմեն արեւմտահայ, մանաւանդ գաղութահայ հին ու նոր հրատարակութիւններ: Եւ անհրաժեշտ է ու հնարաւոր, յարատեւ ճիգերով դարձանել այդ պակասը: — Թո՛ղ ամէն սիւլոքահայ զբաղէտ, խմբագիր, թարգմանիչ, տպարան ու հրատարակիչ՝ իրեն գերագոյն պարտք ու պատուաւոր կոչում համարէ, իր առաքումներու ցանկին դրութիւնը արձանագրել անունը Հայաստանի Պետական Գրադարանին, եւ անցեալ քառասուն տարիներու շրջանին ի՛նչ զիրք, պրակ, հանդէս ու թերթ ո՛ր լոյս ընծայած է, — առանց բացառելու դատական կամ ժամանակակից որեւէ գրագէտի մէկ մեծ կամ փոքր երկին լրիւ կամ մասնակի նոր տպագրութիւնը, — նաև հետազային հրատարակելի բոլոր գործերէն՝ չորսական օրինակ զրկէ անոր վարչութեան(*):

(*) Ծրարները հասցեագրել՝

Bedagan Krataran, 72 Terian Poghotz
Erevan, Armenia, U. S. S. R.

Այս կենսական ձեռնարկին կրնայ արժէքաւոր նպաստ րն-
 ծայել որեւէ անհատ կամ մարմին, որ հայերէն գիրքեր կամ թեր-
 թերու հաւաքածոներ ունի եւ կը փափաքի զանոնք նուիրել կրթա-
 կան եւ մշակութային կեդրոնի մը, անոնցմէ առաւելագոյն լոյսն
 ու բարիքը սփռելու համար: Բաւական է միայն նամակով մը Խ-
 բնոց հատորներուն ցուցակը հաղորդել Երեւանի գրադարանի տը-
 նօրէնին եւ հարցնել, թէ անոր վրայէն ինչ գիրքեր շունին եւ կը
 փափաքին ստանալ եւ յետոյ հոն զրկել միայն այդ ուզուածները:
 Տարակոյս չկայ, թէ այս զուգահեռ ջանքերով՝ կարելի կ'ըլլայ
 թանկագին օգնութիւն պարգեւել, որ շատ աւելի ճոխանայ, աւելի
 լիակատար դառնայ Հայաստանի Պետական Գրադարանին կուտա-
 կամ գերագոյն, յաւերժական հարստութիւնը:

Իր ճարտարագիտական կառույցով և բովանդակած մատենա-
 ներուն բացառիկ նկարագրով ու անկրկնելի արժէքով՝ աւելի ար-
 տակարգ երեւոյթ մըն է Մատենադարանը, իբրև թանձրացած,
 կենդանի վկայութիւնը անցեալ հազարամեակներու հայ իմացա-
 կան հանճարին ու ոգեկան խոյանքներուն, — իրենց իմաստով ու
 շքեղութեամբ՝ քանդակուած մագաղաթներու վրայ եւ գրչանկար-
 ուած պերճահիւս գիծերու, ծիրանաղեղ երանդներու եւ վաւժ խոր-
 հուրդներու կախարդական ընդելուզումին մէջ: Երեւանի գլխամա-
 սի բլուրներու ստորոտին՝ անոր հոյակերտ շէնքը կը կանգնի հնօր-
 եայ մեհեան-տաճարի մը խորհրդաշուք փառքով: Ծակատի բարձ-
 րածիզ քառանկիւն սիւներու ոտքերուն՝ վեց պատուանդաններ,
 որոնց վրայ պիտի կոթողուին սակեղարու հայ մեծագոյն մատենա-
 գիրներու մարմարէ խոշոր արձանները: Մինչ կեդրոնին, չորս աս-
 տիճանով դէպի ներս ընկրկող գեղաքանդակ կամարին տակէն կը
 բացուի լայն դուռը: Անկէ ներս՝ բոլորակ ողորկ սիւներու խաչաձև
 քառանկիւն կամարներու նրբարուեստ խոյակներու և քանդակներու
 սքանչելի համադրութիւն մը, որ վեհաշուք գաւթին մէջէն կը
 սարածուի եւ եզերելով սանդուխներն ու որմերը՝ կը բարձրանայ
 վերի յարկը եւ միջանցքներէն կը սփռուի դէպի դարանապատ սեն-
 եակներն ու ցուցադրութեան սրահները:

Այս ամբակուռ, քանդակազարդ պատերէն ներս, եւ ապա-
 կեպատ փեղկերու տակ՝ զիտական խնամքով ու խանդակաթ սի-

բով կը պահպանուին, կը հոգացուին, կը փառաւորուին 11,000
 հայերէն ձեռագիր մատենաները, — յօրինուած կամ ընդօրինակ-
 ուած հնագոյն դարերէն մինչև 1512 թուականը, երբ ապագրիչ
 մամուլն ու թուղթը յաջորդեցին գրիչին ու մագաղաթին:

Ճարտարապետը, սաղանդի ու տեսիլքի վճիտ ժայթքումով,
 շէնքին Փիղիքական կառուցուածքը պարուրել է ոգեղէն մթնոլոր-
 տով մը, որ սրտառուչ, հարազատ ներդաշնակութեամբ կը միա-
 տրէ կեղեւն ու միջուկը, հանդերձն ու մարմինը, — պատերը եւ
 անոնց պարունակած գրչագիրները: Ձեւի գեղեցկութեան, իմաս-
 տի վեհութեան եւ արժէքի փառքին այ դղաշնաւոր ամբողջութեան
 հանդէպ՝ այցելուն կը համակուի երկիւղած զմայլանքով ու երախ-
 տագէտ յուզումով և կարծես ծունկերը կը փլին ղիւնք խոնարհելու,
 ծնրադրելու մղելով տուֆէ ու մարմարէ այդ հրաշակերտ կառոյ-
 ցին, անոր խորհրդանշած գազափարի ու երազի շքեղութեան, անոր
 պարփակած մագաղաթէ անհուն, անփոխարինելի ժառանգութեան
 առջև:

Հայաստանի Պետական Մատենադարանը դարձել է այլսար-
 չի մեծագոյն գրադարաններէն մէկը ձեռագիր հազուադիւտ հա-
 տորներու, մագաղաթէ անգին նշխարներու: Ան նաև գիտա-հե-
 տադատական ուսումնասիրութեանց յայտնի կեդրոնի մը վերած-
 ուել է, ուր բազմաթիւ օտար երկիրներէ պատմութեան, գրչա-
 գիրներու եւ մանրանկարչական արուեստի հետախոյցներ ու գիտ-
 նականներ կ'այցելեն, անոր արտակարգօրէն հարուստ աղբիւրները
 օգտագործելու համար: Բայց տակաւին՝ շուրջ 12,000 հայերէն
 գրչագիր մատենաներ կան, Երուսաղէմի եւ վենետիկի վանքերէն
 ներս եւ տարադիտած արտասահմանի բոլոր կողմերը, ուրիշ գը-
 րագարաններու մէջ և անձերու մօտ: Եւ այլուելու, գոցցուելու,
 լքուելով քաղաքայուելու կամ պարզապէս անփոյթ ժառանգորդնե-
 րու անհոգութեամբ փճանալու անդարման կորուստին դէմ՝ անոնց
 վերջնական փրկութեան միակ երաշխիքը կը հանդիսանայ Երեւա-
 նի Մատենադարանին ամբողջային ապաստանը, հայրենի հողին վը-
 բայ, հայ ժողովուրդի մայրական ծոցին ու գորովին մէջ:

Եւ սփիւռքահայ որեւէ անհատ կամ միութիւն, որ թէկուզ
 սոսկ զգացական շարժառիթով կը ցանկայ նիւթեղէն որեւէ նպաս-

տով մասնակցիլ Հայաստանի վերականգնումին՝ շատ աւելի թանկագին «օգնութիւն» մը մատուցած կ'ըլլայ անոր, եթէ քանի մը գրչագիր հատորներ ազատէ պանդուխտի կորստաբեր թափառումներէն եւ նուիրէ Մատենադարանին՝ քան թէ չէնք մը կանգնէ, կամ մեքենական կազմածներ զրկէ հոն: Արովհետեւ այդ պատերը կըրնան շինել անոնք, եւ հսկայական ու զեղակերտ կառուցուածքով՝, եւ այդ մեքենաները անոնք կրնան յղանալ ու ձուլել կամ ներածել սրեւէ շուկայէ, եթէ ոչ այսօր՝ բայց դալ տարի կամ յաջորդին, անպայման: Սակայն ձեռագիր մագաղաթէ մատենաները, որոնք հեղինակուած կամ արտագրուած են 800, 1000 կամ 1500 տարիներ առաջ՝ հիմա այլևս չեն կրնար գնուիլ նոյնիսկ աշխարհի ամէնէն փարթամ վաճառատունէն եւ չեն կրնար արտագրուիլ երկրագունտի որեւէ մէկ վայրին վրայ, տուֆէ կամ մարմարէ եւ ոսկիով կամ ազամանդով:

Ուրիշ դեր եւ կոչում ունի Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանը: Անոր մեծագոյն հարստութիւնը կը կազմեն հայ հին եւ ժամանակակից գրողներու, արուեստագէտներու եւ հանրային գործիչներու գրական արխիւները, — ձեռագիր երկեր, անախ կտորներ, նամակներ, վաւերաթուղթեր ու լուսանկարներ: Արդէն հաւաքուած են աւելի քան չորս հարիւր հայ հեղինակներու, ղերասաններու, նկարիչներու, խմբագիրներու եւ մտաւորական գէմքերու թանկարժէք արխիւները եւ կը պահպանուին կղպուած դարաններու մէջ, իբրեւ նուիրական գանձ եւ ազգային մշակոյթի պատմութեան անեղծանելի ատաղձ եւ անփոխարինելի արժէք: — Հոն, մասնաւոր շարքով եւ երկիւղած խնամքով դարսուած են եւ կը հոգածուին արխիւային ժառանգութիւնները Սայեաթ Նովայի եւ Ս. Արովեանի, Մ. Նալբանդեանի եւ Ռ. Պատկանեանի, Տ. Չուխաճեանի եւ Պետրոս Աղամեանի, Գ. Սունդուկեանի եւ Յովհ. Թումանեանի, Ալ. Սրենդիարեանի եւ Կոմիտասի, Նարդոսի եւ Ծիրվանգաղէի, Դ. Գեմիրճեանի, Ե. Չարենցի եւ Ակսել Բակունցի, Վահան Մալեղեանի եւ Թորոս Ազատեանի եւ հարիւրաւոր ուրիշ յայտնի հայ գրողներու եւ արուեստի մշակներու: Բոլոր այդ արխիւներուն մէջ՝ ամէնէն ճոխն ու թանկարժէքը կը մնայ Արշակ Չօպանեանինը, բաղ-

կացած 50,000 ձեռագիր փաստաթուղթերէ, որոնց շարքին՝ 30,000 նամակներ, եւ որոնց 10,000ը՝ Փրանսացի եւ հայ ակաճաւոր դէմքերու կողմէ գրուած քաղաքական, ազգային, հասարակական ու գրական խնդիրներու շուրջ: Թանգարանին տնօրէն մարմինը վեց պաշտօնեաներ յատկացուցեր է Ա. Չօպանեանի հարուստ արխիւին նիւթերը դասակարգելու եւ ցուցակագրելու աշխատանքին, — որոնք երկու տարիէ ի վեր անդուլ, իողճամիտ նուիրումով լծուեր են այդ հաճելի բայց տաժանագին գործին եւ կը շարունակեն դեռ: Արդէն որոշուած է հրատարակել առաւել շահեկան նամակներու խոշոր հաւաքածոյ մը, երկու հատորներով:

Գաղութահայ երէց գրողներ ու մտաւորական առաջնորդներ պէտք է ազնիւ պարտք համարեն, քանի դեռ կենդանի են՝ իրենց ձեռագիրներու, նամակներու, վաւերագրերու եւ հանրային արժէք ունեցող լուսանկարներու ամբողջ արխիւը տանելու կամ զրկելու Երեւանի գրականութեան եւ արուեստի թանգարանին: Կրկնակ արդարութեան արարք մը պիտի ըլլայ ատիկա, — հանդէպ Հայաստանի, օժանդակելով, որ աւելի ճոխանայ, ամբողջանայ հայ մշակոյթին ձեռագիր թանկագին վկայութեանց ու նշխարներուն գանձարանը, եւ իրենց հանդէպ, — որ ամէն գրողի աշխատանքին, ազանդին, ձգտումներուն ու վաստակին բնոյթը, արժէքն ու տարողութիւնը ուսումնասիրելու եւ գնահատելու անհրաժեշտ ատաղձ հայթայթեն գրականութեան եւ արուեստներու պատմագիրներուն համար:

Տակաւին կայ հնութեանց թանգարանը, ուր բազմաթիւ սրահներու մէջ կը ցուցադրուին քարէ, պղինձէ, երկաթէ, կաւէ, արծաթէ բիւրաւոր եւ հազար ձեւերով առարկաներ, գործիքներ, կարասներ, զարդեղէններ, արձաններ, ամաններ, գէնքեր, — որոնք հայ ժողովուրդի ծագումէն մինչեւ ներկայ դարը՝ անոր քաղաքակրթական հանգրուաններուն եւ մշակոյթին ու առօրեայ կենցաղին յարատեւ փոփոխման անշուշտ ու մոռալի վկայութիւնը կուտան: Վերջին տարիներուն, պատմական մասունքներու այս հաւաքածոն մեծապէս ճոխացեր է՝ Կարմիր Բլուրին վրայ եւ Սեւանի ափերուն պեղումներէն յայտնարեւոյտ հնագոյն թանկարժէք իրերով:

Եւ գեղարուեստի թանգարանը, իր տարբեր բաժիններով, — թատերականը, հայ բեմի մեծագոյն վարպետներուն պատկերազարդ կեանքին ու խաղարկած գերերուն յատկացուած առաջին բաժնեակներով, — Պետրոս Աղամեանէն ու Սիրանոյշէն մինչեւ Յ. Արէշեան, Վ. Փափաղեան ու Հրաչեայ Երեսեան, որուն մահուան դառն վիշաք խոր սուգով տակաւին համակեր է Հայաստանի մտաւորական դասը եւ ժողովուրդին բոլոր խաւերը: — Եւ օփերային արուեստի բաժինը, նոր բայց արդէն բարձրորակ: — Եւ քանդակի ու մանաւանդ նկարչութեան, — որուն «պատկերասրահ» տարբեր սենեակներուն մէջ ցուցադրուած են եւրոպական քանի մը գասական վարպետներու եւ ուսն նկարիչներու պատաստները, որոնք թանկագին համախմբուած մը կը կազմեն: Հարուստ է նաեւ խորհրդահայ նկարիչներու յատկացուած բաժինը, — իրբեւ շարունակութիւն նախորդ շրջանի ուսուսչայ վարպետներու գործերուն — եւ երկու մարզերուն ամէնէն տիրական դէմքը կը մնայ երանգներու հմայիչ արուեստագէտը, Մարտիրոս Սարեան: Բայց հոն գեւ չեն ներկայացուած արդիական գայրոյցի օժտուած երիտասարդ վրձիններ:

Անկէ կը բացակային մանաւանդ կառուները գաղութահայ տաղանդաւոր, նոյնիսկ միջազգային հուշակ նուաճած նկարիչներու (Ամերիկայէն, Փարիզէն, Փահիրէէն), որոնց իւզաների գործերը արդէն լիազէս կը գնահատուին օտար գեղարուեստական շրջանակներու մէջ եւ թանգարաններու կողմէ: Եւ ասիկա ուրիշ մարդ մըն է, ուր օփերայահայ մշակութային մարմիններ կամ հայրենասէր անհատներ կրնան գերազանց նպաստ բնծայել Հայաստանի, — անոնց նկարներէն զնելով ու նուիրելով Երեւանի պետական պատկերասրահին:

Եւ գեւ կայ՝ ժողովրդական Ինքնագործ Արուեստի Թանգարանը, — իր բնօրինակ ու դերով անսովոր հաստատութիւն մը, որուն սրահներուն մէջ մնայուն ցուցադրութեան գրուած են որեւէ արհեստաւորի, ուսանողի, հողագործի կամ ամառիկնոջ յղացած ու կերամած առարկաներն ու նիւթերը, որոնք բացառիկ շնորհքի ու ճարտարութեան զրօշմը կը կրեն: Այցելուն հոն կը տեսնէ, ապշանքով ու հիացումով, նկարներ եւ արձաններ, ստեղծագործ կամ

մեծաքսահիւ պատկեր, ծածկոց ու դորդ, եւ պղինձի, արծաթի ու մարմարի նրբօրէն փորագրուած սափորներ, զարդեր, ափսէներ ու զրօսանքի իրեր, եւ մոզայիկ ու քանդակ, քարի ու փայտի, նոյնիսկ բրինձի հատիկի մը վրայ, խոշորացոյցով հազիւ նշմարելի: Արուեստի այդ գործերուն խոնարհ հեղինակները, իրենց բնածին, թէկուզ անմշակ տաղանդին կամ արտակարգ ձիրքերուն չընտրելի յաջողքեր են իմաստով ու գեղեցիկութեամբ օժել զանոնք: Եւ յայտնօրէն, թանգարանին կրկնակ նպատակները կը մնան՝ ժողովրդային խաւերու մէջ արծարծել հակումն ու ճաշակը գեղարուեստական զրօսանքի եւ զբաղումի, եւ յետոյ՝ օգնել որ զարգանան ու կատարելագործուին այդ փորձերէն վերապրած վաւերական տաղանդները:

Հայաստանի մշակութային վերածնունդը առաւել չքեղ նրուաճումներ արձանագրեր է թատերական եւ երաժշտական մարզերուն մէջ, — անոնց արուեստին հմայքն ու համբաւը սփռելով հայրենի սահմաններէն դուրս, մինչեւ հեռաւոր հորիզոններ:

Շարժանկարի նորագոյն ճարտարարուեստէն ծնաւ «Հայֆիլմ» արտադրական կեդրոնը, 38 տարի առաջ: Այն ատեն, անոր չէնքերը եւ «սքաւտիօ»ները հիմնուէր էին Երեւանի արուարձանային շրջագիծէն ներս, եւ հիմա, մայրաքաղաքի արտասովոր ծաւալումը զայն օղակեր ու փակեր է իր նախնական դօտիին մէջ, ուր հնարաւոր չէ որեւէ անհրաժեշտ յաւելում: Գրասենեակներ ու միջանցքներ իսկ նեղ կուզան բազմացած պաշտօնեաներու եւ դերասաններու աշխատանքին ու երթեւեկին: Ամրակուռ մէկ «սքաւտիօ»ին մէջ՝ դարսուած են էլեկտրական պարաններ, հսկայ եւ բազմագոյն լուսարձակներ, շարժական ժապաւէնով մեքենաներ: Եւ յարգարուած քանի մը տեսարանները, — պարտէզի, հիւրասենեակի, կը մնան իրենց արուեստական սարքուածքով ու կը պահուին այդպէս, մինչեւ աւարտի քաջուզ ժապաւէնը, որ ամիսներ կը տեւէ երբեմն: Այդ է պատճառը, որ մինչ նշանակելի չափերով առաջացեր է անոնց արուեստին որակը եւ բարձրացեր է արհեստագիտական զարգացումը (այդպէս կը վկայեն երկու նոր ժապաւէններ, զորս զիտելու առիթը շնորհուեցաւ ինձի ցուցադրութեան զահլիճին մէջ), դեռ սահմանափակ կը մնայ անոնց քանակային

արտագրանքը, — տարին 6-7 գեղարուեստական եւ տասնեակ մը տեղեկագրական (տոֆիւմեդըլ) Ֆիլմեր, արդէն մեծազոյն մասով գունատուց :

Եւ երիտասարդ տնօրէնը, ներշնչուած եռանդով ու խանդավառ տեսիլքով դէպի հայկական շարժանկարի փայլուն ապագան՝ կը պատկերացնէ «Հայֆիլմ»-ի անցեալ իրագործումները, անոր չքաւոր ծագումէն մինչեւ ներկայ ընդլայնուած ձեռնարկները եւ ծրագրուած հեռանկարին կարծես արդէն բռնուած հրապոյրը : — Որդեղբուեր է նախազիծը Հայաստանի շարժանկարային հոյակապ նոր կեդրոնի մը, վաւերացուեր է անոր նիւթական յատկացումը եւ շուտով կը սկսի կառուցուիլ Երեւանէն դուրս, , Հրազդանի միւս ափի բարձրաւանդակին, — դաշտի, բլուրներու եւ ձորի զբաւելչ տեսարաններով օժտուած ընդարձակ տարածութեան մը վրայ : Հոն պիտի կանգնի արդէն յատկապէս հոյակերա շէնքը, իր բոլոր բաժիններով, եւ անոր մօտ՝ շարք մը ամբանիստ «սքաւտի-օ»ներ, որոնց մէջ կարելի պիտի դառնայ նոյն ատեն քաշել քանի մը տարբեր գեղարուեստական ու տեղեկագրական ժապաւէտներ, անոնց բացօթեայ հասուածները նկարելով լայնարձակ շրջապատին վրայ, եւ խնայելով հսկայ կազմածներ հեռուոր վայրեր փոխադրելու դժուարութիւնն ու ժամանակը :

Կամ իտասի յաւերժական անունը կրող Հայաստանի երաժշտանոցը, հիմնուած 1923ին, իր հասցուցած արուեստի եւ տաղանդի գերազանց հունձքով՝ բարձրագոյն վարկ ու հռչակ վաստակը է արդէն :

Պետական երաժշտանոցին մէջ շուրջ 300 երկսեռ աշակերտներ, իրենց տաղարէզներուն մէջ մասնագէտ ուսուցիչներու հոգածու խնամքին տակ՝ կը մշակեն երաժշտական որեւէ սեռի մէջ իրենց ձիրքերն ու շնորհքը : Գասընթացքները կ'ընդգրկեն լարային ու փողային գործիքներու, մեներգի, դաշնամուրի, խմբավարային, ստեղծագործական յորինումի եւ պատմադիտական ու լեզուական մարզերը : Երաժշտանոցի բարձրորակ ուսուցման եւ ոգեշնչող մթնոլորտին մէջ դարձուեր են այն նորայայտ տարբերը, որոնց բացառիկ կարողութեան եւ կենսունակ տաղանդին ծագումով, հայկական օփերան եւ համանուագային երաժշտութիւնը

դարգացեր են առաջնակարգ մակարդակի մը, իրենց ամէնէն պայծառ աստղերուն փայլով՝ համաշխարհային գնահատանք ու փառք վաստակելով : Եւ նոյնիսկ Պորհրդային Միութեան տարբեր երկիրներէն ուսանողներ կուգան Երեւան, աշակերտելու Կամիտաս երաժշտանոցին մէջ, իրենց նախընտրած ճիւղի վարպետներուն : Եւ եւ այս հաստատութեան գլուխին եւս՝ երիտասարդ տնօրէնը, իր կոչումին փարած՝ վսեմ առաքելութեան մը դրապաչա նուիրումով, — ծրագրելու, ընդլայնելու, եւ իրեն յանձնուած մարդկային հում տարերքէն՝ ձայնի, նուազի ու մեղեդիի առաւել կատարեալ բերք կորդելու եւ բերեղացնելու տենդին մէջ :

Տարբեր է հմայքը Հայաստանի Երգի-Պարի Անսամպլին, անոր բեմադրած արուեստին ինքնատիպ խառնուածքով : Շուրջ 80 գրաւիչ կիներու եւ վայելուչ այրերու շնորհազեղ համադրում մը, հանդերձուած մետաքսի ու բեհեզի գունավառ, փարթամ տարագներով, որոնց պերճանքը հին հայոց արքունական դաշիճներէն կուգայ, ոչ թէ գեղձկական հիւզերէն : Անոր սեփական նուագակուղայ, ոչ թէ գեղձկական հիւզերէն : Անոր սեփական նուագախումբը կ'ընկերակցի զօրծաղրուող մեներգին ու խմբերգին, կամ մենապարին ու խմբապարին, որոնք հիւսուեր են հայ ժողովրդային արուեստին ազնուագոյն տարբերով, եւ հարազատօրէն, եւ քնքշօրէն կը մեկնեն անոր սէրերն ու վիշտերը, եւ կարօտներն ու տենչերը եւ յոյզերն ու հրճուանքները : Աղջիկներու եւ դեռատի կիներու գունազեղ շրջազգեստները կը ծածկեն անոնց բարեձեւ մարմինները, պարանոցէն մինչեւ կօշիկները, — կարծես իրբեւ հակադրութիւն մերկ ազդերու, լանջերու եւ պորտերու այն գալարուող, յաճախ հեշտախաւար ցուցադրութեանց, որոնք որպէս արուեստ կը վաճառուին օտար պարային բեմերու վրայ : Մինչ «Նայիրեան աղջիկների հեղաճկուն պարը» մարմնացած շնորհքի, ծփացող ձեւերու բանաստեղծութեան, իզձ ու տարփանք եւ ամօթխամ պշրանք ու ցնծութիւն արտայայտող շարժումներու դաշնաւոր կախարհանքը կուտայ : Անոր տարազներն ու նուազը, երգերն ու պարերը հայեցի խորունկ դրօշմը կը կրեն, — բայց հայուն հեռ եւ անոր շարժ օտար ունկնդիրն ու հանդիսատեսը կը դրաուի, կը հրապուրուի անոնց զմայլելի արուեստին ազնուական գեղեցկութենէն :

արուեստադէպին խորհրդածող միտքը, գեղապաշտ ոգին ու թեւաւոր երեւակայութիւնը արդէն նուաճեր են պայծառ բարձունքներ: Շարք մը հայկական օփերաներ — «Ալմաստ», «Անուշ», «Արշակ Բ.», «Դաւիթ Բէկ», «Լուսարացին», կը կազմեն Յ. Սպենդիարեան թատրոնի խաղացանկին մշտական առանցքը, որուն շուրջ, ամէն եղանակի կ'աւելնան նաեւ օտար դասական կտորներ: Հայաստանի երգն ու օփերան օփառուեր են փայլուն աստղերու հոյլով մը, — որմէ Հայկանուշ Դանիէլեան, Տաթևիկ Սաղանդարեան, Չարուհի Դոյուխանեան, Գոհար Գասպարեան, եւ Շարա Տալեան, Պ. Լիսիցեան, Ա. Պետրոսեան, Ն. Յովհաննէսեան եւ ուրիշներ՝ անցեալ մէկ-երկու տասնեակ տարիներուն՝ իրենց ձայնին քաղցրութիւնը եւ արուեստին հմայքը սփռեցին հայրենի սահմաններէն դուրս, դէպի խորհրդային հեռաւոր երկիրներ: Եւ անոնցմէ քանի մը բացառիկ տաղանդներ՝ միջազգային հիացում ու հռչակ շահեցան իրենց պոստաներով, ձափոնէն մինչեւ Միջին Արեւելք, եւ Եւրոպայէն մինչեւ Ամերիկա:

Ու երեկոյ մը վարպտոյրը կը բարձրանայ, «Արշակ Բ.»ի ողբերգութիւնը բանալով: — Անդրանիկ հայկական օփերան, յօրինուած մօտ զար մը առաջ, Պոլիս, երաժիշտ Տիգրան Զուխաճեանի կողմէ: Բայց թաղուած անձանօթի մութին մէջ, մինչեւ 1945 թուականը, երբ առաջին անգամ ըլլալով կը բեմադրուի Երեւանի օփերային լայնարձակ բեմին վրայ, փառաշուք կատարումով: Հայոց հայրենասէր եղբարարիտ թագաւորին, Արշակ Բ.ի ազգային հերոսական պայքարը եւ սիրային տրամը կը պատկերացնէ ան: Արքայական պալատին դահլիճներն ու սենեակները կը յայտնուին բեմի վրայ ամէն նոր տեսարանին հետ, դունալառ փարթամութեամբ եւ հէքեաթային պերճանքով, մինչ նենդ դաւեր կը քողագերծուին արքունիքին մէջ, եւ շեփոններ ու գալարափողեր յաղթանակի ցնձատսօնի զօրանցքը կը ծանուցանեն: Եւ հայրենիքի ազատութեան հրեղէն տենչը կը թեւաւորէ, մինչ Փառանձեմի սէրը կը փոթորիկ Արշակ Բ.ի էութիւնը, եւ մահուան չարաշուք ստուերով կը թանձրանայ մթնոլորտը:

Տարազները, իրենց պղինձէ, թաւիչէ ու մետաքսէ շքեղութեան մէջ, հնամեայ մտերմութեամբ մը կը համակեն, կը յուզեն

հանդիսականը: Դերակատար արքան ու թագուհին, իշխանուհի, նախարար ու զօրական, իրենց բարախուն, արտայայտիչ խաղարկութեամբ, իրենց երգերուն կարկաչող ու վշտահեծ սահանքով, կամ դու, ազերսող ու ցասկոտ թաւալումով՝ 16 դարերու մոայլանջը պետէն, հայ ժողովուրդի պատմութեան մէկ ամէնէն մշուշուած ու սղբերգական, եւ ամէնէն ցաւագին ու դիւցազնական շքեղանք իմաստ ու կենդանութիւն կ'առնէ, եւ փառք ու յաւերժութիւն կը հազնի վերածուած Հայաստանի գեղարուեստական բեմին վրայ:

Հայոց մշակոյթի ծագումին յարատեւ, արդաւանդ պողաւորման մէջ, ազնուագոյն բերքեր հնձուած են, գերազոյն կատարներ նուաճուած են նաեւ դիտութեան ասպարէզին վրայ: Անանիա Շիրակացիէն յետոյ 12 դար, եւ Ամիրտոլլաթէն ետք հինգ դար՝ հայրենի երկրին մէջ, գիտական հետախոյզ միտքը երկար, վերաւոր ընդարմացումի մը խորը սուզուեցաւ: Բայց հիմա, կարծես իր հազարամեայ թմբիրին մէջ կուտակած իմացական թափով ու ըզրթայագերծ խոյանքով՝ ան կը նետուի դէպի յանդուգն որոնումներու եւ լուսաւոր յայտնութեանց բաւիղները, — երկրագունտի ընդերքային տարրերէն մինչեւ երկինքի ահարկու զտղանիքները: Եւ ընդգիտութեան, լեզուաբանութեան, մաթեմատիկի, մարդակազմութեան, տիեզերական ճառագայթներու, աստղագիտութեան, քիմիայի, հիւլէական ուժի, հանքային ու գիւղատնտեսական մշակումներուն մէջ՝ վիթխարի նուաճումներ իրագործեր են եւ համամարդկային չափանիշով վաստակի ու համբաւի բարձրացեր են՝ Օրբէլիներ եւ Աճառեան, Ալիխանեան եղբայրներ եւ Միկոյեան («Միկ» սուառնակի կերտիչը), Համբարձումեան եւ Մերգելեան, Միսակեան, Հասրաթեան եւ Մանուէլեան (քարէն մետաքս արտադրելու գիտարար) եւ ուրիշ գործակիցներ: Հազիւ գտնուի ուրիշ որեւէ ժողովուրդ աշխարհի վրայ, որ 25 տարուան կարճ շքեղանքին սկսած ըլլայ գիտական հետազոտութեանց խոնարհ ստորուանէն եւ մազլցած մինչեւ անմատչելի թուացող գաղաթներ՝ ինչպէս յաջողեցան կատարել հայ գիտնականներ:

Հետախուզական ծրագրուած, տենդագին ջանքերու, նոր վարկածներու, դիւտերու եւ յայտնութեանց այդ արտակարգ ծա-

ւալումն ու առաջխաղացքը կեզրանացեր են Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի ղեկավար Հովանիին տակ: Ան կ'ընդգրկէ գիտական ձեռնարկներու, փորձարկութեանց եւ առաջադրանքի բոլոր մարզերը, կը պարփակէ բոլոր մակարդակները, իր անջատ բայց գուցահեռ բաժիններուն եւ աշխատանոցներուն մէջ: Հազիւ քսան տարուան կազմակերպուած գոյութիւն մը ունի Հայկական Ակադեմիան, բայց ան արդէն բարձրագոյն ճանաչման ու զնահատանքի հասեր է ոչ միայն Խորհրդային Միութեան՝ այլ նաեւ Արեւմուտքի առաջուոր երկիրներու գիտական մարմիններուն մօտ:

Գիտութեանց Ակադեմիայի նորակառույց շէնքը հսկայ, փառակերտ հիմնարկ մըն է, քառայարկ բարձրութեամբ, ամբողջ ճակատը՝ հինգ յայնադիր կամարներու գեղահիւս շարքով մը, որ կը հանդէպ չորս վեց—անկիւն սլացիկ սիւներու վրայ: Անոնցմէ ներս, պատուհաններն ու գլխաւոր մուտքը, որ բարձրադիր ու քանդակագարդ դաւիթը կ'առաջնորդէ: Վերի յարկերուն՝ գրասենեակներ, հոյակապ դահլիճը եւ ընդարձակ սրահը, ուր Ակադեմիային անդամները եւ թեկնածուներ կը գումարուին գիտական զեկոյցներ ունկնդրելու:

Ականաւոր գիտնական Հ. Բունիաթեան փոխ-նախագահն է Հայաստանի Գիտութեանց կաճառին եւ իր մօտ են նաեւ քանի մը յայտնի գործակիցներ: Եւ մեր գրոյցը խորապէս շահեկան է իր ուստատուն բնոյթով: Իրենց իմացական հասողութեան ու թանձրացած վաստակին պատկառելի մեծութեան մէջ՝ խոնարհ՝ հազորդական հոգիներ, որոնք ինքնապատահ, պայծառաւես հազորութեամբ կ'ուրուագծեն հայրենի երկրին իրագործած ապշեցուցիչ զարգացումը գիտութեան բոլոր դաշտերուն վրայ եւ անոր մատուցած յարեբար, վճարական նպաստը Հայաստանի տնտեսութեան, ճարտարարուեստի, քիմիական արդիւնաբերութեան եւ կենցաղային ընդհանուր վերելքին մէջ: Եւ բոլորին կողմէ՝ նոյն անձկոտ շահագրգռութիւնը, նոյն գորովայի հոգածութիւնը արտասահմանի հայոց աղգային գոյատեման, մշակութային շարժումներուն, կրթական ձեռնարկներուն, — անոնց հոգերուն, կարիքներուն ու նուաճումներուն մասին:

Հայկական Գիտութեանց Ակադեմիայի նախագահը Վիքթոր

Համբարձումեանն է, աշխարհի մեծագոյն քնագէտ—աստղագէտներէն մէկը, անդամ՝ Ամերիկայի, Անգլիոյ եւ ուրիշ ազգերու գիտական կաճառներուն, եւ Հեղինակը աստղային նոր հոյլերու կազմաւորման յայտնութեան ու յարակից տեսաբանութեանց: Մեր ինքնաշարժը կը մաղլցի ոլորուն, զառիվեր ճամբուն ձիւնին ու ծփացող մշուշին մէջէն դէպի Բիւրականի զիտարանային կեդրոնը, ուր կը բնակի ան, ամբողջապէս նուիրուած մթնոլորտին ու տիեզերքին: Եւ անոր համբաւին հմայքով ու անձին ազնուական արժանիքներուն հրապոյրով՝ Բիւրական արդէն դարձեր է նուիրական ուխտատեղի մը, գիտութեան վարպետներու եւ ուսանողներու, նաեւ հայ ժողովուրդի բնիկ կամ պանդուխտ զաւակներուն համար:

Ընդարձակ գետին մը, ծառերու դառններով եւ ծաղիկներու երկններով կտրատուած, եւ իրարմէ անջատ՝ գլխաւոր շէնքը, անդին՝ հիւրանոցը, ննջարաններով ու ճաշասրահով, երկու աստղագիտարանները եւ յարակից բաժիններ: Նոր սարքաւորուած Հեռագիտակը աշխարհի երկրորդ մեծագոյնն է (առաջինը՝ Ամերիկայի մէջ) եւ վերջին կատարելութեամբ, բոլորովին էլեկտրաշարժ եւ ինքնագործ, կառուցուած Երեւանի մեքենական գործարանին կողմէ: Այդ շրջագիտակին մէջ եւ վարպետին ղեկավարութեան տակ՝ երեսուն երիտասարդ, խանդավառ գիտնականներ կ'աշխատին, կը սորվին, կը զարգանան, հայ հետազոտող միտքին դայիք ջահակիրները դառնալու:

Իսկ ան, Վիքթոր Համբարձումեանը, — միջահասակ ու յաղթակազմ, յայն դէմքով մը՝ որուն գիծերը հզոր նկարագիր մը կը յայտնեն, եւ թաւ, սեւ յոնքերուն տակ սեւ ու բարի աչքեր, որոնց ժպիտը վճիտ անկեղծութիւն ու վարակիչ ջերմութիւն կը ցոլացնէ: Հայաստանի մէջ ամէնէն շատ սիրուած, ամէնքէն աւելի ակնածուած դէմքերէն մէկը, ոչ միայն իրրեւ մեծահռչակ գիտնական, այլ նաեւ ու մանաւանդ՝ որպէս գերագանց յատկանիչներով օժտուած մարդ եւ որպէս ժողովրդանուէր ճշմարիտ հայ: Ան կը խօսի, մտերմիկ շուշուով, իրենց ծրագիրներուն ու Հեռանկարներուն մասին: Ան կը հարցնէ, տրամօրէն մտահոգ շեշտով, փիլուքի հայութեան գոյավիճակին, — անոր զրկանքներուն ու յոյսերուն, եւ

Թափուող ջանքերուն ու շահուած արդիւնքներուն շուրջ: Եւ մեր զրոյցը կ'երկարի, ընդգրկելով Հայաստանն ու արտասահմանը, Հայ աղղային ընդհանրական խնդիրներ, կատարուած հոյակապ նուաճումներ, եւ իրաւունքներ, եւ ձգտումներ: Կ'ելլեմ ոտքի, հըրածեալ տոնելու եւ ձեռքս կ'երկարեմ իրեն, հպարտ հրճուանքով:

— Կը յուսամ Պր. Համբարձումեան, որ ձեր գծուար աշխատանքին մէջ առեն կը գտնէք երբեմն մտածելու սփիւռքի տարադիր Հայութեան մասին... եւ կը յիշէք, որ ամէն անգամ, երբ Հայկական Ակադեմիան նոր յայտնութեան մը նպատակով կը ճօխացնէ աշխարհի գիտութիւնը՝ արտասահմանի մէջ միլիոնաւոր Հայ սրտեր կը լեցուին երջանիկ հպարտութեամբ, — ա՛յնքան առեն մեզ անարգէր ու վիրաւորեր են իրրեւ որբ ու գաղթական նպատարնկալներ, իրրեւ ջարդուած ու քաղցած կարօտեալներ...: Եւ հաւատացէք, ամէն անգամ, որ ձեր կամ ուրիշ յայտնի Հայ անուն մը ներբողով կ'արձանագրուի միջազգային մամուլին մէջ՝ ամէնէն սպիտակի սպիտակութեամբ տուած կ'ըլլաք նաեւ մեզի, գաղութահայ նորահաս սերունդին աղղային գոյատեւման համար մեր մղած կըռուիւն մէջ... ուրեմն յիշեցէք մեզ, եւ թող մեր վիճակին դառնութիւնը աւելի թուիք տայ ձեր խուզարկումներուն, թող մեր սէրը եւ երախտագիտութիւնը թեթեւցեն ձեր ծանր աշխատանքին յոգնութիւնը եւ տաժանքը...: Ո՛վ գիտէ, եթէ մեր գիտնականներն ու մշակութի վարպետները շարունակեն գիտութեան լոյս եւ արուեստի գեղեցկութիւնն ու շնորհք բաշխել ուրիշ ազգերու եւս, այսքան առատ ու ձրի՝ թերեւս մեծ պետութեանց վարիչները խղճահարկին... թերեւս մտածեն, նախ՝ վիրաւոր արդարութեան ձայնէն ըզգածուած, յետո՛յ՝ իրենց շահելիք բարեբէն զրդուած, — եթէ Հայ ժողովուրդը այսքան քիչով կրնայ այսքան շա՛տ ստեղծել ու տալ մարդկութեան՝ ատոր բազմապատիկը պիտի կրնայ ընծայել, եթէ իրենց հնամեայ դատին արդար հատուցումով մը օգնենք, որ աւելի աճին ու զօրանան, եւ... ով գիտէ...:

Եւ կը խնդանք թախծալի ծիծաղով: Եւ կը նայինք իրարու: Ո՛րքան պերճախօս է յաճախ մարդու հոգին, իր աչքերուն պայծառութեան մէջ:

Ժ

Բոլոր արուեստներուն մէջ՝ գրականութիւնը ամէնէն հօր լծակն է, որ ուղղակի եւ անմիջական թափով կը ներգործէ անհատին ըմբռնումներու ու կենցաղը վերափոխելու ճիգերուն վրայ: Ուրեմն ան կը դառնայ նաեւ ամէնէն կենսական գործօնը եւ կենդանի գորութիւնը մարդկային ընկերութեան, ժառանգուած դաւանանքները, սպրուոց ստօրեան եւ սպազայի խռատները յեղաշրջելու պայքարին մէջ: Իւզաներկ խորհրդալի նկարը, երաժշտական կատարեալ յօրինուածքը եւ պարին գրաւիչ շնորհքը կրնան խորապէս տպաւորել ու յուզել ունկնդիր կամ գիտող հոգիները, — բայց առանց զանոնք կեանքի նոր տեսիլքով մը տողորել կարենալու, եւ առանց դէպի այդ նշանակէտը մարտնչելու ձգտումն ու կամքը արծարծելու անոնց մէջ:

Մինչդեռ գրականութիւնը, — անոր վէպն ու քերթուածը եւ պատմուածքն ու յօդուածը կրնան լիապէս հասկցուիլ ժողովրդային բոլոր խաւերէն եւ իրենց իմաստին կայծերով կը հրկիզեն, իրենց յղացքին գեղեցկութեամբ կը հրապուրեն զանոնք: Եւ անցեալ դարերուն մէջէն՝ գեղարուեստական գիրը ամէն նոր սերունդի ընծայեր է աւելի ճօխ, ազնիւ ու խաղաղ գոյութեան մը երազուած հեռանկարը, եւ յուսաւորեր է գաղափարի կամ հաւատքի ճամբան դէպի այդ հանգրուանին նուաճումը, եւ ներշնչեր է մաքառման անձնուրաց օգի, եւ կերտեր է կռիւի մարտակոչ ու յաղթանակի կարգախօս, ամէն հոգեւոր արշաւանքի, ամէն աշխարհիկ յեղափոխութեան համար: Բնական էր ուրեմն, նոյնիսկ անխուսափելի, որ հնագոյն դարերէն մինչեւ մեր շրջանը՝ ամէն քաղաքական բռնատիրութիւն, ընկերային յեղաշրջում կամ կրօնական նուիրատուութիւն փորձէր իրեն գրաւել զրոյցները, իրրեւ համոզուած ախտիկան կամ սղօքուած ուղեկից, կիրարկելով հայածանքի ու հատուցման միջոցները, կամ սկզբունքի ու պսակուած արժանիքի խայծերը:

Պորհրդային իշխանութիւնը, պետական ու տնտեսական դա-
րասր կառուցուածք մը հիմնապէս յեղափոխելու իր եռանդին ու
աճապարանքին մէջ՝ պիտի չդիմադրէր, ընդգրկուած նպատակնե-
րու լրիւ իրագործման համար, մտաւորական դասին, մանաւանդ
գրողներուն գերն ու հմայքը օգտագործելու նոյն փորձութեան: Եւ
գրագէտներուն ընծայուեցան գերագոյն կոչում մը եւ փաղաքշիչ
մակդիրներ, բոլմութեանց ոգին ու նկարագիրը վերակերտելու,
հռչակուած նոր գրութեան տիպար մարզը ստեղծելու եւ դանոնք
տեսական զօրաչարժի հանելով՝ ներբողուած գալիքի տեսլապատ-
կերը գարննելու համար:

Այդպէս, ամէն հնգամեայ ծրագիր որդեգրուելուն, — այն
ըլլար երկարական ուժի, ճարտարարուեստի կամ «կոլլտոգ»ային
(հաւաքական դիւլատնտեսային) ծաւալման արշաւ, — գրագէտը
ինքնամատուց կամ սպասարուած՝ կ'արտադրէր արձակ ու բանաս-
տեղծական կտորներ, որոնք անոնց փրկարար նշանակութիւնը կը
տարփողէին եւ զանգուածները եր յորդորէին անձնազո՛հ գրկանքով
ու ջերմեռանդ փարուսով նուիրուիլ զանոնք «գերկատարելու» ի-
տէպային: Եւ «տրակտոր» ու «սովխոգ», «կոլլտոգնիկ» ու «իննի-
նիք», «կոմպիլնատ» ու «տուրքին» կը գովերգուէին ոչ միայն որ-
պէս հիմնական տարրերը ջատագովուած նոր հասարակակարգի
կառուցման՝ այլ նաեւ իրրեւ ազատարար կամուրջ, դէպի համա-
մարդկային աւելի բարեկեցիկ, ապահով ու արդար կեանքի մը
հանդրուանը:

Բայց որովհետեւ այդ երկերը կը գրուէին շտապով, — պարտք
մը կատարելու ինքնարաւ կամ դժկամ համակերպումով եւ առանց
ներշնչման կենսաւորող շունչին՝ անոնք յաճախ կը դառնային ցա-
մաք, անոգի, նոյնիսկ անմարմին կմախքներ: Սակայն օժտուած-
ներ միայն յաջողեցան երկաթին ու քարին, եւ շոգիին ու շառաչին,
եւ ոտողող ջրանցքին ու սալարկուող փողոցին ձօնուած իրենց գոր-
ծերուն փոխանցել այն խորունկ իմաստն ու սրտառուչ թախիծը,
այն խոնարհ պարզութիւնն ու արուեստի ճշմարիտ գեղեցիկութիւ-
նը, որոնց չաղախով՝ հայ շինականը եւ բանաստեղծը երկներ էին
իրենց արօրին ու գութանին, եղին ու դոմէշին, «Ջրաուք»ին ու
«հացին երգ»երը:

Սակայն յօժարակամ տուրքի եւ յանձնարարուած հարկի այս
միջակ հոնձքին զուգրնթաց՝ հետզհետէ կը բիւրեղանար գեղար-
ուեստական գրականութեան խտտապահանջ չափանիշ մը, որ անոր
խորքի կարգախօսն ու մարտակոչը կը փոխարինէր իմաստով ու
խորհուրդով, եւ անոր տարազի ցնցոտիին տեղ՝ ինքնատիպ ոճի
հանդերձը կը հիւսէր: Այդ նոր ձգտումին եւ անկէ բխող ստեղծա-
գործական ճիգերուն ու թռիչքներուն մակընթաց ծաւալումին
դէմ՝ արգէն յեղափոխական խանդի ու քարոզչութեան նախկին
յործանքը սկսեւ էր ընկրկիլ, ուժասպառ կամ վարկարեկ:

Հայաստանի մէջ, 1935 թուականին, գրական աշդպիսի վե-
րածադկում մը կը պտղաւորուէր, վէպի ու բանաստեղծութեան
բեղմնաւոր բերքով մը: Տակաւին կը գրուէին անշուշտ հին՝ չքա-
ւոր ձեւի ու տժգոյն բովանդակութեան հետեւորդ արձակ ու ոտա-
նաւոր: Բայց արգէն գեղեցիկ գրականութեան արժանիքներուն եւ
բնօյթին նոր ըմբռնումը եւ կիրարկումը թանձրացած ուղեգիծ
դարձեր էր: Եւ խուլ հակամարտութեան մը հանդէպ՝ գեղարուես-
տական բարձրորակ մակարդակը կերտեր էին եւ դայն կը սնուցա-
նէին՝ Եղիշէ Չարենց ու Դերենիկ Դեմիրճեան, Ակսել Բակունց ու
Գուրգէն Մահարի, Չապէլ Եսայեան ու Ստեփան Չօրեան, Վահան
Թոթովենց ու Գեղամ Սարեան, Սողոմոն Տարօնցի ու Վաղարշակ
Նօրենց, Մկրտիչ Արմէն եւ Մովսէս Արապի ու Հմայեակ Սիրաս,
որոնց պիտի հետեւէին յետոյ՝ նաեւ Ազատ Վլատունի, Ալազան,
Նաիրի Չարեան եւ ուրիշներ, — անոնց շարքին՝ դեռ անշալտ, ըս-
կանակ բանաստեղծ մը, որ կը կոչուէր Յովհաննէս Ծիրագ: Եւ կը
հրատարակուէին նաեւ արեւմտահայ յայտնի գրողներու հատոր-
ները:

Կարծես արգէն կ'իրականանոր Չարենցի մարգարէաշունչ
հաւաստումը, թէ ինչ որ գրուեր էր մինչեւ այն ատեն՝ միայն
«Յախարան էր մի վիքիսարի երգի համար, որ գալու է, բայց գեռ
չկայ»: Այդ մեծ «երգ»ին, — գրական պերճ, վարարուն տաղանդ-
ներու ստեղծագործ երկունքը հաշմուեցաւ՝ 1937-38ի հալածանքի
ուրականէն, որ անողոք մոլեգնութեամբ հարուածեց Պորհրդային
Միութեան առաջնորդ մտաւորական դասերէն բաղմաթիւ ականա-
ւոր դէմքեր եւ խորշակային ալիքով անցաւ նաեւ Հայաստանի վը-

բայէն: Նախ՝ նացի Գերմանիոյ պարտութենէն յետոյ՝ եւ ապա, Բերլինի սպանութենէն ետք, հայրենիք վերագարձան խորհրդահայ արքայութեամբ գրազէտներ: Բայց եղբրական կորուստ մը մնաց անհետացումը Զապէլ Եսայանի, Ակսել Բակունցի եւ Վահան Թոթովենցի, որոնք չվերապրեցան իրենց բանառային տաժանքէն:

Հիմա՝ գրական նոր վերածաղկում մը կ'ողելորուի ու կը սարսափուի Հայաստանի մէջ: Կառավորութեան զեկավար զիբքերէն ու տիրական պատուանդաններէն արձակուած ազատական մթնոլորտը շատ աւելի ալլաղան նիւթերու ասպարէզ մը բացեր է վերաստանին ու բանաստեղծին դիմաց, եւ ներշնչումի առաւել լայնածիր թռիչքներու մղումն ու խանդը առեր է անոնց: Վէպն ու քերթուածը հիմա ազատորէն կրնան ընդգրկել հայ ժողովուրդի դաքաւոր պատմութեան ու վերածնող ներկային բոլոր չըջաններն ու պայքարները, բոլոր դէմքերն ու գրուածները, — Հայկ Նահապետէն եւ Արա Գեղեցիկէն մինչեւ Մեսրոպ Մաշտոց եւ Վարդան Մամիկոնեան, Աւարայրէն ու Անիէն մինչեւ Մարտարապատ ու Թաման, եւ Սատուցի Գառիթէն ու Սայաթ Նովայէն եւ Գառիթ Բէկէն մինչեւ Զոր. Անդրանիկ, Կամիտաս ու Արարատ: Արձակը աւելի խորանալով կը հիւթաւորուի եւ քերթուածը քնարական թեւածումով արուեստի նոր տարազ, մանաւանդ կենդանի շունչ կ'առնէ:

Միջոցառային գրականութեան ամէնէն հզօր ու զմայլելի երկերը՝ իրենց ժամանակի ընկերային կեանքին մէջ ճարակող անիրատւութեան, շարիքի ու խորհուրդեան նշաւակումին եւ անոնց հակադրուած արդարութեան, բարիի ու ճշմարտութեան զեղարուեստական ընդհուրումէն ծներ են, — արտայայտուելով մարդկային էակներու խառնուածքին ու տենչերուն, իակալներուն եւ արարքներուն մէջէն: Եւ հիմա, որ խորհրդային գրազէտներ պիտի կըրնան վիպական հատորներու մէջ պատկերացնել համայնովար զբրական, — առաքինի, գաղափարապաշտ, անձնուէր հերոսներու կողքին նաև՝ ժխտական, — նախանձոտ, զեղծարար ու մակարոյժ տիպարները՝ վատահարար պիտի յաջողին այդ կենդանի ատաղձներէն աւելի կենսալի, հարազատ ու խորունկ գրականութիւն մը արտադրել:

Հայաստանի գրողներու միութեան կը պատկանին շուրջ 270

այր եւ կին անդամներ, — որոնց ստուար հատուածը կը կազմեն՝ արձակ կամ չափածոյ կտորներու որեւէ հատոր լոյս ընծայած հեղինակներ, որոնք գրազէտ չեն կոչուում ու իրաւունքով, կամ նոյնիսկ յաւակնութեամբ, ոչ ալ հաւանարար կը յուսան դառնալ երբեւեցէ: Բայց ուրիշ ամէն երկերի այդ խաւին թեկնածու միջակ ձիբքերուն նման՝ հոն եւս, անոնց զիբք հրատարակած ըլլալու իրողութիւնը, դէթ արհեստի սահմանումով, զանոնք կը վերցնէ գրողներու յարգելի դասին եւ անոնց ընկերակցութեան մաս ճանչցուելու ինքնաբաւ հաճոյքը եւ կասկածելի պատիւը կը շնորհէ իրենց:

Որակային արժէքի չափանիշով՝ աւելի խոստմնալի մակարդակ մը կը կրաւեն պատանի եւ երիտասարդ սկսնակ գրողները, որոնք որոնելու եւ խարխափելու փորձադաշտի բաւիղներէն կ'անցնին: Շատեր անոնցմէ, նախական թռիչքներէ թեւաբեկ՝ պիտի ինչան արհեստով գրողներու խոնարհ ստորտաին վրայ: Բայց ուրիշներ, վաւերական տաղանդի յեղակարծ ժայթքումով պիտի յայտնուին որպէս ճշմարիտ գրազէտ կամ գրադատ, եւ պիտի ըսկսին զէպի արուեստի կատարները դանդաղ, տաժանագին, սակայն ստեղծագործ մտղջուածին: Այդ ճամբան հիմա արդէն լուսաւոր է շորք մը պայծառ գէմքերու վառած ջահերէն:

Իսկ միութեան կուսակուած արժէքի ու հեռահաս խոստումի հաւաքական գազաթը՝ կենսունակ փաղանդն է երէց, միջին եւ երիտասարդ սերունդներու գրողներուն, — վիպագիր ու բանաստեղծ, թատերագիր ու քննադատ, — որոնք իրենց գրական վաստակին փարթամ ծաւալով եւ բազմերանգ արուեստին յարաճուն հմայքով, եւ իրենց ինքնատիպ տաղանդներուն պարզեւած հունձքերով ու տակաւին սուսացող բերքերով՝ խորհրդահայ գրականութեան նոր վերածնունդը կը կերտեն եւ դալիք աւելի շքեղ նրուածումներու ուղին կը հարթեն: Անոնց մտերիմ կամ նորայայտ անուններուն յիշատակումն անգամ թէկուզ անկատար՝ կրնայ թելադրել հսկայ տարողութիւնը արդէն յորինուած այդ ժառանգութեան:

Եւ Գրողներու Տան գլխաւոր դուռէն ներս ու աստիճաններէն վեր՝ գաղութահայ այցելուին էութիւնը կը խոսովեն հպարտ

ակնածանքով ու երջանիկ յուզումով, մինչ կը մտածէ, — ուրեմն այս հանդիպումին նման եւ տարբեր, աւելի հանդիսաւոր այցի կամ ժողովի կը նստին՝ Ստեփան Զօրեան, Գուրգէն Մահարի եւ Սիւլիա Կապուտիկեան, Գեղամ Սարեան, Յովհաննէս Շիրազ եւ Նաիրի Զարեան, Սողոմոն Տարօնցի, Վաղարշակ Նորենց ու Մըկրաբի Արմէն, Պարոյր Սեւակ, Հմայեակ Սիրաս, Աղաւնի եւ Արաքս, Ստեփան Կուրախեան, Վախթանգ Անանեան ու Հրաչեայ Գոշար, Եղուարդ Թօփճեան, Սաշիկ Դաշտենց ու Մարո Մարգարեան, Գէորգ Էմին, Սուրէն Վահուհի եւ Գէորգ Արով, Անահիտ Սահինեան, Սերօ Սանդատեան ու Գուրգէն Բորեան, Հրաչեայ Գըրիգորեան, Սարմէն, Հոխիսիմէ Պողոսեան եւ Գարեգին Սեւունց, Վահագն Դաթեան, Անահիտ Սեկոյեան, Արշալոյս Սարոյեան ու Շողիկ Սաֆեան եւ զեռ ուրիշներ: Անուններու կենդանի շղթայ մը, որ անցեալ վաստակներու համբաւն ու փառքը, եւ ներկայ ստեղծագործ ճիգերու մարմնացումն ու հրճուանքը կ'արձակէ զէպի սպազայ պտղաւորման ստուգութիւնը:

Կէսօրէն ետք մը, Գրողներու Տան մէջ, — ուր սարքուած մասնաւոր հանդիպումին կ'ատենապետէ գրագատ Եղ. Թօփճեան, նաեւ նախագահը Հայաստանի Պորհրդարանին: Եւ մտերիմ, սիրելի դէմքեր, որոնց վրայ անցեալ 25 տարիներու թաւալումը ձրգեր է ահօս ու խորշոմ, բայց նաեւ գանոնք օծեր է իմաստուն բարութեամբ ու պայծառ հասունութեամբ: Եւ ծանօթ կամ նորահաս անուններ, որոնց աչքերուն մէջ երիտասարդի անհանդիստ, յախուռն թարմութիւնը կը խայտայ: Ինծի համար խորապէս յուզիչ է մթնոլորտին հաղորդական ջերմութիւնը:

Սփիւռբաճայ գրողներ ու մտաւորականներ անհամբեր են եւ անձկոտ, գիտնալու թէ Հայաստանի իրենց գրչեղբայրները ի՞նչ նոր հատորներու վրայ կ'աշխատին, եւ ի՞նչ նոր երկեր կը ծրարագրեն, կամ ի՞նչ նոր ձգտումներ ու նշանակէաներ կը յայտնուին արձակին ու քերթուածին մէջ, կամ անոնք ի՞նչ կը մտածեն գաղութահայ գրական շրջանակներու հետ աւելի սերտ յարաբերութիւն հաստատելու, խորհրդահայ յօդուածներու հայերէն լեզուն լիտպէս հայացնելու եւ յարակից խնդիրներու շուրջ:

Իսկ հայրենի գրագէտներ նոյն սերտ շահագրգռութեամբ կը

փափաքին ծանօթանալ արտասահմանի հայութեան կեանքի բոլոր մարզերուն, անոնց անտեսական պայմաններուն, կրթական ձեռնարկներուն ու մշակութային շարժումներուն, — մանաւանդ տարեց ու կրտսեր գրողներու վիճակներուն, գործերուն ու արժէքներուն: Մեր գրոյցը կը տարածուի բոլոր այդ նիւթերուն վրայ, հոգերու եւ յոյսերու, նպատակի եւ աշխատանքի սրտառուչ նոյնութիւն մը յայտնարեկելով:

Եւ կը խօսինք Հայաստանի հրապարակագրական հայերէնին, — յաճախ դայն ազճատող օտար բառերու կամայական, խժալուր յորդումին մասին: Եւ տխուր, ցաւազին հակասութիւն իրերամերժ, հակոտնեայ երկու երեւոյթներու, — այս յարկին տակ, այս միութեան մէջ են վիպագիր ու բանաստեղծ գրողները՝ որոնք արեւելահայ լեզուն վերածեր են բիւրեղացած ու վճիտ, եւ դաշնաթաւ ու քնարական տարազի մը, որուն արձակով ու քերթուածով կը կերտեն իրենց գեղարուեստական երկերը: Մինչ ուրիշ անգամ խմբագիրներ ամսաթերթերու եւ լրագիրներու մէջ կը հրատարակեն յօդուածներ՝ ուր օտար բառեր բացատրիկ ներմուծումներ չեն մասնագիտական գործիք մը կամ նոր տեսութիւն մը սահմանելու կոչուած՝ այլ կը կիրարկուին իրրեւ հիմնական շինանիւթ նախադասութեան մը կառոյցին: Եւ կը փորձեմ խտացնել զազուրթահայ գանգաւը, մանաւանդ ակնկալութիւնը, հոն եւ յաջորդօրերուն՝ քանի մը խմբագրական շրջանակներէ ներս:

— Մենք արտասահմանի մէջ իմացական ճշմարիտ հաճոյքով կը կարգանք ձեր վէպերը, պատմուածքները եւ քերթուածները, մեր մամուլին մէջ իրրեւ թերթօն յաճախ կը հրատարակուին ձեր վիպական հատորները, իսկ բանաստեղծութիւններ կ'արասանուին գրեթէ ամէն հանգէտի բեմէն: Որովհետեւ ոչ միայն մտաւորական գասերը, այլ նաեւ ժողովրդային խաւերը կը հասկնան գանոնք, ուրեմն կը հաղորդուին անոնց իմաստին ու գեղեցիկութեան: Որովհետեւ այդ գրական գործերուն մէջ՝ լեզուն անարատ հայերէն մըն է, յղուած ու դաշնաւոր, որուն ընթերցումը հաճոյքի վայելք մը կը դառնայ: Բայց միւս յօդուածները, որոնք նաեւ կը գրկուին գաղութահայ թերթերուն՝ սղոյզուած կ'ըլլան օտար բառերով եւ արտասոց սճերով: Եւ անհասկնալի կը մնան նոյնիսկ

գրողներու եւ խմբագիրներու համար, երբ հնչիւնային յարակցութիւն չունին անդրերէն կամ ֆրանսերէն բառերու հետ: Օրինակ, մենք միայն զօրութեամբ կ'ըմբռնենք նշանակութիւնը ռելս, սլսեմա, ցել, բագա, լոգուեգ, ցելս, տեմեցեց եւ նման բազմաթիւ բառերու: Իսկ ի՞նչ կրնան ընել մեր խնդճ ընթերցողները, — կոնստուտիցիա, ռեվոլուցիա, ասպիրանտ, ֆիզկուլտուրնիկ, տեկարացիա, ակիտատար, ռեսուրսիկա, մեխանիզատար, էվոլուցիա եւ այգպիտի բառերու յեղենի մը դէմ, բացի յուսահատ դառնութեամբ յօդուածին ընթերցումը չքելէ: Մինչդեռ կան այդ բոլորին հայերէն բառերը, ամէնքին ծանօթ, ամէնքին նախընտրելի: Ուրեմն ինչո՞ւ կարգալք չարչարանքի վերածել գանգուածներուն համար, Հայաստանի եւ արտասահմանի մէջ: Չէ՞ որ լեզուին գոյութեան միակ իրաւունքը՝ հասկցութիւն է ժողովրդային լայնագոյն խաւերէն: Եւ եթէ այդ գրութիւնները օտար եւ անծանօթ բառերով խճագուած բլբլանուն իրբւէ հետեւանք կը դադրին ամբողջապէս հասկնալի դառնալէ՝ կրկնակ չարիք կ'առաջացնեն, — անոնք կը խաթարեն հայերէն լեզուին ինքնատիպ յատկանիշները: — Իմաստի պայծառութիւնն ու կառուցումքի ներդաշնակութիւնը: Եւ որովհետեւ լայնօրէն չեն կարգացուիր, հակառակ որ կը դրուին հասարակութեան համար՝ ուրեմն ի դուր վատնում կը մնան: Յետոյ, սիրուքի մէջ, այդ յօդուածները շատեր կը մղեն դժգոհութեան եւ ընդվզումի, որ հոգեբանական անդրադարձով մը, կը տարածուի նաեւ խորհրդահայ գրականութեան եւ նոյնիսկ Հայաստանի վերայ: Չէ՞ որ արտասահմանի հայերն ալ անկապտելի իրաւունք մը ունին հոս կատարուածը հասկանալ կարենալու: Ինչո՞ւ թոյլատրել ուրեմն այդ վնասարար քմայքը: Եւ դեռ, մեղանշողներ պարտաւոր են յիշել, թէ հայերէն լեզուին բացարձակ, ամբողջական սեփականատէրը հայ ժողովուրդն է միայն: Չայն ստեղծեր է, փայփայեր է եւ ճշխացուցեր է 2-3 հազար տարիներու տաժանքով եւ խանգակաթ սէրով: Մենք կրնանք անկէ փոխ առնելով գործածել մեր մայրենի բարբառը, անոր ետ խօսելու համար, — կրնանք աշխատել, որ ան աւելի ճկուն եւ արտայայտիչ, աւելի հարուստ ու գեղեցիկ դառնայ, իր հայկական նկարագրին հաւատարմութեան մէջ: Բայց ոչ մէկ գրող կրնայ իրաւունք տալ ինքն իրեն, կամա-

յական անիրաւութեամբ, հայերէնին խորթ ու անհարգատ բառերու կուտակումով աղճատել, մթալնել ու տգեղցնել հայ ժողովուրդի «արեւահամ» լեզուն՝ որովհետեւ կամ շատ ունայնամիտ է, խորհելով թէ օտար բառերու կիրարկումը զինք կը հանէ աւելի բարձր մակարդակի մը, կամ պարզապէս ծո'յլ է եւ՝ ապիկար, անոնց հայերէն հոմանիշները փնտռելու եւ իր արձակին իմաստ ու շնորհք ապու համար:

Սորհրդահայ գեղարուեստական գրականութեան խղճամիտ, վարպետ մշակները, իրենց վաստակին անժխտելի սպասցոյցով իսկ կը հաստատեն, թէ իրենք ալ, նոյն նախանձայոյց խանդով կը ձգտին հայերէն լեզուի անաղարտ, հարագատ պահպանումին ու պարգայման: Չէ՞ որ համայնալար դաւանանքը կը հոչակէ «ձեռնով ազգային» կարգախօսը արուեստներու եւ գրականութեան մը չտկումին համար: Եւ այդ պատգամուած «ձեռ»ը, տարա՛յր, լեզուն է, որ պէտք է «ազգային» մնայ: Իսկ ան ինչպէ՞ս կրնայ իր ազգային էութիւնը եւ դրոշմը պահել, եթէ ամէն քարբառէ ներածուած բառերով, ամէն մշակոյթէ մաքսաննդուած ռճերով՝ վերածուի միջազգային խառնակոյտի մը:

Փրոպաներու միութեան կամ կառավարութեան կողմէ ոչ պարտադրանք կայ, ոչ իսկ հրահանգ անհատ որեւէ յօդուածագիրի, լեզուական հարցերու, բառային ընտրութեան առնչութեամբ: Փրոպին ճաշակն ու դատումն են միայն, որ կը վարեն անոր դրիչը: Բայց այդ մարզին մէջ խմբագիրներ կոչուած են նշանակելի դեր մը կատարել իրենց պաշտօնին հարկադրանքով:

Եւ խմբագրատան մը մէջ քանի մը հոգի ենք եւ կը խօսակցինք սղոյսին ու հասարակական, գաղութային ու գրական խնդիրներու շուրջ: Մեր գրոյցը, բնականօրէն, կ'անցնի նաեւ խորհրդահայ լրագրական լեզուն բեռնաւորող օտար, անհարկի բառերու առատ գործածութեան:

— Մեզի համար տարօրինակ ստեղծուած մը կը թուի այսպիսի հակառութիւն մը, կ'ըսեմ: Մենք լեզուական մաքրակիթոններ չենք հարկաւ: Եւ կը հասկնանք որ լեզուն կենդանի, մշտապէս աճող ու զարգացող գործիք մըն է, որով մարդիկ զազափար, զգացում եւ արարք կ'արտայայտեն: Ու որքան նոր ստարկաներ, զի-

տեր, նոյնիսկ մտածումներ կը յայանաւին առօրեայ կեանքին մէջ՝ լեզուն պէտք է օժտուի գանձեր մեկնող նոր բառերով, որոնք յաճախ կարելի է յորինել բնիկ արմատներէն, եւ երբեմն փոխ առնել ուրիշ բարբառներ: Բայց ինչպէ՞ս բացատրել այս զարմանալի երևույթը: Մէկ կողմէն՝ բոլորովին նոր հայերէն բառեր կը կերտուէք, — ինչպէս՝ հեռուստատես (քելիվիժըն), ասողջարան (սաւար-որիւմ), հումոյթ (սօ մեքըրիւլ), ճշգրտաչափ գործիք (փրիւսիժըն ինտըրուլընթ), ինքնագործ (օթումստիկ), եւ բազմաթիւ ուրիշներ, իմաստով ընտիր, հնչիւնով հաճելի: Միւս կողմէն՝ քրմաճաճօրէն կը գործածուին՝ կամալ, ալիմո, վիցէ-պրեզիտենտ, ռեվոլուցիոնէր, կուլտուրա եւ նման օտար բառեր, որոնց հայերէնները կան արդէն, — քրանցք, գործակալ, փոխ-մայրապետ, յեղափոխական, մշակոյթ, եւ կրկնակ առաւելութեամբ: Նախ՝ անոնք մեր մայրենի լեզուին հարազատ, ընտանի տարրեր կը կադմեն, եւ յետոյ՝ մանաւանդ կը հասկցուն ամէն հայ ընթերցողէ: Ուրեմն ինչո՞ւ:

Կը ժպտին, կը համաձայնին, կը մեկնաբանեն: Եւ գլխաւոր խմբադիրը կ'եզրակացնէ.

— Մի քիչ բարդ հարց է դա, ի հարկէ: Մեզ մօտ էլ լինում են աշխոյժ վէճեր, հայերէն լեզուն աւելորդ օտարաբանութիւնից ազատ պահելու մասին: Եւ մենք յոյս ունենք, որ էդ մարդում մեզ կը յաջողուի որոշ արդիւնք ձեռք բերել: Բայց եւ լինում են գրողներ, որոնք կարծում են էդ օտար բառերի օգտագործումը կը ճոխացնի մեր լեզուն եւ չեն շեղում էդ վարժութիւնից:

— Սակայն կը ստեղծուի այսպիսի անհեթեթ, նոյնիսկ գաւազնական կացութիւն, կը պատասխանեմ: Անցեալ օր կը շրջէինք Երեւանի մէջ եւ մէկ ընկերակիցս ռաջարկեց որ երթանք տեսնելու մօտակայ «հանդստեան պարկը»: — Հանդստեան «պարկ», հարցուցի զարմացած, ի՞նչ տեսակ ապրանք է այդ որ...: Ան նախացաւ ինձի, կարծեմ քիչ մը շուարած, եւ ըսաւ. — Հանդստեան պարկ էլի՞՛ սլոնինքն պարտէզ, գրօսայգի: — Ա՛խ, այդպէ՞ս, պատասխանեցի խնդալով, իսկ ես խորհեցայ թէ ատիկա Ալատինի լամբին նման հրաշտործ, նորադիւտ պարկ մը, կամ խոշոր տոպրակ մըն է, ուր մարդիկ կը մտնեն եւ անմիջապէս ամէն յոգնու-

թիւն կը փարատի ու կը հանգստանան...:

Եւ կը ծիծաղինք բոլորս միասին:

— Հա՛ւ, կ'աւելցնեմ, քանի որ պարտէզ, համրապարտէզ, գրօսայգի ծանօթ, իմաստալի, մանուսանդ հայերէն բառերը ունինք, եւ գանձք կը գործածէք, դուք ալ, ինչո՞ւ այդ տոպրակաբոյր «պարկը» (փարք), որ ոչ միայն օտար է, այլ նաեւ կը շփոթեցնէ գայն կարդացողը եւ յօդը: Եւ ան կ'երեւի նաեւ յօդուածաներու մէջ:

— Դա ճի՛շդ է, կը յարէ ան, եւ էդ պարագայում մենք հիմի ընդհանրացնում ենք գրօսայգի բառը: Բայց դժուարութիւնը նրանում է, որ մենք չենք կարող տեսլ ամէն մի գրողի, — դու պէտք է գործածես էս ու էս բառերը, իսկ էն բառերը՝ ո՛չ: Բացի նրանից, որ դա կը լինի լեզուական տիկլոստուրա, ասեմք բանակալութիւն, ինքնին հնարաւոր էլ չի եւ կարող է աւելի վատ հետեւանք ունենալ եւ ուրիշ կազապարներ ստեղծելու ծայրայեղութեան հասնել:

— Այն ատեն՝ կարելի չէ՞ որդեգրել գաղութահայ խմբադիրներու ընդգրկած դերը գոնէ այդ մարդին մէջ, իբրեւ գրական լեզուի մաքրութեան պահակներ՝, կը շարունակեմ ժպտելով:

— Իսկ դո՞ւք ինչպէս էք անում սփիւռքում:

— Մե՞նք... այսքանը կրնամ վկայել 25 տարուան անձնական փորձառութեամբ, որ ստացուած ամէն յօդուածի մէջ, հոգ չէ թէ ո՛վ ըլլայ անոր հեղինակը՝ եթէ գործածուեր են օտար բառեր, գանձք վերածեր ենք հայերէնի: Յորինակ, կիլոքիլոք փոխեր ենք կառափնատի, քիւլքիւլք՝ մշակոյթի, փարլամենտը՝ խորհրդարանի, իլեքշըն քլմփէյնը՝ ընտրագոյնչարի, քեմքը՝ հրատարակի, փրեզիտենտը՝ նախագահի, փիամոն՝ գաշնամուրի, էրփիլէյնը՝ սաւառնակի, քելիվիժընը՝ պատկերացոյլի, քրէյնը՝ շոգեկառքի, ռաֆէքը՝ հրթիռի, հայտրոնիլը՝ ջրածինի եւ ռեվոլուցիան՝ յեղափոխութեան, վիցէ-պրեմիէրը՝ դեր-վարչապետի, եւ նոյնիսկ պատրման՝ ապուխտի...:

Կը խնդանք դարձեալ ամէնքս, գոհունակ ու դուարթ, թերեւս այն պատճառով, որ մեր ձգտումները, մեր հոգերն ու յոյսերը շատ աւելի համանման էին ու ներդաշնակ, քան կը համարձա-

կէինք ակնկալել: Եւ մեր գրոյցը կը նետուի ուրիշ նիւթերու, տարբեր մարզերու վրայ:

Քանի մը օր յետոյ կը կանգնինք Պետհրատի հսկայ, հոյակապ շէնքին առջեւ: Ծակատը, ամբողջ փողոցի մը երկայնքով՝ վարդապոյն վիթխարի սիւներու շարքով մը՝ որ հին հեթանոսական տաճարները կը յիշեցնէ: Գաւիթին մէջ ու սանդուխէն վեր՝ պատերուն վրայ ցուցադրութեան շարուած են հարիւրաւոր գիրքեր հայ դասական հեղինակներէ, խորհրդահայ գրողներէ եւ միջադարձին դրականութենէ թարգմանուած: Վերեւի յարկերը՝ զբրատենակներն են, տնօրէնի, խմբագիրներու եւ գրագիրներու, սրբապատուներ՝ ուր քանի մը տասնեակ յղջիկներ ու դեռատի կիւնէր՝ շարուող հատորներու փորձերը կը սրբադրեն. ընդարձակ կադմատուներ, ուր մեքենաներ կը ծալին պրակները, կը կարեն զանոնք իրարու, կ'անցընեն կողքերը ու գիրքերը կ'արագարեն զանդուածային դէզերով: Աւելի վար՝ պահեստի թուղթերու ահագին դշտները, եւ տպարանի բաժինը, ուր տարբեր հատորներ մամուլներու տակ են, եւ առանձին բաժինի մը մէջ՝ կը տպագրուին Սասունցի Գաւիթի գրեցադնավէպի նորագոյն հաւաքածոյին թագմագոյն, դեղարուեստական գմայլելի նկարները:

Տնօրէնին սենեակն ենք, քանի մը գրող ու պաշտօնեայ: Եւ կը խօսակցինք Պետհրատի ներկայ ձեռնարկներուն ու դալիք ծրագիրներուն մասին, մանաւանդ զբախան ընդհանուր ու մասնակի խնդիրներու շուրջ: Ամէն տարի խոշոր չափերով կ'ընդլայնուի ահոր հրատարակչական յայտագիրը: Բայց տակաւին անբաւարար կը մնայ յարաճուն պահանջին հանդէպ: Արագօրէն կ'ընդարձակուի հեղինակներու ընտրութեան ասպարէզը՝ սոկեղարէն մինչեւ 19րդ դարու վերածնունդին շրջանները եւ արեւմտահայ ու գաղութահայ գրողները, նոյն ասան բազմապատկելով լոյս ընծայուած հատորներուն արտաքանակը: Եւ դեռ, այդ տենդագին ծաւալման մէջ, կը յայտնուի խանգալաւ, անհամբեր անձկութիւնը հասնելու, նուաճելու մօտիկ տպագային համար գծուած հեռանկարներուն ապշեցուցիչ տարողութիւնը:

Սակայն վստահարար, սփիւռքի հայ գրողներ աւելի պիտի շահադրուին խորհրդահայ գրագլխներու նոր հեղինակուած եր-

կերուն մատուցման ընթացքով: Այնքան տարբեր է ան եւ գերազանց, արտասահմանի մէջ ենթադրուած կերպէն: Ամէն նոր հատորի ձեռագիր կը յանձնուի Պետհրատին, տպագրուելու դիմումով, — որ զայն կը փոխանցէ իր խմբագրական մարմինին՝ կարգաւ եւ յանձնարարելու համար: Եթէ ներկայացուած ձեռագիրը ընդունուի եղած վիճակով, կը տրուի տպագրութեան, բայց ամբողջապէս մեքենագրուելէ ետք: Որովհետեւ Հայաստանի մէջ ոչ մէկ յօգուած, բանաստեղծութիւն կամ վէպ ձեռագիրով կը յանձնուի օրեւէ գրաշարի, — այլ բոլորը, թերթի, ամսագրի կամ գիրքի համար՝ նոյն կը խմբագրուին կամ կը սրբագրուին, յետոյ կ'ընդօրինակուին գրամեքենայով, եւ ապա միայն կը տրուին գրաշարներուն, — անհաւատարի, անկարելի երեսոյթ մը արտասահմանի իրականութեան համար:

Իսկ եթէ խմբագիրներ առարկելի թերիներ գտնեն նորաւար երկերու մշակման ձեւին կամ նիւթի կառուցուածքին մէջ, իրենց դիտողութիւնը կը հաղորդեն անոնց հեղինակներուն, եւ եթէ գիրար համոզելով համաձայնին՝ գործերը կը փոխանցուին հրատարակչական բաժինին, ուրեմն մամուլին: Բայց նաեւ, ամէն գրագէտ իրաւունքն ունի մերժելու օրեւէ փոփոխութիւն կամ յայտուում, նոյնիսկ աննշան մասնիկի մը: Այն տուն, յայտնի գրողներու յանձնախումբ մը, իրաւարար միջնորդի հանգամանքով, կ'ունկնդրէ երկու կողմերուն, — հեղինակին եւ անոր գիրքը խմբագրողին, — տեսակէտները եւ ձեռագիրին ընթերցումով կը յանդի իր անկախ եղբայրացութեան: Դարձեալ, եթէ զբաղւար հաւանի այդ գատումին՝ Պետհրատը այլեւս առանց առարկութեան կ'ընդունի հատորը եւ զայն լոյս կ'ընծայէ անփոփոխ: Սակայն այն պարագային, որ հեղինակը ինք չհամաձայնի գրողներու յանձնախումբի թելադրանքին՝ տակաւին կրնայ մերժել օրեւէ սրբագրում իր ձեռագիր երկին մէջ եւ կը պահէ զայն, մինչեւ յաջորդ դիմումի մը փորձը:

Գիրքերու «ճարտարարուեստը» համանման ուղիէ մը կ'ընթանայ նաեւ արեւմտեան երկիրներու մէջ, ուր սակայն հրատարակչական տուններ անհատներու եւ ընկերակցութեանց սեփական ստացուածք են, եւ ոչ թէ պետական: Բայց բոլորն ալ ունին իրենց

խմբագիրներուն մնայուն կազմերը, սրոնց գրական դատաստանինն կ'ենթարկեն որեւէ ձեռագիր հատոր, փոյթ չէ թէ որքան ականաւոր գրագէտ մը ըլլայ անոր հեղինակը: Անոնք յաճախ խոշոր փոփոխութիւն կամ հիմնական սրբագրում կը կատարեն իրենց յանձնուած երկերուն մէջ, անշուշտ գրողներուն գործակցութեամբ, տպագրուելու տրուելէ առաջ: Եւ եթէ հեղինակը մերժէ հաւանիլ խմբագիրի որոշումին՝ հրատարակչական տունը ազատ կը մնայ գոյն լոյս ընծայելու նայնիակ պայմանադրուած հարկէն:

Մանրիկեան գրականութեան մէջ, այդ երեւոյթին առջնէն ծանօթ ու սրատու ոչ վիպայութիւնը կուզայ տազանդաւոր վիպագիր Թ՛համբա Ուոյթի անձէն ու վառտակէն: Անոր ներշնչումը կը յորդէր տարերային խափով ու սանձազերծ ուժգնութեամբ, — նըման լայնեզր-գետի մը, որ երբեմն կը հոսի խորունկ ու հզօր թաւալումով, եւ երբեմն կը սփռուի ծանծաղուտի մը պղտոր լճացումով, կամ կը պատտարի փրփուրով ու պղպջակով: Ան իր վէպերը կը տարածէր 2-3000 էջերու վրայ ու կը յանձնէր Զարլոյ Աքրիպները Հրատարակչական Տան, տպագրուելու: Այդ յայտնի հաստատութեան գլխաւոր խմբագիրը, Մեքսուէլ Փըրքինզ, խղճամիտ ու ճարտար գրական վիրաբոյժի մը նման՝ անոր վէպերուն կէսը, մինչեւ երկու երրորդը կը նշգրտէր, կը կարկանդէր, կը ջնջէր, եւ անոնք կը հրատարակուէին 8-900 էջերու մէջ, աւելի համադրութեամբ, կապակից, գեղարուեստական կառոյցով: Եւ Թ՛համբա Ուոյթ չէր դառնանար, չէր ընգծեր մերատի ու կարմիր մատիտի այդ անողոք միջամտութեան դէմ, հակառակ ըմբոստական պոռթկումներու: Այլ խորապէս երախտապարտ կը մնար իր վէպերը խմբագրող Մեքսուէլ Փըրքինզի, զոր կը նկատէր իրեն «հաւատարիմ նրուիրում եւ համբերատար հոգածութիւն» ընծայող «անասան բարեկամ մը», որուն կը ձօնէր «Այ թայմ էմս տեը Ռիվլը» (1935) ստուար հատորը, խոնարհ ու սրտայոյզ մակագրութեամբ մը:

Մինչդեռ հայ գրողներ, մանաւանդ որոշ համբաւի հասնելէ Լոսք՝ կը գտնան շատ դիւրագգամ ու հպարտ եւ յաճախ իրենց յօդուածին, քերթուածին կամ արձակին կը կապեն արտառոց խնցիվճիւ մը, ուղղուած խմբագիրին. — Չփոխել ոչ մէկ ստորակէտ անդամ... Երբ սրբագրում մը կրնայ բացայայտ թերիներ վիրա-

հասել եւ նշանակելի չափով բարձրացնել ամբողջ գործին շնորհքն ու արժէքը: Անշուշտ Պետհրատի խմբագիրներուն ճաշակը, խառնուածքը, գրական ըմբռնումները եւ անոնցմէ բխող կիրարկուելիք չափանիշը՝ կենտական գործօններ կը հանդիսանան անոնց դժուարին աշխատանքի մէջ, իրեց սահմանուած լայն իրաւունքով:

Այդպէս, կը խօսակցինք դարձեալ վերջերու եւ հեղինակներու մասին, այս անգամ՝ Պետհրատի մէկ խմբագրի դրասենեակին մէջ: Ան օրինակով մը կը պարզաբանէ նոր ընտրուող հատորներու կազմութեան ընթացքը: — Սորհրդահայ ծանօթ գրագէտ մը կը ստանձնէ տպագրանքը եւ կը պատրաստէ սփիւռքահայ գրողի մը պատմուածքներէն ժողովածու մը, զոր կը յանձնէ Պետհրատին, տպագրուելու: Հաւաքածոն կը տրուի իրեն՝ գոյն խմբագրելու եւ դատաւորելու համար: Ինք անկէ քանի մը կտոր դուրս ձգել կը հարկադրուի, անշուշտ իր ճաշակին թելադրանքով, որպէս զի մնացեալը սեղմուի տրամագրուած թուղթի քանակին ծիրէն ներս: Տպուած հատորը սեղանին վրայ է, եւ ան գլորոցէ մը հանելով ընտրուած եւ զանց առնուած պատմուածքներուն տարրեր ծրարները, — բոլորն ալ մեքենադրուած՝ ցոյց կուտայ ինծի, թերեւս այն պատճառով, որ կը կարծէ թէ անոնք կը շահագրգռեն զիս: Եւ յանկարծ կը յարէ բարի ժպիտով մը.

— Գուցէ նկատուէք, որ մի քանի տեղում փոքր յապաւում ենք կատարել:

— Ոչ, կը պատասխանեմ, որովհետեւ դեռ չեմ կարդացած այդ հատորը: Բայց հասկնալի է ստիկա, կ'աւելցնեմ: Հաւանաբար ընկերային միտքեր կամ քաղաքական դէպքեր են, որոնք ընդունելի կամ հաճելի չեն հոս:

— Զէ՛, չէ՛, կը բացազանչէ անմեղ ծիծաղով, էզ տեսակ բաներից չեն, էլի, ջնջել ենք միայն ննջարանի տեսարանից մի քանի խօսք... մի քիչ վրան բաց էին:

— Իրա՞ւ, եւ այս անգամ ես կը խնդամ ուրախ, ու կը նայիմ իրեն, յետոյ միւսներուն, զուարթ զարմանքով: — Բայց հարկ կա՞յ այդքան խտտօրէն մաքրակրօն դառնալու դրականութեան մէջ: Բարեբախտաբար միշտ այդ չափանիշը չէք պահեր, այնպէս չէ՞: Պետհրատը լոյս կ'ընծայէ Հոմերոսէն մինչեւ Պլուտէս ու

Ձուլա՝ բոլոր մեծ գրողներուն լուսագոյն երկերը ու մանաւանդ՝ հրատարակուած է Պոքաչիօի հոշակաւոր «Տասնօրեակը» . . . որուն «վրան րաց» էջերը եթէ ջնջէք՝ թերեւս միայն . . . կողքերը կը մընան :

— Երանցից ի հարկէ ոչինչ չենք զեղչի . . . նրանք «կլասիկ»-ներ (դասական) են եւ նրանց հեղինակները մեռել են վաղուց :

— Բայց կը կարծէ՞ք թէ սիրային արձակ պատկերի մը իրապաշտ նկարագրութիւնը աւելի պիտի գայթակղեցնէ միջին ընթերցողը, պարզապէս որովհետեւ անոր հեղինակը թաղուած չէ տակաւին :

Եւ կը կատակենք ու գրոյցը կը շրջենք ուրիշ լուրջ նիւթերու :

Հայաստանի մէջ, նորաստեղծ հայ գրականութիւնը տակաւ կ'ազնուանայ որակով ու կը գեղեցկանայ արուեստով, իսկ արդէն ապշեցուցիչ երեւոյթ դարձեր է անոր քանակային ծաւալումը : Բայց կայ դեռ աւելի նշանակալից, նոյնիսկ սխրալի եղելութիւնը : — Որ բազմաթիւ խորհրդահայ գրողներու վէպերն ու քերթուածները կը թարգմանուին ռուսերէնի եւ անկէ կը վերածուին լիտվաներէն ու լեհերէն, պուլկարերէն ու չեխերէն, ուկրայներէն ու վերացերէն, գերմաներէն ու չինարէն լեզուներուն : Եւ այսօր՝ ռուս ընթերցողներ իսր հիացումով կը կարդան ու կը դնահատեն ոչ միայն Սիրլա Կապուսիկեանի քնարական քերթուածները՝ այլ նաեւ արդէն թարգմանուած Ռաֆֆիի պատմական վէպերը : Եւ այդ կամուրջով՝ հայ հին ու նոր մատենագրութեան լուսագոյն երկերը, կենսասխայ կեանքի, վսեմ ու ճմարիտ իմաստի եւ գեղահիւս յօրինուածքի իրենց արժէքներով, հետզհետէ կ'անցնին նաեւ միջուկային գրականութեան անդաստանը :

Այդպէս, հայ ժողովուրդի սպգային յարութեան ու հայրենական վերականգնումի այս գիւցազնային շրջանի գրկանքներն ու պայքարները, եւ միշտերն ու հրճուանքները, եւ տենչերն ու նուաճումները հարագտտ, կենդանի քանդակուածով կ'արտայայտուին հայոց նոր գրականութեան մէջ, — իբրեւ երկունքի ցաւերու հրծածին, եւ շքեց յայթանակի ներքոյ, եւ գայիքի տեսիլքը լուսատարող ճանապարհ ներկայ սերունդին համար : Եւ որպէս մեր պատ-

մութեան ամէնէն զարհուրելի սղերգութեան արիւնտա եղերերգէն յետոյ՝ հրաշալի վերածնունդին յաւերժական վկայութիւն՝ տպագայ սերունդներուն համար :

Եւ այս բոլորին հետ՝ կարօտի եւ ուրախութեան անձնական խառն զգացումը, որ կը վերածուի խռովիչ յուզումի, կը ամէն նոր հանդիպում հին, մտերիմ դէմքի մը, քառորդ դարու անդընդային անջրպետով մը հեռացած անցեալը կը վերյիշեցնէ : Գիտնական, արուեստագէտ, գերատան ու գրող, — եւ շատ փոխուած չեն իրենց երեւոյթով կամ խառնուածքով : — Ստեփան Զօրեանը, ապրող ամէնէն տաղանդաւոր հայ վիպագիրը, որ թախծալի, մտայլ պատմուածքներու հովիտէն բարձրացաւ «Պապ թաղաւոր»ի եւ «Հայոց բերդ»ի կատարներուն : Անոր գլուխին կը ծփան յորդ մագերու նոյն ճերմակ ալիքները, եւ գրաւիչ դէմքին քիչ մը աւելի խորացած աղօսները՝ նոյն թարմ ու բարեմոյն արտայայտութիւնը կը կրեն : — Սողոմոն Տարօնցին՝ իր լեցուն կազմով, աշխոյժ գրոյցով ու ջերմ ժպիտով : — Վաղարշակ Նորենցը՝ իր քերթուածներու ոճին նման նուրբ իրանով եւ նոյն տրտում, երիտասարդ դիմագիծով : — Ալազանը՝ որուն սնարին գանուեցանք, կազանդի առթիւ այցելելով իր բնակարանը : 1935ին ան տունը կը մտար դարձեալ, խոցուած ստողութեամբ : Իսկ հիմա, դամուած անկողինին, կը խօսի դժուար, կցկտուր բառերով, բայց տակաւին յծուած գրական աշխատանքի : — Եւ Գուրգէն Մահարին, բազմեքանդ տաղանդով արձակագիր ու բանաստեղծ, եւ օժտուած երգիչ-քանդակող, կարծես քրքշացող ոճով մը : Եւ իրիկնային կիսամութին ու ցուրտ մշուշին խորէն կը մօտենայ ան, յամբօրէն, հիւրանօցի լայն մայթին վրայ, փաթթուած թանձր վերարկուին մէջ եւ գլխարկին տակէն հին գիտախօսի մաղերուն աւելի ցանցաւ, բայց նոյն ըմբոստ փունջերը կը ծփան : Եւ մեր նայուածքները կը փարին իրարու, — իր ձայնը նոյն թաւ ու թաւալային փայփայանքունի, աչքերուն մէջ՝ ամէն տառապանք ու դաւադիր հարուած հեղնոյ ցոլքը, դէմքին վրայ՝ ժամանակի կրունկներուն ձգած հեռքերը, որոնք տոկուն կամքի ու հպարտ արհամարհանքի պատնէշներու վերածուեր են պարտութեան ու փլուզումի որեւէ դահալէժի դէմ : Եւ մեր թեւերը կը բացուին իրարու :

եւ դառնութեան ու ցասումի փոխարէն՝ պատան անցեալի մը հանդէպ, անոնք բոլորը տողորուած են ապրելու խանդով, ստեղծագործելու տենդով եւ նոր բարձունքներ նուաճելու կամքով:

ԺԱ.

Ամէն երկիր ու ժողովուրդ աշխարհի վրայ, որքան ալ հզօր ու փարթամ ըլլան անոնք կամ փոքր ու աղքատ՝ ունին իրենց առօրեայի դառն հոգերը եւ ներքին մտայլ խնդիրները, որոնք առաւել խռովիչ ծանրութեամբ կը ճնշեն այն խաբուսիկ վարկածով, թէ անոնք սեփական են միա՛յն իրենց ազգային խառնուածքին եւ արեւտեսական պայմաններու: Ամէնէն մեծ, աղատ ու հարուստ հանրապետութեանէն մինչեւ տկար, յետամնաց ու թշուառ գօտիները նոր ազատագրուած ցամաքամասերուն՝ պետական ղեկավարներ ու մարդկային զանգուածներ կը դիմադրաւեն կաշառքի ու ոճիրի կամ նիւթական զրկանքներու եւ անչափահասներու շարագործութեան, կամ բարոյական ապստեբման եւ անգործութեան, կամ դասակարգային կռիւներու եւ բռնակալ լուծերու վրդովիչ տապանակները: Եւ այդ շարիքներուն վէրքերը դարմանելու, գոնէ անոնց մակընթաց ծաւալումը խափանելու համար՝ անոնք կը մղեն անվճատ պայքարի ու յամառ խաչակրութեանց արշաւներ:

Պահանջել, մտածել անդամ, որ հայութիւնը, իր անհատներու կեանքի եւ ընկերային կառուցուածքին մէջ, հայրենի սահմաններէն ներս կամ սփիւռքի տարածքին, պէտք է անարատ մաքրութեամբ մը ձերբազատ ըլլայ բոլոր այդ տիեզերական մեղանշումներէն՝ կը հաստատէ առնուազն ցնորական ցանկատեսութիւն մը՝ որ կ'ոտնահարէ ամէն կրօնի դաւանանք, ամէն դիտական ապացոյց եւ բնականութեան ամէն նշոյլ: Որովհետեւ ամէնէն մօլեւսանդ եւ անյուսօրէն կոյր ցեղապաշտն անդամ պիտի չժպրհի հաւատալ ու հռչակել, թէ իր ժողովուրդը կատարելութեան մենաշնորհը ստացեր է գերբնական զօրութենէ մը եւ անոր մարդկային բոլոր բնազդները, ախորժակներն ու կիրքերը, եղծանուած պատ-

րոնքի աւագանին մէջ թաթխուելով՝ փոխուեր են սրբագործուած տաաքիւնութեանց:

Եւ բնականօրէն՝ Հայաստան եւս ունի թերիներ ու դժուարութիւններ: Տուներու եւ հաղուստեղէնի պահասները արագօրէն կը վերացուին հօկայական թափով կատարուող կառուցումներով եւ յարաճուն արտադրութեամբ: Եւ կենցաղային մակարդակը նկատելի չափերով կը բարելաւուի, բայց ո՛չ համընթաց երկրին ընդհանուր ու հոյակապ վերելքին, — ճարտարարուեստական, մշակութային ու շինարարական մարդերուն մէջ: Որովհետեւ աշխատավարձի միջին սակը տակաւին անբաւարար կը մնայ գործաւոր դասին աւելի բարեկեցիկ առօրեայ մը ապահովելու համար: Ծիշք է անշուշտ, որ Հայաստանի բանուորին շարաթականը շատ աւելի բարձր է, յաճախ բաղմապատիկ, քան ինչ որ կը շահին Կեդրոնական կամ Հարաւային Ամերիկայի, Ափրիկէի, Մերձաւոր Արեւելքի եւ Ասիոյ հին ու նոր ազգերուն աշխատաւորները, — բացի Մ. Նահանգներէն, Քանադայէն եւ Եւրոպայի տաղաւոր երկիրներէն ուրեմն: Հայաստանի միջին բնտանիքը երկու գործողներ ունի եւ անոնց միացեալ վաստակով՝ անոր տարեկան եկամուտը կը հասնի աւելի քան 3000 տոլարի, — հաշուելով նաեւ բնակարանի վարձքին անսովոր աժանութիւնը, եկամտային տուրքի չզոյւթիւնը, բրժիշկի, ատամնարոյժի, ակնարոյժի եւ հիւանդանոցի ծախքերուն վճարումը պետութեան կողմէ, եւ դպրոցական կրթութեան լիովին ձրի բնծայումը մինչեւ համալսարան, ուր կառավարութիւնը ի՛նք թոշակ կը վճարէ ուսանողին, անոր ապրուստին հոգը թեթեւցնելով ծնողքին վրայէն: Եւ այդ պայմաններուն նպաստով՝ շահուած գումարը բաւական պիտի նկատուէր միջազգային չափանիշով բնտանիքի մը կենսական պիտոյքները հայթայթելու համար:

Սակայն կենսականի սահմանումը յարաբերական է ժողովուրդի մը զարգացման մակարդակին, որ իր բարձրանալուն զուգընթաց՝ կ'ընդլայնի նաեւ անոր ծիրը: Հայաստանի մէջ՝ հայկական մշակոյթի բոլոր սեւերուն զմայլելի ծաղկումը՝ բնական եւ անխուսափելի ներգործումով պիտի անդրադառնար բնակչութեան ճաշակներուն, բարքերուն ու պահանջներուն վրայ: Եւ իբր հետեւանք հայ բնտանիքին համար օփերան ու պարսնուազը, թատրոնը,

բարձրագոյնն ու նուազահասակներ, հեռուստատեսան ու դրօսանքը աշխուս պերճանքներ չեն, այլ դարձեր են կենսական պիտոյքներ, որոնցմէ կը մերժէ զրկուիլ: Ան կը ցանկայ ունենալ նաեւ աւելի վայելուչ եւ այլազան հաղուստներ, աւելի առատ սեղաններ, եւ դոնեաքը դարդ չէ հիմա, այլ պայման, նոր կօշիկէն նախընտրելի: Քաղաքակիրթ դոյսովիճակի, մշակուած ժողովուրդի մտաւոր ազնուացման ու կենցաղային յառաջդիմութեան ամէնէն պերճախօս վկայութիւնը կուտայ այդ կարիքներուն ու ծարաւներուն ծաւալիլը, որ միայն ինքնաբաւ հրճուանք կրնայ պատճառել պետական վարիչներու եւ ազգային առաջնորդներու:

Եւ որպէս զի դոճուանակ, ուրախ կեանքի այդ նիւթեղէն ու իմացական տարրերը կրաշխատուիին՝ անհրաժեշտ պայման է աշխատավարձի յաւելումը Հայաստանի դործաւոր ու ծառայող մարդոց ու կիներուն: Բարեբախտ իրողութիւն է, որ կառավարական պետեր եւ դործարաններու անօրէններ խորապէս կը գիտակցին այդ ճշմարտութեան եւ կը բաղձան ընդառաջել անոր թելադրած բանաւոր պահանջներուն: Բայց անոնք կը գիմադրակեն դժուարին երկընտրանք մը, որովհետեւ Պորհրդային Միութեան, ուրեմն նաեւ ամէն անդամ հանրապետութեան համախառն պիտօճէն կը գոյանայ, զրէթէ ամբողջապէս՝ անոնց բոլորին արդիւնաբերական ձեռնարկներէն: Այդպէս ամէն ճարտարարուեստէ քաղուած առաւելագոյն շահերու կուտակումէն է, որ կը ստեղծուի հիմնական դրամազուլումը, իբրեւ պողպատ ու շաղախ, եւ մեքենայ ու մկան, ներկայ կօթնամեայ ծրագիրին կատարման համար: Եւ ան կ'ընդգրկէ հսկայական տարողութեամբ նոր դործարաններու կառուցում, քաղաքային շինարարութիւն, սպասման ապրանքներու, հագուստներու եւ անդեղէնի արտադրութեան ծաւալում, որոնք նշանակելի չափով պիտի բարելաւեն ու ճոխացնեն ժողովրդային խաւերու կենցաղային մակարդակը, յաջորդ տասնեակ մը տարիներու շրջանին:

Իսկ եթէ այդ շահուած եկամուտին խոշոր մէկ հատուածը բաշխուի գործաւոր դասերուն շարաթականի յաւելումով՝ նոյն քանակով պիտի նուազի վերաշահարկման դրամազուլումը եւ այն ստեն կօթնամեայ ծրագիրի մը առաջադրուած նշանակէտները պի-

տի կրնան իրագործուիլ 14 տարիէն, ուրեմն կրկնակի ժամանակ զրաւելով: Տարակոյս չկայ, թէ Հայրենիքը արագօրէն զօրացնելու եւ ժողովուրդի առօրեայ կարիքներու դժխեմ անցեալէն խոստացուած ճոխութեան վերափոխուելու համար՝ էական պայման է նախ կառուցանել ծանր ու թեթեւ ճարտարարուեստներու ամուր ու լայնածիր խարխիւները: Եւ պետական ղեկավարներ, դրապաշտ արամբարանութեամբ, կ'ընտրեն ուղին, որ ամէնէն կարճ միջոցին՝ խոշորագոյն արդիւնքը կ'ապահովէ, գիտնալով հանդերձ, թէ բրտակալութեան մեծագոյն դանդուածը ամսանքի ու զրկանքի դառն սուրբ մը վճարել պիտի հարկադրուի:

Բայց Հայրենական Հափանիչով անհրաժեշտ եւ ազգային անսակէտով կենսական այդ անապարանքէն՝ մարդկային մօտեցումով անարդար, թէեւ ակամայ խտրականութիւն մը կ'առաջացանայ: Որովհետեւ, մինչ յաջորդ սերունդին կեանքը անհամեմատ աւելի հանդատուէտ, ուրախ ու ճօխ պիտի դառնայ՝ անոր իրագործման համար աշխատանքի ու զոճողութեան ծանրագոյն բեռը կը կրէ ներկայ սերունդը: Ճիշդ է, թէ այսօրուան յոգացող միտքերը եւ կերտող բազուկները տասը եւ քսան տարի ետք իրենք ալ մասնակից պիտի ըլլան իրենց հսկայ վաստակի հատուցման ու վաճիքին: Եւ թերեւս այն ստեն հպարտ դոճուանակութեամբ լիցուին, որ իրենք են հնարաւոր դարձուցեր այդ պայծառ իրականութիւնը, որ արեւմտեան հնարաւորութեան ենթարկուելով: Սակայն հիմա, մարդկայնօրէն բնական եւ արդար դատումով մը անոնք պիտի նախընտրէին, որ տասնամեայ ծրագիր մը աւարտի 15 տարիէն, եւ այդ տարրերութեամբ խնայուած դրամազուլումը բաշխուի իրենց, թոչակներու յաւելումով: Որպէսզի, Հայաստանը վերակառուցելու, հայոց ազգային վերածնունդն ու մշակութային հրաշալի ծագումը դարբնելու եւ տակաւին՝ ժողովուրդին համար լուսագոյն կեանք մը կերտելու իրենց հերոսական մաքառումին ու տաժանագին ճիգերուն մէջ, եւ անոնց համընթաց՝ աւելի բարեկեցիկ, աւելի հանդիստ ու գուարթ կարենան ապրիլ նաեւ ներկան: Եւ երանի թէ պետական վարիչներ, նոյնիսկ միջազգային մրցակցութեանց յարաձուն ճշումին հանդէպ՝ կարենան գնահատել ժողովրդային այդ ակնկալութեան ու իրաւունքին բանաւոր ուժը եւ բաւարարել

դանոնք առաւել հատուցումով:

Այն ատեն՝ կարգ մը իրական դժգոհութեանց կամ վարկածային վերագրումներու գլխաւոր պատճառները, որոնք նիւթեղէն կարիքներէ կը բխին՝ կը շքանան ինքնին: Նոյնիսկ հիմա, դադութահայ աջեղուն կը հիւրընկալուի որեւէ բնատնեկան յարկէ ներս, հարեանցի հաշուեկշիռ մը կ'ընէ անոր տնտեսական էլեւմուտքին եւ կը գտնէ, որ անոնց հաղուստներն ու սեղոնները աւելի բարելաւ վիճակ մը յայտնեն՝ քան իրենց երեւցող եկամուտը կը թոյլատրէ: Եւ անշուշտ կուտայ ձեւական, ընթացիկ հարցումը:

— Իսկ ինչպէ՞ս է կեանքը, դժուարութիւն կը քաշէ՞ք:

— Այի՛նչ, մի կերպ եղաւ դնում ենք, կուգայ պատասխանը: Կամ՝

— Վատ չի, մի կերպ ապրում ենք:

Այդ «մի կերպը» կը պարփակէ տարբեր եղանակներ, որոնք շատերու միաբերն մէջ կը խոչորնան, կը թանձրանան եւ կը ստանան մթին երանդ ու չարաչուք համեմատութիւն:

Սփիւռքահայ կարգ մը բարեմիտ զրօսաշրջիկներ վարանումով կը փսփսան անոնց մասին, որպէս անխոստովանելի մեղքերու, ենթարկուելով հոգեբանական մթնոլորտի մը անհեթեթ շափանիչներուն, որոնք կատարելապաշտ բայց արտառոյ քմայքով մը՝ կը շափազանցեն, կ'ալլափոխեն դէպի վատագոյնն՝ ինչ սխալ, թերութիւն կամ մեղանշում, որ «հայկական» է: Սակայն առարկայական դատողը նուազ մուշ ու վիպային պիտի նկատէ իրողութիւնը: — Թէ ամէն ուրիշ երկրի նման՝ Հայաստանի մէջ եւս, ընտանիքի մը հայրը կ'աշխատի «մի կերպ» ընդլայնել իր տարեկան եկամուտը, աւելի բարեկեցիկ առօրեայ մը ճարելու ձգտումով, եւ կը դիմէ դանաղան միջոցներու, երբեմն օրինաւոր, երբեմն մըն՝ ապօրինի: Քաղաքէ դուրս բնակողներ իրենց տնամերձ հողաշերտին վրայ կ'արտադրեն պտուղ ու բանջարեղէն եւ մեզր ու պանիր, գանոնք կը բերեն ազատ շուկաները եւ կը ծախեն ինչ գինով որ կը ցանկան, յաճախ սեւապական սակերէն աւելի սուղ: Բանուորներ ու մասնագէտներ կը կատարեն յաւելեալ գործեր իրենց աշխատանքի ժամերէն յետոյ: Օրինակ՝ բժիշկներ եւ ատամնարոյթներ կը ծառայեն հիւանդանոցներու մէջ ու կը վճարուին բաւարար թո-

շակ: Բայց նաեւ անոնցմէ շատեր ունին անձնական դրասնեակներ, ուր հիւանդներ կը դարմանեն սեփական հաշիւին: Եւ փողոցի դրան կողքին գամուած մարմարի կամ յախճապակիի շերտեր կը ծանուցանեն անոնց անուաները եւ ընդունելութեան ժամերը: Այդ պիտի իրաւունքներ կը կիրարկեն նաեւ ուսուցիչներ, մասնաւոր դասեր տալով:

Իսկ որմնադիրը կամ ատաղձագործը որոշ կանոն մը կը կոտրէ, երբ իր օրուան գրադումէն ետք՝ կ'երթայ անձնական տուն շինողի մը համար կ'աշխատի, եթէ մասնաւանդ՝ բացակայ ըլլայ վերակացուն եւ ինք մէկ ժամ կանուխ մեկնի, կամ բուռ մը գամ լցնէ գրպանին մէջ: Յուզիչ փորձատուութիւն մը եղաւ զրոյցս անոնցմէ մէկուն հետ: Չմեռնային ճիւղախառն անձրեւի ցուրտ օդ է եւ իրենց բացօթեայ պարապմունքը դադար առեր է քանի մը օր: Բայց ինք տունը մնալու փոխարէն՝ ծանօթի մը բնակարանին վրայ սնեակ մը կ'աւելցնէ, բնական է՝ իր թոշակէն դուրս վճարում ստանալով: Եւ մինչ կը պատմէ՝ իր դէմքը կը շեկնի ամօթէն, ծանր յանցապարտի խղճահար արտայայտութեամբ: Ան խոնարհ չքմեղանքներ կը մըմնջէ:

— Ի՛նչ անեմ, խոչոր ընտանիք ենք, պէտք է շահիմ էնքան շատ փող որ կարող եմ:

Եւ ես կը մտածեմ, — ա՛խ, փոյթ չէ թէ ի՛նչ վարչակարգի տակ ապրի՝ աճա նոյն ազնուօրէն միամիտ հայր, բարիի ու շարի եւ ճշմարիտի ու սուտի խորունկ գիտակցութեամբ համակուած: Եթէ միայն ան գիտնար, թէ արեւմտեան աւելի փարթամ երկիրներու մէջ, իրեն արհեստակից մարդիկ, շատ աւելի առատ վաստակով, ինչպէ՞ս պիտի ծիծաղէին իր խղճահարութեան վրայ, — իրենք, որ ճարպիկութիւն, խելացութիւն կը դաւանին իրենց անհամեմատ աւելի յանդուգն ու մեղապարտ զեղծումները եւ անոնցմով կը պարծին իրարու:

Եւ կան անոնք, որոնք աշխատանքի վայրերէն ապրանքի կը տոր կամ առարկայ կը տանին տուն եւ անոնցմէ հաղուստ, կօշիկ կամ ուրիշ պիտոյքներ շինելով՝ կը ծախեն որեւէ փողոցի մէջ, կամ որոշ շնորհքներ կը վաճառեն կաշառքով, պործի կամ բնակարանի հայթայթման առթիւ: Եւ ինչ որ արտակարգ է եւ աղնուա-

կան այդ կառուցելան մէջ՝ այն դարձանալի իրողութիւնն է, որ ոչ միայն իշխանութիւնը, այլ նաեւ ժողովրդային խաւերը, ուրեմն «մեղանշողները» իրենք, չեն փորձեր արդարացնել, կամ բացաւարել նոյնիսկ այդ արարքները, այլ զանոնք կը պարսաւեն շատ աւելի անողոր խոտութեամբ՝ քան իրեն պիտի թույլատրէր սրեւէ օտար դատախազ, քան պիտի թելագրէր խարանուած «յանցանքին» բնոյթը կամ տարողութիւնը:

Քանի մը հագի ենք եւ Աբովեան փողոցէն կ'իջնենք Արժենիա Հիւրանոց, եւ կը խօսակցինք նաեւ այս երեսոյթներուն մասին: Յանկարծ, մայիթին վրայ խումբ մը մարդիկ կը մտանանչէ ան:

— Տեսնո՞ւմ ես սրանց: Էն որ մէջտեղում կանգնել է, ձեռին ունի մի շապիկ եւ մի քանի դոյզ գուլպաներ: Նա դրանց գողացած կը լինի իրա աշխատած դործարանից եւ Հիմի ծախում է որեւէ անցորդի, կ'ըսէ ան վրդոված ձայնով:

— Բայց չի՞ կրնար պատահել, կը պատահանեմ վարանելով, որ ասոնք իրեն նուէր եկած բլլան արտասաճմանէն, եւ մեծ կամ փոքր են եւ ինք կը նախընտրէ վաճառել զանոնք:

— Էղպէս էլ կարող է լինել, ի հարկէ, բայց էլի շատ կան էն միւս տեսակից:

Աւելի վար կը տեսնենք ուրիշ վաճառորդ մը, որ մէկ ձեռքին զոյգ մը կօշիկ եւ միւսին՝ մուճակ, կը սակարկէ երեք հաւանական յաճախորդներու հետ:

— Սա էլ երեւի աշխատում է կօշիկի դործարանում, էն տեղից թոցրել է կաշին, տանը ձեռքով կարել է դրանց եւ Հիմի ծախում է լաւ գներով, կ'ըսէ ուրիշ ձայն մը բարկացող շեշտով,

— Այո՛, կը յարեմ խնդալով, բայց այս մարդը ահագին ժամանակ տուեր է այդ կօշիկը շինելու համար եւ կարծեմ իրաւունք ունի իր աշխատանքին վարձքը գանձելու: Իսկ ոտտիկաններ, որ կը պատին ահա, չե՞ն հետապնդեր, կամ զոնէ չե՞ն արդիւր այս մասնակի «տոււուրը»:

— Նրանք էս դէպքերում ոչինչ կարող են անել... դժուար կը լինի յանցանք հաստատել:

Երեւանի մայիթերուն որոշ կէտերուն վրայ կան խցիկներ, ուր կը վաճառուին թերթեր ու գիրքեր, կամ ծխախոտ ու շաքարիզէն,

կամ յիշատակի առարկաներ: Ասոնք ինծի ցոյց կուտան անոնցմէ մին, փայտաչէն ու բոլորածեւ, որուն մէջ նստած է չափահաս այր մը, մէկ կողմն՝ գոնեակի քանի մը կնքուած շիշեր:

— Հիմի նայիր սրան, կարո՞ղ ես երեւակայել թէ սա ինչպէս է խարում պետութեանը: Ասենք առաւօտեան սրան տալիս են տասը շիշ կոնեակ, որ հասը հինգ ուսրիսով վաճառի եւ երեկոյեան 50 ուսրիս յանձնի ուր որ հարկն է: Իսկ սա էլի մի պատառ պոկում է իրա համար:

— Բայց կարելի՞ է տալիս, երբ դումարը այդքան պարզ է, կը հարցնեմ զարմացած: Վերջապէս ան սախալում է տասը շիշերուն հաշիւը ըման տալ, չէ՞:

— Ի հարկէ տալիս է էղքանը: Բայց պատահում է, որ անցորդներ ցանկան մի-մի փոքր բաժակով կոնեակ խմել հենց իրա մօտ: Էղ պարագայում նա բաց է անում մի շիշ եւ ծախում է բաժակի արժէքով: Իսկ էղպէսով աւելի փող է դոյանում:

— Իսկ եթէ դաւաթով խոռոչներէն մէկը պետական քննիչ բլլայ, եւ եթէ վաճառորդը իր իրիկուն հաշիւը միայն տասը շիշերուց շիշերով տայ, իր զեղծումը չի՞ յայտնուիր:

— Հասկանում եմ, էղ դէպքում նա կարող է 9 շիշերի հաշիւը յանձնել հնդական ուսրիսով, իսկ մէկին էլ բաժակի դներով, եւ ազատ կը մնայ ամէն կասկածից:

— Այո՛, սակայն այն ատեն ի՞ր ձեռքը ինչ կը մնայ որ...:

— Գեոնեւ կարող է մի բան մնալ, էլի... գուցէ նա երկու շիշ ծախած կը լինի բաժակով:

Ես թեւերս կը նետեմ օդին մէջ, յուսահատ համակերպումով եւ գոպում ծիծաղս կը պայթի յանկարծ, լիախինդ քրքրչի ու արտում հեծեծանքի խոտուրդով մը, մինչ կը նկատեմ մեր շուրջը երթեւեկող մարդոց ու կիներու ապշահար ակնարկները:

— Իսկ ինչի՞ ես ծիծաղում, գուարճալի բան ասացի՞... կը հարցնէ զարմացած:

— Ա՛խ, ո՛չ, անշուշտ ոչ, ... կը պատասխանեմ ... եւ չեմ գիտեր, աւելի սերախութեան թէ վիշտի խնդուք է սախկա...: Բայց մէկէն, հայկական նկարադիրը պատկերացաւ միաքիս մէջ: Ինչ միամիտ ու բարի, եւ ինչ խոտաախրտ ու անողոր խոտուածք,

— Իր գարաջը մտնի բարբերէն ու սովորութիւններէն յաճախ խղուած եւ անոնցմէ վեր՝ կատարեալին վիպապաշտ ձգտումով: Եւ կը մըտածեմ մեր խեղճ Պապ եւ Արշակ Թաղաւորներուն... ամբողջ 16 դար այդ քաջ, հայրենասէր արքաներուն անունն ու յիշատակը Թաղեցիներ անարդանքի գիրտին տակ: Անոնք եւ ուրիշներ՝ անբարոյական են, վճռեցիներ, — կնապոզ են, արուազէտ են, — շանդրադարձանք իսկ, թէ մարդ նոյն ատեն կնամու ու արուամու չի կըրտար ըլլալ...: Ուզեցիներ, պահանջեցիներ, որ մեր իշխանապետները սրբակեաց Թաղակիրներ գառնան եւ իրենց արքունիքը վերածեն մենաստանի եւ անոր դարպասին վրայ դամեն տասնարանեայ պատուիրաններու տախտակը եւ անոր ներքեւ, հրեղէն տաւերով աղղարարութիւն մը, — մուսքը արգիլուած է գանոնք կոտորոցներուն համար: Եւ այդ չափանիշը ժամանակի մը մէջ՝ երբ բոլոր միւս արքունիքները, Տիգրանէն մինչեւ Բիւղանդիոն ու Հաւս, սանձազերծ անառակութեան, սողոմսկան մեղքերու եւ ահաբեկի ուճիրներու փառաշուք եւ եղեմական որջեր էին...: Արդա՞ր էր, բանաւոր էր նման ակնկալութիւն մը, անշուշտ ոչ: Եւ տակաւին շատ չէ փոխուեր հայկական մաքրակրօն մտայնութիւնը: Այսօր ալ, մեր ազգային ամէնէն սխերիմ թշնամիերը անգամ այնքան անողորմ, մուկդին խոտուիեամբ չեն դատապարտեր հայոց որեւէ թերութիւնն ու սայթաքումը՝ որքան կ'ընենք մենք մեզի, եւ կարծես հաճոյք ալ տոնելով ասկէ: Աշխարհի ամէն կողմը, մարդիկ կաշիի ամբողջ գործարան մը, կամ գոնեակի հսկայ դտարան մը կը կլանեն, յաճախ անպատիժ, եւ ոչ ոք կը վրդովի: Հոս, անոնց նըմանները՝ ափ մը կաշի կամ քանի մը բաժակ գոնեակ կ'առեւանդեն, զայրոյթով կը բարբոթինք, եւ կ'ուղենք մեր ակառները Թաղէլ անոնց վիզերուն մէջ...:

— Ուրեմն չպէ՛տք է պարտուել որանց վատ արարքնե՞րը, չպէ՛տք է պատժել նրանց իրրեւ յանցապո՞րծ:

— Անշու՛շտ որ պէ՛տք է... եւ սքանչելի յաղթանակ է, ունենալ մաքուր, ազնիւ, կատարեալ կեանքի նոյնիսկ տեսլական մակարդակ մը իրրեւ նշանակէտ: Բայց պայմանով որ ամբողջապէս չխոգուինք մեր շրջապատէն, համամարդկային ըմբռնումներու եւ կենցաղի չափանիշներէն: Հարկաւ պէ՛տք է քննադատել այս վրի-

պանքները, եւ արդիւլէլ զեղծումները, որքան ալ փոքր ըլլան անոնք, եւ դատարարակել կամ պատժել անոնց հեղինակները: Սակայն ես երկու հիմնական սխալ կը տեսնեմ ձեր վերաբերմունքին մէջ: Մէկը ա՛յն, որ շատ կը չափազանցուի այդ դործուած յանցանքներու որակն ու տարողութիւնը: Միւսը այն՝ որ «հայկական», այսինքն «ազգային» նկարագիր կը տրուի անոնց, — իրրեւ սպասելու եւ սո՛թ սփռելով ամբողջ հայ ժողովուրդին վրայ: Որովհետեւ, ուրիշ ո՛չ մէկ երկիրի մէջ կը դործադրուի այդ կերպը: Սրինակ, — ամերիկեան ինքնաշարժի եւ այլ ճարտարարուեստական ընկերութիւններ իրենց տարեկան հաշուեկշիռներուն մէջ կ'արձանագրեն քանի մը տասնեակ միլիոն տոլար արժող մասերու եւ դործիքներու «կորուստ», — ո՛չ իսկ կ'ակնարկուի, թէ անոնք զուգուած են գործաւորներու կողմէ, այլ պարզապէս «կորուսած»: Ամէն մեծ վաճառատուն, երեկոյեան փակուելուն, իր հազարաւոր ծառայողները կ'արձակէ մասնաւոր դուռերէ, ուր պահակներ կը կանդնին, ստուգելու թէ անոնք որեւէ չընուած ապրանք կը տանի՞ն տուն: Եւ սակայն կը տարուի՞ն, խոշոր քանակութեամբ: Ամէն սարի՛ հարիւր միլիոնաւոր տոլարի արժէքով առարկաներ կը «վերցուին» խանութներէ եւ վաճառատուններէ, օր ցերեկով ու բազմութեան մէջ: Բայց ոչ ոք կ'ըսէ թէ կը «զուգուին» անոնք, այլ միայն, անգլերէն սահմանումով՝ «շափ լիֆթըրը», այսինքն «խանութէ վերցնողներ» կը կոչուին յանցապործները եւ եթէ բռնուին՝ թէթեւ տուգանքի պատիժ մը միայն կը ստանան: Իսկ քրէական ուճիրները, — հրեղէնով ու զնգացիրով աւաղակութիւն, մարդասպանութիւն, նոյնիսկ մատաղ աղջնակներու բռնաբարում, իրենց ծաւալով եւ ահաբեկի վայրագութեամբ կը մտատանջեն կառավարական պետեր եւ հանրային առաջնորդներ, բայց ոչ խուճապի կը մատնեն, ոչ ալ կը վճատեցնեն զանոնք: Եւ մտանաւոր՝ ոչ մէկ քաղաքացի իրեն թոյլ կուտայ խորհելու եւ յայտարարելու մէջ այդ արարքները ամերիկեան ժողովուրդին յատուկ մեղքեր են, անոր ազգային մարմինին սեփական վէրքեր են, — այլ պարզապէս մարդկային այլասերման անհատական պոթիկումներ, որոնք կը պատահին ամէն ցամաքամասի վրայ, ամէն երկիրի տակ, առաւել կամ նուազ ուժգնութեամբ:

— Էդ բոլորը ճիշդ են: Բայց դրանք պատահում են «կապի-
տալիստական սիտեմ»ի ներքե, եւ դա հասկանալի է: Իսկ մեր
«կոմունիստական» հասարակարգի տակ չպէտք է էդպիսի յան-
ցանքներ եւ սճիրներ դործուեն:

Իր ձայնին մէջ ընդվզումի վերաւորումը շեշտ մը կը դո-
ղայ, կը նայիմ իրեն եւ կը մպտիմ:

— Աւրիչ սխալ մը՝ այդպիսի վիպային իտէալով դատելն է: Քրիստոնէութիւնը եւ այլ մեծ կրօններ եւ քաղաքային վարչաձե-
ւեր քանի մը հազար տարուան ընթացքին տես չլաճողեցան մարդը
ձեռքազատել իր կիրքերէն ու մոլորութիւններէն: Դուք ինչպէ՞ս
կրնաք յուսալ այդպիսի անկարելի հրաշք մը քառասուն տարուան
մէջ, երբ դեռ լմանկ սերունդ մը անդամ չէ փոխուած: Օր մը ան-
շուշտ կտրելի պիտի դառնայ առիկա, — մարդոց մէջէն ջնջել
աղմուտ ախարժակները, մանաւանդ կայէնի մեղքը: Բայց կը վախ-
նամ թէ տակաւին հեռու ենք այդ երջանիկ հանդրուանէն եւ...:

Եւ հետուէն, արեւէն փարատող մշուշին մէջէն, կը բացուի
ուրուագիծը Սասունցի Դաւիթի պղնձաձոյլ խոյանքին:

Այդ մտայնութենէն կ'ազդուին ու նաեւ դայն կը սնուցանեն
գազութահայ այցելուներէ ոմանք, երբեմն բարեմիտ ասիոտան-
քով, երբեմն պղտոր շարժառիթով: Բայց առարկայական ու պար-
կեշտ գնահատում մը հայրենի բարոյական միջավայրին ու կեն-
ցադային պայմաններուն՝ զանոնք պիտի մղէր աւելի ճշգրիտ եզ-
րակացութեանց եւ պիտի պաշտպանէր գիրենք քմահաճ վարկածնե-
րու եւ անճեթեթ վերագրումներու մոլորանքէն: Այդպէս.

Սփիւռքահայ գրօսաչըջիկը, որ իր բնական օտար որեւէ քա-
ղաքին փողոցներուն մէջ յաճախ կը հանդիպի մարդոց, որոնք շա-
պիկ, վերարկու կամ փամացոյց ու դարդեղէն՝ կը փորձեն ծախել
իրեն դադանի փսփսուքով եւ անոնց միայն կէս կամ քառորդ գինը
ուզելով, — ապացոյց՝ գողցուած տպրանք ըլլալուն, — հազիւ թէ
իրաւունք ունի վրդովուածի հովեր աններու, երբ Երեւանի մէկ
պողոտային վրայ կը տեսնէ մէկը՝ որ ստաիկանի նայուածքին
տակ՝ գոյգ մը կօշիկ գուլպայ կամ գլխարկ մը կը ջանայ վաճառել
անցորդներու, յաճախ անոնց արժէքէն աւելի գին պահանջելով:

Կամ երբ Հայաստան կ'այցելեն արտասահմանեան երկիրնե-

րէ, ուր նախագահ, վարչապետ կամ նախարարներ ապականու-
թեան աիդմին մէջ թաթխուած՝ խիզճ ու հայրենիք եւ սկզբունք ու
ժողովուրդ աճուրդի հանած են ներքին շնորհներու եւ միջադա-
ման վաճառքներու շուկաներու վրայ, ուր կաշառքները տասնեակ
եւ հարիւրաւոր միլիոն տուարով կը դումարուին, եւ իրենք բնական
կը դանեն այդ ամէնը՝ պէտք չէ խոտովիլ ձեւացնեն, եթէ լսեն որ
Երեւանի մէջ, գրասենեակային վարիչ մը հարիւր կամ հինգ հա-
րիւր ուրբի «պարգեւ» տուր է կասարուող դիմումի մը ընթացքը
փութացնելու համար:

Կամ՝ մինչ իրենց սպրած ստաններուն մէջ՝ սեռային վա-
տասներումը անատակութեան գիշերային «ակումբ»ներէն կը յորդի
մինչեւ փողոց ու հրապարակ, եւ կիներ, անգամ մանուկ աղջիկներ
բանարարելու եւ սպաննելու սճիրները կը ճարակին սանձարձակ,
եւ մայթադիճներու թշուառ լեղէնը պողոտաներու վրայ յաճա-
խորդ կը հալածէ ցերեկ ու դիշեր, կամ վաւերական հանրատուներ
եկեկտրական գունազեղ լոյսերով իրենց կործանուած զոհերուն
անունները կը ծանուցանեն որպէս խայժ՝ փարիցեսիական ամբա-
բիշտ կեղծիք կ'ըլլայ դայթակգածի պարտաւ արձակել, — լսելով որ
Հայաստանի մէջ եւս կը պատահին սիրային արկածներ, կամ տես-
նելով որ հայ աղջիկ մը Երեւանի մէկ մայթին վրայ պշրանքով կը
ժպտի երիտասարդի մը:

Անցեալ դարերուն, բարոյականի բմբունումը աւելի բարձր
եւ անոր կիրարկուած չափանիշը ստաւել խիստ եղած է հայ ժողո-
վուրդին մէջ, յարաբերաբար ուրիշ ազգերու բարքերուն: Բայց
անմիտ ինքնախարութիւն եւ կեղծպարիշտ մաքրակրօնութիւն պի-
տի ըլլայ հռչակելը, նոյնիսկ ենթադրելը, թէ ապրելու, ստեղծե-
լու, գրօնելու կենսախայտ սէրով ու վարարուն տենչով՝ տողոր-
ուած մեր նախնիքները՝ արքայական արքունիքէն մինչեւ գեղջկա-
կան հիւղերն ու մարագները՝ կաշկանդուած մնացեր են հաւատա-
բիմ մոնուսիի ուխտերու եւ անարատ պատիւի օրէնքներու կա-
պանքներուն մէջ: Հայ գրականութիւնը, — իր հնազոյն մատենա-
գիրներէն մինչեւ միջնադարեան աշուղները եւ մինչեւ Թումանեան,
Նարդոս ու Շիրվանզատէ, եւ կամսարական, Ջօհրայ ու Ջապէլ
Եսայեան՝ կենդանի, գեղակերտ վերաբաղումը կուտայ անոնց

տղնի սէրերուն հետ, նաև խանգի եւ հեշտանքի ապօրէն, դարտուղի պոռթկումներուն պատկերները:

Հիմի եւս, անհեթեթ ու ծիծաղելի խաբկանք պիտի ըլլայ հաւատարմ, եւ ապերասան կեղծիք՝ ակնկալելը, որ Հայաստանի մէջ ամէն այր ու կին անեղծ պահէ իր ամուսնական անխախտ հաւատարմութեան կնիքը, եւ ամէն աղջիկ ու տղայ տարի պղատոնական անմարմին սէրերու գերբնական անբժուկեամբ: Հոն ալ մարդկային կիրքը երբեմն կը պայթի յանցապարտ շնորամով կամ քրէական բռնութեամբ: Բայց տակուին, դատելով բարոյականի միջադրային չափանիշի մը վրայ, անժխտելի ճշմարտութիւնը կը մնայ, որ Հայրենի ժողովուրդին մէջ բնականական պատիւի ըմբռնումն ու պահպանումը անհամեմատ գերազանց մակարդակի մը վրայ կը գտնուի այսօր: Եւ այդ իրողութիւնը կրնան ապացուցանել նոյնիսկ խիզճի ու պարկեշտութեան այն չքաւոր, եղկելի բնկեցիկները, որոնց յարկերուն տակ եւ շրջանակին մէջ սեռային ապականութեան եւ ալլասերման շարունակ ու դիրտը կուտակուած գարշուկիւն կը սփռեն իրենց շուրջ:—Բայց որոնք, օտար պետական բաժանմունքներու կը վաճառեն, անարդ վատութեամբ, այն գաղբի զրպարտութիւնը, թէ Հայաստանի կիներն ու մարդիկը ամբողջապէս «անբարոյացած» են եւ Երեւան, ինչպէս միւս քաղաքները, դարձեր են խոշոր «բողանոցներ», ուր «կոյս աղջիկ չէ մնացած»:

Ճիշդ է հարկաւ, որ բաղդատարար նուազ է հասուն կոյս աղջիկներու թիւը Հայաստանի մէջ: Բայց ո՛չ այն պատճառով, որ անոնք կ'իյնան անառակ վարքով, այլ որովհետեւ, խոշոր մեծամասնութեամբ, անոնք կ'ամուսնանան իրենց դեռատի տարիքին եւ կը դառնան մայր, ու դեռ անոնցմէ շատեր կը շարունակեն հետեւիլ համայնարանի եւ ուրիշ բարձրագոյն կրթական հիմնարկներու գասննթացքներուն, պետութեան ծախքով: Եւ հակառակ, որ գիտութիւնն ու ճարտարարուեստը հրաշալի զարգացում արձանագրեր են հոն՝ սակայն դեռ հայ գիտնականներ չեն իրագործած հրաշքը, որով ամուսնացած ու գաւակ ունեցած ծաղկատի կիներ պահեն նաև իրենց կուտութիւնը: Նոյնիսկ արեւմտեան չա՛տ աւելի հոգի ու փարթամ երկիրներու մէջ՝ դժուա՛ր թէ ընտանիքի մայրեր կարենան նաև մնալ կոյս աղջկայ փիճակով, — երբ շատեր

գայն լքած կ'ըլլան նոյնիսկ դեռ շամուսնացած:

Այլապէս՝ գաղութահայ այցելուն հաճելի զարմանքով պիտի հաստատէ, թէ Հայաստանի մէջ չկան սողոմական զուարճութեան յայտնի կամ գաղտնի որջեր, չկա՛ն բախտախաղի եւ գինարուքի վայրեր, չկա՛ն հանրատուներ: Բայց աւելի յատկանշական վկայութիւնը, որ ան 5-6 շաբաթներ կը շրջագայի Երեւանի նման առաջաւոր, բազմամրոխ ոստանի մը մէջ, եւ որեւէ փողոցի ու հրապարակի վրայ, որեւէ ստուերի կամ ծածքի տակ չի տեսներ գրկախառնուած ու համբուրուող զոյգեր: Թատրոնի, օփերայի ու նրուագահանդէսի շքեղ սրահներէն ներս՝ գերակշիռ թիւ կը կազմեն գեռահաս կիներ եւ աղջիկներ, շորհալի ու գեղեցիկ, բայց դժուար է գտնել կիսամերկ լանջքեր ու հոլանի թիկունքներ եւ կարելի չէ տեսնել սիրաբանող պատանի կամ երիտասարդ թեւեր ու շրթունքներ: Իսկ առաջնակարգ ճաշարաններ կը լեցուին ամէն տարիքի այրերով, որոնք կը հաւաքուին սեղաններուն շուրջ, կը ճաշեն, կը խմեն գոնեակը ու գինին եւ աշխոյժով կը խօսակցին իրենց անձնական գործերուն, հանրային խնդիրներու եւ գրական հարցերու մասին, երբեմն խմիչքէն խանդավառ ու դերերջանիկ՝ զուարթ, յանդուզն մանրագէպեր պատմելով իրարու, մինչ անոնց նշանածը, կիներ կամ աղջիկները կը մնան տունը, հոբեակ, նոյնիսկ պահպանողական համեստութեամբ մը:

Բոլոր այդ շաբաթներուն, ցերեկին կամ գիշերուան ուշ ժամերուն, լոյսով ողողուած պողոտաներու եւ կիսաստուեր փողոցներու մէջ, հետաքրքիր անձկութեամբ կը դիտեմ, կը փնտռեմ որեւէ բռնութեան արարք, զողութեան փորձ կամ պարզապէս՝ բորբոքած ինքնասիրութեանց դուրսուրբ: Եւ ուրախ կ'ըլլամ, թերեւս նաև յուսախար, որ այդպիսի դէպքի մը ակնատես դառնալու առիթը չեմ ունենար բնաւ: Միակ բուն բանակալու, որուն ներկայ կը դառնուիմ, հանրակառքի մը մէջ տեղի կ'ունենայ եւ անոր երկու այր ախոյեանները երբ կ'իջնեն նոյն կայանը՝ մայթին վրայ վէճը կը շարունակուի պահ մը առաւել զրգուած կիրքով: Բուռնցքներ կը պրկուին ու կը բարձրանան: Իսկ ես կ'ափսոսամ, բայց նաև կը սպասեմ մեղաւոր ակնկալութեամբ, որ Հայրենի կռիւի մը յիշատակը կրեմ հետս: Սակայն միջամտող անցորդներ կը յաջողին

Հանդարտեցնել զանոնք եւ միջազգայր կը փակուի անոնց խաղաղ մեկնումով :

Եւ տակաւին՝ սփիւռքահայ ծնողներ անցելարադճ նախանձով պիտի ստուգեն թէ Հայաստանի մէջ հայրը եւ մայրը ոչ միայն կ'արժանանան իրենց զաւակներուն երախտագէտ սէրին ու ակնածանքին, այլ անոնք գործօն հեղինակութիւն ունին իրենց ազուն կամ աղջկան ապագան դժելուն եւ ամուսնութիւն կնքելուն մէջ: Յաճախ իրենք կը յարմարցնեն զոյգերը, կամ կը հաւանին դանքուած թեկնածուին, եւ յետոյ, հարսանեկան ամէն կարգադրութիւն կը ծրագրուի եւ կը գործադրուի ծնողներուն կողմէ: Եսկ հարսանեկան խրախճանքները կը շարունակուին հայրենի Հնամեայ, նուիրագործուած սովորութեամբ, — գիւղերու մէջ՝ երեք օր, կամ ամբողջ շաբաթ մը, խորոված գառնուկներու շուրջ վերակսելով երգը, նուագը, պարը եւ մանաւանդ՝ որեւէ «կենաց» պարպը ուղ բաժակներու անվերջ արշաւը: Եւ բաղաքին մէջ, ամբողջ գիշերը մինչեւ առաւօտ, ուտելիքներով, գոնեակով, օղիով ու գինիով ճոխ սեղաններու վրայ, — ուր ամէն ներկայի բաժակաճառեր կը ձօնուին երբեմն քանի մը բարեկամներու կողմէ, անոր յատկանիշներուն յաճախ միօրինակ եւ երբեմն ինքնատիպ ու սրտազեղ ներբողումով, որոնց կը պատասխանէ ինք, միշտ բոլոր բաժակները լեցումով:

Պապենական ամանդութեանց հաւատարիմ պահպանումին մէջ յուզիչ երեւոյթ մը կը մնայ նաեւ Նոր Տարուան տօնախմբութիւնը, որ կը սեւեւ ամբողջ շաբաթ մը, երբ կաղանդի ու բախտութեան խրախճանքի եւ լիայտըզ զգացումներու վարակիչ ջերմութիւնը կը թանձրանայ փողոցներուն մէջ եւ յարկերու տակ, եւ Երբ բարեկամներ ու ազգականներ փոխադարձ կ'այցելին իրարու՝ Նոր Տարին շնորհաւորելու եւ լուսպոյն գալիքին մաղթանքները բաշխելու: Օրեր առաջ, Լենինի մեծ հրապարակին վրայ կը կանգնի հսկայ տօնածառը, հարիւրաւոր գունազեղ ելեկտրական լամպերով լուսավառուած: Բնական է կարելի չէր այդքան վիթխարի կաղանդի ծառ մը գտնել ու փոխադրել հոն: Եւ ուղղակի՝ շինեցին զայն: Նախ բանձրացուցին փայտէ եւ երկաթէ կոնձեւ խոշոր կմախքը, յետոյ անոր բոլորաթիքը, ստորստէն մինչեւ գագաթ՝ կապեցին քա-

նի մը տասնեակ փոքր գալար ծասեր սրպէս անոր ճիւղերը, ապա ասելցուցին զարդերն ու լոյսերը եւ կանգնեցաւ զեղեցիկ, փարթամ տօնածառը՝ բազմալարի շէնքի մը հասակով: Եւ անոր առջեւ, աստիճանաբար՝ բազմալարի շէնքի մը հասակով, իսկ երկուքին վըհազին կաղանդ պապա մը դարձեալ ձեռակերտ, իսկ երկուքին վըրայ՝ յամբօթէն իջնող ձիւնի սպիտակ կախարդանքը, եւ անոնց շուրջ՝ ժողովուրդի, մանաւանդ մանուկներու մշտական խաղն ու ծիծաղը:

Նոր Տարուան առաւօտեան, նախաճաշէն յետոյ, մենք ալ դուրս կ'ելլենք շնորհաւորական այցելութեանց եւ կը վերադառնանք կէս գիշերէն ետք: Գժուար է հաշուել, քանի՛ տուն մտանք, քանի՛ ձեռք սեղմեցինք: Բայց ամէն սեղ կար յարգարուած սեղանը, փարթամ կամ համեստ, մսեղէններով, խորտիկներով եւ դօնեակի ու գինիի շիշերով բեռնաւոր: Եւ ամէն ընտանիքի սեղանին շուրջ կը նստի այցելուն կէս ժամ, կամ ժամ մը եւ անլի, զուարթ զրոյցի, լիախինդ ծիծաղի եւ անխուսափելի բաժակաճառերու նոր յայտագիրով մը:

Եւ երկուց մը, երկար, լիառատ սեղան մըն է Տիկ. Բերսարէ Գրիգորեանի տան ընդարձակ հիւրանոցին մէջ, սարքուած՝ Արտասահմանի հետ Մշակութային կապի Հայկական Ընկերութեան կողմէ, որուն ձեռնբեկց, նուիրեալ նախազահուհին է ան: Մօտ 25 հոգի ենք եւ ամանորի խինդը բոլորի գէմքին վրայ կը ժպտի եւ շրթներուն մէջ կը քրքջայ: Սրտատուչ, արասկարգ երեւոյթ, — որ կազմակերպութեան ամբողջ անձնակազմը ներկայ է, ինչպէս ընտանիքի մը հարազատ անդամները, նախազահէն ու փոխ-նախազահէն՝ մինչեւ քարտուղարները եւ ինքնաշարժներու վարիչները (շաֆըր), անխորական ոգիով ու հաւատարմերու մտերմութեամբ, ուր գիրքի ու տիտղոսի խրամտները լեցուեր են հասարակաց նպատակի մը համոզումին ու ծառայութեան բարեբար արգիւնքնպատակի մը համոզումին ու ծառայութեան բարեբար արգիւնքնպատակի մը համոզումին: Սեղանապետն է յայտնի գրող Հրաչեայ Բոչարը, օժտուած գրաւմատայ՝ բացառիկ ձիրքերով, որ սովորական «կենաց»ի մը առաջարկի մէջ, պերճ հայերէնով մը կրնայ խտացնել խորունկ իմաստն ու սրամիտ երգիծանքը եւ արժէքի մը զուսպ ու փազաբլիչ դրուատիքն ու հայրենասիրական յորդ խանդը: Եւ բաժակաճառերը, կառակով, ծիծաղով ու երգերով ընդմիջուած՝ կ'աւարտեն սե-

դանին շուրջ իրենց դնացքը, բնթացիկ շարքով եւ երբեմն անսովոր խորքով :

Մշակութային կապի Ընկերութիւնը կենդանի, աճող կամուրջ մը դարձեր է Հայաստանի եւ արտասահմանի հայութեան միջև : — Կարծես սփիւռքի անպաշտօն պատուիրակութիւնն է մայր երկրին մէջ, միակ գերով, միակ առաքելութեամբ մը, որ ընդլայնէ եւ ամրացնէ Հայ Ժողովուրդի հոգմացրիւ, տարտղնուած համայնքներուն ազգային, ոգեկան ու մշակութային հաղորդակցութիւնն ու կապերը հայրենի բնակչութեան հետ : Ան յարարերութիւն կը պահէ եւ գիրքեր ու հանդէսներ կը զրկէ զազգութահայ հարիւրաւոր թերթերու, մարմիններու եւ գրողներու : Եւ Հայաստան աշխարհ ճիւղեր ու դբօսաշրջիկներ, սրեւէ ճամբորդական խնդիրի եւ տեղական հարիւրի հանդէպ՝ կը դիմեն անոր դրասենեակները, ուր հնարաւոր ամէն օժանդակութիւն կ'ընծայուի անոնց : Ընկերութեան ղեկավար ու պաշտօնեայ կիներուն ու մարդոց բարեկիրթ, սրտալին վերաբերմունքը եւ օգնելու, ծառայելու ինքնարուխ յօժարութիւնը՝ զայն կը դարձնեն իր կոչումին պարտաւորութեանց ընդունակ եւ արժանի կազմակերպութիւնը : Անոր գլխաւոր դահլիճին մէջ էր, որ 'երեկոյ մը հանդիպում սարքուեցաւ արտասահմանի տարրեր զազութիւններէն Հայաստանի պետական համայնարանը ուսանելու եկած հայ տղոց եւ աղջիկներու հետ, որոնց թիւը հարիւրի կը մօտենայ : Անոնք կը հետեւին այլազան մասնագիտութեանց, — կը պատրաստուին դասնալ բժիշկ, ճարտարագէտ, մանկավարժ, հայկարան, երաժիշտ, ճարտարապետ, արուեստագէտ : Եւ ոչ միայն ամբողջապէս ձրի է անոնց 4-5 տարիններու բարձրագոյն մասնագիտական դաստիարակութիւնը, այլ նաեւ իւրաքանչիւրին կը մձարուի տարեկան շուրջ 1500 տողարի հաւասար յատկացում մը, իր սնունդին ու հանգստութեան համար :

Անոնց հետ մեր գրոյցը հաստատեց, թէ ջերմ շահագրգռութեամբ կապուած կը մնան սփիւքահայ կեանքի եւ գործունէութեան բոլոր մարգերուն, մանաւանդ ուսանող ու մտաւորական դասերու ձգտումներուն, ծրագիրներուն ու ճիղերուն : Եւ տարակոյշ չկայ, որ Մշակութային կապի Ընկերութեան դերին ընդլայնման ու ձեռնարկներուն արդիւնաւորման մէջ՝ նշանակելի բաժին մը կ'ու-

նենայ անոր նախագահուհին, Տիկ. Բերսարէ Գրիգորեան, կազմակերպելու իր եռանդով, զազութահայ հարցերն ու պահանջները դնահասակու իմացական լայն հորիզոնով, ամէն պանդառ ու զիմում լսելու խոնարհ, համբերատար սգիով եւ իր գրաւիչ անհասականութեան շնորհներով :

Պարբերաբար, արտասահմանի տարրեր համայնքներէն կը շեփորուի ահազանդը եւ կ'արտայայտուի անձկութիւնը՝ Հայաստանի մէջ հայերէն լեզուի անյոյս գոյամարտի մասին, ուսերէնի ենթադրաբար կլանիչ գրոհներուն զէմ : Ամբողջ քառասուն տարի, հայոց հայրենիքին ու Ժողովուրդին հրաշալի յարութեան եւ փառաշուք վերածնունդին հանդէպ՝ անոնց կործանումին ու մահուան շարախինգ զամբանականը վայելագող, բանդագուշող ու դաւադրող ուրացման փերեղակները յաճախ հռչակեր են մեր մայրենի բարբառին անճիտուիլը եւ «ոտուացումը», հայրենի երկրին մէջ : Յաճախ սղբերգեր են անոնք, որ Մոսկուայի իշխանութիւնը յարատեւ, անողորմ յարձակումով՝ Հայաստանի մէջէն սպաններով կը վերացնէ հայերէն լեզուն եւ զայն կը փոխարինէ ուսերէնով, իրբեւ նախաքայլ հայ Ժողովուրդի «ոտուացման» ու չքացումին : Իսկ Հայաստանի պետական վարիչներ ու դրագէտներ «ստրկային», «ազգութաց» համակերպումով կը գործակցին այդ «օտար, արիւնհարու բռնակալութեան», հայկական հայրենիքն ու ազգութիւնը քայքայման, անոնց եղբերգած հայրենական հոգեվարքին յուսահատ կանչերն ու մահաշուք ճիշերը երբեմն երկիւղով ու վհատութեամբ համակեր են նաեւ պանդուխտ պարկեշտ միտքեր եւ ազնիւ խիզճեր, որոնք անձկոտ վարանումով կը հարցնեն, — Հայաստանի մէջ կ'ապրի՞ մեր պապերուն լեզուն... :

Եւ սփիւքէն այցելող ամէնէն կասկածոտ մտաւորականն անդամ, երեւանի օդակայանը իջնելու պահէն իսկ, կը սկսի համոզուիլ անոր դրական պատասխանին, հետզհետէ կուտակուող փաստերու պերճախօս վկայութեամբ : Ան կը տեսնէ նախ, որ իսնութիւններու, պանդուխտներու եւ ճաշարաններու վրայ, նաեւ փողոցներու անունները ամէն անկիւնի՝ դրուած են երկու լեզուներով, —

առաջ՝ հայերէն, յետոյ՝ ասուերէն: Վստահարար, որովհետեւ Հայկական տառերը բոլորովին ինքնատիպ են եւ այնքան անմասն լատիններէն արմատ գիբերուն, որ անոնց նպաստով կարելի չէ կարգալ հայերէն որեւէ անուն կամ բառ: Այդպէս, Խորհրդային Միութեան միւս որեւէ մէկ Հանրապետութիւնէն եւ օտար երկիրներէ եկող բիրուար այցելուներէն ոչ մէկ պատահաբար կամ պատգամաւոր, նայելով իր փնտած պետական մէկ պաշտօնատան, կամ Արմենիա հիւրանոցին, կամ Աբովեան, Նալբանդեան, Տէրեան, Լեւինեան, Չարենց, Թումանեան եւ որեւէ ուրիշ փողոցի միայն հայտատո ցուցանակին, պիտի կրնայ ենթադրել անգամ, թէ գտեր է իր որոնած հասցէն:

Նոյն այդ նկատուածով է անկասկած, որ ոչ-լատինական այբուբեն անեղող մեծ ու փոքր բազմաթիւ պետութիւններ, — Հնդկաստանէն, Փաքիստանէն եւ Ինտոնեզիայէն մինչեւ Իրան եւ Աֆղանիստան, եւ Սուրիայէն ու Իրաքէն մինչեւ Եգիպտոս, Եթովպիա ու Մարոք, ո՛չ միայն իրենց քաղաքներուն մէջ, այլ նաեւ նամակագրումներուն վրայ, սեփական լեզուին ու տառերուն գուլգըթաց՝ կը դորձածեն նաեւ Ֆրանսերէն կամ անգլերէն գիրքեր:

Այլապէս՝ հայերէն լեզուին տիրապետութիւնը Հայաստանի մէջ անփիճելի է եւ բացարձակ: Եւ փորհրդահայ գրողները ջերմեւունդ ախոյեանի նուիրումով կը պահպանեն, սիրամառ տարփածուի նախանձայն խանդով կը փայփայեն, կը սնուցանեն ու կը գեղեցկացնեն զայն: Իսկ ժողովրդային խաւերուն մէջ անոր հմայքը թանձրացեր է սրտայնջ պաշտամունքի մը, որ կ'արտայայտուի հպարտ, ուրախ ինքնահաստատութեամբ: Եւ ես այդ հաւատարիմ սէրին զեզումը անսոյ նոյնիսկ անակնկալ ուժգնութեամբ եւ անսպասելի առիթներով:

Մոսկուայի օդակայանէն կը բարձրանայ ինքնամուղ (ԵԷՔ) սաւառնակը, առանց զազարի ուզղակի Երեւան տանելու մեզ: Հայեր են վարիչները, ծառայող աղջիկները եւ ճամբորդներու խոչոր մեծամասնութիւնը: Բայց կան նաեւ, իրենց գէմքի գիծերուն վրէպայութեամբ, քանի մը օտար ուզեւորներ: Եւ պահնորդ մէկ օրիորդը մեկնումի սովորական հրահանգները կուտայ, նախ ասուերէն եւ յետոյ հայերէն: Որմէ ետք մէկը հարցում մը կը նետէ անոր

ասուերէն եւ պատասխանը կուտայ, բնականօրէն, նոյն լեզուով: Յանկարծ առջևի կարգին նստած երիտասարդը կը կանգնի սաքի եւ ձայնին մէջ հրամանի սասան ու խնդրանքի աղերսը կը խառնուին իրարու:

— Հիմի էստեղ ամէնքը խօսելու են հայերէն... երկու տարուց աւելի է ես լսում եմ ասուերէն եւ ուրիշ օտար լեզուներ, շատ եմ կարօտել հայերէնը... խօսե՛նք մեր թանկագին մայրենի լեզուով:

Քսան տարեկանի չուրջ տղայ մըն է, բայց արդէն հասուն, գրաւիչ արտայայտութեամբ: Հաւանաբար ան տւարտեր է բանակի ծառայութիւնը եւ կը վերադառնայ Հայաստան, հայրենի տունը:

— Բայց դեռ ինքնաթիւը Մոսկուայի երկնքումն է, զիտել կուտայ Հնչեղ ձայն մը գուարթ չեչտով:

— Իսկ դա ո՛չինչ չի խանդարի... Հիմի էս ինքնաթիւը հայկական տերիտորիա է, նշանակում է էստեղ հարկաւոր է խօսել հայերէն:

— Ապա ի՛նչ անենք էն օտար ճամբորդների հետ, հայերէն սովորացնենք նրա՛նց... կը յարէ տարեց ուղեկից մը խնդալով:

— Դէ լա՛ւ, նրանց հետ կարող ենք խօսել իրանց հասկացած լեզուով, իսկ մեր մէջ՝ հայերէն, կ'առաջարկէ ան, խորունկ համոզումը եւ կուտակուած կարօտի տաքցած շունչով մը, որ իր բարսուն ջերմութեամբ կը վարակէ եւ կը յուզէ ունկնդիրը:

Հայաստանի մէջ, բնականաբար, աւելի յորդ ու համասարած են այդ սգիին կենդանի ապացոյցները: Կը քալեմ փողոցներէն ու հրապարակներէն, ամէն օր, ժամերով, եւ կը հետեւիմ տարեց ու ճարդոց ու կիներու, եւ ուսանող տղոց ու աղջիկներու, եւ երկսեռ մանուկներու: — Համալսարանի շրջակայքը եւ նախակրթական ու բարձրագոյն վարժարաններու շուրջ, անոնց զրոյցներէն՝ խօսուող լեզուին բառերը քաղելու համար: Եւ մայրենի քաղցրալուր բարբառը կը Հնչէ բոլոր շրթունքներէն: Եւ Երեւանի նման հսկայ քաղաքի մը մէջ, ուր նկատելի քանակ մը կը կազմեն քիւրտ, արա, թաթար եւ այլ փոքրամասնութիւններ՝ հազուադէպօրէն կը լսուի որեւէ օտար լեզու:

Սփիւռքէն այցելու մը հիւրանոցի ճաշարանին մէջ կը մօ-

աննայ սեղանիս, կը նստի մօտս եւ կը խօսի իր տեսածներուն մօտին եռանդով, գմայլած: Եւ կ'աւելցնէ յանկարծ.

— Բայց ի՞նչպէս կ'ըլլայ, չէ՛մ հասկնար... ստիկա Հայաստանի մայրաքաղաքն է, փոքոցները ծախու հայերէն թերթ կը փնտռեմ եւ չեմ գտներ... իսկ ամէն տեղ ուսուերէնը կայ, զարմանալի չէ՞...:

Անտարակոյտ որ ապշեցուցիչ պիտի ըլլար ստիկա, սակայն նաեւ անհաստատի: Եւ ստուղելու գիւրին ճիշ մը կը յայտնաբերէ բոլորովին տարրեր եւ այլապէս զարմանալի իրողութիւն մը: — Որ նրեանի մէջ կը հրատարակուին երեք օրաթերթեր հայերէն լեզուով, միասնաբար՝ օրական 190,000 օրինակ, որոնք կը սպառին արագօրէն եւ քիչ մըն ալ ուշ լրագիր վաճառողներուն գիմողներ կը մնան ձեռնունայն: Մինչ ուսուերէն կը տպագրուի միայն մէկ օրաթերթ, շուրջ 30,000 օրինակ, որմէ կը գանուի միշտ կրպակներու մէջ, որովհետեւ սահմանափակ է անոր պահանջը: Եւ այսպիսի դրական երեւոյթ մը կարելի է, բարեմիտ վրիպանքով կամ չարանեղ խարդաւանքով՝ յանդեցնել այնպիսի ժխտական եզրակացութեան մը:

Տակաւին, յաճախ կը հանդիպիմ ուսու կիներու, — հաւանաբար հայրենական պատերազմի այրիներ, տարողնուած ամէն խորհրդային երկիր, որեւէ յարմար զբաղումի կապուելու համար, — որոնք կը ծառայեն խանութի, ճաշարանի եւ պանդոկի մէջ, կամ հանրակառքի որպէս տոմսակալաճառ եւ կը խօսին ընտիր կամ սկսնակ հայերէն մը, որ հաճելի գարմանքով կը համակէ գողութեան այցելուն:

Աւելի բարդ է հայ եւ ուսու լեզուներով անջատ դպրոցներու յարաբերական գերերուն գնահատումը, որ ենթակայ է պարտուողական կամ ինքնավստահ հոգեբանութեանց հակումներուն ու մթնոլորտներուն ներգործման: Թորհրդային Միութեան հիմնական օրէնքով, ամէն անդամ հանրապետութեան մէջ բնակող ազգային տարրեր համայնքներ օժտուած են սեփական վարժարաններ ունենալու իրաւունքով, իրենց զուակներուն մայրենի լեզու, պատմութիւն ու մշակոյթ աւանդելու համար: Բնական է, որ այդ բազմանքը յայտնեն եւ որոշ թիւով աշակերտներ կարենան արձանա-

դրել, եւ կառավարութիւնը պարտաւոր կը դառնայ անոնց յատկացնել չէնք եւ տարրական պիւտճէ, դպրոցական բոլոր ծախքերը հոգալով: Այդպէս, հարիւրաւոր հայ վարժարաններ կան Պուլկարիոյ եւ Ռուսանիոյ, Կովկասի, Թիֆլիսի ու Պաքուի, եւ Ղարաբաղի ու նախիջեւանի մէջ, ուր բիւրաւոր հայ տղաք ու աղջիկներ կը ստանան հայեցի հարազատ գաստարակութիւն, այդ երկիրներու իշխանութեանց ոչ միայն թոյլտուութեամբ, այլ մանաւանդ նիւթական հայթայթումով:

Եւ այդ կանոնը, բնականօրէն, կը գործադրուի նաեւ Հայաստանի մէջ, ուր շուրջ երկու միլիոն բնակչութեան մօտ քաւոր միլիոնը օտարներ են, — ուսու, քիւրտ, թաթար եւ ուրլիններ, մեծագոյն զանգուածով կեդրոնացած Երևան: Պատճառը այդ է, որ մայրաքաղաքին 130 ամէն կարգի վարժարաններէն՝ 112ը հայկական են, իսկ 18ը ուսուերէն: Յաջորդ մեծագոյն ուստանին, 1 Լենինականի 41 դպրոցներէն՝ 38ը հայկական են եւ միայն երեքը ուսուերէն: Իսկ աւելի փոքր քաղաքներու մէջ սակաւաթիւ են անոնք, մինչ գիւղերուն մէջ արդէն պահանջ չկայ ուսուերէն վարժարանի: Բայց անոնց անուաններուն թելագրածին չափ հիմնական չէ դանոնք բաժնող տարրերութիւնը:

Հայ պետական դպրոցին բոլոր դասերը, գերազանցօրէն հայկական բնոյթով, կ'աւանդուին ամբողջապէս հայերէն, եւ հոն կ'ուսուցուին նաեւ տարրեր լեզուներ, — անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն եւ ուսուերէնը՝ մասնաւոր խնամքով, որպէս զի աշակերտներ լիովին տիրապետեն անոր: Որովհետեւ իրենց ապագայ սուպրապէններուն մէջ, — կառավարական, գիտական կամ գեղարուեստական, — անհրաժեշտ գործօն մը կը հանդիսանայ ան: Իսկ ուսուերէն դպրոցին դերը չէ՛ «ուսուացման» գաստարակութիւն ջամբել ուստանող աղոց եւ աղջիկներուն, — քանի որ տարրեր ազգերու վաւակներ են անոնք, — այլ հոն կը տրուի գրեթէ նոյն գասացուցակը, բայց ուսուերէնով: Իսկ հայերէնով կ'աւանդուին, բնական է, Հայաստանի պետական լեզուն, հայոց պատմութիւնը եւ գրականութիւնը: Ո՛ր մէկ պարտադրանք, կամ նոյնիսկ հրահանդ կառավարութեան կողմէ ծնողներու վրայ, իրենց փոքրիկներու կրթութեան համար որեւէ տեսակ վարժարանի ընտրութեան մէջ:

և 30,000 օրինակով ու կը գնուին անմիջապէս: Եւ Ռաֆֆիի վէ-
պերը կը տպագրուին լամէն հատար 50,000 վիթխարի քանակով ու
կը սպասին արագօրէն: — Երբ խորհուրդի ու խոյանքի, եւ դարա-
ւոր տենչերու եւ դալիքի երազներու իբրեւ պղինձէ մարմնացում
կը կ'ընդունի Սասունցի Գաւթի արձանը:

— Եւ երբ որպէս սոցալին փառատուն, պետական ու ժողո-
վրդային աննախընթաց շուքով եւ համապարփակ հանդիսութեամբ
կը մեծարուի ծննդեան 1600ամեակը Մեքոպ Մաշտոցի: Հայ տա-
ւերու գիւտով Հայաստան վերադարձած օրուան յաղթանակի ու
ցնծութեան պատկուէն ի վեր՝ Օշականի հանճարեղ սուրբը, ամ-
բողջ 16 դար, չէ արժանացած այդպիսի երախտագէտ ներքողի,
փառաշուք տանախմբութեան ու սրտադեղ սէրի: Վերականգնած
Հայաստանի նախագահը, վարչապետն ու նախարարները, եւ Ամե-
նայն Հայոց կաթողիկոսը, եւ բովանդակ մտաւորական դասն ու
ժողովրդային խաւերը մասնակցեցան անոր փրկարար, լուսեղէն
փատակին պանծացման: Եւ Մարաշտխտ Յովհաննէս Բագրամեան
այդ հանդիսաւոր առիթով Մոսկուէյէն գնաց Երեւան, իր բարձր
պաշտօնին ու հռչակին վարկը բնծայի ու սարքուած յոբելինական
տօներուն: Իսկ Պորհրդային Միութիւնը, որպէս յարգանքի մա-
տուցում, գեղատիպ նամակագրով մը հրապարակեց Մեքոպ
Մաշտոցի նկարով ու հայերէն տաւերը ցուցադրող քարէ տախտա-
կով եւ պատկերին տակ գրուած «Մեքոպ Մաշտոց», — ուսերէն
եւ հայերէն լեզուներով: «Ռուսացո՞ւմ»: Անկասկած ու բացարձա-
կօրէն ո՛չ: Այլ ազնուական, բիւրեղացած Հայացում մը ազգային
պգիւր ու միտքի, եւ իրագործութի ու տեսիլքի, սրուն բարձրու-
թեան, թափին ու տարողութեան ոչ մէկ սերունդ կրցեր է հասնիլ
հայոց անցեալ երեք հազար տարուան պատմութեան մէջ...

ԺԲ

Վանդակարմէն ներս, ընդարձակ պարտէզին թուփերն ու
ծառերը ծածկուեր են ձիւնի թանձր վերմակով: Իսկ խորքին, դե-
ղակերտ ճակատով կը կանդնի քառայարկ շէնքը, հնազարեան
զղեակի մը խորհրդաւոր մենութեամբ: Անոր դահլիճներուն մէջ կը
մշակուին եւ անոնցմէ կը ղեկավարուին մայր երկրի ճարտարա-
տեսան ու գիւղատնտեսութեան զարգացման եւ ժողովուրդի կեն-
ցազային բարւոքման համապարփակ ծրագիրներն ու ձեռնարկնե-
րը, կառավարութեան տարբեր բաժանմունքներուն անմիջական
հետապնդումով: Հայաստանի Համայնավար կուսակցութեան կեղ-
բոնատեղին է ան: Եւ մեր զրոյցը առաջին քարտուղար Եաքով Զա-
րորեանի հետ՝ հետաքրքրական է ու յիշատակելի:

Երբտասարդ լիցուն կազմով ու թարմ դէմքով համակրելի
առաջնորդ մը, իր բարձրագոյն հեղինակութեան մէջ խոնարհ ու
լայնասիրտ: Եղբարախտ Ադասի Սանջեանէն ետք՝ այդ տիրական
դիրքին ելած կուսակցապետներուն մէջ ամէնէն աւելի յարգուածը
ժողովրդային խաւերէն, — որուն ղեկավարի հայրենասէր, անձնը-
սէր ու կորովի խոսնուածքին եւ յատկութեանց մեծագոյն յոյ-
սեր, լայն ակնկալութիւններ կապեր են անոնք: Եւ մեր երկար տե-
սակցութեան ընթացքին կ'աճեցան այսպիսի փոփոխութիւնը, թէ անոք
համար սկզբունքը, զվարդապետական՝ դաւանանքը ինքնանպա-
տակ առաջադրանք չեն, այլ գաղափարէ միջոցներ, գերապոյն նը-
շանակէտներու նուաճման տանող, — իր պարագային՝ հայ ժողո-
վուրդին եւ հայրենիքին բարօրութիւնը, վերելքն ու զօրացումը
սպասովող:

Իր կոշտմին ու պարտաւորութեանց ճշմարիտ ճանաչումով
է սր քանի մը ժամ տեսող մեր խոսակցութեան մէջ՝ Հայաստանի
Կենտրոնի առաջին քարտուղար Եա. Զարորեանը մէկ անգամ իսկ
ճարտաստներ «Համայնավարութիւն» բառը: Եւ միակ առիթը, ո-
րով կը յիշէ Պորհրդային Միութեան վարչապետ Սրուշչեւի անու-

նը՝ անոր այցելութիւնն է Երեւան, երբ իրեն կը Հաղորդեն արժը-
տիքի բերքին փճացումը այրող երաշակն եւ անոր ստեղծելիք սնուն-
դեղէնի տաղանապը երկրին մէջ: Արդիւնքը կ'ըլլայ Վարչապետ Խը-
րուշչեւի անմիջական հրահանգը, զրկուած Մոսկուա, որպէս զի
70,000 թոն ցորեն փութացուի Հայաստան: Միեւրբը կը Հասնի
չաւտով եւ Հացի նուազադոյն պակասն իսկ շի յայտնուիր Հանրու-
թեան Համար: Գերազանցօրէն ժողովրդանուէր եւ Հայրենասէր
Հայ մարդու անոր վերաբերմունքը ամէնէն պերճախօս Հերքումն է
այն շարանենդ զրպարտութեան, — յերիւրուած ու շեփորուած ու-
րացումի եւ դաւերու վարձկաններու կողմէ, թէ Երեւանն է, որ կը
պառակալէ հայկական սփիւռքը վէճերով, ստելութեամբ ու ոճիր-
ներով՝ որոնք սակայն մշտապէս կ'արծարծեն, կը սերամանեն, եւ
կը շղթայողերծեն իրենք, անփառունակ անկումի ծր եւ քրէական
ցնորքներու յաճախանքէն մղուած:

Մեր զրոյցին առանցքը հայ ժողովուրդն է, իր հայրենիքով
ու գաղութներով: Մտասեւեռ, Հիմնական նպատակ կը Հանդիսա-
նայ Հայաստանի արտաքին զարգացումը անտեսական, ընկերա-
յին, շինարարական ու մշակութային բոլոր ասպարէզներուն վրայ:
Անոր շահագրգռութիւնը ջերմ ու համապարփակ է նաեւ արտա-
սահմանի հայոց գոյութեան կենցաղային պայմաններուն, ազգային
ինքնապահպանման ճիգերուն, դպրոցներուն, հասարակական շար-
ժումներուն, տարբեր գաղութներու ապահովութեան եւ հայրենա-
զարծի խնդիրներու մասին: Եւ կարծես իբրեւ եզրափակում այս
տեսակցուեան՝ համեստ ժպիտով մը ան գնահատանք կ'արտայայ-
տէ այն խոշոր գերին ու հայրենասիրական նուիրուած աշխատան-
քին Համար, որ կը կատարեն Ռամկ. Ազատական Գուսակցութեան
մամուլը, առաջնօրէնքն ու մարմինները, նաեւ Հնչակեաններ,
սփիւռքի տարագիր Հայութիւնը պաշտպանելու եւ գէպի ազգային
գերագոյն նպատակներ ներշնչելու եւ վարելու գօտարին մարզե-
րուն մէջ:

Ան կը յիշէ, ազնիւ արարք մը գործադրած ծարգու գոհու-
նակ երեւոյթով, թէ այդ գնահատութիւնը ինք արձանագրած է
նոյնիսկ իր պաշտօնական եւ ընդարձակ զեկոյցով: Եւ հասկնալի
կ'ըլլայ իր վարմանքը, երբ կ'ըսեմ.

— Այո՛, կարգացեր եմ, բայց երանի թէ ստիկա բնաւ եղած
չըլլար: Մանաւանդ, անոր մէջ յիշուած «օղնութիւն» եւ «օժանդա-
կութիւն» բառերը ծանօթ զրպարտիչներու կողմէ վստահարար պի-
տի խեղաթիւրուին եւ կրնան ծանր վտանգ ստեղծել մեզի Համար:

— Իսկապէ՞ս ... եւ դուք կարծում էք դա կարող է մնասել
ձեր կաղմակերպութեամբ:

— Այո՛, եւ այն գոթախա իրողութեամբ, որ գրեթէ բոլոր
Հայկական հոծ գաղութները հաստատուած են երկիրներու մէջ, ու-
րոնք հակախորհրդային ուղեղիծի կը Հետեւին: Եւ դաշնակցական
պետեր, որպէս զի կարենան հետապնդել իրենց հայրենադաւ ծրա-
պետերը, բայցայելով ձեր կաղմակերպական գորութիւնը՝ հիւրըն-
դիրները, բայցայելով ձեր կաղմակերպական գորութիւնը՝ հիւրըն-
ուանարկեն ու կը մատնանշեն ռամկավարները, նաեւ Հնչակեան-
ները եւ ուրիշ միութեանց վարիչներ, նոյնիսկ՝ եկեղեցականներ,
որպէս «համայնավար» կամ «բոլշեւիկ զործակալ» — որոնք կը
կաշառուին Մոսկուայէն իրենց տրուած ոսկիով: Մենք հարկաւ
միշտ Հերքեր ենք այդ նենգաւոր վերագրումները որպէս ստալոզ
յերիւրանքներ:

— Ի հարկէ, եւ ես «օղնութիւն» եւ «օժանդակութիւն» բա-
ռերը գործածել եմ ոչ թէ նիւթական առումով, այլ միայն բարո-
յական իմաստով, կը բացատրէ ան:

— Մենք տարակոյս չունինք այդ մասին, բանի որ ստիկա է
բացարձակ ճշմարտութիւնը: Քառասուն եւ երկու տարի է, Ռամ-
կավար Ազատական Գուսակցութիւնը, եւ կը հուստամ նաեւ մեր
Հնչակեան բարեկամները, ո՛չ մէկ ստեն, ո՛չ մէկ նիւթական «կա-
շառք», նպաստ կամ պարգեւ ստացեր են, ո՛չ Մոսկուայէն, ո՛չ Ե-
րեւանէն, եւ ոչ ալ ակնկալեր ենք որեւէ ծափ ու հատուցում: Ընդ-
հակառակը, անցեալին՝ յաճախ անարդար կերպով քննադատուե-
ր ենք իսկ: Մենք միշտ եղեր ենք, եւ կը մնանք միշտ, բացարձակօ-
րէն հայկական կաղմակերպութիւն մը, նուիրուած միայն Հայ ժո-
ղովուրդի հիմնական շահերու հետապնդումին եւ Հայաստանի զո-
րացումին, — որպէս հայոց վերականգնած մայր հայրենիքին: Բայց
հակառակ այդ փաստերուն, տակաւին անոնք պիտի թարգմանեն
ձեր անմեղօրէն արտասանած «օղնութիւն» եւ «օժանդակութիւն»

բառերը անգլերէնի, ֆրանսերէնի, յունարէնի, արաբերէնի, սպաներէնի, պարսկերէնի, փորթուկալերէնի եւ պիտի ներկայացնեն օտար դաղտնի ռառիկանական պետերուն, իրրեւ չապացոյց» մեզի դէմ դարբնած ու լեզվեղած դրպարաութեանց :

— Այդ գէպքում, եթէ հարկաւոր լինի՝ եւ կարող եմ մի յարմար առիթով ճշդում կատարել :

— Այո, առիկա կրնայ կարեւոր ըլլալ... եւ թերեւս մեր պատր ժամանակին սղբերգական անդրադարձումն է... : Իրենք քաղաքական ամէն տեսակի շտրհք եւ մասնութեան արծաթ սապեր են եւ դեռ միշտ կ'առնեն որեւէ օտար պետութենէ... Հիմա՝ իրենց շուրջ քառասուն անդամներ կը գտաւին Դամասկոսի մէջ որպէ՛ս միջազգային լրատներ : Եւ առիկա՝ առաքինութի՛ւն է իրենց չափանիշով, քանի որ «սպաս աշխարհի» պիտակով կը վաճառուին : Բայց մեր պարագային՝ հայրենի երկրի իշխանութենէն երբեք չտաացում, բայց յերկրում «օգնութիւնը» անգամ կը դառնայ քրէական յանցանք, արժանի՝ հիւրընկալ իշխանութեանց հալածանքին ու բանտին : Չաւե՞շտ թէ սղբերգութիւն : Բարեբախտ ենք, որ աւելի պարկեշտ ու հանդուրժող են օտար կառավարութիւններ եւ երբեմն կը յօժարին լսել ճշմարտութեան ձայնը :

Լայնօրէն շահեկան ու խորապէս տպաւորիչ կ'ըլլայ այս հանդիպումը ինծի համար : Եւ դժուար չէ հասկնալ ակնարկուած բարոյական ռոտանդակութեան» ընայթր : Յայտնօրէն, սիրւոքի հայութիւնը իր ազգային դոյառեւման կռիւր կը մղէ եւ Ռամկ. Ազատական Կուսակցութիւնը այդ փրկութեան պայքարը ծրագրող ու վաքող մեծագոյն կազմակերպութիւնն է : — Ուրեմն, երբ Հայաստանի վարիչներ որեւէ միջոցով կ'օժանդակեն այդ ազգայազպանման մարտնչումին, — գաղութներուն զրկելով հայրենի գիրքերէ, թերթերէ ու երգերէ բացի՝ նաեւ գրողներ, գիտնականներ, արուեստագէտներ ու մարզիկներ, որոնց այցերը ներշնչում ու անունդ կ'ընծայեն այդ ջանքերուն, ուրեմն նաեւ անոնցմով «բարոյական օգնութիւն» պարգեւած կ'ըլլան հայկական արտասահմանի :

Նոյն եւ ուրիշ հայրենական նիւթերու եւ համազգային խընդիրներու անդրադարձում եղաւ մեր զրոյցի միջոցին՝ Հայկական Հանրապետութեան վարչապետ Անտոն Բոչինեանի հետ, կառավար-

ական փառաշուք պայտտի իր դահլիճին մէջ : (Նախագահ Եմաուն Ասուշանեանի դիրքն ու տիտղոսը՝ պետական գլուխի պատուակալ պաշտօն մը կ'ընդգրկեն միայն, ստանց վարչական հեղինակութեան, — ինչպէս օրինակ՝ Իտալիոյ նախագահը կամ Անգլիոյ թագուհին :) Վարչապետը յաղթակալով, երիտասարդ ու գրաւիչ անհատականութիւն մըն է, որուն դէմքը հաղորդական ջերմութիւն ու հասուն իմաստութիւն կ'արտայայտէ : Անոր անձը շքաւորող պատուանդանն ու պսակը՝ տարրեր, խտփիչ զգայնութեամբ մը կը համակեն պանդուխտ այցելուն : Ան կը վերլիչէ հին, եղբրական տաւաղը դարուսը վերութեան յուծին տակ հեծեծող հայ մարդուն, — «Արդեօք գալո՞ւ է մի օր ժառանգալ»... : Եւ ահա հազարամեայ տենչացում երազը եւ տարաբախտ սերունդներու կուսակուած կարօսը կենդանի մարմին ու շունչ կ'առնէ քաղցրօրէն ժպտող աւնոր դէմքին : Որովհետեւ դարերու փրկութիւններուն պարտութեանց ու սպանդներուն աւերին ու արիւնին վրայ՝ հրաշայի յառնումով մը վերակենդան է հայկական պետութիւնը եւ անոր կառավարութեան գլուխը, Վարչապետ Անտոն Բոչինեանն է նստած քովի բազկաթոռին :

Իր շուրջը, իր զեկավարութեան տակ՝ հին անիւններէն ու վէրքերէն նար հայրենիք ու նար ժողովուրդ կը վերակերտուին : Բայց տիրակալ, փառատենչ ու յաւակնատ առաջնորդի սիպարին դէմ, — որոնք այնքան առատ են ուրիշ մայրաքաղաքներու մէջ, — ան կը յայտնուի սրտառուչ համեատութեամբ պետական վարիչը, որուն մարդկային ձգտումները, ազգային խնայչները եւ նուիրումի եռանդը՝ պարզ, առօրեայ աշխատանքի մը խոնարհութեան շուքը կուտան իրենց վարած վերածնունդի պատմական առաքելութեան :

Ան կը խօսի ներկայ ձեռնարկներու եւ սպազայ հեռանկարներու մասին պարզ, առարկայական շեշտով մը, որ ճշմարտապէս պատասխանատու քաղաքագէտը կը յատկանշէ : Բայց իր գրաւորալով վերլուծումին եւ մեզմ ձայնին մէջ՝ հարազատի հոգածութիւնը եւ խորունկ սէրը կը յայտնուի հայ ժողովուրդին հանդէպ շայտատանի մէջ թէ սփիւռքի պանդուխտ կայրերուն վրայ : Քաղաք ու գիւղ կառուցանելու, ճարտարարուեստ ընդարշնելու, կենցաղային սպ-

բանքներու արտագրութիւնը անեցնելու, կըթական եւ առողջապահական հիմնարկներու ցանցերը ծաւալելու եւ հայկական գրականութեան, պեղարուեստին ու գիտութեան ծաղկումը առաւել պրտփաւարելու հարցերուն զուգընթաց՝ կառավարութեան օրակարգին վրայ են նաեւ արտասահմանի հայոց գոյամարտին համար կենսական խնդիրներ — ներգաղթ, մշակութային յարաբերութեանց սերտացում, գրողներու եւ արուեստագէտներու փոխադարձ այցեր, սփիւռքէն հայ ուսանողներու բարձրագոյն ձրի դաստիարակութիւն երեւանի համալսարանին մէջ: Եւ տակաւին՝ նոր, աւելի անմիջական օժանդակութեան մը ծրարիրը: — Կրթական նախարարութիւնը որոշում կայացուցեր է տպել յարժար, պատկերագրութեա գասագիրքեր զաղութահայ բոլոր վարժարաններուն եւ անոնց տարրեր կարգերուն համար եւ զանոնք բաշխել աշակերտներուն: Սրտարուխ ու յուլիչ մատուցում մը, որ ոչ միայն պիտի վերացնէր ամէն տեսակ դասագիրքի կարիքը սփիւռքի հայ դպրոցներուն մէջէն, այլ նաեւ նկատելի չափով պիտի թեթևացնէր ուսանողական ծախքերը:

— Իսկ զո՞ւրք ինչ էք կարծում, դա կը նպատակ՞ ձեր վարժարանների գործին:

— Կասկած չկայ, որ իբրեւ գաղափար շատ ազնիւ է եւ իբրեւ ձեռնարկ մեծապէս օգտակար կրնայ ըլլալ... բայց դժուար թէ արտասահմանի հայ վարժարաններ կարենան գործածել Հայաստան տպուած դասագիրքեր, հասկնալի պատճառներով:

— Բայց այս դասագիրքերը տպուելու են ամբողջապէս արեւմտահայ բարրատով եւ հին ուղղապրութեամբ: Իսկ նիւթերի ընտրութիւնը եւ դասաւորումը կատարուելու են համաձայն սփիւռքի պայմաններին: Նրանց մէջ ոչինչ առարկելի չի լինելու: Եւ կը ժպտի ան:

— Հարկաւ լաւ են այդ բոլորը: Դժբախտաբար աւելի բարդ ու դժուարին է գաղութահայ կացութիւնը: Մեր գրողները, արուեստագէտները, հանրային գէմքերը եւ ուսուցիչները, նոյնիսկ երբ հայրենասիրական թեթեւ երանգով երեւին՝ իբրեւ «համայնավար» կամ «ուղեկից» կը մեղադրուին ու կ'անուանարկուին հիւրընկալ իշխանութեանց մօտ, առանց նուազագոյն փաստին անպամ:

Դիւրին է երեւակայել, թէ այդ գրադարութիւնները, որոնք աւարեկչութեամբ եւ օտարին հալածանքով քայքայել կը փորձեն մեզ եւ մեր ձեռնարկները՝ ինչ ծաւալով ու վատութեամբ պիտի ածին, երբ մեր դպրոցները սկսին գործածել Պետհրատի կողմէ տպուած եւ անոր պիտակը կրող դասագիրքեր, որոնք նուէ՛ր զրկուած են Հայաստանէն...:

Անոր գէմքին վրայէն զարմանքի ու թախիծի ստուեր մը կ'անցնի: Պահ մը լուռ ենք: Եւ ինք կ'ըսէ.

— Այդ գէպքում, սրեմն հարկ կը լինի վերանայել ծրարիրը:

— Եթէ միայն կարելի ըլլար այդ խնդիրին մասին խօսիլ գոնէ Պէյրութի եւ Հալէպի հայկական քանի մը գլխաւոր դպրոցներուն տնօրէններուն հետ: Վստահարար լուծում մը կրնայ գրտնուիլ: Անոնք լաւագոյնը գիտեն, թէ ինչ տեսակ դասագիրքերու աւելի պահանջ կայ, եւ ինչ ձեւի տպագրութեամբ կարելի է օգտագործել զանոնք:

— Դա ե՛ւ հնարաւոր կը լինի, ե՛ւ գործնական, կ'նկարկացնէ ան:

Ձրոյցը կը շարունակուի, տարրեր նիւթեր ընդգրկելով: Կը մօտենայ մեր մեկնումի պահը եւ կը պատրաստուիմ հրատեչտ առնել իրմէ:

— Եթէ կարող եմ մի սրբեւէ կերպով օգտակար լինել ձեզ, խնդրում եմ չքաշուէք ինձ դիմելու:

Եւ մտածումս, քահանա ճախրանքով կը նետուի դէպի «Յենթը»-ին երազը, շրթներուս վրայ դարձեալ կը խաղայ, «Արդո՞ք գալո՞ւ է մի օր ժամանակ» եղերաշունչ, յուսահատ աղերս... եւ յուզումն ու հպարտութիւնը կը կոհակուին ներսս:

— Այո, կ'ըսեմ, թերեւս համարձակիմ մեծ շնորհք մը ուղղւ ձեզմէ:

— Ասացէք, խնդրեմ, կը յարէ զլուսի մեղմ շարժումով:

— Լաւ... ահա ամիս մըն է արդէն, ամէն առաւօտ պանդոկի պատշգամէս կը նայիմ երկինքին, կը դառնամ Արարատին եւ... չկա՛յ: Իե՛ռ բնաւ չերեւցաւ ան, ձիւնը, ամպերը կամ մշուշը ծածկած կ'ըլլան զայն: Մեծագոյն զրկանք մը պիտի կրեմ, եթէ երկ-

բէն հեռանամ, տակաւին Մասիսները շտեմած: Արդեօք կարելի՞ է
ձեր ազդեցութիւնը դործածէք... ես կը հաւատամ, որ Հայոց Լե-
ւոք պիտի չկրնայ մերժել Հայաստանի վարչապետին միջամտու-
թիւնը... եւ կը փորձեմ խնդալ, բայց կը զգամ որ վիշաբ կը լծա-
նայ աչքերուս մէջ: Ան կը նշմարէ խռովքս եւ կ'ըսէ իր բարեմոյն,
ջերմ ժպիտովը.

— Դուք վատ եղանակի հատաք: Բայց ես կարծում եմ՝ որ
դեռեւս չմեկնամ, ձեզ կը յաջողուի տեսնել Արարատը:

Եւ ես կը տեսնեմ Արարատը: Յունուարի աւաջին շաբաթն է
եւ ձիւնն ու փոթորիկը իրար խառնել են երկինք ու գետին: Հազիւ
քարընկէց մը անդին՝ նայուածքը կը կուրանայ իջնող բաթիկներու
եւ բարձրացող մշուշի սպիտակ, անթափանց պարիսպին դէմ: Ե-
րեւանի օդակայանին մէջ՝ հարազատ սիրտերու հետ վշտալի հրա-
ժեշտ, չյաղեցած կարօտի ողջագուրում, արցունքոտ բաժանում:
Բայց ժամերու յետաձգումէն ետք, դեռ չի կրնար թռչել սաւառնա-
կը: Ուրախութիւնս քողարկել կը փորձեմ ու կը դառնանք պանդոկ:
Երկրորդ օրը կը կրկնուի նոյն տրտում տեսարանը եւ տակաւին
ինքնաթիռը կը մերժէ սաւառնիլ դէպի ձիւնափոթորիկի ձերմակ
սպառնալիքը եւ գարձեալ կը վերադառնանք քաղաք: Եւ երրորդ
առաւօտեան, գերբնական շնորհքի մը վեհութեամբ կը բացուի հո-
րիզոնէն վեր անհուն կապոյտը, ուր սմպի ժողորմ կոյտեր ու
պատուած ծուէններ կը յամենան գեռ: Անջատման կակիժը կրկին
կը համակէ զիս եւ հեռանայու ցաւը կը կոտորայ էութեանս մէջ,
տակաւին ծարաւ կարօտներու, դեռ անյայտ գրկանքներու վէրքե-
րուն նման: Ապրումս հէքեաթային դրուագներու եւ անբջային ե-
րանութեան խուսափող կախարդանքը կարծես կը թաղուի աչքե-
րուս դառն պղտորութեան մէջ: — Խժալուր, անողորմ ժիւրի մը
թելերով՝ սաւառնակը արդէն կը սլանայ դէպի միջոց:

Պատուհանէն դուրս՝ զմայլելի, ահարկու ղեղեցկութեամբ կը
փռուի անոնց հմայքը: Չիւնապատ անձիւր տարածութեան վրայ,
առասպելական հսկաներու պէս, դէպի աստղերը ահեղ ժայթքի մը
մէջ քարացել են Մասիսները, իրենց վիթխարի, սպիտակափառ
ժարմիններով, — կարծես իրբեւ երէց ու կրտսեր եղբայրներ, յա-
ւերժօրէն փարած Արարատեան դաշտի մայրական լանջքին: Լուսու-

մուսխս ներքեւ այնքան մօտ է ան, բայց դեռ այնքա՞ն հեռու: Եւ
զուսպ զայրոյթով մը կը մրմնջեմ, ակնարկս անոր թիկունքէն նե-
տելով հպարտ կատարին.

— Ուրեմն կը մնա՞ս թշնամի ցանկապատին ետեւ: Ոչ մէկ
տիրակալ, ոչ մէկ աստուած այնքան ջերմեռանդ ներբող, այնքան
երկիւղած պաշտամունք եւ անխառն հաւատարմութիւն ստացել է
իր հետեւորդներէն, որքան դուն, Հայոց Լեւո, կորդեր եւ քեզի
փառք, իմաստ ու ոգի տուող ժողովուրդէն: Եւ տե՛ս, անտարբեր,
անապօրոյն քմայքով մը կը լքես զայն եւ կը մնաս մեր ոտխին ու
քու յափշտակիչիդ բակէն ներս:

Եւ սաւառնակի խուլ դղրդիւնին մէջէն՝ կարծես Արարատի
պատասխանին որոտն է, որ կը շաշէ.

— Դուք ունիք, ձեր ազատ երկրին եւ ուսճացող ժողովուր-
դին մէջ՝ շունչ ու զրահ, եւ լոյս ու թռիչք, եւ զօրութիւն ու տե-
սիւք, եւ Արագած ու Սեւան՝ կեանքի ու գալիքի աւելի փառահեղ
ու յաղթական կատարներ նուաճելու: Իսկ ե՞ս... Հայոց Լեւոք,
հանապազօր ձեր աչքերուն դէմ որպէս մուրհակ եւ հրաւէր, կը
մնամ պանդուխտ, իրբեւ պահակ ու վահան՝ հայոց կայանուած,
ամայի, պանդուխտ հողերուն վրայ...: Եւ տուն կը դառնամ՝ երբ
անոնք փրկուին գերութեան կապանքներէն, երբ Արաքսի ձախ ա-
փը անցնի անոր աջ եզերքին եւ գայ մեզ դիմաւորելու, — աւերի,
մոխիրի ու արիւնի մեր հողարամեայ սուգին քողը պատռելու եւ
ազատութեան ծաղիկի, լոյսի ու ցնծութեան պսակը պարզեւելու
ժեզի...:

Սաւառնակին հեռաւոր, միօրինակ մոռ՞ւնչն է որ կը խօսի:
Կը նայիմ վեր: Պահնորդ հայ գեղանի աղջիկն է, որ կը ժպտի:

— Խնդրում եմ կապէք ապահովութեան դօտին...:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՄԱՐԱԶԱԽՏԻՆ ՀԵՏ

Հայաստանի պետական բաժանմունքի Մոսկուայի գրասեն-
տակին մէջ ինքնաշարժը մեզ կը տանի մեծ մայրաքաղաքի յայն
փողոցներէն: Մինչ կառքերու անիւներուն եւ անցորդներու ներ-
բաններուն ճմուռներն ջերմութիւնը կը հալեն յամբօրէն մաղուող
ձիւնի բաթիկները: Հպարտութեան հրճուածնքը թէ ակնածանքի
երկիւղն է, որ պարուրեր ու խոռոյէր է զիս: Կողքիս նստած է հայ
քնարական բանաստեղծութեան մեհեանին ամէնէն յորդ ու բազմե-
րանց տաղանդով օժտուած քրմուհին, Սիրվա Կապուսակեանը, որ
քերթուածներու իր նոր գրքոյկին ունեւորէն թարգմանութեան ա-
ռիթով եկեր էր Մոսկուա եւ բնական բաղձանքով մը ուղեց ներ-
կայ դանուի հայ մարաջախտին հետ ժամադրուած տեսակցու-
թեանս:

Վաղեմի մտերմութեան շունչով մը, որ կը տաքնայ գրակա-
նութեան վարակիչ հմայքէն, մեր զրոյցը կը պտտի Հայաստանէն
տպաւորութեանց, խորհրդահայ գրական երեւոյթներու եւ սովե-
տական հակայ ստանի հոյակապ նոր կառոյցներուն շուրջ:

Իսոյց մինչ կը խօսինք՝ մտածումս կը սաւառնի դէպի մեր-
ձաւոր անցեալի մը հեռաւոր աղմուղաչտերը, որոնց վրայ, նս-
ցիական աւերիչ ու մահասփիւռ բարբարոսութեան դէմ, ազատա-
սէր ժողովուրդներու փրկութեան գոյամարտը կը մղուէր: Եւ այդ
հրկիզուող ճակատներէն մէկուն բոցավառ հորիզոնին կը քանդակ-
ուէր հայ զօրապետին ուրուանկարը, ամբուած ողորկ դուռնով ու
բոլորակ դիմադիծով, որ իր բանակները կը վարէր յաղթական գը-
րոհներու, — կարծես վիշապաբող Վահագնի հրեղէն ցասումն էր,
որ կը ճայթէր Աժտահակ ստոխի գերակշիռ զօրութեան դէմ: Կը
յիշեմ նաեւ, օրհասական մարտնչումի այդ տարիներուն՝ ազա-
կամ շղթայուած երկիրներու ներքեւ տուալտող ու յուսացող տա-
րազիւր հայոց աչքերը պարծանքի ու ցնծութեան յոյզերով կը լճա-
նային, ամէն անգամ, որ անոր քաղցրօրէն մտերիմ դիմանկարին

տակ՝ իր գլխաւորած բանակին հերոսական խոյանքներուն գըր-
ուագները կը կարգային:

Վերելակին ու գաւթիին մէջ մեզ առաջնորդող երիտասարդ,
բարեկիրթ սպաներու երկիւղած շունջները աւելի հանդիսաւոր
ծանրութիւն մը կուտան միջառայրին: Եւ խոռովիչ յուզումով է, որ
կը մտնեմ անոր ընդարձակ դահլիճին կաշեպատ դուռէն ներս:
Լայն սրահ մը, կեդրոնը՝ քառանկիւն երկար սեղանով, կցուած
գլուխի աւելի յայն գրասեղանին եւ շրջապատուած թիկնեղ ա-
թոններով: Եւ իր յաղթակազմ բարձր հասակով, դէմքը պայծա-
ռացած աչքերէն հոսող տաք ու բարի ժպիտով՝ ձեռքերը պարզած
կը մօտենայ ան, Մարաջախտ Յովհաննէս (Իվան) Բակրամեանը,
Ս. Միութեան պաշտպանութեան փոխ-նախարար: Եւ մինչ, ծանօ-
թացման հակիրճ ողջոյններէն յետոյ մեզ կը հրամցնէ դահլիճին
կից առանձնառնեակը, միտքս կը նետուի խայտանքի նոր թեւած-
ման մը: — Այն ո՞վ է, որ կ'եղերերգէ յուսակաւոր ողբասացու-
թեամբ, թէ դարաւոր գերութեան շղթաներուն տակ՝ հայ ժողո-
վուրդը ալլաւերեր է ս տ ր կ ա մ ի տ երամի մը եւ կո-
րուսեր է իր պապերուն մարտական ոգին եւ ազատութեան տեսիլ-
քը: Հապա ուրկէ՞ ծնան եւ հայրենիքի փրկութեան պատնէշներուն
ու խրամներուն փարեցան մեր բիրաւոր ազգիկները եւ բազմա-
թիւ զօրավարները: Եւ ո՞ր երկունքէն կեանքի ելաւ նոր դարերու
հայ մարաջախտը, Յովհաննէս (Իվան) Բակրամեանը, որ իր գե-
րագանց ազգագիտութեամբ, յարձակման յանդուգն թափով եւ
շահած յաղթանակներուն շքեղ տարողութեամբ՝ Ս. Միութեան
ազգական բարձրագոյն տիտղոսին արժանացաւ եւ աւելին, հա-
մաշխարհային համբաւի ու փառքի հասաւ:

Ներքը՝ համեստ ճաշի սեղան մը յարդարուած է: Անակնկա-
լը երախտիքով եւ յուզումով կը համակէ զիս: Այդ ու հացը, կը
մբժնջեմ, մտերմական մթնոլորտի մը տաք շունչով կը վանէ պաշ-
տօնական հանդիպումի ցուրտը:

— Յաւուր եմ, որ ձեզ հրամցնելու եմ թէյ, եւ ոչ թէ՛ Հա-
յաստանի բնտիր կոնեակ, կ'ըսէ ժպտելով, եւ հարկ կը տեսնէ քա-
ցատրել: — Այս շէնքում չի կարելի մի բաժակ խմիչք գտնել, ար-
դելուած է:

Չայնին հնչեց ու յստակ թաւալումին մէջէն հայերէն բառերը կը խօսին տնպանոյճ բայց անվարան պարզութեամբ: Զօրականի յաւակնստ, քառնաշունչ ու երկդիմի բնոյճանրական տիպարին հակոտնեայ անձնաւորումն է ան, — սրտասուշ անկեղծութեամբ եւ հաղորդական ջերմութեամբ մը, որ հայրենի լեռներու սէզ կատարներէն եւ արեւին կենարար շողերէն հոսելով բիւրեղացեր են իր մէջ: Եւ կը հարցնեմ ես ինձի, — արդեօ՞ք հայ ժողովուրդի ջիղերուն, սղիին ու նկարագրին համադրումն է ան:

Որովհետեւ՝ ահա անոր յողթանդամ հասակը, խոշոր լանջքով, ու շարուած շքանշանները պերճախօս վկաներն են հուրի ու սուրի հոյակապ յողթանակներու: Եացիական մեքենայէն, գիշատիչ բանակներ ան խորտակեց ու շպտեց գէպի Պերլին, — զօրքի ու դէնքի եւ թնդանօթի ու հրտաայլի համախառն, ահեղ շղթայագերծուծով մը, — ինչպէս Դաւիթ Մուսունցին արժատախիլ ծառով կ'աւելբ վայրի գազանները, կամ կայծակէ թուրով կը պատուհասէր Մարտի Մեյիքի վայրագ վոհմակները:

Բայց նաեւ՝ մարաջախտին գորշ ու վճիտ աչքերուն մէջ՝ անհուն բարութիւն մը կը ցոլայ, եւ բոլորածեւ, լեցուն դէմքին վրայ խանդակաթ անձկութիւն մը կը սփռուի, երբ խաղաղութեան բարիքները կը ներբողէ: Հակասութիւն, բայց ո՛չ, — այլ մարդկային սղիւսագոյն առաքինութեանց ներդաշնակ ընդելուզում:

— Ամէն բանից աւելի, մենք ցանկանում ենք խաղաղութեան, կ'ըսէ ան, շարժելով ամիլուած դուխր, կարծես առաւել շեշտելու համար իր գողափարը: Ոսրհրդային Միութեան գերագոյն դեկալարութեան պատասխանատու անդամն է, որ կը խօսի մարաջախտին մէջ: Բայց անմիջապէս կը յայտնուի նաեւ հայրենասէր հայր, — այնքան սերտօրէն շողախօսած են անոնք իրարու: Եւ ան կը յարէ:

— Իսկ հայ ժողովուրդի եւ Հայաստանի համար՝ խաղաղութիւնը կեանքի չափ թանկ է:

Մեր գրոյցը կը տեսէ մէկ ժամէն աւելի, նիւթերէն թելադրուած գուարթ, խանդալտ կամ տխուր տրամադրութեամբ: Որովհետեւ ուրախութեան ու տրտմութեան տարրերու խառնուրդով կերտուած է հայութեան ներկան, — ինչպէս ուրիշ ամէն ժողո-

վուրդի: Եւ Հայաստանի մէջ հսկայաքայլ զարգացման, ծաւալուն կառուցման եւ ներգաղթով աղղաճաւաքման հրճուանքին հանդէպ՝ տակաւին կը մնան հայոց յաւերժական իրաւունքներուն կապտամին կսկիծը եւ տարագիր արեւմտահայութեան գոյատեւման դատան պայքարը, ահարկու կորուստներու մղձաւանջով:

— Արտասահմանում հայերը արագ են ձուլւո՞ւմ, կը հարցնէ մտահոյ: Պէտք է կոտել այդ վտանգի դէմ, կ'աւելցնէ ձայնով մը, ուր հայրական զսպուած գորովի շեշտը կայ:

— Կը կոտի՞նք, ամէն ճակատի վրայ, կը կոտինք անդադար, հնարաւոր ամէն միջոցով, կը պատասխանեմ տխրօրէն...: Իսկ օտարացման թակարդները այնքան առատ են, յաճախ աներեւոյթ, երբեմն հրապուրիչ, կամ բռնակալ... ձուլումի վտանգը վիշապի մը կը նմանի, որ հաղար ճիրաններ ունի... մէկը կը կտրենք եւ... փրկութեան միակ ճամբան կը մնայ դարձեալ... բայց այդ մասին խօսեցանք արդէն:

Կը նայիմ ժամացոյցիս եւ կ'ելլեմ օտքի: Որքան արագ սաւեր է ժամանակը: Հրածեշտի պահն է իր մեծ դահլիճին մէջ: Հըպարտ ակնածանքով իրեն կ'երկարեմ ձեռքս: Եւ յանկարծ, ինչպէ՞ս, ներքին ինքնաբեր մղումով մը կ'ողջադուրուինք: Թերեւս ան սրտասահմանի տարողիւր հայութիւնը կը փորձէ պարուզիկել իր պողպատէ բայց քնքուշ թեւերուն մէջ: Եւ աչքերու տամկութեան դէմ կը պղտորի ու կը ծփայ իր ժպտող կենսախայտ դիմագիծը: Բայց դուքսը կը ստեցնէ ու կը ցրուէ նայուածքիս ու յուզումիս ժշուշը եւ ես ինքնաբաւ հայու հրճուանքով կը տեսնեմ... դեռ կը տեսնե՞մ յողթակազմ հասակը, բարեմոյն ջինջ աչքերը եւ պայծառօրէն խնդուն դէմքը մեր ժողովուրդի մեծ զօրականին, — Մարաջախտ Յովհաննէս (Իվան) Բակրամեանին, որուն մէջ անվահեր քաջութիւնը, խոնարհ բարութիւնը եւ հայրենասէրի տաք սիրտը կ'ընդելուզուին դաշնաւոր միաձուլումով:

ԵԶՐԱՓՈՒՎՈՒՄ

Ամէն հայ, որ ձերբազատ է գգացական անուրջներու պատ-
րանքէն եւ քաղաքական ցնորքներու հաշմող կապանքներէն՝ կրնայ
յտակօրէն տեսնել եւ ճշգրտօրէն բժշկել մեր ժողովուրդին ներ-
կայ գոյավիճակը, — անոր յոյսերուն, վտանգներուն, իրադար-
ձումներուն եւ սպառնալից խոստումներուն բովանդակ տարողու-
թեամբ, արտաքին գործօններու եւ միջազգային մշտափոփոխ
պայմաններու ծիրին մէջ: Իրրեւ հիմնական խարխիս՝ պէտք է
մեկնել այն լուսաւոր իրողութիւնէն, որ հայոց թուական համրանքը
հիմա կը հասնի 4,500,000-ի թանկարժէք քանակին: Անոր երկու
միլիոնը կ'ապրին Հայաստանի պետական սահմաններէն ներս: Ու-
րիշ մէկ միլիոնէ մը աւելի՝ դեռ կը մնան Թորհրդային Միութեան
տարբեր մարզերուն մէջ, — Ղարաբաղէն, Թիֆլիսէն ու Բազուէն
մինչեւ Հիւսիսային Կովկաս ու Մոսկուա, եւ Լենինկրատէն մինչեւ
Վլատիվոսթոք: Իսկ մնացեալ 1,400,000 արեւմտահայ տարագիր-
ներ տարադնուած կը բնակին շուրջ երեսուն օտար երկիրներու
մէջ, աշխարհի բոլոր ցամաքամասերուն վրայ:

Եւ երեք հազարամեայ հայոց ազգը, իր կրած դարաւոր ա-
ղէտներէն եւ մատնուած զարհուրելի փլուզումներէն յետոյ հիմա
կենսալի զարգացման ու փառաշուք վերածնունդի զառեվերէն դէ-
պի գազաթ կը մտնի: Ազգութեամբ ու հայրենիքով մեծնալու,
ճարտարարուեստով ու տնտեսութեամբ զօրանալու եւ մշակոյթով
ու գիտութեամբ բարձրանալու այդ համախառն խոյանքին մէջ՝ ի-
րենց մասնաւոր, լրացուցիչ դերերն ունին հայութեան բոլոր հատ-
ուածներն ու խաւերը, մայր երկրէն ներս ու սփռուքի հորիզոննե-
րուն ետեւ: Բայց զարձեալ, անցեալի ահաւոր վրիպանքներէն ու
մահացու պատուհաններէն ետք, պէտք է ամէն պարկեշտ հայ փոր-
ձէ եւ յաջողի համողել ինքզինք քանի մը բացարձակ, անճոզողրե-
լի ճշմարտութեանց:

— Որ հայ ժողովուրդի Փիղիբոսկան գոյատեւման եւ ազգա-

յին յուերձացութիւն միակ վայրը, միակ երաշխիքն ու կռուանք
կենդանի, ծագկող ու բարգաւաճող Խորհրդային Հայաստանն է:
Եւ հայոց ազգին հաւաքական մարմինը, ազատասէր ու ստեղծա-
բար ոգին եւ խնայական ու ողեկան զմայլելի Ժառանգութիւնը
փրկելու, պահպանելու եւ տեւականացնելու օրհասական գոյա-
մտքին մէջ՝ անոր վարչաձեւին բնոյթը ա՛յնքան մանր, աննշան
պէտք է դատուի՝ որքան մահամերձ հիւանդ մը կեանքին վերա-
դարձնող վիրարոյժի մը զոգնոցին գոյնը: Եւ արտասահմանի մէջ
գործող ու ծառայող բոլոր կազմակերպութիւնները, — դպրոցներ,
եկեղեցիներ, ակումբներ, միութիւններ, եւ անոնց բոլոր ճիգերն
ու զոհողութիւնները, բոլոր ծրագիրներն ու ձեւնարկները, բոլոր
պայքարներն ու նոյնիսկ թափուած արիւնք ս'ընէ արժէ՛ք, իմա՛ստ
եւ արգարացում կը ստանան միայն՝ սրովհետեւ կա՛յ մայր հայրե-
նիքը, իր ժողովուրդով ու պետութեամբ: Եւ առանց անոնց՝ ըս-
փելուք մէջ ամէ՛ն ազգային շարժում, ամէ՛ն կրթական աշխատանք
ու մշակութային վաստակ պիտի դառնայ անփա եւ ընդունան
տաժանք, եւ աննպատակ ու անյոյս վատում, կորսնցնելով գոյու-
թեան ամէն իրաւունք:

— Որ Հայաստան զարձեր է այլեւս տնտեսապէս ինքնարաւ
եւ որեւէ կարիք չունի արտասահմանի նիւթական օգնութեան:
Ընդմիջա փակուել է այն շքաւոր շրջանը, երբ դադութահայ մար-
միներ եւ հայրենակցական միութիւններ բնակարան, դպրոց ու
գործարան շինելով նոր աւաններու մէջ՝ թանկագին նպաստ կ'ըն-
ծայէին մայր երկրի վերակառուցման: Հիմա՝ ասաք կամ հարիւր
հազար տոլարի մատուցումը ճգճիմ մանրուք մը պիտի ըլլայ, որ
սչ մէկ նկատելի բարիք կրնայ աւելցնել Հայաստանի մէջ: Ճիշդ
հակոտակը՝ պետութիւնը ի վիճակի է եւ յօժար, ի՛նք օժանդակե-
լու սփրւածքահայ ազգային ինքնապահպանման յարաաւել օգնու-
րուն, անոնց առաւել արդիւնաւորման համար: Արդէն շուրջ հա-
րիւր երկսեռ ուսանողներ, տարբեր հայ գաղութներէ մեկնած,
բարձրագոյն դաստիարակութեան կը հետեւին Երեւանի համալսա-
նին եւ ուրիշ հիմնարկներու մէջ, — արոնց իրրեւ կրթաթոշակ եւ
սնունդի, բնակարանի ու հազուատեղէնի ծախք՝ Հայաստանի
կրթական նախարարութիւնը կը յասկացնէ տարեկան շուրջ 250,

000) ապաքին արժէքով հսկայ դումարը: Իսկ այս աշնան ու գալիք
 ապրիլներու Հայրենագարձը կը կատարուի ամբողջապէս Հայաս-
 տանի կառավարութեան սահմանած մասնաւոր սիւսեւճէով: Մինչ
 1946—7ի ներդաշխին համար՝ անհրաժեշտ եղաւ արտասահմանի
 մէջ Հանդանակի մօտ երկու միլիոն աւաք:

— Որ սիւսեւքի Հայութիւնը կենսունակ եւ անսխալարիներէ
 մէկ երբորդը կը կազմէ Հայ ժողովուրդին: Իր բարբառային յատ-
 կանիչներով եւ դրական ու զեզարուեստական արժէքներով, իր
 մարդկային քանակին ուժով եւ ճարտարագիտական փորձառու-
 թեամբ, ան կաշուած է նշանակելի մասնակցութիւն բնծայել Հայ-
 րենիքի յառաջընթացին, բոլոր մարդերուն մէջ, ծրագրուած
 ներդաշխի ուղիով: Ան նաեւ, քաղաքական գլխաւոր գործուն մը կը
 հանդիսանայ արեւմտահայ հոգերու ազատագրման մշտական ճի-
 դերուն ու պայքարին մէջ, իրրեւ անոնց իրաւական պահանջատե-
 րը: Բայց նաեւ ան յարատեւ մասնուած է առհնայներու, հալած-
 անքի, մանուսնոյ ուժացման ու ճուրճի սպառնալիքին: Որեւէ
 երկրի մէջ ներքին յեղաշրջում, քաղաքացիական կռիւ կամ մասնակի
 պատերազմ՝ աղիտայի անդրադարձով կը հարուածէ չրջակայ հայ-
 կական գաղութներ: Եւ անհրաժեշտ, բախտորոշ պարտադրանք
 կը դառնայ սիւսեւքահայ Հայրենասիրական բոլոր կազմակերպու-
 թեանց ու մարմիններուն համար՝ որ իրենց մտաւորական ուժերը,
 նիւթական միջոցներն ու աշխատող բազուկները համապարփակ,
 միասնական գորաշարժով մը լարեն եւ ուզեն զէպի այդ նպատակ-
 ներուն իրագործումը: Ուրեմն կենսական պահանջ է առաւել ծա-
 ւալել ու զօրացնել մամուլ եւ դրականութիւն, աւելի ընդլայնել
 դպրոցներու ցանցն ու բարձրացնել անոնց կրթական մակարդակը,
 աւելի հզօր թափով հետապնդել նորահաս Հայ սերունդները ազգա-
 յին ուղիով ու ձգտումներով տողորելու նշանակէտը՝ մշակութային
 ու մարդկան ակումբներ հիմնելով: — Մրադիրներ՝ որոնք ահա-
 դին ծախքերով, բացասիկ դումարներով միայն կարելի է իրագոր-
 ձել: Եւ այդ մարդերուն մէջ, Հայրենակցական միութեանց եւ ըն-
 կերային մարմիններու պահեստի դրամները, նաեւ անհաս բարե-
 բարներու նուէրները խոշոր ազդակ կրնան դառնալ, արամադրուե-
 լով նման ձեռնարկներու:

Եւ տարակոյս չկայ, թէ գաղութահայ գրողներ, հանրային
 գործիչներ, կրթական մշակներ եւ ժողովրդային զանգուածներ ա-
 ռաւել հաւատքով, նուիրումով ու գոհարեկու յօժարութեամբ
 պիտի փարին Հայոց ազգային վերագրումի այդ փրկարար աշխա-
 տանքին ու մաքառումին, եթէ իրենց մէջ սրբուած ըլլայ արգիւնքի
 մասին ամէն տարակոյս եւ միջոցին հանդէպ ամէն վարանում: Ե-
 թէ իրատես, գրագալտ արամաքանութեամբ բազդատեն Հայ ժո-
 ղովուրդը դիմազբաւող երկու հակոտնեայ քաղաքական վարքազի-
 ծերը, իրենց անցեալին հետեւանքներով, ներկայի արդիւնքներով
 եւ գալիքի հաւանական խոստումներով:

Մէկը, հազար դրժումներէ եւ գաւաղիւր լքումներէ նկուն
 ծունկերով վազելն է իտէալապաշտ բայց խարուսիկ պատրանքնե-
 րու եւ ցնորական բասուերներու ետեւէն, ծնրազիւր աղերսելով եւ
 սղբազին թախանձելով ամէն օտար, անոչորմ, շահախնդիր իշ-
 խանաւորի դուռին առջեւ, որ արդարութեան փշրանք մը ձգել հա-
 ճին Հայոց ազգային գոյամարտի «Քշուտու, անտէք» պնակին մէջ:
 Այդ ճամբան էր, որ յանդեցաւ արեւմտեան Հայաստանի հիմնադա-
 տակ կործանումին եւ անոր բնակչութեան եղեռնական կոտորածին
 ու տարագրութեան: — Միւս ուղին՝ առարկայական գնահատումն
 է չրջապատի արտաքին ազդակներուն եւ աշխարհագրական դիրքի
 անխուսափելի կազերուն, նաեւ ճանաչումը սեփական ուժերու ու-
 բակային ու քանակային տարողութեան, եւ այդ բոլորին մէջէն՝
 ակօսումը ինքնուրոյն ուղեգիծի մը, որ մեր ժողովուրդին փրկու-
 թեան եւ անոր ազգային գոյատեւման ու զօրացումին ամէնէն
 ստոյգ, ազահով ու հեռահաս շաւիղը կը բանայ: Եւ անոր հանդըր-
 ուանը՝ ներկայ Խորհրդային Հայաստանը եղաւ:

Ճիշդ է, այս հակազիւր իրողութեանց հանդէպ՝ տակաւին
 մարդիկ կ'ազազակեն բանականութեան ու խղճմտանքի հաշմում
 ապասերումով, կամ գաղանօրէն տուալտի կասկածի մոլորանքին
 մէջ, թէ Հայոց համար՝ Սոփիա Միութեան ջբանակալ լուծը՝ եւ
 անոր բերած «աղէտները» աւելի վայրագ եւ արիւնոուշտ եղած են՝
 քան Լենկիթիւմերի եւ ձենկիլ Պանի հորդաներուն սփռած նախճի-
 ները, քան Ապտուլ Համիտի եւ Թալէաթներու սարքած գեհնային
 հալածանքներն ու ջարդերը: Բայց դարձեալ, բազդատուած այդ

երկու միճակներուն եւ անոնց արդիւնքներուն տարբերութիւնը այնքան բացայայտ է եւ եզրական, որ միայն միաքի, ոգիի ու խիղճի վատասերումէն կուրացած, կամ հաշմող յուսալքումի մութէն կլանուած հոգիներ կը մերժեն տեսնել զայն: Բայց հայրենական լուսաւոր ներկային դէմ արձակուող այդ քրէական դատավըճիտին, Հակոտնէայ եզրերուն ճշմարիտ Համեմատութիւնը՝ պիտի վկայէր բոլորովին տարբեր, շրջուած իրողութիւններ:

— Մէկը՝ մահաչափ գիշեր էր, կործանում ու գերեզման: Որովհետեւ, Ապուիւ Համիաէն մինչեւ Քալէաթ ու Քեմալ, թուրք բռնակալութիւնը ոճրապարտ մոլուցքով ծրագրեց ու զործադրեց մարդկային պատմութեան ամէնէն հրէշային, ամէնէն զարհուրելի եղանակը: — Տնամեայ ագաքինի, ստեղծարար ժողովուրդի մը ամբողջական բնաջնջումը եւ անոր նաւերական հայրենիքին իւրացումը: Եւ ան բորենիի գիշատիչ ժանիքներով աւերեց, բոցոտեց ու սմայապուց բովանդակ արեւմտեան Հայաստանը: Ան կաթագանով ու հրագէնով, սապարով ու բիրերով, քարերով ու կրակով՝ ըսպանեց, այրեց, փռեկեց, խեղդեց ու մորթոտեց շուրջ երկու միլիոն անմեղ հայ մարդիկ ու կիներ եւ ծերեր ու մանուկներ: Իսկ զազանային ոչնչացումի այդ նախճիրէն վերաապրած մօտ 1,200,000 բեկորներ ու վշտանքներ հողմացրիւ շարտեց աշխարհի չորս հովերուն ու հազար քարափներուն, — եւ անոնք քանի՛ անգամ, յեղակարծ աղէտներու խորշանքներէն տարադնուած, միշտ նոր պանդխտութեամբ մը՝ նոր տուն չինել, նոր օճախ վառել ստիպուեցան, տարբեր եւ ստաւել օտար երկիրքներու տակ: Իսկ այսօր՝ կարսէն մինչեւ Վան, եւ Տրիքրանակերտէն մինչեւ Ատանա՝ արեւմտեան Հայաստանը յափշտակուած, որք ու ամալի իր բնիկ հայութեանէն՝ կը հեծէ մահիկի խուժուժ բռնութեան եւ ոսոխին արիւնաշաղ գարշապարին տակ: Մինչ հոն հերոսներու փառքով պսակուեր են դահիճները, — Համիտ, Քալէաթ ու Քեմալ...:

— Միւսը՝ կենսաբաշխ առաւօտ եղաւ, վերականգնում եւ ազգային յարութիւն: Պորհրդային Միութեան դաշնակից հանրապետութեանց ծիրին մէջ, եւ ռուս ժողովուրդի վեհանճն, անխարդախ օթանդակութեան շնորհիւ ստեղծուած Հայաստանն է, որ կը զօրանայ ու կը բարգաւաճի որպէս հայոց հնամեայ, պատմական

հայրենիքը, սեփական պեռութեամբ եւ արագօրէն աճող երկու միլիոն բնակչութեամբ՝ որ ազգային, ճարտարարուեստական ու մշակութային հրաշալի վերածնունդ մը կը կերտէ: Որ տարազեր արեւմտահայ զանգուածներ ձուլումի անդունդէն կը փրկէ, իր մայրական ծոցին ջերմ, հարազատ խանդաղատանքով կանչելով ու տանելով զանոնք: Որ մանաւանդ՝ կը մեծնայ ու կը զօրանայ՝ որպէս վաղուան իրաւատէրն ու ժառանգորդը գերեզմար արեւմտեան Հայաստանի: — Եւ ուր՝ յանցապարտ բռնաւորներ կ'ենթարկուին արգար հատուցման, — Ստալին՝ յետ մահու շնորհագրկումով, Բերիա՝ անողոք մահապատիժով:

Կեանքի եւ մահուան, — անհետ ոչնչացման եւ ազգային փրկութեան անկամըջի խրամատը կը բաժնէ այդ երկու ճամբաները: Եւ հայկական սփիւռքը պիտի չվրիպի իր ընտրութեան մէջ:


(Փետր.—Օգոստոս 1962, Պոստան)

ՎԵՐՋ

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱՑ



Գ Ո Ր Ծ Ե Ր Ը



- 1) ՍՊԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ (պատմուածներ) 1934, Ֆրեզնո
- 2) ԿԱՐՄԻՐ ԱՍՊԱՏԱԿԻ ՕՐԱԳՐԷՆ (պատմուածներ) 1947, Պոստոն
- 3) ՎԵՐՋԻՆ ԿԱՅԱՆԸ (պատմուածներ) 1956, Պէյրուիք
- 4) ՍՊԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ (վերի երեք հատորներէն ընարուած պատմուածներու հաւաքածոյ մը, լոյս ընծայուած Հայաստանի Պետհրատին կողմէ) 1960, Երեւան
- 5) ԽՈՂՆԻՐ, գրական եւ հասարակական, 1961, Պէյրուիք



ՊՆՆ՝ Ամերիկայի համար — լաթակազմ — 8 տուար

Լիբրանհի եւ այլ երկիրներու համար — լաթակազմ —

5 լիբ. սակի, թղթակազմ — 4 լիբ. սակի



Հեղինակին հասցեն. —

Antranik Antreassian

14 Wells Ave.

Watertown 72, Mass.

U.S.A.